ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցէ՛ք որ խօսք հասկըցնե՛ք : ես չեմ ըսեր թէ վիճարանութիւնն որոշուած չէ : այդ որոշուած է : բայց սահմանին մէջ մտցնել կու՞նք : Անցեալ նստին Քափա՛մա, ճեան էֆէնտի հարցում մ'ըրած էր, որուն Սըրբազան Պատրիարքն ալ պատասխանած է : միջանկեալ հարցում մ'ալ Փափաղեան էֆէնտին ըրած էր : այսօր նոյն ինքն Քափա՛մաճեան է : Գրան Ֆէնտի իր հարցման կը կցորդէ նաև որ Մեծ եպարքոսին մատուցուած վերջին տեղեկագիրն ալ հարցորդի Ժողովին : իսկ Փափաղեան էֆէնտի կը բողոքայ տեսնել Ք. Գրան յանձնաժողովն տեղեկագիրն, զոր Սրբազան Պատրիարքը խոտապաւ բերել և չբերու կըսէ : Հիմա սխտի է որ նախ Քափա՛մաճեան էֆէնտիի ըրած պահանջման մասին Սրբազան Պատրիարքին տալիք պատասխանը լսե՛ք : երկրորդ՝ Փափաղեան էֆէնտիին յետոյ ըսած տեղեկագիրն համար ալ Սրբազան Պատրիարքին տալիք բացատրութիւնը լսե՛ք : ասոնցմէ ետքը կարգը կու՞նք Փափաղեան էֆէնտիին՝ իր խօսից թէ լը շարունակելու : ես այս կերպով կըմտնեմ վիճարանութեան սահմանը : սչտաք է որ Սրբազան Պատրիարքն իր ըսելիքները լսուցնէ, որպէս զի կարենայ ըստ օրինի վիճարանութիւնը շարունակուի :

ՓՈՒՔԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Հարցուցէք Ժողովին՝ վիճարանութիւնն որոշուած է թէ ոչ : 1870 ին այս Ժողովն հարստաշտրութեան խնդիրն ստանձնեց՝ Ժողովրդական հանրադրութեան մը միջոցաւ : նախորդ Պատրիարքն նոյն նստին ընդունեց որ հարստաշտրութեանց խնդիրն վիճարանութիւնը որոշուած է :

(Աղմուկ)

բանութեան առնուի այս Ժողովին մէջ. յաջորդ նախն բռնէ առնին նոյն Ս. Պատրիարքին թէ այդ խնդիրն ինծի թողէր. բայց Ժողովն ականջ չդրաւ, ու ինքն իր քննութիւնը շարունակեց : Արդի Պատրիարքն ալ նախնիմաց նախն մէջ ընդունեց որ Հարատահարութեանց խնդիրն Ժողովին վիճարանութեան ենթարկուի : այժմ կերպով մը այդ որոշեալ վիճարանութիւնը ետ թողուլ կուզուի Պատրիարքին տակը բացատրութիւնները յառաջ անցնելով. ինչո՞ւ կը բռնաբարուի Պատրիարքներու անձը, և թոյլ չաբը աւեր որ տղատ ծառային Աղղին ու Եկեղեցւոյն : ինչո՞ւ վիճարանութիւնը փակել կուզուի, և խօսք առած եմ այս խնդրոյն վրայ և սխտի խօսիմ այս բեմին, որն որ պէտք է իր նշանակութիւնն ունենայ այս առեակ խնդրոյ մէջ. ինչո՞ւ կը խրաչիք :

Տ. ԱՄՔՐՈՍԻԱՍ ԳԱՐԴ. — Մեր կանոնաբարութեանն այնպէս գիտենք որ քանի որ երևաւ փոխան մը բնին ելած է. պէտք է խօսի և լը մընցնէ իր խօսքը :

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կապուշեմ, մի միջամտիք և թողէք որ դիւանն իր պարտքը կատարէ. թէ որ դիւանը սխալ մ'ունի, դատարը նոյն ինքն Ժողովն է : Հարցում մ'եղած է երեսփոխանի մը կողմէ և կիսկատար մնացած. անոր վրայ վիճարանութիւն չկրնար ըլլալ մինչև որ Սրբազան Պատրիարքն ամբողջացնէ իր բացատրութիւնը :

Խօսքը Տ. Մատթէոս Սրբազանին է :
Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. — Քանի որ Գիւտանին և տառնարան էֆէնոփին մէջ անձամուտայնութիւն ծագած է, պէտք է Ժողովին հարցունակայն մեր կանոնաբարութիւնը կը սրամողէ որ երբ երեսփոխանի մը կողմէ հարցում կուզուի Վարչութեան, նախ Վարչութիւնն իր կարծիքը յայտնելու է թէ կուզ՞ բացատրութիւն տալ. անկէ ետք Ժողովն այ վիճարանութեան օրը կորուչ : Այնպէս նախն Գոսխտուն ձեան էֆէնոփի հարցման անմիջապէս Սրբազան Պատրիարքը պատասխանեց, և խնդրոյն կարեւորութեանը համեմատ նոյն իսկ Սրբազան Հօր հաւանութեամբ որոշուեցաւ այսօր վիճարանութեան ենթարկել Հորատահարութեանց խնդիրն որոշման համաձայն դիւանը պարտաւոր է թոյլ տալ տառնարան էֆէնոփին շարունակելու :
ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծիքս այս օրը չունիմ որ արժանաւորեալ է տառնարանութեան մէջ, նախ բացատրութիւն և ապա վիճարանութիւնն պիտի ըլլայ : — Խօսքը Սիրկեան էֆէնոփին է :

Երբ կարծիքս այն է որ Սրբազան Պատրիարքը հիմախօս ձեռն չը խօսի. երբ հարկ ըլլայ՝ այն առնն կրնայ խօսիլ և բացատրութիւն տալ :

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծիքս այս օրը չունիմ որ արժանաւորեալ է տառնարանութեան մէջ, նախ բացատրութիւն և ապա վիճարանութիւնն պիտի ըլլայ : — Խօսքը Սիրկեան էֆէնոփին է :

ՍԻՐԻԵՆԵԱՆ Յ. ԷՖ. — Իմ կարծիքս այն է որ Սրբազան Պատրիարքը հիմախօս ձեռն չը խօսի. երբ հարկ ըլլայ՝ այն առնն կրնայ խօսիլ և բացատրութիւն տալ :

ՍԻՐԻԵՆԵԱՆ Յ. ԷՖ. — Իմ կարծիքս այն է որ Սրբազան Պատրիարքը հիմախօս ձեռն չը խօսի. երբ հարկ ըլլայ՝ այն առնն կրնայ խօսիլ և բացատրութիւն տալ :

(Հաւանութեան ձայներ) .

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Ահա կը տեսնեմ որ բազմութիւն երեսփոխաններ կը համաձայնին որ նախ Փախարեան էֆէնոփ խօսի և յետոյ Սրբազան Պատրիարքը. ուրեմն քուէ կը դնեմ թէ որ Ժողովն ալ այնպէս ընդունի՝ ըսելիք չմնար :

(Աղմուկ)

ՄՐԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Թող Փախարեան էֆէնոփ շարունակէ և ընցնէ իր խօսքը. և ալ յետոյ պէտք եղած բացատրութիւնները կուտամ և կը պատասխանեմ բոլոր իր հարցումներուն : Ժողովին պոչեմու բան մը չունիմ բնա :

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ Ձեր Սրբազանութիւնը կը հաւանի որ իրեն տարա բացատրութիւնը չաւարտած վիճարանութիւնը շարունակուի, ալ Ժողովին կողմը հարցնելու պէտք չմնար, հետևապէս խօսքը Փախարեան էֆէնոփին է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (շարունակելով) Այս ընդհատումները կարծես թէ միջոցներ էին որ դործածուեցան զիս շիտիքիւ համար : Արբաբազան Պատրիարքը կուզէ որ հարցումներս ամփոփեմ, որպէս զի ինք ալ պատասխանէ : Եթէ ձեզի հարցում չունիմ, Սրբազան Հայր. դուք փախար յայտնեցիք որ հարատահարութեան իրեն

զիրն այս Ժողովին մէջ մանայ . Ժողովն ալ ըն-
 դաւեց վիճարանութիւն բանալ . սիրելէն ըսի թէ
 հիմա հարստաւարութեանց տեսակները քննելու
 պէտք չունինք . վասն զի ամենա ալ դիտներ ,
 մեզի համար ամենէն աւելի պէտքի բանն է դիտ-
 նալ թէ , ի՞նչ արդիւնք ունեցած է Յ տարի ա-
 ռաջ մատուցուած անդեկադիլը և թէ ի՞նչ դար-
 ման տարուած է ցարդ մեր հորատահարեալ
 սղոյցնոց վիճակին : Փնտռել և հետազոտել
 կուզեմ թէ ի՞նչպէս կըլլայ որ կուտարալ մը ,
 միւթէտարքի մը , մինչև իսկ քայմարաւ մը կու-
 թալ կըլլայ բարձի տակ գնել և անդործարելի
 թարաւ Բ . Պրան հրամանողիրները : Ես կըր-
 նամ օրինակներով ցոյցնել թէ զանազան կարե-
 ւոր պարագաներու առթիւ Պատրկարբորանէն
 զրուած թողրիներու վրայ շատ անդամ ամե-
 նադուա հրամանողիրներ դրեալած են Բ . Պրա-
 նէն առ կուտակաւթիւն , սոյնպիսի հրամանա-
 ղիրներ՝ որք Պատրկարբորանի դիւանողպիրնե-
 րը շատ անգամ զմոյլեցոյցած են . բայց չզի-
 տակ , ի՞նչ է պատճառն որ այդ գոյցած հրամա-
 նադիրներն արդիւնք մը չեն ունեցած . արդեօք
 այդ հրամանադրոց վերջին տողը առաջիններուն
 հակառակ իմաստ մը կուտայ . կամ այդ հրա-
 մանադրոց կէտերը ուրի՞շ ձև կամ գոյն ունին .
 որով բաւերն իրենց նշանակութիւնը կարենան
 փոխել : Պարծեալ զիտնալ կուզեմ թէ Չլյ-
 թուսի մարդաստան գոյմագամն ինչո՞ւ չկրին
 ունեցաւ . թէ ինչո՞ւ Մշոյ աղջիկն աւետանգող
 չարագործը չբիտուկեցաւ և չարածուկեցաւ .
 թէ Գանդալ աղախի , Գուղալճանի Հիւսէյին
 օլլի , Ղարդանու Ֆլթթա՛ւ պլի և Չարսան-
 ճախի հինաւորց խնդիրներն ինչո՞ւ կան ու կը
 կենան . թէ ինչո՞ւ Չարսանճախի Տլբախ և
 Օվաճրիս գիւղերուն մէջ մեր սղոյցնոց պատկի
 հրաման տուողները քիւրտերը կըլլան . թէ ի՞նչ
 է պատճառն որ հայն անգլի՛ն՝ սուրբ տայ տէրու-
 թեան , իսկ բիւրաը զինեալ՝ սուրբ շտոյ ու կե-
 ղեքէ դէպն և անկի տուրք տան :

Հարստաւարութեանց առաջին անդեկադ-
 րին քննութեան պահուն այն այս Ժողովին մէջ
 խնդիր եղաւ թէ արդեօք վիճարանական տա՛ւրը
 տանք թէ ոչ զինտոր տանք , և այն ատեն վին-

ւոր տողը խնդիրն առ կրին մնայ . բայց միթէ
 տուններին և ընտանիքներին պահպանելու համար՝
 եթէ կուտակարութիւնը հրաման տայ , չէ՞նք կըր-
 նար զինտորիւ . ինչո՞ւ բիւրա , ալչար , շէր-
 քէզ և այլք գան համարձակ կողպտուն , և կու-
 ղպատեալ Հայը չիրոյց անոնց դիմադրել : Պրա-
 նի որ բիւրուն դէպն կուզանէ և չպատժուիր
 քանի որ Բ . Պրանն հրամանադիր կերթայ և
 չգործադրուիր , և չգործադրող պաշտօնեան
 պատասխանատու չընտրուիր ու չպատժուիր .
 մեր սղոյցնոց վիճակն ի հարկէ որ աւուր ա-
 լեկի կը վտտթարանայ :

Տերութիւնը դաւտական պաշտօնակից
 ղեղճմանց ղէմն աւնելու համար գաւառական
 ժողովներ սահմանած է . բայց պաշտօնեայք
 ոչ միայն իրենց քմահաճ վարչութեանը
 այլ ժողովներուն վրայ մեծ ազդեցութիւն
 կը գործածեն , այլ և օրինաց բնութեանին
 ալ այդ ժողովներն իրենց քմացը համեմատ կը
 գործածեն . որով ժողովներն իրենց բուն նշա-
 նակութիւնը կորստած , միայն պաշտօնակից պա-
 տասխանատուութիւնը թէթիցնելու համար
 զարժիր մը կը նկատուին : Ալլայիթ թէ չըրիք
 օրինաց համեմատ տեղացի դանազան սղոյցներն
 անդամակիցներ պիտի գտնուին դաւառաց կա-
 ռավարութեան ժողովոց մէջ , սրն որ սա սիղզ-
 բունքը կը հաստատէ թէ տեղական կուտակորու-
 թեան մասնակցելու իրաւունք ունին տեղացի ա-
 մեն սղոյց . բայց այդ օրինաց գործադրութեան
 մէջ գաւառական պաշտօնեայք տեւիլ շահած են
 քան թէ սղոյցը . շատ անգամ վիլայիթներէն
 եկած տեղեկագիրներու մէջ հայ անդամն ալ
 ստորագրած ըլլալը ցոյց կուտան մեզ . կը տես
 նենք որ իրու անունը Պրիզոր՝ հօրն տնանն ալ
 Յովհաննէս է , հայ մ'է որ ստորագրած է հնն .
 բայց ո՞վ զրբէ է այդ հայը նոյն ժողովին մէջ .
 տարակոյտ չունինք որ գանի ընտրողը նոյն գա-
 ւառին պաշտօնեայն է . բայց ըստ որում այդ
 Պրիզոր Յովհաննէսեանն իր ընտրութիւնն ուղ-
 զակի հայ սղոյցն առած չէ , ոչ իր սղոյցին շա-
 հերը և ոչ տէրութեան շահերը պաշտպանելու
 պարտաւոր է , այլ մի միայն զինքն ընտրող պաշ-
 տնակին շահերը պաշտպանել կը պարտաւորի որ

միշտ դիմքն ընտրէ նոյն պաշտօնին : Հետեւաբար հայ ազգն իրաւունք ունի զանի իւր ներկայացուցիչը շնանջնալ, քանի որ այդ ընտրութեանց մէջ ազգովին մասնակցելու իրաւունքը ի զործ չէ դրած :

Հարտաշարութեանց բողոքներուն ինչպէս պաշտօնից բուհամ վարչութիւնը և տեղական ժողովաց ժողովրդեան աննպատակողմութիւնը, նոյնպէս և արդարութեան ատեաններուն կազմութիւնն և ընթացքը մեծապէս կազմեն. նախնական և վերաքննիչ ատեաններուն մէջ մէկէ 4-5 ատուր ճանապարհ հետաւորութիւն ունենալը շատ անգամ աղքատ ժողովուրդը յուսարեկ կընէ, կամայ ակամայ կը վարտատորի ընդունիլ նախնական ատեաններուն վճիռը, որք այդ հետաւորութեան մեծ օգուտներ կը բաղեն : Բայց ամենէն աւելի՛ Քրիստոնէից վկայութեան չունուիլը մեծ աղետ մ'է քրիստոնէաց ժողովրդին. որպէս արմատն է անհաւատարմութեան խնդիրը, որմէ կաղերքանան և սլլ ամենայն շարիք :

Ըսի ի սկզբան թէ օգոտաբար Սուլթանը բացարձակապէս յայտարարեց երկրին վիճակը. մեր ալ իրբև Օսմանեան հաւատարմ հպատակ համարձակապէս խնդրելու ենք ինչ որ հարկուոր է երկրին վիճակը բարբաբելու համար. հիմա է յաջող ժամանակը. Սղղային ժողովուորութեան պէտք չէ դատասպարտենք : Սյուրբեղով կրթիք մտքէս չեմ անցուներ թէ Սղղային վարչութեան վկայ անվատահոթեան բան մը ունիմք. Շահապող Եֆէնտի թող չը կասկածի թէ մեր ըրածը վարչութեան դէմ անվշտատահութիւն է. ո՛չ. մեր շնորհակալ ենք վարչութեան ըրած աշխատութիւններէն. վերջին մատուցած տեղեկագիրն ալ դեռ չտեսանք ի պաշտօնէ. թէ որ արդէն լրագրաց մէջ հրատարակուածին պէս է, ղիտողութիւն ունիմ, անոր մէջ կան կէտեր՝ որոնց վրայ իմ տեսութիւնս սլլ է. այս ուրիշ խնդիր է, ասոր դէմ մարդ բան չկրնոր ընել :

Մեր խնդիրն է ուսկիտ ըլլայ հաւատարմութեան իրական և անխնայական գործադրութիւնը, և երկրին վարչութեան, դատաւորութեան

և պաշտօնութեան համար ազգային ընտրութեամբ մասնակցութեան իրաւունք :

Հպատակ ազգաց ժողովրդական խառն ընտրութիւններն ալ յաջող արդիւնք մը չեն ունեցած. մեր ասիկա փորձով գիտենք. հոս Բերայի Քաղաքապետական խորհրդայ ընտրութեան մէջ փորձք տեսած ենք. այս խորհուրդն Բերայի բնակիչ խառն ազգաց ներկայացուցիչներէն կը բաղկանայ, զոր օրինակ 4 թուրք, 2 երոսպոյցի, 2 հայ, 2 յոյն են. թիւերու ուրոշ քանակութիւն չկայ. բայց թիւրք, հայ, յոյն և երոսպոյցի անհրաժեշտ տիտի գումուլին :

Սոյն խորհուրդը ժողովրդեան քուէտը կընտրուի. անգամ մը հայ, թիւրք, յոյն և երոսպոյցի ընտրողներէն ոմանք միացան, սկիզբն ի վեր նոյն խորհրդայ անգամակցութիւնը վարող անձինքը չընտրելով, նոր մարդիկ ընտրելու :

Քաղաքեան Եֆէնտին վկայ է բաժնիս, փաստի նա ալ կը գտնուէր սոյն միութեան մէջ, ինչպէս և ես. քուէարկութեան օրը Գաւրմ փաշայէն 5-6 հարիւր քուէ մէկէն եկան, խումներու և միթարներու առաջնորդութեամբ թիւրք ժողովրդէն հաւաքեալ. և մեր 2-3 հարիւր քուէն խախտեցին, ու Գաւրմ փաշայի թիւրք ժողովրդեան ուղած անձինքը ընտրուեցան. թէև անոնց ցանկին մէջ ալ հայ, յոյն, երոսպոյցի կը գտնուէին, բայց իրենց ուղած անձինքներն էին : Մի և նոյն արդիւնքը կրնայ ունենալ ամեն տեղ, երբ թիւրք, հայ, յոյն ժողովուրդներ խառն քուէարկութեան հրակրուին, ան ատեն որ ժողովուրդը թիւով բաղմամբ ըլլայ, նոյն ժողովրդեան միակտմ ընտրութիւնը կը յաղթի, և միապետելու կը կորնչի. և ան տոնն բնակիչ զանազան ազգաց ճշմարիտ ներկայացուցիչը չեն ըլլար ընտրեալք, թէ է անոնց մէջ զանազան ազգէ անձինք գտնուին :

Խօսքս ամփոփելով կեզրակացնեմ թէ՛ Սղղային ժողովս անտանէ յանձնաժողով մը որ 5 տարի առաջ Բ. Գրան մատուցած հարբտաշարական տեղեկագրէն ետև մինչև ցայտօր եղածները՝ Պատրիարքարանի արձանագրութիւններէն հաւաքելով՝ նոր տեղեկագիր մը չի տնէ, և առաջին տեղեկագիրն հետ մէկ տեղ Բ.՝

Դրան մատուցուի : Թէ որ Ազգային ժողովը զիս Գանձնաժողովը անջամ ընտրէ, ես կը խաւսանամ 8 օրէն ըրերէ տեղեկագիրը, գործակցութեամբ Պատրիարքարանի ընտիր զիւանաղջւորաց, որք զԷջերներն ալ յանձն կ'առնուն աշխատիլ այս գործին համար :

Երբզամիտ եղի՞ր թէ որ ընդմիջումներէն շփոթեալ, աղէկ չլրացայ բացատրել առաջարկութեանս հոգին. բաւական է կարծեմ՝ եթէ ըսեմ որ ՚՛ տարի յառաջ մատուցեալ տեղեկագիրն ապարդիւն մնացած կերելի, ինչպէս կը հաստատան զարդ մեր առած տեղեկութիւնները. և որպէս զի պաշտօնապէս հաստատուի թէ իրօք նոյն տեղեկագիրն ապարդիւն եղած է թէ ոչ. Պատրիարքարանի պաշտօնական արձանագրութեանց զիսելու հարկը կը տեսնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայր, կը հաճիք խօսք առնուլ թէ ոչ սարկչին խօսք տամ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Պատ՛ մը բացաւ կայ գտնուելով՝ տեղեկութիւն չունեցայ եղած խօսքերուն, որպէս զի զիտնամ թէ ինչ բանի պատասխանել հարկ է ինձ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շո՛տ լաւ. Չեր Սըրբազանութեան բացակայութեան միջոցին եղած խօսքերը բացատրեմ. հարցումն ընող Քափա մասեան էջի նոյնի հարտազարթութեանց բարձման համար ինչ նոր ազգու միջոցներ ձեռք առնուիին իմանալու նպատակաւ վերջին օրերս Ապրշութեան կողմէ Մեծ եպարքոսին տրուած նոր խնդրագիրք տեսնել ուզեց : Իսկ Փափաջեան էջի նոյնի ՚՛ տարի առաջ երեսօտանական ժողովին ձեռք արտաստուած և Բ. Դրան մատուցուած հարտազարթական տեղեկագիրն և անկէ ետե պատահածներուն վրայօք Ապրշութեան գրած թագրիրներուն ինչ արդիւնք ունենալուն վրայ տեղեկութիւն ուզեց :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Հինգ տարի առաջ մեր նախարդին օրով Ազգային ժողովը կողմէ այնքան մանրակրկիտ խազարդութեամբ շինուած տեղեկագիրն այնպէս բարձի թողի մը նացած էր. ասից 8 ամիս առաջ ես փնտռել և նկատողութեան առնել տուի : Այնիկ ետք պատահած հարտազարթութեանց եղելութիւններ

րէն ալ ինչ որ կրցինք ճշդել և ճշգրտել, աննոց համար ալ պէտք եղած թագրիրները մատուցած ենք. և շնորհակալ եմ կատաւարութեան, խիտ ընտիր և ազգու հրամանագիրներ տուաւ, ոյն պէս որ դարմայանք տրուած հրամանագրիւնբուն վրայ. սակայն չգիտեմ թէ անոնք գաւառաց մէջ կը գործադրուին թէ չէ. միայն թէ անցեալ օր Մեծ եպարքոսին հետ տեսութիւն ըրած տեսնիս, ես բարձրածայն ըրի թէ չնորհակալ ենք, զուք արդարութիւն կընէք և առաջ հրամանագիրներ կուտայք, բայց հրամանագրիւնբունց զրիւնց իրենց զրիւտած տեղերը չեն գործադրուիր կոր : Ես պարտաւոր եմ անեն բան յայտնել ձեզ, վասն զի իմ քաղաքակառուութիւնս պարզ է. ես ազգէն ծածուկ պահելու բան մը չունիմ :

(Խորին տպուարութիւն ժողովին վրայ)

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սրբազան Հօր քաղաքակառուութեան անկեղծութիւնէն շնորհակալ ենք. կը խնդրեմ որ եթէ կարելի է Մեծ եպարքոսին մատուցուած վերջին խնդրագիրն ալ բարեհաճի ներկայացնել, որ կարգաւոր և պարտականութեանը վերահասու ըլլանք :

ԻԽԹԻՆՃԵԱՆ Ց. ԷՖ. — Կը կրկնեմ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Իմ քաղաքականութիւնս պարզ է ըրի. և արդէն բացատրած եմ զայն այս ժողովին մէջ բանի մը անգամ, մանաւանդ ներկայ բացման տեսնաբանութեան մէջ. ըսած եմ ձեզ թէ մեր Օսմանեան տէրութեան անբաժանելի ժողովուրդն ենք, և իբրև ավենակարևօր տարր Օսմանեան տէրութեան մեր իրաւունքն է մասն ունենալ երկրին յառաջադիմութեան, մեր պարտքն է աշխատիլ տնոր բարեկարգութեանը համար, և համարձակուովս յայտնել կառավարութեան մեր ցաւոց պատճառները և աննոց դարմանը խնդրել. առանք ըրած եմ ձեզ և զուք ծափահարութիւններով ընդունած և զգած էք մեր բազաբակաւ նութեան սահմանը. կը հատուտեմ որ այս բաղադրականութեան սահմանէն դուրս բան մը գործած չենք՝ ոչ ես և ոչ Ապրշութիւնը. կար

ճեմ ոմանք վտառ՝ չեն մեր վրայ : Թո՛ղ կարգացուի Մեծ եղբայրոյն տրուած վերջին իրենդրագիրն ալ, որոյ հայերէն թարգմանութիւնը փոխանորդին քովն է :

ԶԱՏԵՐ . — Մեր վտառ՝ ենք Սրբազան Պատրիարքին և Վարչութեան վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Կարծեմ՝ թէ Պատրիարքին և Վարչութեան ղեմ՝ անվստահութեան խօսք մը ընող չեղաւ : Ս. Պատրիարք Հօր քաղաքականութիւնը իբր թայման ատենարանութեան մէջ յայտնեալ էր և Ժողովն անոր վրայ դիտողութիւն չուներ :

ՓԱՓԱՅԱՆ Ս . ԷՅ . — Դերեցեք, ես էի որ Ժողովին ներկայ թայման օրը Սրբազան Հօր խօսած ատենարանութեան վրայ դիտողութիւն ներկայացուցի, և առաջարկեցի ուղերձով մը որոտաստնել, և թայտարել նոյն ատենարանութեան խնայող, որ Ժողով և Կախաղա՛ իրենց բռնելիք քաղաքականութեան և ընթացքին վրայ համոզեալ և համամիտ ըլլան. այն դիտողագիրն նախաբանութեան յղուեցաւ Վարչութեան կողմէ, որն որ ցորդ չվերադարձաւ : Սրբազան Հօր քաղաքականութեան վրայ դիտողութիւն կրնանք ունենալ, որ մի՛նչորոտութեամբ տեսիլ կը յատկուի և երկու կողմն ալ կը լուստարել, թայց դիտողութիւնը երբէք անվստահութիւն չի նշանակեր : Հետևապէս Ժողովին՝ Նորին Սրբազանութեան վրայ վստահութիւն հաթիւն ունենալուն ոչ որ կրնայ տարակուսիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Ես դարձեալ կըրեմ՝ թէ անվստահութեան ցոյց մը ընող երբէք չկայ մեր մէջ, որ և իցէ ինչպիսի մը փրայ դիտողութիւն ընենք բնաւ անվստահութեան ցոյց մը չի կրնար համարուիլ :

ԲԱԶՄԱՓԻՒՆ ԶԱՏԵՐ . — Այ՛ն ոչ, կը վկայենք որ անվստահութեան խօսք մը ընող երբէք չէ եղած :

Ատենապետ ԵՓեմեօսի հրաւերանայ վրայ Պատրիարքական փոխանօրդ Տէր Մկերեան Հայր ի Լուր Ժողովոյն կարգաց Մեծ եղբայրօ մին տրուած վերջին խնդրագրին հայերէն թարգմանութիւնն, որ է :

« Օմանեան մեծաօր տէրութեան հարստով Հոյոց ազգին մեծաօրոյն մասը՝ Օղոտաստիտե կոչուեալ հախաղան ներքև Օմանեան երկիրն Ասիայ կողմերը կը բնակի . և հարկ չկայ թայտարել որ առևտրով և հողագործութեամբ ըլլալով՝ երկիրն ու հոյրենեաց մեծաօրն օգտակար եղած է, և ցորդ հաւատարմութեան շրջանակին շրտորեալով՝ որ և է հոգեբաւ և զբուսարութեանց տեղի առած չէ : Ստիպոյն սա ես յայտնի է որ դատուները խել մը անձեռնհար պաշտօնեայր՝ օրինաց ճշգիւ գործողութեան չը հսկելուն՝ մեր ազգին այս հաւատարմութեան խտտապէր մասը հարստահարուել և նեղուել ղեքմ մնացած չեն, ճնշուալ են, և անգործութիւն և անձնական տալատութիւն չեն վայելիլ :

Մեր ազգայնոց Ասիայ շատ տեղերը կրնան հարստահարութեանց ինչ տեսակ բան ըլլալը և ո՞ր տեղուանք ի գործ դրուիլը, հարստահարչոց օրոնք լինելը և ժողովրդեան անհրաժեշտ պէտքերն ինչէ թափանցող Պատրիարքարանն մինչև ցորդ ստ Բ. Գլուան զանազան ատեն ներ մատուցուած Թագրիքներով, ծրագրիքներով պարզուած և թայտարուած են :

Սուրբ է թէ և որ ստանց բարձմանը համար Բ. Գլուան շատ ու շատ հրամանագրեր և երբեմն ալ յատուի քննիչներ զրկուած են, սա կայն մեր ազգային անգործ կեանք ունեցած և փախաբուած արգիւնը չէ տեսնուած, ինչպիսի կը հաստատեն վերջին մէկ քանի անոց մէջ շտկաւակ բարեխնամ Կառավարութեան կամայ զուտաները տեղի դաւած այն ցուալի դէպքերը զորս յայտնած եմք թողորիքներով :

Եւ ըստ որում՝ փորձերը ցոյց տուած են որ հարստահարութեանց բարձման և զանցաւանց վերջ ապաւ համար մինչև ցորդ ի գործ դրուած միջոցները բուսական եղած չեն, կը համարձակիտ այս մասին ինչ ինչ խնդիրներ ներկայացուել Ձեր Բարձրութեանը :

Ա. — Հոյրային խնդրոյն նկատմամբ Թագրիք մը խմայարած և մատուցած էլինք, որ Տեղեանը Հիւսիսային պաշտօնատունը յատկապէս կողմուած յանձնագործին յանձնուած և օրինաց ու արդարութեան համեմատ անոր պատ

բունտարիքի ընդունված է: նոյնին զործող-
բութիւնը:

Բ. — Վանորէից կալուածները մահլիճէ և
տարբէ ազատ ըլլան:

Գ. — Շահ Հիւսէյին օղը Հիւսէյին և
Կիւլապ օղը Ալիլ և Ալօրիւլ Յիթթիւն օյն-
յերն և Գանդալ Սղապի Ալօրիւլ Բահման և
ասոնց նմանները, որոնց հարստահարութիւնքն ու
ապագամիտական արարքը բռնիցս հաստատուած
են, և ժողովուրդը շարունակ և դատնապէս կը
զանգատի տանց համար, ըստ օրինի սրտօժէլ
և հեռացնել:

Դ. — Յոսեփաթօղ մը կողմէ Բ. Գուռը,
որուն մէջ դառուի նաև Պարսիարբարանէս
ցոյց որտեղիք անձինք, և լիազօր իշխանու-
թեանը Սիփա զրկէ, որ հարստահարութիւննե-
րը քննէ և բարձունը պարման տանի:

Ե. — Բ. Գուռը Մէղաշիպ միտիւրիին
նախագահութեանը տակ մնացուն խառն ժողով
մը հաստատուի. որ սրտան ունենայ Պատ-
իկարբարանէս ներկայացեալ խնդրոց մասին
հարկ եղածը խորհիլ և գործադրութեանը հա-
մար բարձրագոյն հրաման ստանալ:

Զ. — Այն հոյը՝ որ տակաւին Չ1 տարին
լրացուցած չէ, Էրր կրօնախորութեան դիմէ,
այնպիսոյն դատնութիւնն ու խօսքը չը բռնուի,
ինչպէս կը արամաղէ անչարիտաններու համար
գործադրութեան մէջ եղած օրհնքը:

Է. — Քրիստոնէաները վկայութիւն տա-
լը կրաւորքէն չզրկել:

Անտարակցոյ ըլլալով որ մեր ունյն սա-
ջարկութիւնն ու խնդիրը այս ժամանակին մէջ,
յարստ հարեխնամ Տէրութիւնը կը փախտքի որ
ու հասարակ Օսմանեան հրատանները տնդորր
ու երջմտիկ կեանք ունենան և կատարեալ ա-
զատութիւն փայլեն, մեր դաւառապի ազդոյ-
նոց համար հարկ եղած կենոց, սրտուոց և ըն-
չից տագնաօրութիւնը փախտրուած աստիճանին
հասցնելու և դատնապետները փոխան տարլ մե-
ծօղիս ոլիտի նորատեն, Հոյ ազգը առ Օս-
մանեան մեծազոր ակրութիւնն ունեցած փայլե-
մի և կատարեալ հաստատութիւնը աւելի ևս
ամրապնդելու փախտքով կաշոյ խնդրել Չեր

Բարձրութեանն որ առ այս Չեր շորհքն ու զը-
թութիւնն ընծայել բարեհաճիք»:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽՅԱՅԱՀ. — Ս. յս էր աւտարի

վերջին շարքարթի օրն եկեղեցական հոյց հե-
տի միտան Մեծ եպարքարին մատուցած խնդրա-
գիրս: Իսկ որովհետև ըսի թէ այս ժողովն
բան մը ծածկել չեմ ուզեր, չմտնում սա ալ
յայտնել թէ նախորդ Մեծ եպարքարին հետ հա-
րըտահարութեանց բարձունն միջոյնեղուն վրայ
խօսած ատեն, Կարին Բարձրութիւնը մինչև
անգամ խտտացած էր որ Հոյաստանի գաւա-
սայ մէջ ստիկաններ կարգէ մեր Հոյոց մէջն.
և մինչև իսկ քանի մը դաւաճներու միթէսու-
րիթները և քաղաքներու զայնադամները Հոյոց
մէջն դնել տալ խտտացաւ. բոց ինչպէս գի-
տէք՝ շատ չբռնց կաւախարութեան փախտու-
թիւնն հասաւ և ասեն բան աւելու մնաց: Եւր-
կայ Մեծ եպարքարին հետ ալ մէկ քանի անգամ
կրցայ խօսիլ այս սրտագաններուն վրայ. բոց
հեռոյնէ քաղաքական տագնապներ վրայ հա-
նելով ժամանակ չեն թողուցած մեր բանակ-
ցութիւններն սրտ վախճանի մը հասցնելու:
Սոյնպիսի ժամանակի մը մէջ ենք՝ որ Պատ-
րիարք մը սրտուտար է անդուլ յարարերու-
թիւն շարունակել նախարարութեան հետ. գը-
րեթէ ասեն որ սրտուտար է սրտուիլ խօսիլ
խօսակցիլ, և տար համար էր սաւաքարիք էի
թէ յարարերական սրտաբոյ կարդի ծախք ընել
պէտք է: Ես արդէն տկար եմ. չեմ կրնար և
մեն ժամանակ յարարերութիւններս շարունա-
կել. անկերջարար կըսեմ թէ շատ անգամ
պակասութիւններ ունեցած եմ այս կէտին մէջ.
ուստի աւելի ուղէկ կընէք՝ թէ որ իմ տեղը ու-
ոսյք և ժիւր մէկ դնէք՝ որ կարող ըլլայ ասեն
որ պէտք եղած երթեկեղութիւնն ընելու նախա-
բարայ քով. ևս ալ իմ կարողութեանս չափով
օգնական ըլլալ կը խտտանամ:

ԶԱՅՆԵՐ. — Ահ, սէ, չենք ընդունիր
Սրբազանին հրամարականը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Կը տեսնէք Սրբազան
Հոյը, որ հրամարականի խօսքը ինչ աղբուկ կը
յարուցանէ ժողովին մէջ, Երեսիտեանք քանի-

ցըս անգամ յայտարարեցին թէ, Չեր Սրբազ-
նութեան անձնական տիրութիւնը զիանալով
հանդերձ համազում են թէ քաջատուղ և ա-
ռայց Պատրիարք մը չի կրնար աւելի ծառայու-
թիւն մատուցանել Ազգին, աւտի յանուն Ժու-
ղովին կը խնդրեն որ բարեհաճիք հրամարտութիւն
խօսքը չի կրնիել, և վտրել Պատրիարքական
բարձր ու փախուկ պոչոսոնը, որչափ որ կը ներկ-
ձեր անձնական առողջութիւնը :

(Ընդհանուր հաւանութեան ցոյցեր) :

ԱՏՆԵԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Տէր Ներսէս
Հայրաբերին է :

Տ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳ. — Պահ մ'առաջ ե-
ղած վիճարմութեանց մէջ անվտաստութեան
բառ մը սարդեցաւ, այնպէս կարծուեցաւ թէ
անվտաստութեան ողբէ յոռա՞յ եկած են եղած
խօսքերը. քան լիպի. խնդրոյն կարեւորութիւնը
չատ բաներ խօսել կուտայ. բայց անվտաստ-
ութիւն երբէք տեղի չունի, և կը համարձակիմ
լռել թէ անվտաստութեան բառն անգամ ոչ սր
իւր բերանը կառու. Ազգային ժողովը կտա-
րեւոյ վտաստութիւն ունի իւր Պատրիարքին և
իւր Վարչութեան վրայ :

Մեր զխոնք հաւանուեալ թէ հարտաշա-
րութեան խնդիրը Վարչութեան գործոց մէջ
ամենամեծ տեղը կը բռնէ միշտ, և կրնամ Ը-
ոնել թէ այս մասին Վարչութեան ըրած գոր-
ծողութիւններն եթէ հաւաքել և ամփոփել ու-
զենք, այդ հաւաքածոյն ստուար հատոր մը կը
կազմէ : Այո, այտոր Փոխանորդ տէր Հօր կար-
գացած գրոյն նման խիտ շատ Թագրերներ
դրուած ըլլող զխոնք, Վարչութեան պարտ-
քըն է ամեն մէկ հարտաշարութեան դէպք ժա-
մանակին Թագրերով Բ. Կրան ուշադրութեան
յանձնել, Վարչութիւնն երբէք իւր այս պար-
տաւորութիւնը դանջ ըրած չէ, սխտր եղած ա-
տեն Թագրեր գրած և Սրբազան Պատրիարքն
ալ իւր ընթանայի յայտարարութիւններով այդ
Թագրերներուն ուժ տուած է. Վարչութիւնն
ուրիշ ի՞նչ կրնայ ընել, բայց եթէ իւր դրած
Թագրերներուն արդիւնքին ստրտուել : Եւ եթէ

գործադրութեան արդիւնքը չտեսնուիր, եթէ
հարտաշարիչն երևան ելած է ու չպատժուիր,
Վարչութիւնն ի՞նչ ընէ. չեմ կրնար ըսել թէ
բուն իսկ կտաւալութիւնը յանցաւոր մը երև-
ան ելած ատեն չուզիր պատժել. բայց սա զի-
տեւ որ վնասուող միշտ Հայն է. և եթէ Հա-
յոց տղը հաւատարիմ ճանչցուած է Տէրու-
թեան տուել, ո՞ր է իւր հաւատարմութեան
վարձըր. ինչո՞ւ իւր օրինաւոր զանգանները
չեն լռուիր : Հայոց ազգն իւր հաւատարիմ հը-
պտակութիւնը կատարած է և կը կատարէ
միշտ, բայց փոխարինութիւն մը չէ դտած.
մեր ազգն այշափ հարտաշարութիւն կրելով
հանդերձ իւր կրօնքն ու գոյութիւնը պահպանած
է. և կարծեմ ժամանակն է որ հարտաշարու-
թեան խնդիրն այս Ժողովին ուշադրութեանն
տարիկը ըլլայ : Ուտափ կուզամ համաձայնելու
Պատրիարքան էֆէնտիլին. որ առաջարկեց թէ
Յանձնաժողով մը դրուի, և անոր յանձնուի սխտր
եղած քննութիւններն ընել և տեղեկագիր մը
ընել Ժողովին :

ԱՏՆԵԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Քախման
էֆէնտիլին է :

ՔԱՓԱՄԱՃԱՆ Մ. ԷՅ. — Հարտաշարու-
թեանց խնդրոյն վրայ շղթածուող կարծեմ ոչ
ոք չկոյ. մանաւանդ ես աւելի. վասն զի եթէ
հոս լռելով միայն զգամուռներ կան, ես գա-
ւառայց մէջ գտնուած ատենն ակնանտեն եղած
եմ և ժամանակին օրադրայ ալ գրած եմ : Սի-
ղարե ցաւ է տեսնել թէ Հոյ՞ք երբ ոչխորի
սխտ հըւ ժողովուրդ մ'է, իւր տուրքը կը վճա-
րէ և սխտր եղած ծառայութիւնները անբու-
թեան մատուցանելէ ետ շքնար, փոխանակ ան-
բարբութիւն վայելելու՞ հարտաշարութեանց ներ-
քն կը ճնշուի : Ես հարցում մ'ըրած էի թէ
հարտաշարութեանց բարձման համար նոր և
ազգու միջոցներ ձեւք առնուած են մի. այս
հարցուած ամեն բան կը պարունակէր իւր մէջ.
նայն իսկ Սրբազան Հօր տուած բացատրութիւնը
կապուցուցանէր թէ հարտաշարութիւնք գաղ-
բած չեն և անոր բարձման մասին ջրբար-
դու որո՞ք գրուած չէ : Այսօր կուտեմ
ու որո՞ք թէ նոր միջոցներ

ձեռք տանուած են Մեծ եպարքոսին մատուցուած այն խնդրագրով որ հինա կարգացուցեցաւ Կորին Սրբալնութիւնը, յայտնեց նաև թէ այդ վերջին խնդրագրին վրայ մէկ քանի օրէն ետև վերջնական պատասխան ընդունելու խտտում ստացեր է Մեծ եպարքոսին :

Փափագեան էջի նոր յանձնաժողով մը կառուցարկէ . սա առաջարկութեան ես ալ կը ծայնակցիմ բոց պայմանաւ մը . այն է սպասել Մեծ եպարքոսին տրուելիք պատասխանին . որ էթէ դո՛ւրացել չըլլայ , այն առևն յանձնաժողովը կարմնք և տեղեկագիր մը պատրաստել տանք չէ թէ Մեծ եպարքոսին՝ այլ ուղղաւի վեհաօրհան Սուլթանին մատուցանելու համար : ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խօսքը Խօճատարեան էջի նախին է :

ԽօճԱՍՍՐԻՅԱՆ Օ . ԷՖ . — Ծնորհակալ ենք Սրբազան Պատրիարքէն և Վաղարշական ժողովին , որ ներկոց փախուի ժամանակին մէջ թոյլ տուութիւն ըրին մեզ Հայաստանի հարստահարութեանց վրայօք վիճարանութիւն բանալ այս ժողովին մէջ . հարկաւ անոնք՝ որ այս թոյլ տուութիւնն ըրին , փտահութիւն ունին և գիտան թէ Հայ աղքատ հաւատարիմ է իր հպատակութեան պարտոց : Խնդրին՝ որու վրայ կը վիճարանինք , ծանրակշիւ է . այնպէս որ ոմանք վիճարանութեան միջոցին մինչև իսկ կառավարութեան թոյլ վարմանց դէմ դանդաղեալու լան թէ հաւատարութիւն ու արդարութիւն ի գործ չընէր : Ենթադրենք թէ այս գանդատներն իրաւացի ալ ըլլան արտաքին տեսքով , բայց ի ներքուստ չարիքով իրաւացի չենք գըտներ . հինա կրնանք բացարձակօրէն բերաննիս բանալ և ըսել թէ՛ այն կառավարութիւնն՝ որ մէկ կը դանդաղորէր թէ՛ արդարութեան գործադրու չընէր , նոյն իսկ արդարութեան գործադրութեան համար կայր մը դասէն վար առաւ , և նոր կառավարութիւնն իր առաջին Խօսքի Հիմնադրուին մէջ իտարկի վիշիթից անունով նախորդ կառավարութիւնը դատապարտեց : Արեւմտեան պէտք չէ գանդատինք թէ կառավարութիւնն արդարութիւն չգործադրէր . մեք դանդաղեալու ենք թէ կառավարելու գիտութիւնը չունինք , ոչ

միայն մեք , այլ տանն այն աղքերն ալ , որ բարոյական դիտութիւն չունին . վասն զի հրամանները չեն որ կիտավարեն , այլ բարոյականն է որ կիտավարէ . ամենէն բարձր հրամանն՝ որ մէկն է . Սուլթանէն կուգայ , զսպախի մը դժուարել պիտի տաս . այդ դժուարէն՝ որ կարգալ չըլլէ չգիտէր և բարոյական դիտութիւնէն զուրկ է , դուն անոր հագար անգամ պատուիրէ որ մարդ մը բռնես նէ ծեծելով մի տանիր , զարձեալ մտիկ չընէր . հոս Պապը այիի անկիւնըն ալ շատ անգամ կտեսնենք այսպիսի զսպախիներ , բոց կրնանք ըսել թէ Պապը արև հաւանութեամբ կընեն : Ստոնք են որ Հայաստանի գաւառներն ալ պիտի հսկեն . ուր որ երթաս այս տեսակ բարոյական չունեցող զսպախիներ լեցուն են . ըսել է որ մինչև որ ժողովրդեան ասկուութիւնը չըլլուի , և բարոյականին չտրուի տանոց հարստահարութեան ազատելիք չունինք : Առաջի՛ ըստ իմ կարճեաց մեր Վարչութիւնը պարզ աշխատութիւն կընէ այդ թաղերիները գրելով , որոնք ուրիշ օգուտ մը չունին . բոց միայն պատմութիւնը կընեն : Աթէ հարցնէք թէ աւտոր հնարքն ի՞նչ է , ես ալ զայն պիտի ըսեմ , և դժուարին բան մը չէ առաջարկելիք . բոց Հայոց համար նոր բլլալուն կրնայ տարօրինակ թուիլ : Պիտէր անշուշտ՝ որ սանկաստան էթէ մէկ թշնամի ունի , շատ մ'ալ բարեկամներ ունի . բարեկամ կառավարութիւններն ի՞նչ կընեն տանկաստանը փրկելու և բարեկարգելու համար , միթէ կարելի բան է որ անոնցմէ տակի խելք և գիտութիւն ունեցած ըլլանք և երեսնք տէրութեան ըսել թէ մեղի համար սա կամ նա ըրէ : Առաջի առանց իմ առաջարկութեանն ընդարձակութիւն տալու՝ պարզ կերպով կըտեմ , թէ որ նեկոց քաղաքականութիւնը յաջողի և բարենորոգումները ապատարեալ գաւառաց համար միայն ըլլան , հինգ տարի չսլտի անցնի և պիտի ըսենք այսօրուան համար թէ ի՞նչ բաղք ունինք եղեր որ ընդհանուր ժողովոյ մէջ վիճարանութիւն կընինք հարստահարութեանց լընդբոյն վրայ . և պիտի տեսնենք թէ Յ տարի ետքըն այսօրուան տակի զէջ վիճակ մը պիտի ունենանք :

Պէտք է դարձողէս խնդրել թէ քանի որ Տաճկաստանի եւրոպական մասին րնակչաց վիճակն այսօր նկատողութեան առնուած է, տանքս տանի ապական մասին րնակիչ Հայ ազգին վիճակն ալ պէտք է որ նկատողութեան առնուի. այս է ուստիկ մեր ընելիքը :

ՄԲԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այո՛, ինչպէս որ միշտ բարձրած եմ, դարձեալ կը կրկնեմ որ թէպէտ չորս Հինգ տարիէ ՚ի վեր մեր դաստաղի ազգայնոց կրամ հարստահարութիւնները հըրատարակուած են, սակայն մեր ցաւերուն դարձմանը և փրկութիւնը Օսմանեան տէրութեան կատարելիք ընդհանուր բարեկարգութիւններէն միայն պէտք է սպասենք :

Այս միջոցին Ատենայեան կէֆէնտին քաւորդ մը դարար տալ ուզեց, սակայն Փախաղեան և Գրիստատուր կէֆէնտիններու տառջարկութեան համեմատ Ժողովը որունց ասանց դարարի շարունակել նկատը :

ԱՅՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Տէր Մատթէոս սրբազանին է :

S. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. — Երեսօփոխան տեաքք. տիէ սուալ 1871 ին Աղբակին ժողովոց որոշմամբ, գուսաական հարստահարութեանց յանձնաժողովից Ժողովոց մատուցած տեղեկագիրն անշուշտ սչքի անցուցած էք, յորում Հայաստանի մէջ գործուած հարստահարութիւնք մի առ մի նշանակուած են, և այժմ նորին գտնոքք թուելու պէտք չկայ . խնդիրն աւանոց դարմանին վայ է : Կթէ երբք պակաս մը կայ նոց տեղեկագիրն մէջ, այն է որ 20 տարիէ ՚ի վեր գրուած թագրերներու իրողութիւնները չեն ներկայացուած ք. Գրան : Մեր սրտամոկիցներէն Փախաղեան կէֆէնտի տառջարիկց այժմ այդ բանն ընելէ 56 ի խաթմը Հիւսնոցնը բրիտանից վիճակ բարբելու և բաշխուարութիւն մ'էր. ստիպն նորտ տրամարութիւններն ալ մանաւանդ գուսաոց մէջ անդրոպուրնի մնացին, որով նոցն թուականն սուալ ինչ որ կը մեր վիճակը նոցն է գրեթէ և այդ ուստի այսօր Հայաստանի անդրորութեան

համար ինչ դարման պէտք է այն մտածենք . . .

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅ. — (Ընդմիջելով) Գարմանին վրայ կը խօսիր. բայց միթէ դարմանն անցած է օրակարգը. և եթէ անցած է, սակեալ ալ սերունք և խօսիք :

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՅ. — Ոչ միայն օրակարգն անցնելով երկու շաբաթ ետ թողունք, այլ և նախարանութեան ալ կրնանք յըլել, որով ստիպնելով թերեւ տարիներով ետ կը մնայ հարստահարութեանց խնդիրը. աւելի սղէլ չըլա՞ր :

(Շուկք)

Ատենայեան կէֆէնտին ՚ի ըտ թիւն հրաւրելով ընդմիջողները, խօսք տուաւ Ատենայեան Մրբազանին որ իւր խօսից թելը նորէն ձեռք տուաւ :

S. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. — Էս կատարելիքն որ Փախաղեան կէֆէնտին տառջարկած յանձնաժողովն գրուի, որ ոչ միայն տմեն եղելութիւնները պատմական կերպով ամփոփէ, նաև խորդ տեղեկագրոցն պէս. այլ նոցն 71 թուականն մինչև ցարք 5 տարուան մէջ պատահած հարստահարութեանց իրողութիւնները մի առ մի թուելն դատ, նաև քննական եղանակու յորում ըրէլ այն տմեն պատճառներն որանք անգործարելի ըրած են ք. Գրան հրամանները ցուցնէ թէ ո՞ր վային կամ ո՞ր միւթատարիքն որ հարստահարութեանց բարձման համար իրեն զրկուած ք. Գրան հրամանները չէ գործադրած. դարձեալ խաթմի եղանակու քննութիւնք ինչ արդիւնք ունեցած են. թէպէտե դարմանայի բան մը չէ այս օրինակ հրամանագրերու չգործարարուիլը, վասն զի այն պաշտանի կողմէն իրթիլումի հրամանագիրը, որուն տմեն չութեան ներքև կատարուած են հրամանագրոցն սուսրիպ եղած հարստահարութիւնք, ՚ի հարիկ այդ պաշտանեացն պիտի ըսէ թէ պատմուած է ղելութիւնք բնաւ դշորթիւն չուցին և կամ չաւ փաղանցութիւն են. հետևապէս ք. Գրան ալ Մրբազան Պատրիարքին զայդ պիտի ըսէ . յոր

մէ յայտնի կերի թէ ասանկ սարգաւաներու մէջ Բ. Գրան իտրիլլամի հրամանագրին արգիւնք մը չունենար :

Կեզրահայցենմ խօսքս առաջարկելով որ՝ առաջարկեալ յանձնաժողովը ընդ ինցթ կողմուել, և վերջին հինգ տարուան մէջ ի Հայաստան դարձուած հարստահարութեանց իրողութիւնները՝ հանդերձ անոնց համար Բ. Գրան հրամանագրաց չչարժողութեան քննութեամբ ներկայացնել ժողովոյս, որպէս զի մատուցուաւ կայսերական Կռաւարտութիւնն :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Խօսքը Էրաճեան էֆէնտիին է :

ԵԱՂՃԵԱՆ Օ. ԷՖ. — Ժամանակա Պօղոս Պատրիարք քանի մը վարդապետներով Ասլի վաչային գնաց այս հարստահարութեանց խնդրոյն համար. երբ Ասլի վաչան խօսու կը գըրեմ ըսաւ, Պօղոս Պատրիարք սրտախանեց թէ յիսուի կը գրես, բայց Իսիկուտրէն ան զին չանցնիր : Ըսել կուգեմ թէ գործադրել տալու եղանակը սկտք է գտնի Բ. Գրուը :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Խօսքը Փափաղեան Ստեփան էֆէնտիին է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենարանից վըրայ յուսահատութիւն մը կը նկատուեմ. ըստ սըսմ մեր կը խնդրենք, կռաւարտութիւնն ալ կը խստանայ, բայց բան մը չգործադրուիր. վերատին խնդրելու մասին յուսահատութիւն կիմանան : Երբ այս Բնդհանուր ժողովին կողմ կարգեալ առաջին յանձնաժողովը հարստահարութեանց խնդրին ընդհանրապէս իւր սչաղրութեանն աւարկուց ըրաւ, նկատեց թէ Աղբն հաըրտահարութեանց դարմանին համար լինչ կըրնայ ընել, քանի որ իշխանութեան տէրը ինքնէ և կռաւարտութեանն պիտի խնդրէ անանց դարմանը. այս մասին շատ մը մտածելէ ետե յանձնաժողովին անդամները մէկ կիտի մը վրայ միացան. այս է. մեր խնդրելու ենք իշխանութեանն. եթէ այս սարի չկատարեց, գալ տարի վերատին խնդրելու ենք, և շարունակարար ամեն սարի խնդրելու ետե պիտի ըլլանք. մեր քտորարականութիւնն այս սկտք է ըլլայ :

ՌՌԻՍԻՆԵԱՆ ԷՖ. — Խօնդրեցէք և տացի ձեզ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Տարակոց չկայ, երբ բան մը իրաւունքի մը վրայ կը խնդրուի, հարկաւ որ մը անընչաւ կը տրուի : Բայց խնդրելու համար Աղբը երկու եղանակ ունի. մէկ մը Վարչութեան ձեռք, և երկրորդ Աղբային ժողովն ձեռք. Վարչութիւնը հրապարակային նխանք չունի, բարբոցը հան կերթայ, Վարչութիւնն ալ կ'ստուգէ և Թագրիրը կը գրէ. և բարբոցին կըսէ՝ զրեցինք և ուղածէք աւելին զրեցինք և կը ձամբէ բարբոցը :

Իսկ Աղբային ժողովոյ նիտուերն հրապարակային են. ինչ որ մեր հաս կը խօսինք և կը խնդրենք, աչխարհի ներկայութեան կը խօսինք և կը խնդրենք. վասն զի իբրև սահմանադրական ժողով արտօնութիւն տուած ենք ունկընդիրներու հաս գալ և մտիկ ընել, մանուանդ մեր ստենադրութիւնները կը հրատարակուին և ամենուն ձեռք կ'անցնին. նոս կը թորգժանս ունի և տէրութեան ձեռքն ալ կ'անցնին :

ՌՌԻՍԻՆԵԱՆ ԷՖ. — Չթարգմանուած ալ կիմանայ տէրութիւնը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ալ տելի աղիկ ոչ սպարէն մեր ժողովին ալ մեր ցաւերը կռաւարտութեան ներկայացնելու միջոցները խորհելու համար է : Մինչև ցարք Պտանեան դրօշին ստիկ սարկեցանք, և մեր կրօնը, լեզուն և աղղութիւնը մեր սրտատական հարց և նախահարց շնորհիւ պահպանեցինք. այդ դրօշը պինդ պիտի բռնենք և անիչ չպիտի բոծանինք. ուրիշներու պէս յուսահատ չըլլալով միշտ պիտի խնդրենք Կայսերական կռաւարտութեանն մեր ցտոց դարմանը, մեր կենայ, սրտուց և ընչից ստրահալութիւնը : Ռուտի 5 տարի առաջ մատուցած տեղեկագրիմիս նորին պէտք է ներկայացնենք, ի միային մատուցանելով անիչ ետք եղած զէպրերն ալ. որք սրժանադրութեանն կրնան քաղուիլ և մինչև 8 որ պատրաստուի :

Արքադան Պատրիարքին մատուցած վերջին տեղեկագրին՝ որ հիմն կարգապետեցաւ, լընցինքը ըսի առաջին անգամ խօսելու տունն թէ անոր վրայ զիտողութիւններ ունիմ, որան մէկ կը ներկայացնեմ : Արքադան Հայրն եթէ ուշադրու-

թիւն ըրած է, կրնայ յիշել թէ մեր գումարա-
ցի ազգայնոց ցաւերն երբ բաղմնայած են, և
տրտունջները ու բողբոջները մեծ արձագանք
գտած. անոնց դարմանին համար Բ. Գլուռը
անմիջապէս յանձնած որոշիւնք անուանած է աստ,
և կամ քննիչներ զլրացած է ի դաւառաւ : Այս
քննչութեան արդիւնքը որչափի յայտնի չէ .
բայց բողբոջներն ու տրտունջները դադարած չը-
լային կրնայ հետեւել թէ ատոնք զոչացուցիչ
արդիւնք մ'ունենցած չեն, և աւելի ժամապա-
ճատութեան ծառայած են :

Երբ ասիէ առջ Բ. Գլուռը հարտաշա-
րութեանց յանձնաժողով մը դրաւ, անիկա ժա-
մանակին պահանջումն էր. բայց անիէ ետև
տեղութեան վիճակը փոխուեցաւ. և իրերն ու-
րել կերպարանք առին. ինչպէս նաև նոյն յանձ-
նաժողովն իր նիստերը դադարեցուց. հիմա նորին
յանձնաժողով ուզելն ուրիշ բան չէ, բայց եթէ
ժամանակ կորուստանել : Այդ տեսակ յանձնաժո-
ղովներ Պատրիարքարանի ընտրութեանին ալ
գրկուած են երբեմն զուրտերը, բայց դարձեալ
արդիւնք մ'ունեցած չեն. ահա Աղբակեան
Սարգիս Էֆէնտին հոս է. երբեմն ազգին կողմէ
Զէյթուն դնաց, ամասակներն ալ ազգին պն-
տուլէն ստացաւ, բայց չկրցաւ ազգին տեղեկա-
գիր մը տուլ և իր կատարած պատճոհին ար-
գիւնքն իմացնել Աղբին. այս Էֆէնտին վրայ մի
պղչէք : Վասն զի օրւոտ մը չկայ : Բայց իմ ը-
սած յանձնաժողովս զրէք. կուղչէք նէ զիս ալ
անդամ ընտրեցէք. մեք կը բերենք տեղեկագրի-
րը և Տ օր չանցած կը բերենք : Երբ հաւասա-
րութիւնք լրացան և անմիջապէս գործադրուի,
կերբ երկրին վարչութեան, դատատրութեան և
պահպանութեան՝ մեր ազգային աղաւ ընտրու-
թեան իրաւամբը մասնակիցեք, յայժամ իրա-
պէս կը գարմանուի մեր ազգայնոց վիճակը նոյն
խի Օսմանեան դրօշին տակ : Ահա առաջարկու-
թիւնս գրով կը ներկայացնեմ. ամխնեբու հարկ
չկայ, Տ օր բաւական է տեղեկագիրը պատրաս-
տելու :

Ստեփանոս Էֆէնտին խօսքը վերջուցելէ
ետև իւր առաջարկութիւնը դրաւոր յանձնեց
Գլխաւին. որ է

«Առաջարկեմ որ Ազգային ժողովն անուա-
նէ յանձնաժողով մը. որոյ պաշտօնն ըլլայ տեղե-
կագրել այն հարստահարութեանց իրողութիւն-
ները, որք Ազգային ժողովոյ առ Բ. Գլուռն
մատուցած առաջին տեղեկագրին թուականն է
յետոյ՝ Պատրիարքարանի թագրիքներովը ծա-
նուցուած են Բ. Գլուռն, յանձնաժողովն Տ օրէն
իր տեղեկագիրը պատրաստէ և խորհրդիս ներ-
կայացնէ. և խորհրդս յետ քննութեան ընդա-
նելով մատուցանէ զայն Բ. Գլուռն, Ս. տեղե-
կագրին ալ ի միասին տալով, և խնդրելով կայ-
սերական կառավարութեանց նկատողութեան արձ-
ւելը և թէ հաւասարութիւնն իրապէս և անմի-
ջապէս գործադրուելով՝ երկրին վարչութեան,
դատատրութեան և պահպանութեան՝ ազգային
ընտրութեանի մասնակցութեան իրաւունք տըր-
ուելը » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Ղաղարուսեան
Քրիստոստոր Էֆէնտին է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ինչէ առաջ խօ-
սող երեսխոսաններ խօսեցան հարստահարու-
թեանց խնդրոյն վրայ և դանազան դարմաններ
առաջարկեցին, որոնք ես ալ կընդունիմ. և
անոնց վրայ կը յանդիմանեմ նաև թէ մեր գաւա-
ռական սահմանադրական ժողովները պէտք է
տեղական կառավարութեանն ալ ի պաշտօնե-
ճանչուին, և անոնց մատուցած խնդրիքները
նկատողութեան առնուին. ան առեւն ցաւոյ
դարման տեւել շուտ կըլլայ : Ըստ մեր սահման-
նադրութեան Սրբազան Հայրը և ազգին ժողով-
ները երբ յանցաւոր դատեն մէկը, կրնան իւ-
րոյն պատժել զանի. նոյնպէս պէտք է պատժեն
նաև վրայիները զմիթչարըքները, եթէ ատոր
յանցաւոր դատուին, միթչարըքը զլայնաբանու-
նէ Բ. Գլուռն վրայիս, կերբ Տէրութեան հրաման-
ները և երկրին օրէնքները ի գործ չդնեն վա-
րը. մեր Վեհապետն ալ կուզէ որ օրէնքը գոր-
ծադրուի և հաւասարութիւնը իրականանայ. և
ընչից ու կենաց ապահովութիւնը տրիք է Բայց
քանի որ միւթթի Էֆէնտին զիս դատէ, մի մի-
այն կրօնքին ուժովը, մեր խօսքեան ոչինչ եղած

կըլան : Անոր համար պէտք է ամէն բանէն առաջ խնդրենք որ հաստատութիւնը գործադրուի . և զայն չգործադրողները ու օրինաց զանցառուները պատժուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷԾ. — Խօսքը Տէր Ամբարի.
ու հայր սուրբին է :

Տ. ԱՄԲԱՐՍԻՍՈ Վ.ԱՐԻ. — Հարտաշարութեանց դարձանի տեսակներուն մանրամասնութեան վրայ խօսքեր եղան . և ալ համաձայն եմ , և անոնց վրայ յաւելցնելիք կէտ մ'ունիմ . և կարծիրս փորձառութեան վրայ հիմնած եմ , և կըսեմ որ մեր ձեռք առած միջոցներն արդիւնաւորելու մասին մեծ յոյս ունիմ :

Ասիկն առաջ չեմ յիշեր ո՞ր նախարարին օրովն էր , Հայոց ազգին դարաւոր նախագործ , եւս մէկ արածունութիւնը բաձնալ ուղղեցաւ , և հրաման եկաւ Բ. Վահէն՝ որ Պատրիարքութեանը քաղաքական խնդիրներուն համար Թաղաւորի չգրէ , այսինքն հարտաշարութեանց վրայ բան չգրէ :

այլ թաղարի դրելու արածունութիւնը մեր ձեռքէն առնուլ ուղղելուն համար բաւական յուշուցանք , և զայն սրահանելու համար պէտք եղած ջանքը շնայեցնելիք և յաւելոցանք : Անկէ ետք Բերայի գերեզմանատունն ուղեցին մեր ձեռքէն առնուլ . մեր առանց վճատելու Պատրիարք և Վարչութիւն , տունն ալ ալ զտարիական ոգւով վառեալ դէմ կեցանք , և խնդիրը ներկայացուցինք մինչև այն տեղ՝ որ կրնար լսուիլ զրիկելոյն ձայնը . այսինքն՝ արքունի պալատը . ուրիշ անմիջապէս հրաման եկաւ որ ազգին ստացուածքն առ ինքն զառնայ , և այն դերեզմանատան վրայ կնիք մ'ալ զարնուէ :

Կրնա՞նք հաստատ ասացոյց Հայոց ազգին ջառ , իրրև հաստատ ասացոյց Հայոց ազգին սեպհակրանութիւն մնալու : Ասոնք մէկ մէկ նըշանակ են՝ որ երբ մեր խնդիրները փութոյ պնդութեամբ կատարութեան հաղորդենք , կատարութիւնը չընդունելիք չընէր : Հարտաշարութեանց խնդիրն ալ նկատարութեան առնելու համար Վուրը հաւանեցաւ , ինչպէս Սըրբազան Պատրիարք հայրն աւետեց , յատուկ Յանձնաժողով մը կարգել : Բայց քաղաքական փոփոխութեանց պատճառաւ յանձնաժողովոյ պաշտօնն ևս մնաց , թեևս անգործութեան

գատարարուած է . չենք զխտր արդի նախարարութիւնն ի՞նչ կարծիրի մէջ է . բայց մեր վճատելու չենք , ամեն բանէ առկի հարտաշարութեանց խնդրոյն վրայ դաժածուելով զխմելու ենք վերջապէս որ որ հարկ է . ինչպէս որ այս Ընդհանուր Ժողովը տիրութեան ուրախութեան ժամերուն մէջ իւր ուրախացողութիւնն ուղերձով յոյանելու չկարանեցաւ , նոյնպէս մեր ցաւոյ ժամերուն մէջ ցաւերնիս ալ անգատարուող յայտնելու ենք . մանաւանդ երբ այնպիսի վեհապետ մ'ունինք , որ մեր բնիկ չկրցածը ինք բացարձակապէս ըստ , խաարկի քննիկն : Աստանի վեհապետին մը օրով ամեն բարեկարգութիւն յուսարի է , և մենք զայն խնդրելէ ևս կենալու չենք :

ՉԱՏԵՆԻ. — Վուրէ , բուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷԾ. — Խօսքը Պատրիարքանէն է՞նչ նախիկն է :

ՔԱՓԱՄԱՅՆԱՆ Մ. ԷԾ. — Հարտաշարութեանց տեսակներուն վրայ խօսիլ աւելորդ է : վանն զի այդ մասին ընդդիմախօս ալ չունինք և ամենուրեք գաղափարը միննոյն է : Միայն թէ Սըրբազան պատրիարքն ըստ որում աւետեց մեզի որ Մեծ Եղարբոսը վերջնական պատասխան տալ խոստացած է , առաջարկեցի որ այս վերջնական պատասխանին տարանք , եթէ զհայացոյցի չըլլայ այդ պատասխանն , լայն տուն կատարեալ տեղեկագրով մը մեր ցաւերը կըրնանք ուղղակի մեր վեհապետին յայտնել , վանն զի ուրիշ զիմելու տեղ մը չունինք , այլ միայն մեր վեհապետին կրնանք զիմել : Ս'հա այս կէտը բուէի դրուիլ կառավարեմ :

ՔԱՓԱՅՆԱՆ Ս. ԷԾ. — Իմ առաջարկութիւնն այդ չէ , որ պէտք չէ անցունենք . 6-7 հոգիք բաղկացեալ յանձնաժողով մը դնել կառավարեմ , որ վերջին 4-5 տարուան հարցս տաճարութեանց քաղաքացի տեղեկաղիրը պատրաստէ և Ժողովիս բերէ :

ՔԱՓԱՄԱՅՆԱՆ Մ. ԷԾ. — Բան մը չենք կրոնցներ թէ որ մինչև յառաջիկայ նիստ ըստ պատանք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷԾ. — Վիճարանութիւնն իւր վտրմանին գրեթէ հասած է , քուէորիութեան

տիտի ձեռնարկներ, և քուէի զրուելիք առաջարկութիւններն ալ շատ անտակ չեն. վիճաբանութեան վտակման մասին Ժողովին կամքն ստանալէ ետեւ, կարգը կուգայ առաջարկութեանց քուէարկութեանը. բայց նախ պարտաւորութիւն մ'ունիմ կատարել. զիտեք որ ծանր խնդիր մ'էր որ ոչսօր յուզուեցաւ. Սրբազան Հայրն իւր կողմէ քանի մը բացատրութիւններ տուաւ. առաջարկութիւն մ'ալ կայ յանձնաժողով մը դրուեցաւ համար. միթէ Վարչութիւնն ալ պէ՛տք չէ որ ընկեր թէ զխտուութիւն մը ունի՞ այս մասին: Աստի քուէարկութեան ձեռնարկելէ առաջ կը հրահարեմ Վարչութեան անդամները որ եթէ զխտուութիւն մը ունին Ժողովին հարգուեն:

ԱՊՐՈ Ս. ԷՑ. — (Ստեղծագործ Քաղաքական ժողով) Այսօր Ազգային ժողովը խիստ ծանր խնդիր մը յուզեց և անապարտնօք զայն ըստել կուզէ. այս անապարտնօքը հիմնադրար կը տեսնեմ, վասն զի դեռ քննելի տեղեր ունի խնդիրը, Սրբազան Ատորարքը արդէն քայլ մը առած է, առանց անոր ելըը տեսնելու ուրիշ տնօրինութիւն ընելը քաղաքագիտութեան համայն չէ. ընդհակառակն արդէն կըլլայ Վարչութեան ընելիք դարմաններուն: Այժմ է զիտնալ որ խնդիրն ըստ ինքեան որչափ ծանր, այս օրուն պարագաներուն մէջ այնչափ անելի ծանրոցած է. դուք միայն Անտառույի կողմէրը պատահած եղելութեանց վրայ կը մտածէք, և եթէ Երբոսկան Տաճկաստանի մէջ եղածներուն հետ բարդատեղէ՛ր Անտառույի մէջ եղածները շատ թեթեւ կը գտնենք. Եւք զիեզ սրբան Ատորարքը Բարձրասպետի Մեծ եպարքոսին զիմած է վերջին անգամ և պատասխանն ընդունելու խտուում առած է, սկստ է առնուելիք պատասխանին սպասել, վասն զի անապարտն աղէկ չէ և խոչմութեան դէմ է. այս առաջարկութիւնն ընելով Վարչութիւնն Ազգային ժողովը ընելիք գործին դէմ պատուար յորուցանելու միտք հունի. այլ Մեծ եպարքոսին տուիք պատասխանն առնուելէ ետեւ դարձեալ կարող է ընել ինչ որ ուզէ, եթէ Ձեր

Վարչութեան զխտուութիւնը մտիկ ընել վերադեր, եթէ անվտանգութիւն ունիք իւր վրայ: Վարչութիւնը հետախու չէ պաշտօն վարելու, և յօժարամիտ պատրաստ է նետել այն ընտրողը դարձ էք իւր վրայ: Ես արդէն ըսած եմ այս Ժողովին մէջ թէ Վարչութիւնը մի միայն ձեր անվտանգութեամբ կրնայ գործ տեսնել. իսկ եթէ Ազգային ժողովն հարստահարութեանց խնդիրը ուզէ իւր վրայ առնուլ, այն ատեն Վարչութեան գործ չլնուար այս մասին: Վերջապէս Ազգային ժողովը հեղինակութիւն ունի և կարող է իւր մեծամասնութեամբ ամեն բան ընել. ասոր դէմ ըսելիք չունինք. սակայն Վարչութիւնն ալ իրաւունք ունի իւր զիտնալութիւններն ընելու. և առաջարկելու, որ ասայժմ Ազգային ժողովն սպասէ Սրբազան Ատորարքը շօր առնելիք պատասխանին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ստեղծագործ Եփեսոսի, Վարչութեան դէմ անվտանգութեան բուն մը չկայ. հասնցէք առաջարկութիւնս Ժողովին քուէին դնել. եթէ Վարչութիւնը կը խտուանայ մեր ուղած տեղեկագիրն 8 օրէն ինք բերել, Յանձնաժողովը առաջարկութիւնն ան առնէ ետ կտանում:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Առաջարկութիւնը մէկ է, որու վրայ յանգած է զիճարանութիւնը յանձնաժողով մը կտառարկուի որ պտուտն ունենայ Վարչութեան արձանագրութիւններին հաւաքել և ամիսիւն այն ամեն եղելութիւնն որ հարստահարութեանց խնդրոյն կը վերաբերի միայն թէ այս յանձնաժողովին կաշմութեան և գործելու եղանակին վրայ երիտ կարծիք կայ մէկ կարծիքն այն է որ յանձնաժողովին ընելիք ամիսիւնն 8 օրէն այս Ժողովին ներկայացուի և սկստ եղածն որոշուի. ասի Ապոկոսիան է. Ֆինտիին կարծիքն է. իսկ միւս կարծիքն է անվտանգութեան վերջապէս Վեհախառն Ինքնակազմն մատուցանել այս ալ Ամբոսիտ հայր սուրբին կարծիքն է:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Այլ իմ կարծիքն է այդ ալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Դատ աղէկ, թող ձեռնարկելն ալ ըլլայ. ասոր դէմ Քաղաքական ժողովը Ստեղծագործ Ազգային Եփեսոսի զխտուութիւնը

Թիւն մ'ըրաւ . ըստ թէ ամեն բան կրնաք ընել, բայց պայմանաւ մը . սցայնքն թէ Սրբազան Պատրիարքը յանուն Վարչութեան բանտիցութեան մտած է Մեծ եղաբարբոյն Հեռ և զեռ վերջին պատասխանն առած չէ . սկսաք է համբերել մինչև այդ պատասխանն առնուի, և ետքը գործել: Ասոր զէմ ալ Փոփոխութեան էֆէնտին ըստ թէ Վարչութիւնն եթէ ինք յանձնառու կըլայ մեր ուղած տեղեկագիրն Տ օրէն բէմել, յանձնաժողով չենք դնել, Սյապն չէ՞ Փոփոխութեան էֆէնտի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ ըսածս այս է. եթէ յանձնաժողով դնելն Վարչութիւնն իրեն զէմ անվտանգութեան ցոյց մը կը նկատէ, և եթէ ինք կը խոստանայ Տ օրէն ուղարկած տեղեկագիրը բերել, յանձնաժողով անուանելու հարկ չկար:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Գարձեալ կերպիւ մը անվտանգութիւն ցոյցնել է Վարչութեան զէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մամիկոնեան էֆէնտին թող բացարթ ի՛նչ ըսել կուզէ:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՏՆԵՐ. — Ոչ ոչ. քուէ կուզենք:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ապօրինաոր է քուէ ուղեկընդ. Վարչութեան զէմ անվտանգութեան քուէ տալ կուզեք նէ՞ այդ չէմ գիտեր. Եթէ այդ քուէն տար՝ կը ըմնայ ամեն բան . սպա թէ ոչ հակառակեան մէջ կը զըռնուիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մամիկոնեան էֆէնտին դիտարկելու տեղի չունի . այնպէս կը կործէ թէ այս Եղբորին կողմէ յանձնաժողով դրուելը Վարչութեան զէմ անվտանգութիւն կը նշանակէ . բայց կը սխալի . որովհետև այս առաջին անգամը չէ որ Աղգային ժողովը հարտահարութեանց խնդիրն իւր խորհրդածութեան առարկայ կընէ. ահից ՚՛ տարի տառ՝ ալ նոյն խընդիրն իր մէջ յուզած և յանձնաժողովով մը քըռնած է . այն առնն Վարչութեան զէմ անվտանգութեան կտակած մը ընող չեղաւ . Փափաղեան էֆէնտի այս օրուսն առաջարկութիւնն ալ ՚՛ տարի առաջ դրուած յանձնաժողովն չա-

րանակութիւնն է, ուրիշ բան չէ, և ասոր մէջ Վարչութեան զէմ անվտանգութեան ցոյց մը չկայ . Հեռետպէս բարբորին անտեղի է առաջարկութեանց մէջ Վարչութեան զէմ անվտանգութեան ցոյց մը նշարել, մանաւանդ այս մասին տրուած բացատրութիւնները լուէլ ետքը: Ուստի Վարչութեան վեմ. Առնապետին ըրած յայտարարութեանը մէջ նկատողութեան առնելու կէտը մի միայն այն է թէ Սրբազան Պատրիարքը յանուն Վարչութեան բանտիցութեան մտած է Մեծ եղաբարբոյն Հեռ, խոհեմութիւնը կը պահանջէ ըստ, որ այս բանակցութեան ելրին սպասուի:

Խօսքը Վարչութեան անգամ Մագալուսեան էֆէնտիին է:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ որում ամեն տեսակ յարաբերական գործոց պատասխանատուութիւնը Վարչութեան վրայ է, և կը տեսնեմ որ Աղգային ժողովն անվճարէս իւր մէջէն յանձնաժողով մը կազմութիւնը քուէի դնել կուզէ, իբրև անգամ Վարչութեան այժմէն կը յայտարարեմ որ եթէ Եղբորն այս տեսակ յանձնաժողով մը դնէ և ինք միջնակէ այս գործերուն, Վարչութեան վրայ այլ ևս պատասխանատուութիւն չկարողանալու հարտահարութեան, այլ Աղգային ժողովն ինք իր վրայ առած կըլայ այս գործը հանդերձ պատասխանատուութեամբ:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՏՆԵՐ. — Վիճարանութեան վախումը քուէի դրուի:

ՔՕԼՕԼԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, անվճարէս վախել չըլար:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես խօսք ուզած եմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, Մամիկոնեան էֆէնտին խօսք ուղած է . բայց Եղբորն պիտի հարցնեմ թէ թղլուութիւն կընէ՞:

ԶԱՏՆԵՐ. — Ոչ ոչ. քուէի վրէք:

Առնապետ էֆէնտին քուէի դրու վիճարանութիւնը շարունակելու կամ վախելու խորհրդ. Եղբորն ընդդէմ 20 քուէի՝ 26 քուէով վիճարանութիւնը վախել ՈՐՈՇԵՑ:

ԱՏՆԵԱԳԵՏ ԷՖ. — Պահ մ'տառջ Փախաղ-
եան էջէնտին իր առաջարկութեան թուգլն
տառ Գլեանէն և բարեխօսեց . կարգչեմ որ
կարգուց և քուէի զենք :

Փախաղեան էջէնտին կարգաց հետեւեալը .

« Կառավարիւմ որ Ազգային ժողովն ան-
տանէ Յանձնաժողով մը , որոյ յրաշտօնն ըլլայ
տեղեկագրել այն հարստահարութեանց իրողու-
թիւնները , որ Ազգային ժողովոյ առ Բ. Գրան
մատուցած առաջին տեղեկագրին թուականէն
յետոյ Պատրիարքարանի թաղիլիններուը ծա-
նուցուած են Բ. Գրան . Յանձնաժողովը Տօրին
իր տեղեկագիրը պատրաստէ և Ժողովիս ներ-
կայացնէ » :

ԱԳՐՈ Ս. ԷՖ. — Եթէ Ժողովը քուէար-
կելով այդ առաջարկութիւնն իր մեծամասնու-
թեամբն ընդունի , այն ատեն Վարչութիւնն
ինքզինք պառա կը հուշակէ ամէն պատասխանա-
տուութենէ :

ՉԱՅՆԵՐ. — Ստուգալիք է այդ , չենք ըն-
դունիր :

(Նրկարատե արմուկը) :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ — Խօսք կուղեմ :

ԱՏՆԵԱԳԵՏ ԷՖ. — Խօսքը Փախաղեան Ս.
էջէնտինն է իր առաջարկութիւնը բացատրելու
համար :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ներեցէր որ իր
տեղ առաջարկութեան ես պատասխանեմ Ա. Գրո
էջէնտինին :

Առաջարկութեան հոգոյն ուշադրութիւնը
բեր , որ ուրիշ նպատակ չունի , բայց եթէ այս
տեղեկագիր մը պիտի ելնէ Ընդհանուր ժողովէն
չորս . այս տեղեկագիրը նոր բան չցլտի պարունա-
կէ , այլ վերջին Յ տարուան մէջ մինչև ցայսօր
1876 սեպտեմբեր 10, Վարչութեան քրած թաղ-
րիւններուն հաւաքածոյն , որպէս զի գիտցուի թէ
Ազգային ժողովոյ առ Բ. Գրան մատուցած
տեղեկագրին ինչ արդիւնք ունեցած է . եթէ

վաղն ուրիշ նոր խնդիր մը ելնէ , դարձեալ
Վարչութեան կը պատկանի անոր վրայ պէտք
եղածը տնօրինել . յանձնաժողովը չցլտի միշտ
մըտէ նոր պատահելիք խնդրոյ : Կարծեմ թէ
այս բացատրութիւնս զահ կընէ զամենայդ . միտ
բանիւ իմ դաղակարս սո է թէ ամէն Յ տարի
վիճակագրութիւն մ'ընենք և գիտնանք թէ զա-
ւառաց հարստահարութիւնք ինչ աստիճանի մէջ
են , նուազած թէ յաւելած : Եթէ Ստաւած
ողջ պահէ զիս և Նրեախօսան մնամ , Յ տարի
վերջը այս օրուան պէս առաջարկութիւն պիտի
ներկայացնեմ , այս օրուան թուականէն 187
սեպտեմբեր 10 էն յետոյ Պատրիարքարանի
թաղիլինները քննելու և տեղեկագրելու առ Ս. Է.
չային ժողովն , որպէս զի գիտցուի թէ այս ան-
գամի տեղեկագիրն ալ ինչ արդիւնք ունեցած
է , և դաւառայի աղջայնոց վիճակն ինչ աստի-
ճան բարեօքած :

Սոյն միջոյն Փախաղեան Ստեփան էջէն-
տին կրօնական և Քաղաքական ժողովոց ատե-
նապետներուն և անոնց անդամակցաց ոմանց
հետ միանալով , պահ մը առանձին բանակցիլե-
տեւ , եկաւ Գլեանիւն յայտնելու թէ համաձայ-
նած են իրեց մէջ , և իր առաջարկութեան
զիրը յանձնեց Գլեանին խնդրելով որ քուէի
զնէ :

Տ. ԽՈՐԷՆ Վ. ՄԻԹԱՐԵԱՆ. — (Ստեփան)

պէտ կրօնական ժողովոյ) Կը յայտարարեմ թէ
Վարչութեան կողմէ անհամաձայնութեան կէ-
մը մնացած չէ :

ԱՏՆԵԱԳԵՏ ԷՖ. — Ուրեմն ժամ է Փա-
խաղեան էջէնտինի առաջարկութիւնը քուէի զե-
նել :

ԽՕՃԱՍՏՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կառավարիկեմ
նախ Վարչութեան համար վտասաւթեան քուէ
տալ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Նոյնը կը կրկնեմ

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒԷ ԷՖ. — Մեր Պատ-
կաւելի Ժողովոյը կողմէ Վարչութեան զեմ ան-
վրաստութեան ցոյց մը չենք նշարք . ուստի
և վտասաւթեան քուէի չենք սպասեր : Միայն
թէ Ազգային ժողովոյ կողմանէ այս խնդիրը

ստանձնելու դիտարութիւն մը նշմարուած միջոցին, Վարչութիւնն ալ ինքզինքը այս խորհրդայն նկատմամբ ամեն պատասխանատուութիւնէ ազատ համարելն յայտարարելու իրաւունք ունէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն, բանի որ եղած առաջարկութեան նկատմամբ Վարչութեան և Ժողովին մէջ ծագած անհամաձայնութիւնը պարզուեցաւ, և Վարչութիւնը համոզուած թէ իրեն դէմ անխտաճութեան ցոյց մը եղած չէ, վստահութեան քուէ չբաժնանջէր, այլ ևս Խօճատարեան և Մեղիբեան կֆէնտիներու առաջարկութիւնը քուէ դնելու հարկ չմնար, հետեւեալս Փախաղեան կֆէնտիի բարեփոխեալ առաջարկութիւնը քուէի կը դնէ :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Վրուելիք յանձնաժողովին պաշտօնը մինչև ո՞ր պիտի տարածի. Արարչան Պատրիարքին Մեծ եպարքոսէն առնելիք պատասխանին ալ պիտի միջամտէ, ինչ պիտի ընէ. այս կէտն ալ ճշդեւ պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարախոս չունիմ որ Փախաղեան կֆէնտիի բարեփոխեալ առաջարկութիւնը որ Վարչութիւնն ալ ընդունեց, Ըսելէ ետեւ, Շահպազ կֆէնտիի ըրած դիտողութեան պատասխանելու հարկ չի մնար :

Ատենապետ կֆէնտին կարգաց Փախաղեան կֆէնտիի առաջարկութիւնը, որ է այս

« Կառաջարկեմ որ Աղբային Ժողովն անուանէ Յանձնաժողով մը, որոյ պաշտօնն ըլլայ տեղեկագրել այն հարստահարութեանց իրօքութիւնները, որք Աղբային Ժողովը առ Բ. Գառն մատուցած առաջին տեղեկագրին թըւակիանէն յետոյ՝ Պատրիարքարանի թաղրիրներովը ծանուցուած են Բ. Գրան. Յանձնաժողովը 8 օրէն իր տեղեկագիրը պատրաստէ և Ժողովն ներկայացնէ » :

Ս. Պ. Պ. ՔԱՓԱԶԵԱՅՅ

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Յաւելուցէք նաև Աղբային Ժողովը ներկայացնել ՚ի տեղեկագրին բարոյ :

ՔԱՊՄԱԹԻԻ ԶԱՏՆԵՐ. — Ոչ ոչ, աւելորդ

է, կառաջարկներ տուող յաւելումի քուէի դնել :

Սոյն առաջարկութիւնը քուէի գրուելով, միաձայն հաւանութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՏԱԻ Ժողովն :

Ուսուինեան կֆէնտի միայն ձեռնպահ դրուեցաւ այս քուէարկութեան մէջ :

Յանձնաժողովի անդամոց ընտրութիւնը կատարուելով, Գլխաւի առաջարկութեան միայն անդամ անուանեցան .

1. Տ. Կարապետ Եպիսկ. Սերբրեան
2. Տ. Մատթէոս » Իգլիբրեան
3. Տ. Յովհաննէս Վճից. Միլլեան Պ. Պիանդը
4. Իւթիւճեան Կարապետ կֆէնտի
5. Մէրէմ-Պոլլի Յարութիւն »
6. Փախաղեան Ստեփան »
7. Պէշլարմուճեան Տ. »

Ետեւ 10 քառորդ անցնելով՝ Ատենապետ կֆէնտին ստեանը փակեց, յայտարարելով որ յաջորդ նիստն 8 օրէն պիտի գումարի, յետագայ Օրակարգով՝

Ա. Տեղեկագիր խորհրդարանական յանձնախմբին և փերայ հարստահարութեանց խնդրոյն Բ. Քուէարկութիւն Աղբային տրոյ օրինական բարեփոխութեանց :


Գ. Պատասխանի Վարչութեան Խտուն Ժողովը՝ Փախաղեան կֆէնտիի հարցման նկատմամբ :

Դ. Վերաբնութիւն սահմանադրութեան, — Շարունակութիւն վիճարանութեան յօդուածոց Թաղական մատակարարութեան :

ԱՏԵՆԱՊԵՐ
Յ. Օ. ՍԵՆՏԻՅ

ԱՏԵՆԱՊԵՏ
Օ. ԵՆՈՒՆՈՒՆԵՏ





ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1976 ԱՄՆՆ

ՆԻՍՏ ԺԱ.

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄՆՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՅՐ
ԱՏԵՆՈՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇՄ. ԱՍԻԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՎՈՒԹԱՆԻՔ

ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒԹԱՆԻՔ

ԵՆԵՂԵՍՈՎԱՆՔ

1. Խորին Աբրահամյան Կար Գև. Բ. Պ
2. Կարապետ Եղևակ Սև ըրբեան
3. Մատթոս ,, Իդիլլիականց
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
5. Գարեգին ,, Փայտարեան
6. Խորին ,, Կերոյեանց
7. Հմայեակ ,, Դիմաքեան
8. Յովհաննէս ,, Փափաղեան
9. Ներսէս ,, Աւստեան
- 10 Պողոս ,, Խոյտամեան
11. Եղիշիկ ,, Սպառնոյի
12. ԱսիատակաՎ. Մամբրեան
13. Գէորգ Առժրուհի
14. Գրիգոր Աճէմեան
15. Խորին Փէլէրովանեան Բ. Պ
16. Յարութիւն Սերովեան
17. Յովհաննէս Մկրեան
18. Սուրբա Ստեփաննոսեան
19. Սահակ Տ. Սարգիսեան

ԱԵՐԱՐՀԱՎԱՆՔ

(Ս. Վիճակ)

- Գուճապար, Եղիշիկ փառս և
Գուճապարի զուրս
21. Գրիգոր Պէրպեղեան Բ. Պ

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. Պ Բացակայութիւն ըստ առ քր պատճառ :

22. Գեորգ Ստեփանեան
23. Խաչիկ Մանուկեան
24. Կարապետ Աղաբաղճեան
25. Համբարձում Մաղպուրեան
26. Մնաս Գափամանեան
27. Յովհաննէս Խորատամեան
28. Յովհաննէս Պրոքսեան
29. Յովհաննէս Սուրբեան
30. Ն. Մկրչպուրեան Տորթօր
31. Պողոս Պառնասեան
32. Ռուբինեան
33. Սարգիս Աղաբաղճեան
34. Սահակ Աղբո
35. Սեփեղիմ Մանուկեան
36. Փէլաքմանեան Տորթօր
- 37.

(Ս. Վիճակ)
Պէլիկիւրց

38. Բարսեղ Հարսեան
39. Կարապետ Ս. Իսթիւնեան
40. Յարութիւն Մարգարեան
- Էլիկիւրց
41. Խաչատուր Գաղարեան
42. Կարապետ Գ. Փափաղեան
43. Մարութ Յըմեկեան
- 44.

Խոսկիւտար Ս. Խաչ

45. Յովհաննէս Ծառեան
46. Յովսէփ Ս. Մաղպուրեան
47. Սեբորժ Պառնասեան
48. Ստեփան Աղաբաղճեան

Խոսկիւտար Ս. Կարապետ

- Բ. 2 40. Մեհրաբ Պաշտօնապետեան Բ.
50. Յովհաննէս Քիլիանեան
- Բ. 2 51. Կիլիկոս Առնանեան
52. Տրդատ Փափաղեան
- (Ս. Վիճակ)
- Բ. Բերս և Գարսի փառս
- Բ. 53. Աբրի Ռոնեան
- Բ. 54. Գրիգոր Ալիմովեան Բ.
- Բ. 35. Մարտիրոս Յ. Տիլեան
- Բ. 36. Մերայէլ Մանուկեան Բ.
- Բ. Պ 37. Նուստ Բաղաղեան Բ. Պ
58. Ստեփան Խոսկիւրցեան Բ.
59. Տն ըմար Մ. Կաթրեան
60. Իրիտ Զայեան
61. Յարութիւն Կարապետեան
62. Գրիգոր Մաթեանեան

Միւրաղիդ

63. Կարապետ Պ. Պրեանց Բ. Պ
64. Յակոբ Էդեսոսեան Բ. Պ
65. Յակոբ Պ. Կորատակեան
- Բ. Պ 66. Յովհաննէս Աղաբաղճեան Բ. Պ
67. Տրդատ Երատեան
- Պէլիքոզ և Գարսիս
78. Յ Արեւիճ-Գուշի

(Ս. Վիճակ)

- Բ. Պ Գուրգուճեան և Իճն
69. Յովհաննէս Կոստեան
70. Ստեփան Պէրպեղեան

Գաղղիոյ
 71. Կորստիս Դաւթազեան Բ. 3
 72. Մկրտչ Մուրառեան Բ. 9
Նարդրայու
 73. Յակոբ Ելմկեան Բ.
Ենիմանալէ Սաւարիոյ
 74. Օզսէ Խճասարեան
Թօնիգայիւ
 75.
Էյուս Ս. Եղիս եւ Ս. Ատառախանի
 76. Գարեղն Յ. Մեկերեան
Գորուղչմէ
 77. Աստիս Իկտազեան
Հիւար եւ Պյաճի զիւր
 78. Յովհաննէս Կորեան
Նոր զիւր եւ Սրկնիս
 79. Գաղար Հովոեան
Պարսա
 80. Աճառուր Գուշատաշեան Բ. 5
 81. Մկրտչ Գ. Էսաեան Բ. 9
 82. Յովհաննէս Կճեկեան
Բարսակեօնիսիկ
 85. Յարութիւն Զեմերեան
 84. Յարութիւն Գ. Տասեան
(Ե. Վ. իճակ)
Սաւարիս
 85. Աւերան Պելերեան
 86. Աւետիս Բօրջեան
 87. Կելագար Մեկերեան Բ. 3
 88. Կնատ Շաքազեան
 89. Յակոբ Բաղազեան
 90. Յակոբ Ամասեան
 91. Կաղարթ Կաթարեան
 92.
 93.
 94.
Խաղիոյ
 95. Առարեւ Աւետիս Տարբե
 96. Խաչատուր Պ. Մարեան
 97. Ուլմէս Պելեկեան
 98. Սարգիս Արագեան Բ.
 99. Սարգիս Արթաշատեան Բ.
 100. Սեմն Մերսիլեան Բ. 2

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՐ
 101. Մանուկ Ալանեան Բ. 9
Քեօրանու
 102. Մ. Փարազեան Տօրթօր
Ալլրիանու սոյլիս
 103. Ռուբէն Կիւմիլիլրառեան Բ.
Նիկոսիլիս
 104.
Ալի
 105. Պետրոս Միսարեան
Գարանխար
 106.
Արարիկեր
 107. Կարապետ Խաչիկեան
Բաղչ
 108
Պրուս
 109. Բեխտատուր Գաղարեան
Եւրոնիս
 110. Մեւրոն Հարանեան
Անասիս
 111. Համբարձում Աւանանեան
Բարս
 112. Յովհաննէս Աղաւորեան Բ.
Եղևիս
 113. Յակոբ Խթիանեան
Սանճրիե
 114.
Հանրն
 115.
Երզնկա եւ Բարերոյ
 116.
Թժ. քիլոսալ
 117. Տեղբան Գ. Սեմանեան Բ.
Կևարիս
 118. Մատթէոս Մ. Ալվատեան Բ. 9
Խարրերոյ
 119. Յովհան Կաղանեան
Պարրիսեր
 120. Յովհաննէս Յովակիմեան Բ. 2

Մուշ
 121. Ստեփան Պ. Պ. Փարազեան
Տիկիկ
 122.
Զեյրոն եւ Մարտշ
 123.
Տրասիգոն
 124.
Պարտա
 125.
Տիգրանակերտ
 126.
Վան
 127. Ալմոն Մարտառեան Բ.
Ալլրանար
 128.
Հարչոյ եւ Այնրայ
 129.
Սիրասիս
 130. Մկրտչ Մեկերեան
Ռուսնիս
 131.
Կարս
 132. Աբրահամ Յ. Ալվազեան
Զեկմադ
 133. Համբարձում Սարբրիլեան
Գաղատիս
 134.
Սաւան
 135
Սընրոյ
 136. Մատթէոս Ալիբառեան Բ.
Եօզլաս
 137. Լօզթէթ Պալեօզեան Բ. 9
Մարարիս
 138.
Իզմիր
 139.
Երարտոս
 140

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Տեղեկագիր խորհրդարանական յանձնախմբին ի վերայ նարսաճարութեանց Ազգայնաց :
- Բ. Պատասխանի վարչութեան՝ Փայտազեան Էֆենտիի հարցման եկամտանք :
- Գ. Քուլտուրային Ազգային տրոյ օրինական յարեխիստութեանց :
- Դ. վերաբնութեան Սանձնադրութեան . — Յարուակարիւն վիճարանութեան յօշոտանց Թաղական մատակարարութեան :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ստեանը բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներս կայտնութեան 39 երեսօտականաց, որոյ վերջին թիւը յանգեցաւ 67 ի :

Եւրոբիթաց նախ ատենագրութեան՝ ժամանակին սղութեան պատճառաւ՝ չհարեանալ աըպագրուին Ատենաստիտ փաշան ծանուցանելէ ետեւ, անցաւ ատենական գործադրութեանց :

1.

Բացակայութիւն

Ստենաստիտ փաշան ծանուցանելով Ժողովին թէ ազգային երեսօտականներէն՝

Սպրո Սահակ Էֆենտի ստիպողական դրողմանց պատճառաւ,

Յովսէփ Էֆենտի Մաղղմեան և

Եւան » Գաղղղեան

անձնական տխարութեան պատճառաւ բացակայ գտնուելին գրով յայտնած են, և յաւելցնելով թէ Սպրո Էֆենտիին ստիպողական դրողմուք ըստ ըստ օրինական պատճառ չէ ձանջուած ըստ Կանոնադրութեան, միտ երկուքին բացակայութիւնն իրրե օրինուոր նշանակել տուաւ ներկայութեան առմարին մէջ :

2.

Հրատարական

Ստենաստիտ փաշան ծանուցանելով թէ ազգային երեսօտականներէն խօրասանձեան Յով

հաննէյ Էֆենտի ի պատասխան առ ինքն ուղղեալ վերջնական հրատարակին հրատարական զրկած է, կարգաց նոյն հրատարակին՝ որ է .

Անենաստիտ Բարձր Սրբազան Հայր,

Պատիւ ունեցոյ ստանալու Ձեր Բարձր Սրբազնութեան 7 սեղօտեմեր թուականաւ և 29 թուահամարաւ գրութիւնն, որով կը բարեկամիք իմոյցնել նուատուութեան թէ Ազգային Ժողովոյ նիստերէն ութ անգամ բացակայութեանը անտես առնուելով՝ կրին նոյն ժողովոյ անգամակցութեան պատիւն ինձ պահուած է, և կը հրուիրք զիս ներկայ դանախլ անոր նիստերուն, կամ դիտաւորութիւնս գրով յայտնել :

Որչափ որ շնորհապարտ զինքս կրողամ սոյ մեծարելի հրատարակեալ եմ խստափաներաւ թէ ՚ի սրտի հարկադրեալ եմ խստափաներաւ թէ անկէ օգուտ քողելու չեմ կարող : Ազգային պատկառելի Ժողովոյ նիստերէն բացակայութիւնը, ՚ի սկզբանէ անտի որ երեսօտական ըստրեալ եմ, ունէր անյաղթելի պատճառ բազմութիւ գրողմուքս, որովք պաշարեալ էի . հիմա ալ անձնական գործեր և խօշընդաներ արգելք կըլլան ինձ սոյն ազգային պարտաւորութիւնս կատարելու : Ուստի ինչպէս ՚ի սկզբան ըստ տրամադրութեանց Կանոնադրութեան Ժողովոյ հրատարակեալ համարած էի զիս, չուղղելով ազգային սխիտոյից հիմառ անգամակցի մը օշտակար աջակցութեանն զրկել զԺողովն, կը համարձակիմ նոյն հրատարակման մատուցանելու ՚ի Ձեռն



Բարձր Արքայազնութեանդ, և կարգուէ՛ր որ բաւ
ընձանք հարդրուէ՛ր առ որ անկ է :

Մնամ Բարձր Արքայազնութեան Ձեր մեծաւ
պապականսնոր

Պոլիս Ամենայնսնոր և անճնուէր ծառայ
16 սեպտ. 1876 Յ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Յետ ընթերցման Ատենապետ փառան ԽՕ-
րասանճեան Էֆէնտիի հրատարակիրը բուէի դը-
րաւ, զոր Ժողովն ԸՆԴՌՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

Ատենապետ փառան այն հրատարակմամբ
աղբային երեւոխոխանայ պակասը 26 ի հասած
բաւար յայտարարելով, յանուն գիւտի խնդրից
Արքայան Պատրիարքին՝ որ պակասներուն տեղ
բաւարի նոր ընտրութիւնները փութացնել առ-
լա ճորճ ընէ :

Ատենտիան գործադրութիւնը ստանալով, Ա-
տենապետ փառան Օրակարգին անցնելի առաջ
յայտարարեց նաև որ թէ և ըստ որչա՛նս վեր-
ջին նախ՝ առաջին խնդիր պիտի ըլլար բեմա-
կան Յանձնախորի տեղեկագիրն ՚ի վերայ հարբա-
տա՛նարութեանց աղբայնոց, սակայն ըստ որում
մինչև զայս փամ՝ տակաւին ոչ տեղեկագիրը
յանձնուած է գիւտնին, և ոչ տեղեկարքն և-
կած է, անմիջապէս անցաւ Օրակարգի երկրորդ
խնդրոյն, որ է պատասխանի Արչութեան
Խառն ժողովոյ Փառազեան Էֆէնտիի հարցման:

ՕՐԱՍԱՆՈՂ

Յ.

Պատասխանի Արքայազնութեան Խառն ժողովոյ՝
Փառազեան Էֆէնտիի նարցման

Ատենապետ փառան Փառազեան Էֆէնտիի
հարցման նկատմամբ Արչութեան Խառն ժո-
ղովն եկած պատասխանագիրը ներկայացուց,
և կարգացուցցաւ, որ է .

Վեհախոյն Ատենապետ փառան
Աղբային Ժողովոյ
Աղբային Արչութեան Խառն ժողովն
Աղբային Ժողովոյ կողմն տո ինչն յիշալ երես-

փոխան Փառազեան Ատենտի Էֆէնտիի հարց-
ման գիրը կարգաց, սրով՝ Փառազեան Էֆէնտի
կը յայտնէր թէ Խառն ժողովոյ պաշտօնառարու-
թեան յայտարարին մէջ անցնառակ թողուած է
Արչութեան ընդ Բ. Գրան ունենալը յարա-
բերութիւնը կամ միջնորդութեան պարտաւորու-
թիւնը, աղբայնոց կենաց, ընչից և պատու պա-
պա՛նութեան մասին, և կը բարձար Արչու-
թեան բացարարութիւնը լուելաւ :

Աղբային Խառն ժողովն՝ իր յայտարարին
մէջ արդէն երկու անգամ յիշատակած և յոյ-
տարարած է թէ բնաւ ճանք չպիտի խնայէ աղ-
բային ընդճամուր շահերը պահպանելու և Աղբ-
անդար վիճակի մէջ առաջ տանելու համար . և
մեխութեան անգամ չհարտար թէ Աղբայն ա-
մենէն մեծ շահը, աղբայնոց կենաց, ընչից և
պատու պապա՛նութեանն է, և ասով կրնայ Աղ-
բայն յանդարտ մնալ :

Աղբային Արչութեան Բ. Գրան առջև
ունեցած միջնորդութեան պարտաւորութիւնը
նոյն խի Աղբային Մահճանադրութեանը հրա-
շակեալ և Բարեխնամ Կառավարութեան կողմ
մէ հաստատուել է : Աղբային Արչութեանը
գիտէ իր այս պարտաւորութիւնը անթերի կա-
տարել, և արդէն Բ. Գրան ճեա աղբային գա-
նազան խնդրոց համար ամենօրեայ յարարու-
թեան մէջ է, և իր մտադրութեան գլխաւով
առարկայն է այս յարարութիւնը իր ուղղու-
թեանը մէջ անմիջապէս պահել և շարունակել ան-
ընդհատ :

24 Օգոստոս 1876 Մնամք խորին յարգանքով

Ի Դիմաց Արքայական Ժողովոյ	
ԱՏԵՆԱՂՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
ՅԱՎՈՐ Վ. ԱՇՈՏ	ԽՈՐԷՆ Վ.
ՓՕՓԱՁԵԱՆ	ՄԻՔԱՐԵԱՆ
Ի Դիմաց Բաղարարական Ժողովոյ	
Փ. ԱՏԵՆԱՂՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
ՅՈՎ. ՊՅՅԱՃԵԱՆ	Ս. ԱՊՐՕ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատտիկ Արչու-
թեան Խառն ժողովը կը հաւարդէ մեզ իր պա-
տասխանագրով այն բացարարութիւնը, զոր մեք
ընկերներէն Փառազեան Էֆէնտի խնդրած էր
իր հարցման առթիւ :



Հինա բուհարիութեանն հրատէր պիտի ընեն, Ժողովին կամին խնամար համար թէ արդեօք սոյն բացատրութեամբ դո՛ս կրլլան և խնդրը զոյցել կուզէ՞, թէ ոչ վիճարանութեան ձեռնարկել պատշաճ կը դատէ :

Չայս բեւելով Ստե՛նասկո՛ւ փաշան փռէի դրու, և Ժողովն Վարչութեան տուած բացատրութիւնը բաւական համարելով միաճայնութեամբ ՈՐՈՇԵՑ տնցնել Օրակարգի միս խնդրոյ:

Բ.

Քաւէարիւորիս թղթային տրոյ օրինակն թարեփոխարեանց]

ԱՏՏԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս արդէն զիտէր, վերջնիթէր նստին մէջ Համարակալութեան դիւանի տեղեկագրին վիճարանութիւնը փախելով, առաջարկուած բարեփոխութիւնները բուէարկելու պիտի ձեռնարկէինք, քրոյց ներկայից թիւը՝ օրինակս որչա՛նս անբաւական զըտնելով, պարտաւորեցանք ետրի ձգել :

Սակց պատ՛ նոյն օրը խնդիր եղաւ նաև թէ արդեօք ըստ Կանոնադրութեան օրինական ծրագրիներու որչա՛նս համար արամադրուած երբեակ բուէարկութիւն և բարդ որչա՛նս սոյնանգամի առաջարկուած օրինական բարեփոխութեանց մասին գործադրելի պիտի ըլլայ թէ ոչ: Ուստի նախապէս սոյն կէտը բուէի կը դնեմ. սոյնինքն թէ Ժողովը միակ բուէարկութեամբ թէ ոչ՝ ըստ Կանոնադրութեան երբեակ բուէարկութեամբ կուզէ ընդունիլ տրոյ օրէնքի մասին առաջարկուած փոփոխութիւնները :

ԶԱՅՏԵՐ. — Չհասկըցանք՝ ի՞նչ է առաջարկուած բուէարկութիւնը :

ԱՏՏԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բացատրեմ: Վարչութեան կողմէ՞ առաջարկութիւն եկած էր. Տըրոյ օրէնքին՝ մէկ քանի կէտերու բարեփոխութեան վերաբերեալ, յիշելիք զայն Համարակալութեան դիւանին, և սոյն դիւանին տեղեկագիր մ'եկաւ, որուն վրայ Ժողովը բաւական վիճարանել էտե, և երբ կարգն եկաւ քուէար-

կութեան, զխոտորութիւն եղաւ թէ ըստ որում օրչելի կէտերը տիրող օրչել պիտի ըլլան ոչ զին մէջ, պէտք է երբ բուէարկութեան և բարդ որչա՛նս տնցունել ըստ Կանոնադրութեան. բայց միս կողմէ մէկ դարձ բուէարկութեամբ որչէրու ասիոյզականութիւն ուլ ալ լողներ եղան. անոր համար սոյն կէտն ուլ վըւէարկութեամբ օրչելու հարկին մէջ գտնուեցանք. Հինա նոյն սոյն կէտն որչէրու համար բուէարկութեան հրատէր կընեմ Ձեղ. ուլ որ կընդունի մէկ դարձ բուէարկութեամբ օրչել տրոյ օրէնքի մասին առաջարկուած բարեփոխութիւնները, ձեռքը վեր վերցնել շնորհն է :

Ժողովը սոյն բուէարկութեան փորձով և հակափորձով տանաւեձ մասամբ ՈՐՈՇԵՑ միանշամ և եթ բուէարկութեամբ բաւականանալ :

ԱՏՏԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ Ժողովը կընդունի միանգամ և եթ բուէարկ օրչել Տրոյ օրչելի մասին առաջարկուած փոփոխութիւնները, կակսիք ոյձմ բուէարկել մի առ մի սոյն փոփոխութիւնները: Նոյն Վարչութեան առաջարկուած մասին փոփոխութիւնը բացատրեմ. Ժողովը իր հաստատած տրոյ օրչնքին մէջ դասակարգութիւն ընդունած է Տրոյ համար, ա. մենէն բարձր աստիճան 500 զուրու և անենէն աստիճան 25 զուրու սահմանելով: Իսկ Վարչութիւնը կանաճարիէ 25 էն վար փոքրագոյն չուէարկուած 20, 15, 10 և մինչև 5 զուրու: Համարակալութեան դիւանն ոչ չընդունեց 25 էն փոքրագոյն աստիճաններ սահմանելու. վիճարանութիւն եղաւ Ժողովիս մէջ սոյն մասին. բարեփոխութիւններ առաջարկուեցան, որոյ մէկն սոյն է թէ փոքրագոյն աստիճան 25 զուրուը հաստատ մնայ, սոյն գուճարն 5 կարծներու բաժնուելու պայմանու և Վարչութիւնն արտոնութիւն ունենայ առաջին երկրորդ կարծներուն վճարումին ետե մնացեալ կարծները բաշխել անկարողին :

ԵՌՈՒՍՈՒԹԵԱՏ Տ. ԷՅ. — Ս.Մ. առաջարկութիւնն ինն է. բայց մտածելով որ Վարչու-

Թեան տառարկութիւնն տառջին փորձ մը բլլալու համար կը ներկայացուի, և կրր այն ընդունելի է, ետ կրանտուժ իմ առաջարկութիւնն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Ուրեմն բարեփոխութեանց մէկն ետ առնուելով, կամոյնիք միւսներուն:

Ստանց մէկն է 23 տարիք ունեցող և քուէ տուողներէն իրրև նուագազոյն տարր 23 զուրուշ սանուլ, և 23 տարիքէն վար եղող ներէն անկէ նուազ զուսարներ ընդունել ըսոյց ոչ իրր տուրք այլ իրրև նուէր: Հոս միջանկեալ կերպով պարտ կը համարիմ կրկին յայտարարել թէ տուրքի խնդրոյն մէջ ետէր բառը գործածել ընդունելի չէ. ըստ որում Ս.զգային Սահմանադրութիւնը ըսցէ ի բաց տուրք բառը գործածած է. տէրութիւնն ալ տուրք ժողովելու արտօնութիւնն տուեր է մեզ Սահմանադրութեամբ. թէ և Սահմանադրութեան տաճիքէնի մասին մէջ իսակ բառը դրուած է, փոխանակ վերկի բառին, թերևս քաղաքագլխական զխտմամբ, սակայն ասոր տուրք ըլլալը յայտնի է մեզ, քանի որ սահմանադրասյան պարտաւորութիւն զըրուած է ամենուն՝ ազգին ծախուողը մասնակցելու ստի այս առաջարկութեան մէջէն ետէր բառը մէկզկէ առնելով՝ պարզասկէս տուրք բառը պէտք է գործածուի: Բարեփոխութիւն մ'ալ կայ, որ Մարգարեան Յարութիւն Եֆէնտիին է, և այն է նուագազոյն զուսար՝ 40 զուրուշ տուրք սահմանել:

ՔՈՒՆԵՆՆԻ Ա. ԷՅ. — Մեր մէջէն Վարչութեան առաջարկութիւնն ընդունողներ ալ եղան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Ըստ որում վիճաբանութիւնը գոյուած է այս մասին, առանց ուսեր խօսք տալու պիտի վերջացնեմ խնդրը, առաջարկեալ բարեփոխութիւնները մի առ մի քուէի դնելով:

Չոյս ըսելով Ստեփանոս փաշան վերոյշեալ երկու բարեփոխութիւնները առանձին առանձին քուէի գրաւ, զորս ժողովը միաձայնութեամբ Մեմբեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Ս.ժ.մ կը մնան Վարչութեան և Համարակալութեան ղեկանի ա-

ռաջարկութիւնները: Վարչութիւնը 23էն վար՝ 20, 15, 10 և մինչև 3 զուրուշի նուագազոյն տատիճաններու տուրք սահմանել կուտառարկէ. իսկ Համարակալութեան ղեկանը այդ փորքայն աստիճանաց սահմանուլը մերժել կուտառարկէ:

Չոյս ըսելով Ստեփանոս փաշան, Վարչութեան և Համարակալութեան ղեկանին առաջարկութիւնները քուէի գրաւ վերջինէն սկսելով:

Ժողովը Համարակալութեան ղեկանին առաջարկութիւնը մերժելով և միաձայնութեամբ Վարչութեան առաջարկութիւնն ընդունելով՝ ԲԱՐԵՓՈՒՅԵՑ տրոյց որչերին տատիճանաց դասակարգութիւնը, 20, 15, 10 և 3 զուրուշի փոքրագոյն աստիճաններ ալ յաւելցնելով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Վարչութեան առաջարկութեան տառջին մասն ընդունուեցաւ. Գանք երկրորդ մասին, որ է բաշխման և հասարական եղանակի մասը. Վարչութիւնն այս մասին կուտառարկէ աշատութիւն տրուիլ խնն որ ինք մասնաժողովներ դնէ թողները՝ բաշխման ցուցակները ստարաստեալու համար, նոյնպէս տրոյց հուսարուրը ղեկարայնելու միջոցներն ինք տնօրինելու ևն, Համարակալութեան ղեկանն այս կէտերու մասին համատուութիւն կը յայտնէ և ընդունելութիւն կուտառարկէ: Ուրեմն ուլ որ կընդունի Վարչութեան այն վերջին առաջարկութիւնը. ձեռքը վեր վերցնել չնորձ ընէ:

Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ Վարչութեան առաջարկութիւնը տրոյց բաշխման և հասարական եղանակաց մասին:

Պ.

Տեղեկագիր խորհրդարանական յանձնարարիկն ի վերայ հարստութեալեաց ազգայնաց:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Խօսքը հարստոյն րութեանց խնդրոյն յանձնարարիկ Տեղեկարբերին է:

Փոխադեան Ստեփան Եֆէնտի իրրև Տեղեկարբեր կորոյաց հետեւեալ տեղեկալովը:

Բ. Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ս Տ Ա Ն Հ Ա Ր ՈՒ Թ Ե Ա Ն Յ

Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՐԷ

Ա. Ռ.

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ն

Ըստ որոշման Ազգային ժողովոյդ՝ որ ի նիստ 10 Սեպտեմբեր 1876, Խորհրդարանական Յանձնախումբն՝ զաւառական հարստահարութեանց նախորդ ընդհանուր Տեղեկագրի թուականէն յետոյ պատահած հարստահարութիւնները տեղեկագրելու համար՝ փութաց ի քնին առնուլ Պատրիարքարանի Թագրիւններն ու արձանագրութիւնքն, և՛ իւր պաշտօնն ըստ կարելոյն կատարելով սոյն երկրորդ տեղեկագիրը բերել պատկառելի ժողովոյդ :

Ազգային ժողովով պատրաստուած յիշեալ ընդհանուր տեղեկագիրն, որ 1872 Փետրուար 18 ի նստին առնազրութեանց մէջ արձանագրեալ է, (Երես 593—598), առաջին անգամ նոյն տարւոյ Ապրիլ 11 թուականին մատուցուած է Բարձրագատիւ Եպարքոս Մահմուտ Եէտիմ բաշային :

Ազգային Պատրիարքարանի արձանագրութիւնք յայտնի ցոյց կուտան թէ՛ այս տեղեկագիրն ակնկալեալ արդիւնքը չէ արագրած, թէ՛ և Պատրիարքարանն ա-

սոր պատճէնը յաջորդ Եպարքոսներուն ալ մատուցած և Ազգին խնդիրը կրկնելէ չէ դադրած :

Հետեւեալն յիշեալ տեղեկագրին թուականէն ի վեր հարստահարական խնդրոց վրայ Պատրիարքարանի կողմանէ առ Բ. Գունն մատուցեալ Թագրիւններուն կարևոր մասին հաւաքածոյն է, թուականի կարգով, և անոնց մի քանիին ամբողջ պատճէններն ու միւսներուն ալ համառօտութիւնը կը պարունակէ, ի բաց թողլով համանման խնդրոց վրայ առ զաւառաց կուսակալս ուղղեալ բռնական թուով դրուածիւններն, որք քանի մը մասնաւորութիւններէ զստ մեծազոյն մասամբ դարձեալ պարզիւն մնացած են :

1. Հալէպի հեռագրատան պաշտօնեայ Ասատուր անուն հայազգին հեռագրատան մէջ կ'սպաննուի. կառավարութիւնն ոճրագործը կը խնդրէ նոյն հեռագրատան տեսուչին և տեսուչն հեռագրատան շէնքը Հաճի Ահմետ անուն իսլամը կը յանձնէ կառավարութեան, ըսելով թէ՛

աշու է մտադրասպաներ: Տեղական կառավարութիւնը յիշեալ Ահմէտն առանց հարցաքննութեան ենթարկելու՝ խենկոյ է ըսելով հիւանդանոց կուղարկէ:

Ասոր վրայ Թաղրիբ գրուած է 1319 Սէֆէր 17 և 12 Ապրիլ 1872 թուականաւ:

Բ. Դոնէն Հրամանագիր ղրկուած է Սէֆէր 24 թուականաւ. ինչ արդիւնք ունեցած ըլլալն յայտնի չէ:

2. Սղերքի Սասուն աւանի Գուրգ Պէյերն Հայոց արքունի տուրքերը կը հաւաքեն և չեն հատուցաներ դանձին. կառավարութիւնը զինուոր կը հանէ վրանին և ստակները կտանայ. զինուորաց և ձիերուն բոլոր ուսեստը ժողովուրդէն կառնուի բռնութեամբ: Ձինուորները կը մեկնին և Գուրգ Պէյերը կսկըսին միանգամ տրուած ստակը Հայ ժողովրդէն վերտոխն հաւաքել. Գրգաց հարստահարութեանց քննութեան համար Ալի Ռիզա փաշան անձամբ այն կողմերը կերթայ, և՛ յետ ստուգելոյ՝ անոնց վերջ տալու համար կորոյչ որ, Հազօ քաղաքին մէջ զօրանոց մը շինուելով մնայուն կանոնաւոր գօրք պահուի հոն և նոյն քաղաքի Միտիքն ալ Սասուն քաղաքը նստի: Սակայն այս որոշումը գործադրութեան չը դրուիր:

Թաղրիբ գրուած է 1319 Սէֆէր 19 և 15 Ապրիլ 1872:

Բ. Դոնէն ուղղակի հրամանագիր ղրկուած է 1 Րէպիւլ 5 վիլ 1319 թուականաւ:

3. Մշոյ հարստահարիչ քրդերէն Ֆարիզ և եղբայրն՝ ասկէ առաջ կառավարութեան որոշմամբ Գասթամունի կաքսորուին. յետոյ սղատութիւն գտնելով Մուշ կը վերադառնան և վրէժխնդրու-

թեամբ կսկսին աւելի ևս հարստահարել զՀայերը:

Թաղրիբ գրուած է 1319 Րէպիւլ 5 վիլ 7 և 29 Ապրիլ 1872 թուականաւ:

Ապարդիւն մնացած է:

Սոյն խնդրոյն համար վերստին Թաղրիբ եղած է 1319 ձէմազիլ ախրը 27 և 18 Օգոստոս 1872 թուականաւ:

Սոյն Թաղրիբը արդէն եղած է Բ. Դոնը:

4. Տիգրանակերտի Սաթը գիւղի բուր արաբերը Միւնթէհա անուն Իսլամ կին մը իւրացուցած է բողոքովին: Որով Հայ գիւղացիները պարտաւորեալ են իրենց աշխատութեան արդիւնքէն բաժին հանել նոյն կնոջ:

Շատ տարիներէ ի վեր խնդիր եղած է, բայց տեղական կառավարութեան որոշումը միշտ Իսլամ կնոջ նպաստաւոր ըլլալով՝ Հայերը դատապարտուած են միշտ անոր բաժին հանել իրենց աշխատանոց արդիւնքէն:

Թաղրիբ գրուած է 1319 Րէպիւլ 5 վիլ 7 և 29 Ապրիլ 1872 թուականաւ:

Բ. Դոնէն Հրամանագիր առնուած է:

Սոյն խնդրոյն համար վերստին Թաղրիբ գրուած է. 1319 Շապան 11 և 9 Հոկտեմբեր 1872:

Հրամանագիր ղրկուած է Իսթիլամի համար 1319 Շեվվալ 10:

Դարձեալ Թաղրիբ գրուած է սոյն խնդրոյն համար 1319 ձէմազիլ ախրը 17 և 19 Յուլիս 1874:

Անպատասխանի մնացած է:

5. Կարնոյ կուսակալութեան տակ

Մուչ գաւառի Մօրնինի գիւղի Հայերը 40—50 տարիէ ի վեր՝ առանց որ և է անձէ բողբոք և պահանջում տեղի ունենալու՝ նոյն գիւղի հողերը մշակած ըլլալով, ըստ օրինի սեպհականութեան իրաւունք ստացած են: Ասկից մէկ քանի տարի առաջ Մշոյ Միւֆթիի Հիւսէյին էֆէնտին իւրացնել ուզելով զանոնք՝ ձեռնամուխ կը լինի: Ժողովուրդը կը բողբոքէ, Միւֆթին իւր պահանջումէն ետ չմնար և կը բռնադատէ զգիւղացի Հայերը՝ իրենց հողերը թողուլ: Կարնոյ կուսակալ Իսմայիլ փաշան երբ Մշոյ կողմերըն այցելութեան կերթայ, անձամբ քնննութիւններ ընելու և ժողովրդեան վիճակը լաւ մը հասկնալու, այն խնդիրն ալ նկատողութեան կառնու և՛ քննութեամբ ստուգելով՝ Միւֆթիին պահանջումն անխրաւ և ժողովրդեան նոյն գիւղի արտերուն բացարձակ տէրն ըլլալը կը հաստատէ. հետեւաբար նոյն գիւղի հողերը գիւղացի Հայոց անուան վրայ արձանագրել կուտայ, և մինչև որ Պօլսոյ Տէֆթէրխանէէն թուղթալը թափույի Սէնէտներն հասնին, ինչպէս սովորութիւն է, առժամանակեայ կալուածադրեր (կուտուր) յանձնել կուտայ նոյն գիւղացուց, Չ՛հ հատ: Իսմայիլ փաշան՝ Մշոյ աշխարհին մէջ այս և ուրիշ բարեկարգութիւններ ընելէ և իսկ մը Գորդ Պէյեր իրենց որջացած տեղերէն վերջը՝ ներքով արտրելէն վերջը՝ Կարին կը դառնայ. շատ չանցնիր Կարնոյ կուսակալութեան պաշտօնէն կը հանուի: Յիշեալ Միւֆթին այն փոփոխութենէն օգուտ քաղելով՝ իւր նախորդ պահանջումն ու դատը կը նորոգէ. Մօրնինի գիւղէն քանի մը մարդ բերել կուտայ ի Մուչ և, ասոնց խոստումներ և սպառնալիքներ ընելով, տեղական կառավարութեան ժողովին

մէջ յանուն գիւղացուց ըսել կուտայ անոնց թէ՛ նոյն գիւղի բոլոր հողերն ու արտերը Միւֆթի էֆէնտինն են և թէ՛ գիւղացիք անոր վարձկաններն են: Ասոր վրայ որոշում կը տրուի որ՝ նոյն հողերուն բացարձակ տէրը Մշոյ Միւֆթի Հիւսէյին էֆէնտին է, առարկելով՝ թէ այսպէս վկայուած է և թէ նախորդ քննութիւնն ու տնօրէնութիւնը սխալմամբ եղած են: Գիւղացիք կը բողբոքեն ըսելով թէ «Այդ մէկ երկու անձն՝ ամբողջ գիւղացիներուն օրինաւոր ներկայացուցիչը չըլլալով յանուն գիւղացուց իօտելու իրաւունք չունէին, թէ իրենք այսքան երկար տարիներէ ի վեր նոյն հողերն առանց մէկէ մը բողբոքուելու՝ հերկած և մշակած ըլլալով ըստ օրինի տէր եղած են անոնց, և թէ իրենք Հիւսէյին էֆէնտին ըստուրակը չեն և չեն կրնար ըլլալ, ինչպէս որ Իսմայիլ փաշային քննութեամբն հաստատուած և թափույի իւրախապէտներն ալ իրենց բուն օրինաւոր տէրերուն յանձնուած են»: Գիւղացուց այս արդարացի և օրինական առարկութիւններն անլսելի կըլլան տեղական կառավարութեանէն, վասն զի Միւֆթին ազդեցութեան տէր մարդ է, իսկ գիւղացի բազմաւ և անտէր են: Խեղճ գիւղացիք երկու պատգամաւոր կընտրեն իրենց մէջէն և՛ նոյն Չ՛հ կտոր կալուածագրերն ու հանրագիր և այլ գրութիւններ յանձնելով անոնց՝ կը շրկեն Կ. Պօլսոյ ի Պատրիարքարան:

Սոյն խնդիրը Ծուրայի Տէվէթի քնննութեան յանձնելու խնդրանք թարգրելը գրուած է, ՎՄԱՂ Բէպիւլ Էվիէ ՎՄ և Չ՛հ Մայիս 1872 թուականաւ:

Բ. Դուռը Ծուրայի Տէվէթի յանձնեց զայն ի քննութիւն. սակայն արդիւնքն ի նպատակ Միւֆթի Հիւսէյին էֆէնտին:

ին եղած ըլլալով՝ ասոր համար յատկապէս Պօլիս Եկող Երկու Մօրնինկցի հայազգիք յուսահատ ետ դարձան :

Սոյն խնդրոյն համար դարձեալ թագրեր եղած է, հողային ընդհանուր խնդրոյն թագրերին կցորդեալ : (Տես ի խնդիր 23^ր) :

6. Մշոյ Պէրնաշէն և Խուլթ և Սասուն և Շատախ անուն գիւղօրէից Գուրգ հարստահարչաց համար թագրեր մատուցուած է, 17119 Բէպուլ ախըր 77 և 17 Յունիս 1872 թուականաւ :

Արդիւնք մը չէ ունեցած. եւ՝ ինչպէս միւս անդամներ՝ վերջին օրերս ալ յիշեալ հարստահարչաց համար գան. դատանք եկած ըլլալով, ուղղակի կարոնց կուսակալին գրուած է :

7. Խորբերդ գաւառի ներքև Չարսանճազի ըսլըր գիւղօրէից ամբողջ տըները, խանութները, պարտէզներն, այգիներն ու արտերը վերն է կրսնն Իսհազ Պէյ և ուրիշ մէկ քանի Իսլամ Աղաներ, և կը բռնադատեն գիւղացի Հայերն որ այդ տներուն, խանութներուն, այգիներուն և պարտէզներուն համար վարձք վճարեն, սերմն իրենցմէ առնուն և բերքին կէսն իրենց հատուցանեն : Գիւղացուց և Իսհազ Պէյին և սորա գործակից Իսլամ Աղաներուն մէջ 13 տարի է ի վեր տեղի գտած այս վէճին համար շատ խնդիրներ մատուցուած է Բ. Դրան և շատ հրամանագրեր առնուած. բայց տեղական կառավարութիւնը միշտ ի նպատակ յիշեալ Պէյին և Աղայից չարժած ըլլալով՝ վերջնապէս Բ. Գուրգ՝ այն հինօրեայ խնդիրը լուծելու և գիւղացուց թախանձանայն ու արագակալին վախճան տալու նպատակաւ՝ յատուկ քննիչ մասնաժողով մը կը ղրկէ :

Մասնաժողովը կերթայ, կը քննէ և կը վերագառնայ : Մասնաժողովը տեղեկագիրն և ուրիշ գրութիւնք և Պատրիարքարանի թագրերնեքը Պետական Խորհրդոյ կը յղուին, ուր մանրամասն կերպով խնդիրը նկատողութեան և քննութեան առնուելով՝ Իսհազ Պէյին և միւս Իսլամ Աղայից պահանջմունքն անիրաւ կը դատուի և կորչուի որ արտերուն և կալուածներուն տէր ճանչուին գիւղացիք, Աղաներուն միջամտութիւնքն արգիլուին և կալուածագրերն յանուն գիւղացուց արուին : Սոյն որոշումը կայսերական Իրատէսով կը հաստատուի և գործադրութիւնը տեղական կառավարութեան կը յանձնուի :

Տեղական կառավարութիւնը Պետական Խորհրդոյ այս որոշումն որ Իրատէսով հաստատուած է՝ կը քննադատէ, արդարութեան և իրաւանց անհամաձայն կը գըտնէ և՝ գործադրութիւնն իր վրայ չառնելով՝ նոր սնօրէնութիւն կը խնդրէ տեղեկագրով մը : Այս տեղեկագիրը Պետական Խորհրդոյ ուղարկութեան կը յանձնուի : Նոյն միջոցին Չարսանճազի Իսլամ Աղաներէն երկուքն ալ անձամբ Կ. Պօլիս գալով Պետական Խորհրդոյ կը գլխեն :

Պետական Խորհուրդը՝ միայն մէկ կողմը լսելով՝ իր նախորդ որոշումն անբաւական կը գտնէ և՝ առանց անոր Իրատէսով հաստատուած ըլլալն ի նկատի առնելու՝ կորոյչ որ, տեղական կառավարութեան միջոցաւ ի նորոյ քննութիւն ըլլայ և Իսլամ Աղաներն ու Հայ գիւղացիք ի դատ մանեն. այն պայմանաւ որ տրուած որոշումն՝ եթէ երկու կողմն ալ գոհ չընէ՝ վերաքննութեան ենթարկի : Սոյն երկրորդ որոշումն՝ որ զնախորդը կը բեկանէ ռուանց օրինաւոր

գատաստանի՝ դարձեալ կայսերական
իրատէսով կը հաստատուի, և ինչպէս
տեղական կառավարութեան նոյնպէս
և Պատրիարքարանի կը հաղորդուի :

Չարսանճագցոց թախանձանայ վրայ
Պատրիարքարանէն թաղը ըմտուցուած
է, և յայտնելով թէ՛ Պետական Խորհրդոյ
վերջին որոշումն այս հիմուսուրց իրենդ-
րոյն շատ ասրիներ ևս ի քնաս Հայ հողա-
գործաց շարունակութեան բաց դուռ
թողած պիտի ըլլայ, թէ իսլամ Աղա-
ներուն բողոքանայ վրայ՝ առանց միւս
կողմը լսելու և որ կէտին արգարութեան
և իրաւանց հակառակ ըլլալն ստուգե-
լու՝ Պետական Խորհրդոյ առաջին որո-
շումը բեկանելն արգարութեան չը հա-
մաձայնիր, և թէ Հայերը չեն համարձա-
կիր այն աղբեցութեան տէր հարուստ
Աղաներուն հետ տեղական կառավա-
րութեան առջև ի դատ մտնել և թէ
ժողովուրդը նախորդ որոշումէն զատ
ուրիշ որոշմամբ դո՛հ չըլլար, ինդրուած
է որ նոյնը գործադրութեան դրուի :
1789 ձէմազիլ ակըը 17 և 5 Օգոս-
տոս 1872 :

Ապարդիւն մնացած է :

Սոյն խնդրոյն վրայ կրկին թագրիւր
եղած է 1789 Ձիհիծճէ 27 և 8 Յուն-
վար 1876 :

Դարձեալ ասպարդիւն մնացած է :

8. Խարբերդու Մատէն քաղաքի ճա-
նապարհաց շինութեան մէջ, շինութեանց
պաշտօնեաները ժողովուրդը տարապար-
հակ կը վարեն և գործաւորաց օրականը
չեն վճարեր :

Թագրիւր գրուած է 1789 ձէմազիլ
ակըը 17 և 5 Օգոստոս 1872 :

Մալկէի պաշտօնատան յանձնուած է :

9. Տիրանակերտի Սէվէրէկ աւա-
նի Հայերը կը գանդատին թէ՛ զինուո-
րական տրոց քառորդ մասին զեղջն ի
գործ չը դրուիր, և մեռնող ու անյայտ
եղող անձանց զինուորական տուրքը մը-
նացողներէն կը պահանջուի, և թէ տե-
ղական կառավարութեան պաշտօնեայք
կալուածոց արժէքէն խիստ բարձր գի-
ներ որոշելով՝ ըստ այնմ կալուածական
տուրք կը պահանջեն, և ճանապարհաց
շինութեան մէջ՝ ժողովուրդն օրինաց
սահմանած օրէն աւելի կախատցնեն :

Թագրիւր եղած է 1789 ձէմազիլ ա-
կըը 10 և 8 Օգոստոս 1872 :

Մալկէի պաշտօնատան յանձնուած է :

10. Կարնոյ կուսակալութեան տակ
Պայպուրտ աւանի Բումէլի գիւղացի
Սուքիասեան Մարթա անուն 1 1/2 տարե-
կան կոյս աղջիկ մը 1872 Մայիսի 13ին
Ալիի որդի Սէֆէր անուն իսլամէ մը
կառեւանգուի. բողոք և խուզարկու-
թիւնք կըլլան, և ուր ուրեմն աղջիկը
կը գտնուի և տեղական կառավարու-
թեան կը ներկայացուի, խոստովանցընե-
լու համար թէ՛ իսլամութիւնն համագ-
մամբ ընդունած է, թէ ոչ. վասն զի իս-
լամը կը պնդէին թէ Գրիստոնէութիւնն
ուրացած էր աղջիկը, Հայ և Յոյն երե-
ւելիներէն Մանուկ, Յովհաննէս, Փիլիպ-
պոս և Փանսեօթ էֆէնտիները կը հրա-
ւիրուին այս քննութեան ներկայ գըտ-
նուելու: Կառավարութեան ապարանքը
կը խռնին իսլամաց չօճաններն ու մոլե-
ռանդներն և աղջկան ներկայութեանը
կը պօսան թէ աղջիկն արդէն իսլամու-
թիւնն ընդունած է, ի՞նչ հարկ նորէն
խօսեցնելու, եթէ, կըսեն, իսլամ չե՛մ
ըսէ և Գրիստոնէութեան վերագաւնայ,
զինիք գլխաւեյ հարկ կըլլայ ըստ Շեյխի

օրինաց: Տեղւոյն Հաքիմ էֆէնտիի փոխանորդ Տուբմուշ էֆէնտի ալ կը ձայնակցի ասոնց և կրօ՛ւք այս խնդիրը քաղաքական օրինո՛ք եւ լաւօրէի տեսակ սպանանքներ կընեն իւր արդիւան և թոյլ չեն տար որ մայրն արդիւան մտենայ ու հետը խօսի: Արջիկը կը շուարի, կը վախնայ և եղած հարցման պատասխանել կը պարտաւոր թէ՛ ինքն համոզմամբ ընդունած է իսլամութիւնը: Հայերը կը բողբեն եղած բռնութեան և ճշման դէմ և կը խնդրեն որ ամեն ազատութեան և ազահոլութեան միջոցներ տրուին, որպէս զի արդիւան ճշմարիտ կամքն ու դաւանութիւնն իմացուի: Բայց այս բողբը լսելի չը լինիր և թշուառ Մարթան բռնութեան ներքև կամուսնացուցուի յիշեալ իսլամ Սէֆէրին հետ:

Հայ արջիկը չը կրնալով Սէֆէրին հետ կենակցել ամեն վտանգ աչք կառնու և գիշերանց խոյս տալով իւր մօրը տունը կապատանի: Իւլէմաներն ու Հօճաները վրէժ լսածել կուզեն քրիստոնեաներէն, ուստի և մունետիկ կանչել տալով բոլոր իսլամները Մեդիէնները կը հաւաքեն և իսլամում ինքն ընդունող արջիկը քրիստոնեայի փախուցել են լսելով իսլամ հասարակութիւնը կը գրգռեն: Մէկ երկու հազար իսլամներ սուսերօք և բրօք Հայոց տներուն, խանութներուն վրայ կը յարձակին, աւարտութիւն կընեն, 30 Հայ կը վերաւորեն և Հայերն ա՛ն ու գողի մէջ կը թողուն: Տեղական կառավարութիւնը կարնոյ կուսակալին հեռագրելով վտանգը կիմացնէ, կուսակալը բաական զինուորներով կը փութայ ի Պայպուրտ, զննութիւն կը բանայ, որով արդիւան քրիստոնէից կողմէ փախուցուած չըլլան ու Հայ ժողովրդին երկու

հազար լեւայի մօտ զնաս հասած և 30 Հայերու ալ վերաւորուած ըլլալը կը հաստատուի: 29 անձինք՝ իբր յանցապարտ՝ ձերբակալուելով կարին կը շարկուին, ուր ասոնցմէ ոմանց 3 և ոմանց 6 ամիս բանտարկութեան պատիժ կը սահմանուի: Բայց իսլամ հասարակութիւնը գրգռող իւլէմաներուն և Հօճաներուն և մունետիկի պաշտօն կատարող իսլամին նկատմամբ որ և է պատժոյ տնօրէնութիւն չըլլար, որով Պայպուրտի քրիստոնէից կենաց, ընկից և պատուոյ ապահովութիւնը բոլորովին վրտանդի կենթակի: Հայոց կրած զնասուց հատուցում ալ չը տրուիր:

Թագրիւր եղած է պատժական օրինաց տրամադրութիւնը ճշդիւ գործադրելու և Հայոց զնասները հատուցանելու խընդրանք, ի 1779 Ռէպիւլ ախըր 27 և 27 Յուլիս 1872:

Սոյն խնդրոյն վրայ վերստին Թագրիւր գրուած է, 1779 Ռէճէպ 2 և 24 Օդոստոս 1872:

Դարձեալ Թագրիւր եղած է, 1779 Ռամազան 19 և 8 Նոյեմբեր 1872ին:

Պատասխան չը կայ:

11. Սերաստիոյ Գանդալի Եար-Հիտար գիւղին Հայոց հերկած արտերուն մէջ տեղւոյն Միւտիւր Ապա-Իւլ-Ռահման աղան Չէրքէզներ բնակեցուցած ըլլալուն համար Թագրիւր մատուցուած է, 1779 Շապան 7 և 27 Սեպտեմբեր 1872ին:

Սոյն Թագրիւրը դա՛նիւլ եղած է Բ. Դուռը:

Նոյն խնդրոյն վրայ վերստին Թագրիւր եղած է, 1779 Ռամազան 19 և 8 Նոյեմբեր 1872:

Անպատասխանի մնացած է:

Իսկ վերջերս՝ այս խնդիրը Պատրիարքարանի թախանձանաց վրայ Բ. Դուռը կազմուած հարստահարութեանց մասնաժողովին նկատողութեան յանձնուեցաւ յատկապէս : Սոյն մասնաժողովին յետ ընդ երկար քննութեանց՝ Հայոց իրաւունք ունենալն հաստատեց և Ձեռքէզներն Հայոց մշակած հողերէն հանել առաջարկեց. բայց Շուրայի Տէվլէթին անոր աեղեկագիրը չընդունելով՝ Ձեռքէզներուն Հայոց հողէն դուրս չը հանուիլն որոշած է, պատճառելով թէ՛ այն հողերը գիւղացոց ճեղքի կայրաժապերուն մէջ նշանակուած են աւելի եւ Տէրուժեան կը վերաբերին, առանց նկատողութեան առնելու որ Ձեռքէզներուն արուած հողերն Հայոց երկար առնէ ի վեր մշակած տեղերն են, որք ըստ օրինի մշակողաց սեպհականութիւնքն եղած են :

Իսկ Յանձնաժողովոյ միւս առաջարկութիւնն, այն է Դանդալի Միւտիր Ապտուլ-Բահման աղային պաշտօնանկութիւնը, կընդունի Բ. Դուռն և հրահանգ կուտայ Սեբաստիոյ կուսակալին որ Ապտուլ-Բահման աղան պաշտօնէ դադարեցնէ և Բ. Դրան կողմէ յանձնարարեալ անձը նոյն պաշտօնին կարգէ : Սեբաստիոյ կուսակալ Հաճի Իզզէթ փաշան սոյն հրամանն ի գործ չը դնէր և Բ. Դրան պատասխան կը գրէ որ, եթէ Ապտուլ-Բահման աղա պաշտօնէ հանուի, մեծ հոգեք յառաջ պիտի գան : Բ. Դրան յանձնարարած պաշտօնեայն ալ ուրիշ պաշտօնի մէջ կը հաստատէ :

Դանդալի Միւտիր Ապտուլ-Բահման աղային ըրած անօրէնութիւններն ու կեղեքումները նոյն իսկ անոր որդւոյն Աճմէտ աղային թէ՛ առ Բ. Դուռն եւ թէ՛ առ Պատրիարքարանն քաշած հե-

ռազրութեամբք ալ հաստատուած ըլլալով՝ յատուկ Թագրիբով Բ. Դրան ուշադրութեանը յանձնուած է, 1797 Ռէճէպ օ և 14 Յուլիս 1876 :

Հեռագիր զարնուած է Բ. Դուռն :

12. Վանայ Նարեկայ վանուց ջաղացքը կը կոխեն Գուրգը, մէջի եղածը կը կողոպտեն և ջաղացպանը կսպանեն :

Թագրիբ գրուած է, 1789 Ռամազան 17 և 1 Նոյեմբեր 1872 :

Պատասխան տուած չէ Բ. Դուռը :

13. Էսկիէհէրի մէջ քրիստոնէից նոր կալուած ստանալու, անոնց մէջ բնակելու և Եկեղեցի շինելու արգելք կը ըլլան տեղւոյն Մահմետականք :

Թագրիբ գրուած է, 1789 Շէվվալ 1 և 27 Նոյեմբեր 1872 :

Հրամանագիր դացած է Իսթիլամի համար :

Սոյն խնդրոյն համար կրկին Թագրիբ եղած է, 1797 Մուհարրէմ 23 և 18 Փետրուար 1875 :

Կրկին հրամանագիր դացած է Իսթիլամի համար :

Դարձեալ Թագրիբ գրուած է սոյն խնդրոյն համար, 1797 Ռէճէպ 19 և 2 Ապրիլ 1876 :

Երրորդ անգամ Իսթիլամի հրաման գրուած է Բ. Դուռն :

14. Արտաքին գործոց պաշտօնեայ Վսեմապատիւ Խալիլ Շէրիֆ փաշայէն ծանուցագիր մ'եկած է, որով Երզնկայի և Գլիի կողմերն եղած հարստահարութեանց անհիմն ըլլալն և նոյն աեղեաց Հայ Առաջնորդներուն գրգռութեամբն այդ մասին գանդատներ յերևան եկած

լինին և Պատրիարքարանին ալ անոնց ձայնակից գտնուելը դառնութեամբ կը յայտնէր: Ս. Պատրիարք Հայրը հետևեալ բողոքագիրը մատուցած է Բարձրագատիւ Եպարքոսին:

«Արտարին գործոց Վսեմագատիւ Պաշտօնեայն իր մէկ ծանուցագրով կը յայտնէ թէ՛ Կարնոյ կուսակալութեան ներքեւ գտնուած Գղիի և Երզնկայի կողմերը բնակող Քրիստոնէից Քուրդ Պէյերու կողմէն հարստահարուելուն մասին եղած գտնագտներն անհիմն են. թէ՛ Մելքիսեդեկ և Եվրեմ վարդապետներուն խորհուածանքն է և Քուրդ Պէյերուն դէմ բողոքող մը չը կայ, և թէ՛ տեղի գտած գտնագտները կարինէն մինչև Տրապիզոնի ճանապարհի շինութեան համար Գղիէն ուզուած գործաւորները չը տրուելու պատրուակաւ յառաջ եկած են, ինչպէս Կարնոյ կուսակալութեան կողմէ եկած տեղեկագրերէն հասկցուած է, և թէ՛ մեր Պատրիարքարանը խել մը խռովարար անձանց ձայնակից եղած է, ևն. Սոյն ծանուցագրին պատճէնը ներփակեալ մատուցանելով Ձեր Բարձրութեան կը խնդրեմք ուշադրութիւն ընծայելու շնորհ ընել:

«Հարկ չէ բացատրել որ շնորհիւ Օգոստոսիաու Կայսեր Հայոց Պատրիարքարանը բարեխնամ կառավարութեան մէկ պաշտօնատեսիցն է, և ես Ազգիս ընտրութեամբն ու վեհափառ Սուլթանին իրատէոյն հաստատուած եմ Պատրիարքական պաշտօնին մէջ, և Տէրութեան ու Ազգիս մէջ միջնորդ լինելով ինչպէս որ Տէրութեան իրական շահերուն համար աշխատիլ պարտաւորութիւնս է, նոյնպէս ալ Ազգիս հաւատարմութեան և ծառայութեան համար միջնորդ և երաշ-

խաւոր եմ: Հայոց ազգին Պատրիարքութիւնն իւր այս մեծ և նուիրական պարտաւորութեանն համար բարեխնամ կառավարութեան հայրական շնորհացն արժանացած է և Կայսերական կառավարութեան համակրութիւնը դրաւած, զորս կը հաստատեն Պատրիարքարանիս մէջ գտնուած և մեզ պատիւ համարուած Բ. Դրան գրութիւններն:

«Մեր պարտաւորութիւններէն մին ալ զոր անթերի ի գործ դնել կը փափաքեմք, դաւառաց մէջ՝ հակառակ կամաց բարեխնամ Տէրութեան տեղի գտած զեղծումները կառավարութեան ուշադրութեանը ներկայացնելով դժուրութիւն և շնորհ հայցելն է:

«Մեր Օգոստոսիաու Սուլթանն, որոյ Տէր Աստուած երկար կեանք շնորհէ, կը փափաքի որ առ հասարակ իւր հպատակները կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւն ունենան, և հաւատարմագէս իւր կայսերական շնորհքն ու խնամքը վայելեն: Իսկ երբ արդարութեան և հաւատարմութեան սկզբանց հակառակ հարստահարութիւնք տեղի կը գտնեն, իմ խեղճ ժողովուրդս, որոյ հովիւն եմ, նախ իւր դաւառին Առաջնորդին կը դիմէ, ցաւերը կը յայտնէ. և երբ Առաջնորդին միջոցաւ իւր ցաւոց դարման չը գտնէր, աղաղակելով և թախանձելով Պատրիարքարան կը դիմէ. Պատրիարքարանս ալ յետ քննելոյ և ըստուգելոյ՝ Բ. Դրան կը դիմէ, շնորհք և դժուրութիւն կը խնդրէ:

Արդ-Գղիի եւ Երզնկայի կողմերը բնակող մեր ժողովուրդը Քուրդ Պէյերէ և անոնց արբանեակներէն հարստահարուելուն պատճառաւ՝ քանի տարիներէ ի վեր թէ՛ ուղղակի և թէ՛ Պատրիարքարանիս միջոցաւ քանիցս Բ. Դրան դիմած են, և Բ.

Դուռն ալ շարունակ հրամանագրերը զըրկած է: Սակայն ըստ որում հարստահարելը ազդեցութեան տէր մարդիկ են և գանդատներէն շատն ալ կառավարութեան պաշտօնէից վրայ կը ծանրանան, փափաքուած արդիւնքը տեսնուած չէ. վասն զի Բ. Դուռն այն պաշտօնեաներէն բացառութիւն կուզէ, (յամ իրաւ կրնէ), որոյ համար ժողովուրդը գանդատած է:

«Եւ որովհետեւ Օգոստոսփառ Սուլթանն իւր արդարաւիրութեամբ կը պահանջէ որ հարստահարութիւնը ջնջուին, և Բ. Դուռն ալ արդէն դիտէ որ Գուրգ Պէյերուն ազդեցութեան տէր ըլլալուն պատճառաւ խեղճ և տկար ժողովուրդը չը համարձակիր ի դատ մըտնել ոչ անոնց հետ և ոչ անոնց արբանեկացը հետ, Բ. Դուռը մինչև ցարդ ի դոյժ դրած իսթիլամի եղանակէն դուրս իշխանալայել ազդու միջոց մ'ընտրեց, այսինքն ՆՊՆՆ ըէճէպ ՆՆ թուական կրող հրամանագրով մը հրահանգ տուաւ տեղական կառավարութեան թէ, որպէս զի ժողովուրդը կատարեալ ազատութեամբ և ազահովապէս ի դատ մտնելու կարող ըլլայ, յիշեալ Պէյերն և անոնց արբանեակներն արդեւանաց տակ առնուին, մինչև որ իրենց անպարտութիւնը կամ յանցանքն ըստ օրինի հաստատուի: Սոյն հրամանագրին օրինակն ալ ներփակեալ կը մատուցանեմք Ձեր Բարձրութեան:

«Մինչեւ Պատրիարքարանն ու Ազգն սերտապա և միտմարեցաւ թէ այս անօրէնութեամբ նոյն հարստահարութեանց իսպառ բարձման դարմանն ու միջոցը գտնուած է, տեղական կառավարութիւնը նոյն հրամանագիրը ճշդիւ և անթերի չը գործադրեց և տակաւին

վերջին որոշումը չը արուած՝ նախատեսուեցաւ որ բողոքող ժողովուրդը զըրկարտիչ պիտի ցուցուէր, և այս կերպով հարստահարութեանց աւելի ոյժ պիտի տրուէր. ուստի զանազան թուականօք Թագրիներն մատուցանելով իմաց տուինք թէ՛ տեղական կառավարութեան դատաստանին արդիւնքը գոհացուցիչ չը պիտի լինի, և ինդրեցինք որ յիշեալ հրամանագիրն անթերի գործադրի:

«Բ. Դրան որոշումն ու հրամանագիրն ի գործ չը դնող տեղական կառավարութեան նոր տեղեկագրին վրայ, Արտաքին գործոց Վսեմագատիւ Պաշտօնեայն իր ծանուցագրին մէջ Պատրիարքարանիս համար այնպիսի լեզու մը գործածած է, որոյ նմանը չէ տեսնուած. և որ՝ Օսմանեան մեծագոր Տէրութեան հաւատարիմ հպատակ Հայոց Ազգի Պատրիարքարանին պատույն դպած և մեծ ցաւ պատճառած է: Երբ վերոյիշեալ եղարքոսական հրամանագրին ներփակեալ պատճէնը կարդալու շնորհ ըլլայ, այն ատեն պիտի հասկցուի որ Պատրիարքարանն իրավարար անձանց ձայնակից գանուելէ նրբան հետի է: Ձեր Բարձրութիւնն անտարակոյս հաճութիւն չը պիտի տայ երբէք մեզ ցաւ պատճառող նոյն պարբերութեան:

«Եւ որպէս զի ապացու ցանեմք թէ յիշեալ գանդաններն անհիմն չեն, և թէ տեղական կառավարութիւնը տեղի գտած հարստահարութիւնքը ինչ մը քաջըրուքներով ծածկելու և թէթեկցելու ջանքեր ըրած է, Դուրուլանի Գայմագամ Շահ Հիւսէյին Պէյը պաշտօնէ հանելու մասին նախարգ Եպարքոս Բարձրագատիւ Միտահաթ փայային մէկ հրամանագրին պատճէնն ալ աստ ներփակեալ կը մատուցա-

նեմք, որ մեր ըսածները լիովին կարգա-
րացնէ :

«Եւ ըստ սրում արդարութիւնը կը պա-
հանջէ որ այս տեսակ հարստահարու-
թիւնք իսպառ բարձուին, և տեղական
կառավարութեան պաշտօնէից՝ հակա-
ռակ բարեխնամ կառավարութեան կա-
մաց, գործած գործերն երևան գան և
յանցապարտն ո՛վ ոք և ըլլայ, թէ կա-
ռավարութեան պաշտօնեայ և թէ Ա-
ռաջնորդ, պատժուի. կը խնդրեմք որ
չնորճ ընէք ասոր քննութեանն համար
Բ. Դուռն յատկապէս խառն մասնաժո-
ղով մը կազմել : »

17 ԱՂ Զիլհիճճէ 1 և 18 Յունիսը 1873



ՊՍՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍՈՅ

ՄԿՐՏԻՑ ԱՐԵՔԻՄԻԱՊՈՍ ՆՈՒՄԵԱՆ

Անպատասխանի մնացած է :

15. Ղուզուլճանի բռնաւոր վերջիշ-
եալ Շահ Հիւսէյինի համար հետեւեալ
թագրին եղած է .

«Կարոյ կուտակալութեան ասկ Եր-
զնկա գաւառի Ղուզուլճանի Գայմա-
գամ Շահ Հիւսէյին Պէյի բռնաւորական
արարքներուն պատճառաւ ճնշեալ եւ
հարստահարեալ աղքատ ժողովուրդը
քանի տարիներէ ի վեր թէ Պատրիարքա-
րանիս միջոցաւ և թէ՛ ուղղակի Բ. Դուռը
գիմելով զթութիւն հայցած և յիշեալ
Գայմագամի պաշտօնանկութիւնն ու
հեռացուցուիլը խնդրած էր, Պետական
Խորհրդոյ Տակիլէյ Տարիէսիին որոշմամբ
17 ԱՂ ձէմաղլէ Էվիէ 11 թուականաւ

հրամանագիր մը զրկուած է հետեւեալ
խմատով :

«Յիշեալ Գայմագամը Շահ Հիւսէյին
«Օղլու Ալի պէյին որդին է. այս Այի Պէյը՝
«Տէրսիմի կողմերն աղքեցութիւն և զօ-
«րութիւն դատած ըլլալով խել մը հոգե-
«րու պատճառ եղած և իր հարստահա-
«րութեանց պատճառաւ Վիտին աք-
«սորուած էր. որդին ալ իր հօրն ընթաց-
«քին հետեւելով ինչպէս որ ժողովուրդը
«կը նեղէ և կը հարստահարէ, նոյնպէս
«և խոչընդօտ կ'ըլլայ այն կողմերը քա-
«ղաքային վարչութեան և դատական բա-
«րեկարգութեան սահմանուելուն և բա-
«րենորդմանց ի գործ դրուելուն Թիշ
«եալ անձին այս ընթացքն հռչակեալ
«և Բ. Դրան ալ ծանօթ ըլլալով՝ անմի-
«ջապէս պաշտօնէ ձգուի և դատաստանը
«տեսնուելով պարտ ու պատաշահն ի գործ
«դրուի : »

«Սոյն հրամանը՝ Տիվանի Ա.Տ.քեամի
որոշմամբ՝ 17 ԱՂ Շապան 10 թուա-
կան հրամանագրով մը կրկնուած է:
Դարձեալ Տիվանի Ա.Տ.քեամին Մուհարէ-
մաթ Տարիէսիին որոշմամբ 17 ԱՂ Բէճէպ
12 թուականաւ հրամանագիր գացած է,
և անոր պարունակութիւնն ալ 17 ԱՂ
Բամազան 72 թուականաւ հեռագրա-
կան հրամանագրով կրկնուած է. եւ
դարձեալ յատկապէս կազմուած յանձ-
նաժողովի մը որոշմամբ 17 Ա. Մուհար-
րէմ 14 թուականաւ հրամանագիր գա-
ցած է. ընդամենը հինգ հրամանագրեր:
Սակայն մէկ կողմէն Շահ Հիւսէյին Պէյ
աղքեցութեան տէր, իսկ հարստահար-
եալ և բողբոջ ժողովուրդն աղքատ և
ընկճեալ լինելով՝ դատուին մէջ դատ
վարելու անկարող կը դանուի, ուստի և
մէկ մէկու ետեւ զրկուած Եպարքոսա-
կան այնքան աղքատ և կորուկ հրամա-

նազրերն ալ դործագործիւն չեն գըտներ, և յիշեալ հարստահարիչ Գայմագամը տակաւին պաշտօնի վրայ կը մնայ և յիշեալ առաջնու ոգւով առաւել ևս կը չարչարէ իրմէ գանդատող հարստահարեալները:

« Յիշեալ Ժողովրդեան մայրաքաղաքս գանուող հայրենակիցք Պատրիարքարան դալով այս անգամ յայտնեցին թէ՛ յիշեալ բռնաւորին ճիրաններէն ազատելու յոյսերնին վերցած է բուրովին, և ինդրեցին պաշտադին որ իրենց ապահովութեան համար բարեկընամ կառավարութիւնն ուրիշ երկիր մը ցոյց տայ բնակելու: Քննութեամբ ալ ստուգուած է թէ՛ Հայ հողագործաց հայրենական ստացուածքն կը զածարեւրը՝ զորս բազում աշխատութեամբ մշակած և հերկած է Ժողովուրդն, իմ նախնիներես ինձ ժառանգորիւն մը նաացած են կ'ըսէ Ծահ Հիւսէյին. և որպէս զի Հայ հողագործք ձեռնմտի ըլլան իրենց կալուածական իրաւունքէն, և իր պահանջած ապրէն աւուրքերը վճարեն և իր գործաց ու շինութեանց ձրխարար աշխատին, ամեն հարստահարութիւն ի գործ կը դնէ, թէ՛ ինքն ուղղակի և թէ իր արբանեկաց և ծառայից ձեռքը:

«Եւ ըստ սրում արդարութիւնն ու գըթութիւնը կը պահանջեն որ փափարուած ապահովութիւնն ու անդորրութիւնն հաստատելու և տեական բնելու համար, Բ. Գրան որոշումները պարունակող ներփակեալ հրամանադրաց համաձայն Ծահ Հիւսէյին Պէյն անմիջապէս իւր պաշտօնէն հանուի և հեռացուցուի, և հաստատարիմ Հայ Ժողովուրդն անոր հարքստահարիչ և կեղեքիչ ճիրաններէն ազատելով ապահովութիւն և անդորրու-

թիւն վայելէ, իրաց վիճակը Ձեր Բարձրութեան յայտնելով՝ առ այն գըթութիւն և շնորհք կը ինդրեմք:»

ՎԿԳ. Ճէմադիլ Էվիլէ Կ և Կ Յունիս 1873:



ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ԳՕԼՍՈՅ
ՍԿՐՏԻՃ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԽՐԻՄԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Սոյն Թագրիբին մէջ յիշուած եպարքոսական հինգ հրամագրաց պատճէնները կը դնեմք աստ:

Ա. ՀՐԱՄԱՆԱԳԻԲ

«Քիչի ի Երզնկայի կողմերը՝ Քրիստոնեայ հպատակաց վրայ՝ Քրդաց ի գործ դրած թշնամական տարբերներուն մասին Հայոց Պատրիարքարանն յատկապէս յայտադիր մը մատուցած է. թէ՛ սոյն յայտադիրն և թէ՛ անոր վերաբերեալ Թագրիբներուն պատճէնները Պետական Խորհրդոյ որոշմամբ Ձեր Վսեմութեան կը հաղորդեմ, առ այն Ձեր ուղղորդութիւնը հրահրելով: Ասոնց ընթացումն պիտի տեղեկանայ Ձեր Վսեմութիւնն, որ իր հայրն ու մայրն և կիներն սցաննող Կիւլլայ Օղլու Ազիդ և Ծահ Հիւսէյին Օղլու Հիւսէյին Պէյ և եղբարքն Իպրահիմ և Թիմուր Պէյերն և ուրիշ անձեր սպաննութիւնք կը գործեն, ընտանեկան պատուոյ դէմ կը մեղանչեն, արտեր կայրեն և յափշտակութիւնք կը նեն. և թէ՛ այս տեսակ շարունակեալ հարստահարութեամբք հաստատարիմ հպար-

տակաց ապահովութիւնն ու անդորրութիւնը վերցած ըլլալով, խնդրուած է որ ոճրագործներուն մէկ մասը դատաստանի համար հոս բերուին և մէկ մասն ալ այժմէն մէկ մէկ յարմար տեղեր զրկելով հեռացուցուին :

Մինչդեռ ժողովուրդը կենաց, պատուոյ և ընչից մասին մշտնջենաւոր կերպիւ ապահովութեան ներքև դնել կառավարութեան ամենէն մեծ պարտաւորութիւնն է, և Ձեր կուսակալութեան պէս մասնաւոր կարեւորութիւն ունեցող տեղերը զանազան ազգերէ բաղկացեալ հպատակաց մէջ հայրենակցութեան միութեան կազմը պայտանելու համար հոգ տանիլ անհրաժեշտ է, ընդհակառակն՝ յաւիտենական վէճերու և խռովութեանց առիթ տուող դէպքերու մասին Պատրիարքարանէն դանդառներ կը լըսուին. և մինչդեռ յիշեալ անձերէն Հիւսէյն Պէյին ըմբոստ և հարստահարիչ արքայը կը պատմուի, հարկ չէ բացատրել թէ զինքը Ղուղուլխանի Գայմագամութեան պաշտօնին մէջ պահելով նորա հարստահարութեանց այժ տայը՝ Տէրութեան վրայ ինչ տպաւորութիւններ կընէ, թէ և այն դէպքերը քննելէ առաջ համարում չը դոյանար ըսելու թէ անոնք պատմուածին պէս տեղի գտած են, սակայն անուրանալի է որ այնքան սաստիկ բողոք և աղաղակ հաճկաւ հիման մը վրայ դրուած կը լընան: Օգոստոսիան կայսր արդարապիտութիւնն ալ չը ներելը որ մէկն զմիւրը մաղիւ չափ հարստահարէ: Ուստի հարկ եղած քննութիւնները կատարելագոյնս ի դործ դրուելէ ետև՝ յանցապարտից մասին կանոնաց տրամադրութեան փութացումը հաստատագոյնս կապաւոր Ձեր վստահութենէն :

«Գալով այդ տրամադրութեանց դործագրութեան եղանակին, յիշեալ անձանց գլխաւորներն ազգեցու թիւն և ոյժ գտած Քուրդ Պէյեր լինելով, տկար ժողովուրդն ոչ ասոնց և ոչ արքանեկացը դէմ դատ վարելու չը համարձակիր: Նըմանագոյն խիստ հաւանական է որ, ինչպէս փորձերն ալ ցոյց կուտան, այդ Պէյերն իրենց յանցանքը ծածկելու կամ թեթեւցնելու համար ապօրէն միջոյններու դիմեն. ուստի յիշեալ Հիւսէյն Պէյը Ղուղուլխանի Գայմագամութեան պաշտօնէն հանելով՝ ուրիշ արժանաւոր մէկը կարգուի, և արդարախոհ պաշտօնեայ մը զրկուի այն կողմերը. յիշեալ Պէյերն ու իրենց արքանեակներն ալ արգելանաց տակ դրուին, մինչև որ անպարտ կամ յանցապարտ ըլլանին ըստ կանոնի ըստուգուի: Եւ ամեն ապահովութիւն տալով հրատարակուի թէ՛ ո՛վ որ ասոնց դէմ բողոք ունի, ներկայանայ համարձակ և հաստատէ:

«Սրբ կը յանձնարարեմք որ փոյթ տանիք՝ ասոնք կատարելէ ետև՝ յերեւան գալիք ամբաստանողներն ու ասոնց բողոքները տեղական դատարանին մէջ պարագայիւրը լսելով՝ երկու կողմն ամենայն նրբութեամբ դատել. նոյնպէս և այն տեսակ ոճիրներու մասին՝ որոյ համար անձնագոյն ամբաստանող չը կայ, կառավարութիւնը դատախազ կանգնեցնելով՝ դատաստան ընէք, և ապա իրենք իրը կուսակալութեան կեդրոնին դատարանաց քննութենէն ալ անցնելով, պէտք եղած դործողութեանց և օրինաց դործագրութեանն համար տեղեկազիրը շուտով հոս զրկէք: Վերջագոյն ժողովրդեան անդորրութիւնն ու ապահովութիւնը կատարելագոյնս հաստատելով՝ այս տեսակ դանդառանաց

մէկ մ'ալ տեղի չը տրուելու կերպիւ
արդար և ազդու միջոցներ ձեռք առ-
նուք ։»

1788 ձէմազիլ եվզէլ 11



ԱԱԼԻ

Բ. ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

« Գղիի և Երզնկայի գաւառները բնա-
կող Հայերուն խեղ մը Պէյերէ հարըս-
տահարեալ ըլլալէն տեղի դատած գան-
գատանաց մասին՝ հարկ եղած քննու-
թիւնն ու դատաստանն ընել յանձնա-
րարուած էր արդէն Ձեր Վսեմութեան,
1788 ձէմազիլ եվզէլ 11 թուական
գրութեամբ ։

« Բողոքարկու ժողովրդեան Պօլիս գըտ-
նուող հայրենակիցք ալ յիշեալ Պէյե-
րուն հետ ի դատ մտնելու համար այդ-
կողմը գալու մտադրութիւն յայտ-
նելով՝ խնդրած են որ իրենց համար
ալ ըստ նախորդ յանձնարարութեան,
արդարութիւնն ի գործ դրուի և պարտ
ու պատշաճ անօրինութիւնն ըլլայ ։

« Ուստի ներկայիւս կը յանձնարարեմք
որ ըստ այնմ զարժանն անօրինելով՝ օրի-
նաց առ այն տրամադրութեանց հետ
արդիւնքը տեղեկագրելու ջանք և շը-
նորհ ընէք ։ »

1788 Շապան 10



ՄԱՀՄՈՒՏ ՆԵՏԻՄ

Գ. ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

« Ղուզուլճանի Գոյմազամ Հիւսէյին
Պէյի նկատմամբ Ձեր Վսեմութեան գը-

րութիւնն ու անոր յարակից տեղեկագրիւն
տապանք. որով կը յայտնէք թէ՛ յիշ-
եալ Հիւսէյին Պէյի դէմ յանուն ժողո-
վըրդեան դանդաղող Գարա Հիւսէյին
Օղլու Մէհմէտ և Կիւճէնկի Մէհմէտ
Աղաներուն նոյն խի իրենց խոստովա-
նութեամբն հաստատուած է որ, ասոնց
գանգատներն անձնական հակառակու-
թեան արդիւնք են. և թէ՛ ոչմահմե-
տական վեց ամբաստանողներէն չարս
անձին յառաջ բերած հողային խնդրոյն
մէջ յիշեալ Պէյին իրաւունք ըստացել է.
միւս երկուքին ամբաստանութիւններն
ալ յիշեալ Պէյին վերաբերութիւն չու-
նին եղեր. և թէ՛ հետեւաբար որոշուեր
է, յիշեալ երկու Մէհմէտ Աղաներն ու
ասոնց հետ միացողներն՝ անհիմն ամ-
բաստանութիւններ ըրած ըլլալուն հա-
մար՝ իրենց հայրենիքէն հեռացնել ։

« Այս գրութիւնները Տիվանը Ահքեամբ
Ատլեյէի յանձնելով՝ տեղեկագիր մ'առ-
նուած է. որոյ խմտան է, « Յիշեալ Հիւ-
սէյին Պէյը Տէրսիմի կողմերն աղդե-
ցութիւն և զօրութիւն ստանալով կա-
ռուարութեան շատ հոգեր պատճա-
ռած և առկից յառաջ Վիտին արտըր-
ուող Շահ Հիւսէյին Օղլու Ալի Պէյին
« որդին ըլլալով, հռչակուած է որ՝ ժա-
մանակէ մ'ի վեր հօրը ընթացրին հե-
տեւութեամբ ժողովրդեան վրայ տեսակ
« տեսակ հարստահարութիւններ կը գոր-
ծէ, և նոյն տեղերը քաղաքային վար-
չութեան և դատական բարեկարգու-
թեան հաստատուելուն արդեւք կըլլայ ։ »

« Հայոց Պատրիարքարանը շարունակ
կը գանգատի և ոմանք ալ կը յայտնեն
թէ, յիշեալ Պէյին հարստահարութիւն-
քըն եթէ տակաւին շարունակին, նոյն
տեղեկաց Քրիստոսեայք պիտի ստիպուին
իրենց հայրենիքը թողուլ և դաղթել ։

«Մինչդեռ Բ. Գոնէն ազգու կերպիւ ազգարարութիւններ և յանձնարարութիւններ եղած են Ձեր Կուսակալութեան որ յիշեալ Պէյն իր ամբաստանողաց հետ դատաստանի ենթարկի, որպէս զի թէ անհատից թէ ընդհանրութեան իրաւունքը տեղը բերուի, սակայն փափաքուած արգիւնքը չէ գոյացած ցարդ: Այս անգամ ալ իմաց կը արուի Ձեր կողմէն թէ՛ ամբաստանողք իրենց ամբաստանութիւնները չը կրցին հաստատել, և թէ՛ յիշեալ Պէյը բոլորովն անպարտ ելնելով՝ հարկ կը լլայ ամբաստանող մահմետական և ոչ-մահմետականներէն զմանս արտորել:

«Բայց ըստ որում անց պատժական օրինաց համաձայնեցնելու մարդ պատժել այնտան կը լլայ, երբ քաղաքական կամ վարչական բացառիկ և սոսկապէս պարագայ մ'երեւան դայ, հետեւաբար այս տեսակ անհատական խնդրոց մէջ ամբաստանողաց մասին այդ կերպով վարուիլն ո՛չ օրինաց և ո՛չ արդարութեան կը համաձայնի: Ասկից զամ եթէ յիշեալ անձեր իրենց ամբաստանութիւնքն հաստատած չըլլանուն համար արտորանաց պատժոյ ենթարկին, շատ դէշ կը լլայ վախճանն. և յիշեալ Պէյին պատճառ արուած կը լինի իւր հանրածանօթ չարիքը բազմապատկելու, մանաւանդ երբ իւր արդի պաշտօնին մէջ մնայ: Իսկ եթէ նոյն կողմերէն վերցուի յիշեալ Պէյը, ժողովրդեան դանդաղանք վերջ պիտի գտնեն և Տէրսիմու ըրանց շրջակայքն անգործութիւն հաստատելու արդեւք պիտի դիւրանան:

«Ուստի, մինչև որ յիշեալ Պէյի ընթացից և արարելի վրայ կատարեալ վստահութիւն գայ կառավարութեան, նոյն վիճակէն հեռի ուրիշ քաղաքի մը

Գոյմագամութեան պաշտօնին գնէք զանի, առանց թոյլ տալու որ իւր հայրենիքը վերագառնայ, Իսկ վերոյիշեալ անձանց համար պատիժ անօրինեքն անընդունելի է առաջի օրինաց:

«Արդ՝ ներկայիւս կը յանձնարարեմք Ձեր Վսեմութեան որ նոյն տեղեկագրին համաձայն պարտուպաշաճը տնօրինելու ջանադիր գտնուիք:»

1789 Ռէճէպ 15



ՄԻՏ ՀԱԹ

Գ. ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

«Տիվանը ԱՏքեամբ Ատլիէի որոշմամբ 1789 Ռէճէպ 15 թուագրեալ հրամանագրով յանձնարարուած էր որ, Ղուղուլմանի Գոյմագամ Շահ Հիւսէյին Օլլուն իր պժգալի արարքներուն համար՝ պաշտօնէն հանուի և հեռացուցուի: Սակայն ժողովուրդը կը բողբէ թէ՛ ոչ միայն այս տնօրէնութիւնը գործադրուած չէ, այլ և յիշեալ Պէյն իր հարըստահարութիւնքը բազմապատկած է:

«Ուստի՝ Մուհաբէմաթ Տարիքսիի որոշմամբ այս անգամ ևս կը յանձնարարեմ որ՝ անմիջապէս յիշեալ հրամանագրերը գործադրելու և արգիւնքն հեռադրով իմացնելու փոյժ տանիք:»

1789 Րամազան 75



ՄԷ ՀԷՄՄԵՏ ՐԻՇՏՍԻ

Ե. ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

«Երջնկայի Ղուղուլման աւանի Գոյմագամ Հիւսէյին Պէյի ապօրէն ընթացից և ժողովրդեան հասուցած չարեաց պատ-

ճառաւ՝ յանուն Ժողովրդին նորա պաշտօնանկութիւնը խնդրուած է, հանրագրով և մասնաւոր գրութեամբ: Ասոնց պարունակած խնդրոյն նայելով՝ ինչպէս որ յիշեալ Պէյլին ընթացքն իրեն յանձնուած պաշտօնին տեսչութիւնը չը պիտի ապահովէ, նոյնպէս ալ իրեն բնիկ Ըլլալուն պատճառաւ՝ նոյն Գայմազամութեան պաշտօնին մէջ մնալն անպատշաճ պիտի Ըլլայ:

« Հետեւաբար՝ այս խնդրոյն համար կարգեալ յատուկ մասնաժողովը յայտագրած Ըլլալով թէ՛ նոյն Պէյն անմիջապէս պաշտօնէ դադարեցնելով, դատաստանի ենթարկելու համար, կուսակալութեան կեդրոնատեղին բերել պէտք է: և թէ կեդրոնին մասնաւոր արձանագրութեանց մէջ վարքերնին նշանակեալ անձերէն արժանաւոր մէկն՝ եթէ կայ՝ նոյն Գայմազամութեան պաշտօնին կարգել, և եթէ՛ յարմար մարդ չը կայ՝ ասկից մէկը զրկելու համար հոս խնաց տալ հարկ է, վերոյիշեալ գրութիւնները ներկայեալ Չեր Վսեմութեան զրկելով, կը յանձնարարեմք որ ըստ այնմ պարտուպատշաճն ի դորձ զնելու հոգ ամենիք: »

174. Մուհարրէմ 19



Հիօթիթին Ավնի

Այն հրամանագրաց վրայ յիշեալ Հիւսէյին Պէյը ցարդ Ղուզուլմանի Գայմազամութեան պաշտօնը կը վարէ:

16. Վանայ Հոգւոյ Վանուց կողպատուերուն վրայ Թագրիբ մատուցեալ է, 174. ձէմազելէ վիվէլ 77 և 9 Յուլիս 1873:

Անպատասխանի մնացած է:

17. Սերաստիոյ մէջ Պապիկ անուն Հայ մը Մահմետական կրօնքը կընդունի և իւր աղջիկը հետ կը տանի. աղջիկն ըստ որում խելահաս՝ կը վատխի Հայոց վանքը կապաստանի:

Իսլամք՝ անդելով թէ աղջիկը տոճկացած հօրը քով պէտք է մնայ, վանքը կը կսիտեն և աղջիկը բռնի կը յափըշտակեն:

Թագրիբ գրուած է, 174. Շապան 1 և 18 Սեպտեմբեր 1873:

Բ. Դուռն հրաման կընէ որ՝ նախ աղջիկը կրօնափոխ հօրն յանձնուի և ապա խնդրոյն քննութեան ձեռնարկուի:

Աղջիկը կրօնափոխ հօրը քովէն տանելով մօրն յանձնելու համար կրկին Թագրիբ գրուած է, 174. Շէվվալ 15 և 22 Նոյեմբեր 1873:

Անպատասխանի մնացած է:

Այն խնդրոյն համար վերստին Թագրիբ գրուած է, 174 Ռէպիւլաիբը 71 և 25 Մայիս 1874:

Իսթիլամի հրամանագիր զրկուած է:

Դարձեալ Թագրիբ եղած է 174 Շապան 17 և 11 Սեպտեմբեր 1874:

Իսթիլամի հրամանագիրը կրկնուած է, Հուսի ուրեմն երեք տարի վերջն՝ անցեալ ամիս՝ աղջիկն յանձնուած է մօրը:

18. Մշոյ Մօսկան աւանի գիւղօրէնց Հայ բնակչաց Գրդերէն կրած հարրտահարութեանց մասին Թագրիբ գրուած է, ի միտսին մատուցանելով՝ Գրդուաց մէկ տարուան մէջ Հայերէն ըրած

գըն անցունել խնդրը որ դեռ նախաքննու-
թեան տահմանին մէջ նոր կը մտնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԵՃ . — Ուրեմն քանի որ
յանձնախումբին տեղեկացրըն չէ եկած . սրբան
ալ ժամանակն ուչ է , փոխանակ պարտալ կե-
նալու կրնանք Օրակարգի խնդիրը ձեռք առ-
նուլ , որ է Թաղ. մատակարարութեան խնդր-
ըն , և անով զբաղիլ առ այժմ :

ԱՅՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Էււ , եթէ դատ-
ղութիւն ընող չկայ , կանցնինք Օրակարգին :

Ուրեմն սէտք է իջեցնեմ Ժողովին թէ
Թաղ. մատակարարութեան զխոյն մէջ ասկէ
առաջ Թաղ. Խորհուրդն ընարող մարմինը այն
է Թաղային Ժողովը կազմել ուրուարեցնինք . և
ստոր ընտրութեան եղանակին վրայ վիճարանե-
լով որոշեցինք թէ « Այ որ ընտրեալ է ստա-
« Վին քուէարկութեամբ եթէ չստանայ քուէար-
« կուց թիւին կէսին մէկ անգիլ քուէ . խն
« Երկրորդ քուէարկութեան մէջ համեմատական
« ստաւելութիւնը կը բաւ : Ամենայն քուէար-
« կութիւն՝ թէ ստաւին և թէ երկրորդական ,
« որում ընտրուց զանէ քառորդը չէ մաս
« նակցած . Երբև անբաւական անխալը է և
« սէտք է կրկնուի : Եթէ այն կրկնուց քուէ-
« արկութեան ժամանակ ընտրուց զէթ քա-
« ուրը դարձեալ չը մասնակցի և քուէարկու-
« թիւնն անբաւական մնայ , երրորդ անգամի
« ընտրութեան իրաւունքը՝ թաղին Ալիզու-
« նին վարչաթեան անցնի և նա ընտրէ Թա-
« ղային ժողով փոխանակ և ի պատիւ անտար-
« բերութեան թաղեցոյ » :

Բայց կըր Վարչարան ասն միշտանուրեան
կղանակին վրայ վիճարանութիւն բացուեցաւ . ո-
րը տարածամեալ ըլլալով և ուրիշ ստիպողական
զարմեր ունենալով , Ժողովը սրաւց ուրիշ նըր-

տի ձգել վիճարանութեան շարունակութիւնը : Աւարտիկ մինչև այս կէտն հասած ենք վերաբըն- նութեան . պէտք է այժմ ասիէ սկսիլ :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ս.ՂԵ առաջար- կութեան տէրը նոյն ինքն լուսաճողի Ռուսին- եան էֆէնտի ասիէ առաջ ԺԲ. նխտին մէջ բննն երևեալ թաղային ընտրութիւնները Վար- չութեան յանձնելու կէտին վտանգաւոր և ան- սեղի ըլլալը բացատրեց և յաւելցուց թէ ես ալ սեղիցոյց այդ մասին բուէ տողով , ուստի և իմ քուէս ետ կոտնում ըսաւ : Պէտք է նախ կարգաւոր որ իմաստասիրները Ռուսինեան էֆ. ի կարգաւոր որ իմաստասիրները Ռուսինեան էֆ. ի նոյն օրուան ատենարանութիւնը և ապա այս կէտին վրայ բուէարկենք :

ԱՏՏԵԱՊԵՏ ՔԱՇԱ. — Ես ներկայ չի ժԲ. նստին , և անոր ատենագրութիւնն ալ որ այ- սոր ձեռքս հասաւ , տակաւին չեմ կարդացած . ի հարկէ ինծի պէս շատերն ալ չեն կարդացած և Ռուսինեան էֆ. ի նոյն օրուան ատենաբա- նութիւնը չեն իմաստասիրած : Ուրեմն այս խնդիրը կը մնայ մինչև ԺԲ. նստին տօնենագրու- թեան վրայ դիտարութիւնները լսուին . ուրեմն կանցնինք Տրդ յօդուածին քննութեանը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ես պիտի խօսիմ և երկար՝ այդ յօդուածին վրայ . բայց նախ կուզեմ հասկնալ թէ յանձնախմբին տեղեկագրի- ընն ի՞նչ եղաւ , եկա՞ւ թէ չէ . վասն զի ԽՍ. ԸՆ Սրբազան՝ որ անոր անդամներէն մին է , բերինք կըսէ :

ԱՏՏԵԱՊԵՏ ՔԱՇԱ. — Մինչև ցայս վայր- կեան զիւանին վրայ տեղեկագիր չկայ , թէ որ բերին՝ պէտք է Ղիւանին յանձնեն :

Սոյն պա՛ռուն յանձնախմբի անդամներէն **Տօք. Փէշտիմաճեան** էֆէնտիին զիւանին յանձ- նեց տեղեկագիրը՝ յայտնելով թէ տեղեկագրերն ալ ինք է :

ԱՏՏԵԱՊԵՏ ՔԱՇԱ. — Ժողովը կը յիշէ անշուշտ՝ որ անցեալ շարթու Վարչութեան կողմէ ներկայեալ առաջարկութիւնը Հարստա- հարութեանց յանձնախմբին յանձնուեցաւ ԽՍ. ԸՆ սրբազանն ալ յաւելցնելով անոր անդամոց

վրայ , որպէս զի քննեն և տեղեկագիր մը բե- լեն մեզ աս կէտերուն վրայ . նախ թէ պէ՛տք է արդեօք Վարչութեան առաջարկած կերպով յանուն Աղղին դրութիւն մը մատուցանել Բ. Ղրոնն . և երկրորդ՝ եթէ պէտք է , առաջար- կեալ զրութիւնն ի՞նչ իմաստով արժան է իւրը- թագրել : Ահաւաստիկ յանձնախմբին տեղեկա- գիրն այժմ դիւանին յանձնուեցաւ . բայց ցա- ւայի է որ մաքուր գրուած չէ , մէջը շատ մը սրբագրութիւններ եղած են և ստորագրու- թիւններն ամբողջ չեն : Ներուի ինձ միջնա- կեալ կերպիւ աս դիտողութիւնն ընել . երբ զիւանին զիր մը կը յանձնուի Ժողովին ներկա- յելու համար , պէտք է որ ամբողջ մաքուր գրուած ըլլայ , և չէ թէ դժուած և սրբագրու- ւած . միտքս յանձնախմբին երկաւորութիւնն է . պերել չէ , բա՛ւ լիցի . այլ յիշեցնել վրայն թէ պատշաճեց օրէնքը կը պահանջէ որ այսպիսի տե- ղեկագրերը կատարեալ կերպով ներկայացուին , որպէս զի վերջը չփոխութեանց առիթ չը տըր- ուի :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ. — Յանձնախմբը՝ որոյ անդամակցելու պատիւն ունեցայ , պատ- շաճից օրէնքը դիտարելով հանդերձ կը ցաւի որ չը կրցաւ ժամանակ ունենալ իւր տեղեկագրին մաքուրը պատրաստելու . վասն զի գիտէ Ժո- ղովը թէ իրեն յանձնուած փախուկ խնդրոյն համար ո՞րքան էր իւր միջոցը . ուստի յանձնա- խուրնիս բնականաբար կարեկցութեան արժանի է այսպիսի պարագայիս մէջ :

ԱՏՏԵԱՊԵՏ ՔԱՇԱ. — Խօսքը յանձնախմբ- ընն տեղեկագրեր Փէշտիմաճեան էֆէնտիին է : **ՓէշՏԻՄԱԼ ՃԵԱՆ ԷՅ. —** Անցեալ նստին Աղղային ժողովը Վարչութեան առաջարկու- թիւնը մեզ յանձնած ատեն երկու կէտի վրայ մեր կարծիքն ուզեց . նախ թէ այս միջոցին ուր տեղութեանց կողմէ Թուրքիոյ քաղաքական բարեկարգութեանց խօսք կըլլայ , պէ՛տք է որ Հայոց ողորն ալ ձայն մը հանէ , և երկրորդ՝ եթէ պէտք է , ի՞նչ կերպով : Յանձնախմբինիս առաջին կէտին վրայ մտածեց և միաձայնու- թեամբ պէտքն ընդունեց . իսկ երկրորդ կէտին դարձով՝ կցախմբսն որ համաձայնութիւնը կա-



տարեալ չէ. և որովհետև տոխողական հարկ մը կար մեր տեղեկագիրն այսօր ներկայացնել, վերջին նիստ մը ըլլինք ոչսօր և հաղիւ կրցանք հինս բերել մեր տեղեկագիրն, զոր ահաւասիկ կը կարգամ.

Օսմանեան կայսերական կառավարութիւնն ի սկզբանէ հետէ ճանչած է թէ իւր հպատակաց մէջ Հայ ազգը Թուրքոյ կրկրին խաղաղասէր և սոսկանողական տարերաց մըն է: Նորա այս մասնաւոր յատկութիւններն իւր բազմադարեան հաւատարմութեանն աներկայելի կերպիւ ազայցուցեալ է: Օսմանեան կայսերական կառավարութիւնը վերահասու եղած է նաև թէ Հայ ազգն երկրին ընտիկէ միւս ցեղերէն եթէ ո՛չ ա. ւելն, դեմն նոյնչափ ընդունակ է յատաշղի. սութեան և Հայոց ազգային ներքին Վարչութեան համար 56 ի խարքին ոգւոյն համեմատ Բ. զոնէն վաւերացեալ Մահմանադրութեան անխափան և կանոնաւոր կիրառութիւնը բաւական է յապացուցանել այս ազգին կարգապահութեան և օրինատիրութեան ոգին:

Ուստի Երեսփոխանական Ժողովս յանուն բովանդակ Հայ ազգին որ 'ի Տոնկատան, կողմունէ դուարթագին Թուրքոյ ընդհանուր Ժողովրդոց վիճակն ինչիմանէ բարւոքեւր վեր. կարոր և Վեհանձնական Խորհուրդը. վասն զի Հայն երկրին այլազան ժողովրդոց մէջ գուցէ ամենէն աւելի ըստ կ'ըմբռնէ զյարգ նոյն մեծ խորհրդին՝ որ ամբողջ երկրին հաստատութիւնն ու բարւոքումն ապահովելու կը յանգի:

Հայ ազգն արդի ստորագայից մէջ շննկարտի կարծիք յայտնել որչափ բարեկարգութեանց կրանակին և միջոցներուն վրայ. բայց իբրև երկրին ճշմարիտ օգտից նախանձախնդիր հըստ. տակ կը հատարձակի յայտարարել թէ Օսմանեան կայսերական կառավարութեան և իւր բարեկամ Տէրութեանց արմատական և վերջնական կերպիւ ձեռք առնելիք միջոցներուն արժէքըն ու ներշնչող ոգւոյն ինատուութիւնը կաւտարելագոյն երևան պիտի դան, երբ արդարութեան և հաւատարմութեան սկիզբանց զրոշմը կրին նորա:

Հայոց Աղղին երեսփոխանութիւնը կը փա. վաքի ուրեմն 'ի սրտէ որ ներկայ ստորագայից մէջ նկատողութեան առնուի այն բաղմամբիւ ազգին վիճակն, որ երկրին միւս ժողովուրդներէն ոչ նուազ կարեկցութիւն կ'ըրարէ իւր վերայ. նկատողութեան առնուի Հայաստանի դիպքն ու վերջնապէս այս ժողովուրդեան ստրկեւտ, երկրագործ, արուեստագէտ յատկութիւններն և խահական ու անձնուէր վարմունքն՝ որ արդար վարձատրութեան արժանի է:

Ուրեմն Հայոց ազգը իրաւունք ունի իրենք բերու որ շնորհի իրեն անխորարար և հաւատարատէս ինչ որ կարեւոր դատուի Թուրքոյ միւս ազգաց վիճակին բարւոքմունն համար, որպէս զի Հայ ազգն ալ չը զրկուի աշտատրէն զարգանալու իրաւունքէն և կարող լինի քաղաքակրթութեան ճամբուն մէջ անարգել քայլելու նոյն խի յօգուտ երկրին:

Հայոց ազգին Երեսփ. Ժողովն իւր ներկայ խնդրագիրը մատուցանելով յանուն ընդհանուր ազգին, կը համարձակի յուսալ որ կայսերական կառավարութիւնը պիտի համի ընդունել իւր սովորական բարեարտութեամբը:

3 դեկտեմբեր 1876

Ատենադպիր Ատենապետ
 Յ. Մէրեքի-Գուլի Խորէն Արքայի Նար-Պէշ
 Յովհ. Քճ. Միքիան Կ. Ս. Խորհեմանճ
 Տ. Փշտիմալճեան
 Տեղեկաբեր

ԱՅՆԱՊԵՏ ՓԱՏԱ — Եթէ Ժողովը կը նե. լի է, տեղեկաբեր է ֆէնտին կամ յանձնախմբին կողմէ ուրիշ ո՛վ որ որոշուած է զայն փաստաբանել, թող շնոր ընէ թեմը եղնել բայցարեւու համար թէ ինչ պատճառներով յանձնախմբը համաձայնութեամբ համադուեր է թէ իրոյ ներկայ վիճակին մէջ պէտք է որ Հայոց ազգն ալ ձայն բանայ. վասն զի առաջարկեալ զրութիւնը չէ թէ յանձնախմբին, սլ բոլոր երեսփոխանք ստորագրել պարտաւոր ըլլալով միացն յանձնախմբին համոզուին բաւական չէ. պէտք է նաև երեսփոխանաց մտքին մէջ ալ համալրամ զայնայոց ոչ մասին:



8. ԻՌՐԷՆ ՍՐԱԱԶԱՆ. — Իբրև տտեճաւ պետ յանձնախմբին խօսք կը խնդրեմ յանձնաւարներին մէկ որպէս յարմար հասարակութեան համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ խորհն Սրբազան պատրիարքին յանձնախմբին կողմէ կազմեմ, չորհրդ ընէ բեմն խօսի :

8. ԻՌՐԷՆ ՍՐԱԱԶԱՆ. — [Բեմն կորուցի] Ոչ, փաստարանելու համար խօսք չուզեցի. այլ յանձնախմբին մէկ առաջարկութիւնը միայն հարգեալու համար :

Յանձնախմբին պարագայից ծանրութիւնն և այս խնդրոյն փոփոխութիւնը նկատութեան առնելով, և գիտնալով միանգամայն որ ժողովը պարտք պիտի դնէ իւր վրայ բացատրութիւն տալ թէ ի՞նչ պատճառ և փաստ ունեցաւ այս կերպով համոզում գոյացնել իւր մէջ, որպէս խնդրել ժողովից որ այդ հարցման պատասխանը դռնփակ նստի մէջ տայ յանձնախմբին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գործնական խնդիրը գրաւոր և զօնէ 10 երեսփոխաններէ ստորագրեալ պէտք է ըլլայ ըստ կանոնի, որպէս զի կա, և ըլլանք ոչ զարկութեան նկատ ընել, ապա թէ ոչ չենք կրնար :

ԵՆՆՈՒՅԵԱՆ 8. ԷՖ. — Այո, իրաւունք ունիք՝ Ատենապետ փառաւ կանոնն այդպէս կը տրամադրէ, սակայն երբ ժողովին յանձնախմբին 7-8 անդամներէ թաղանցիակ միանայ կառավարիչ գործնական նստի մէջ առ կրնէ պահանջուած բացատրութիւնը, կարծեմ թէ ժողովը կրնայ այդ առաջարկութիւնը ընել առանց իւր կանոնաց զէմ գործելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ յանձնախմբին տեղեկագիրն սոս բառերով սկսէր թէ խնդիրը փոփոխ և ծանր ըլլալով գործնական նստի մէջ կուզինք բացատրել այն ստեղծ կրնայինք առաջարկութեան առնուլ գործնական խնդիրը : Բայց տեղեկագիրն այսպիսի բառ մը չպարունակէր, ուստի իբրև առնապետ ժողովին իմ պարտաւորութիւնս է կանոնին չարտադրել և առանց կանանախմբի ձեռքը չընդունել այսպիսի առաջարկութիւն մը՝ մանաւանդ անոր համար

որ արդի պարագայից մէջ այսպիսի խնդրոյ մը վրայ դռնփակ խորհուրդ ընելու տարօրինակ գոյն մը կուտայ մեր գործողութեանց, կարծեմ առաջարկութեան հարցումը թէ մենք տեղութեան զէմ գաղտնածածուկ որպէս ընելու կընկրայինք, որն որ բնախն հետի է մեր մտքերէն :

ՄԵՐԵՆՍ-ԳՈՒՆԻ 8. ԷՖ. — [Սրբազան Եպիսկոպոս] Ազգային ժողովն իւր յանձնախմբին յանձնած ըլլալով վարչութեան առաջարկութեան պէտքն որոշել, յանձնախմբին մտքէն չէր անցնէր որ իւր տեղեկագիրը բերած ստեղծութեան բացատրութիւն կամ փաստարանութիւնն պիտի պահանջուի, մանաւանդ երբ երեսփոխանաց մէջ տակաւին ոչ ոք դատուեցաւ զէմ խօսողութեան որ ատենապետ փառային խօսեալութիւնը կը ներէ որ դռնփակ նստի մէջ վիճարանութեան ենթարկուի այսպիսի փոփոխ խնդիր մը, յանձնախմբին անդամները վախ մը չունին այդ մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը սխալիք, Մէրեքէն — Գուրի Էֆէնտի, երբ կըսէք թէ ժողովն իւր յանձնախմբին յանձնած է վարչութեան առաջարկութեան պէտքն որոշել, անցնել նստին ստիպողականութեան խօսքեր եղան, բայց ժողովը չընդունեց առանց սերտելու խնդիրը վիճարանութեան ենթարկել և ժողովն իւր յանձնախմբին յանձնեց սչ թէ որոշել և վճեելու այլ քննելու համար միայն թէ առաջարկեալ գրութիւնը պէտք է ի. Գրան մատուցանել և եթէ պէտք է ի՞նչ խնամող :

Սիւր բնական էր այսպէս ըլլալ, և քանի որ առաջարկեալ գրութիւնը մեք պիտի ստորագրենք, պէտք է որ մեք ալ համալուրիք և տեղեկանանք այն պատճառներուն՝ որով դուք համոզուեցայք : Այս պատճառաւ կը խնդրենք և իրաւունք ունինք խնդրելու բացատրութիւն, որուն պէտքը յանձնախմբին մտքէն չ'անցած ըլլան գարնանալի կրթութիւն : Եթէ դռնփակ կի առաջարկութիւն ունիք, ի՞նչ գծարարութիւն կայ առի գրաւոր կերպիւ ընելու, ինչպէս որ կանոնը կարգահանէ :

ՄԵՐԵՆՍ-ԳՈՒՆԻ 8. ԷՖ. — Մեք մեր քննարկներուն մէջ վստիմարու բան մ'ունենանալու

Համար չէ որ դռնխոսկ կպահանջենք, այլ առ նոր Համար որ խնդիրը փախուկ է և կրնայ ճապարհը դռնխոսկ մէջ :

Գալով մեր յանձնախորհրդի պաշտօնին, եթէ ամենն ալ այնպէս հասկնանք են՝ ինչպէս Ատեւնապետ փառան կըսէ, մեր չկարծեցիրք թէ Հոս փաստաբանելու պաշտօն ունինք, այլ կարծեցինք թէ պէտքն ընդունելէ և անգեկազիրն իսկ Հոս բերելէ ետև մեր պաշտօնը կըրանայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՏԱ. — Մէրեմ-Պուրի է. Ֆէնտին կործիրը սխալ է. արդէն առաջարկութեան հեղինակն եղող Վարչութիւնը անցեալ նախին յայտարարեց թէ արդի սարազայեցի ծանրութեան մէջ ասանկ փախուկ խնդիր մը Ազգային Ժողովը պէտք է որոշէ. երբ յանձնախորհրդը պէտք է կըսէ, բնականաբար ասոյ կհետեւի որ պատճառն ալ բացատրելու է : Իսկ եթէ անպարտաւոր որ յանձնախորհրդին որոշուած ժամանակ լիազօր իշխանութիւն տրուեցու առ նոր, այնպէս որ անոր որոշումը վճիռ և խումբազօրութիւնը մեղնէ սոսկ ստորագրելի պիտի ըլլայ, ես ետ կտանուով լի խօսքս :

Կհարցնեմ ժողովին թէ լիազօր իշխանութիւն առաջ մի յանձնախորհրդին :

ՉԱՅՆԵՐ. — Ի՛նչ ո՛չ :

Տ. ՅՈՎ. Է. ՔՂՆՅ. ՄԿԵՆԱՆ. — [Անշար յանձնախորհրդին] Յանձնախորհրդին ալ չընդունիր լիազօր իշխանութիւն :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Չեմ յիշեր կանոնադրութիւնն ինչպէս կտրամադրէ դռնխոսկ նախ առաջարկութեան Համար, քանի՞ երեսուխանի ստորագրութեամբ խնդրադիր պէտք է կըսէ :

[Զայցեր. — 10 է.]

Քանի՞ ստորագրութեամբ ալ ըլլայ թող ըլլայ. ես սա կը ինչպէս թէ կանոնադրութեան այդ պահանջումը դռնխոսկ նիստ ընելու մասին մէջ մը դրսէն եղած ճնշումն և մէջ մ'ալ քաղաքական կարևորութիւն ունեցող խնդրոց Համար ըստան է : Մեր ամենէն մեծ սխալն է քաղաքականութեան վերաբերեալ խնդիրները զազալելի պահելու ուզելնիս, ասոյ ևս անբարձր աստիճան բան չկրնար ըլլալ, վասն զի մեր քաղաքականութեան հետ դարձ չունինք, ուստի և դառնի պահելու բան ալ չունինք :

Քաղաքականութեան հետ դարձ չունինք, ուստի և դառնի պահելու բան ալ չունինք. մեր խնդրը՝ սոսկ կենաց, սրտաւոյ և ընչից աստիճանութեան խնդիր է. և եթէ դռնխոսկի պահանջումն ընդունուի, մեր դուրս կեննինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՏԱ. — Կաղարչեմ. դուրս մի՛ ելնէք : Կանոնադրութեան բաներն այս է. եթէ 10 երեսուխան դռնխոսկ խնդրեն՝ ժողովը կորոշէ ձեռնարկածով անոր պէտքը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բայց խնդրադիրը պատճառաբանեալ պիտի ըլլայ :

Այս միջոցին Ատեւնապետ փառան Կանոնադրութեան Զարդ յօդուածը բանալով կարգայնոր է :

« Տան անդամոց խնդրանք » որ Համարստ պատճառաբանեալ պէտք է Ատեւնապետին ձեռքը տրուի, ձեռնարկածով ասանց վճիռ Ժողովը կորոշէ միթէ դռնխոսկ նաեւ կուզէ » և յաւելցուց. « Եթէ այսպիսի դիր մը մատուցուի Գլխանին պարտքն է սուղաբանութեան առնուլ » :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ձայնակցիմ Օթէն ԼՖ. ի վերջին դիտողութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՏԱ. — Պարտք կը Համարիմ ինչպէս Օթէն ԼՖ. ի որ Կանոնադրութեան մէջ իւր ըստձ պարտաւորելը վնասուի և անբար է, ոգուցն մէջ ալ չկայ. թող ներք Օթէն ԼՖ. խնդրին որ իւր խօսքերը մերթեմ. վասն զի տեսող մը սպառնալիք են Ժողովին. մեր դուրս կեննինք ըսելը Ժողովին վրայ բարձր յական ճնշում բանեցնել է :

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես ճնշում բանեցնելու մտք չըսի. առաջուց ինչու չըզուլայնեք որպէս թէ դառնի պահելու բան մը ունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՏԱ. — Առաջուց ըսելը կերպով մը ճնշում բանեցնել է :

ԵՆՈՍՈՒԹԵԱՆ Տ. ԷՖ. — Համարենք թէ Օթէն ԼՖ. ճնշում բանեցնելու մտք չըսաւ այն խօսքը. բայց իւր տուած կանոնադրական մեկնութիւնն ըստ իմ կարծեաց սխալ է և անընդունելի :

ՔԱՓԱՄԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կերկորդեմ :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես կատարելի տր-
դէն այս մասին պարտաւորութիւնս , կալուչեմ
Եւուսֆեան էֆ. մի կրինէք , մի երկարեք իշն-
դիրը որպէս զի վիճարանութիւնը չդաւանանայ :

Սյն միջոյն՝ դռնիակ նիստ ուզող երես-
փոխանայ կողմ գիր մը մատուցուեցաւ զիւ-
նին և կարդացուեցաւ :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստորագրութեանց
թիւը 10 է ճիշդ . և հիմա Ժողովին կը մնայ ու
լուծել թէ նիստը դռնիակ ընել պէ՞տք է թէ
ոչ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ որում դորն-
փակի առաջարկութիւնը յանձնարարին կողմէ ե-
կաւ , ես իբրև անդամ նոյն յանձնարարին կը
յայտարարեմ թէ մեր աշխատած դորձին մէջ
բնաւ բան մը չտեսանք՝ որ դռնիակի կարօտ ը-
լայ . ինչ էր մեզ յանձնուած խնդիրը . Կառու-
վարութեան ուղիւժ մը մատուցանելու խնդիր է
և ոչ որիչ բան . ես կը բողբեմ իբրև յանձ-
նարարին փորձանմանութեան և անոր չը
համաձայնող անդամ՝ դռնիակի առաջարկու-
թեան դէմ . վստահ զի օտարտի կատարածանոց
տեղի կուտայ այդ :

ԵՆՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կը բողբեմ կա-
կած բառին դէմ և չեմ ընդունիր այս պարա-
դոյին մէջ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ձեր այդ առաջար-
կութիւնն է որ կատարածանոց տեղի կուտայ . մեր
աղղը պարզ և անիկղժ քաղաքականութիւն
ունեցած է ցարդ՝ այդ պարզութիւնը պիտի պա-
հենք . Թող աղղն ալ կատարութիւնն ալ և
ամեն որ ընէ թէ մենք ուղիւ և անիկղժ ենք և
միայն մեր ցաւը դարմանը խնդրելու քաղա-
քականութիւնն ունեցած ենք և պիտի ունենանք
մէջս :

(Սղոսկ և իրարանցում)

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Առաջարկութեան
խորագրութեան մէջ դիտողութեան արժանի
կէտ մը կայ . կանոնը կարճանջէ որ դռնիակի

առաջարկութիւնը համառօտ պատճառարանեալ
ըլլայ . արդեօք « փախուի և արտաքոյ կարգի կու-
րեար » բառերն իբր պատճառարանութիւն կրնան
նկատուիլ : Ինչ որ ալ ըլլայ . ինձ պարտաւորու-
թիւն կը համարեմ յայտարարել թէ ըստ որում
խնդիրն յանուն Սղղին ձայն մը հանելու վրայ
է , ինչպէս կայտրէ յաւձնախօսիք , ինչ հարկ
կայ այն ձայնը խեղդել դռնիակ նստին մէջ :

ՄԻԼԵՆԻՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՖ. — Երբ Սղղային
ժողովը կանոնադրութիւնը դռնիակ նիստ կը
տրամադրէ , տարակոյ շմարտը երբեմն պէտք ու-
նի դռնիակ նստի . հիմա դռնիակի խնդրը չը
փոթութեան մէջ ինկաւ , երբ արտաքոյ կարգի
փոփոխութիւն ունեցող խնդիր մը ունի՝ դռնիակ
կը հարկ չտեսնէք , միթէ Փախաղեան էֆլնախի
ըսածին պէս կատարելի խնդիր մ'ունենալու է
որ դռնիակ նիստ ըլլայ :

Սպէց գառ՝ բունի որ դռնիակի առաջար-
կութիւն կայ , թող ժողովն իր կարծիքը յայտ-
նէ և եթէ ուղի , թող մերժէ դռնիակ նստի
պահանջումը : Դերեցէք ինձ ըսել թէ ևս չիչ
մը ճշուամ կտեսնեմ այս խնդրոյն մէջ . յանձնա-
խուսին իր ըսելիքներուն մէջ վստահուաւ բան
մը չունի . իր ըսելիքներն այնպիսի խնդրոյ մը
վրայ են , որ եթէ կէս ճամբան ճաղաղի անպա-
տեհութիւններ կձողին . ահա այս է ամենէն
մեծ պատճառը դռնիակի նիստ ուղեմուս :

ՉԱՅՆՈՒՐ. — Բա՛ւ է . բա՛կի դրէք՝ Ս.տե.
նապեա փաշա :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մեր պէտք չէ որ
մեր կանոնադրութեան տրամադրութիւններէն
չեղինք : Կանոնադրութեան մէջ դռնիակ նըս-
տի խնդրոյն վերարբեւալ 29 բլբ յողուածը՝ զոր
Ս.տե.նապեա փաշան պահ մը առաջ կարդաց ,
81 և 82 յողուածները ցոյց կուտայ փակագծի
մէջ . տեսէք՝ այս վերջին երկու յողուածներն
լինչ կըսեն :

[և ստեղծարան էֆլնախի կորոյց հետևալը]

« Բլբ . 81 . — Որ և է պարտադրոյի մէջ
երբ ժողովին կողմէ անփութանութեան ցոյց կամ
կատարած նշմարէ , Ս.տրչութեան այս կամ այն
մասը միշտ կրաւունք ունի վտանգութեան քուէ
պահանջելու : Եղովը կորոյց ձեռամբարձով ա .

սանց վիճէ միթէ կը տեսնե՞ այդ բուէին պէտ-
քը ։ Ա՛յք բուէն յաջորդ նիստին կը մնայ, որոյ
արդէնքը գործադիր իշխանութեան շը պարի ։

« Յօդ. 82. — Որ ժամանակ ըլլայ՝ երես-
փոխան մը կրնայ հարցադրուով ուղղել Վար-
չութեան սր և է մտտին կամ Պատրիարք Սեր-
բազանին, բայց զրուար պետք է տայ իր այդ
խնդրանքն առնեապեսին ։ Ա՛յք ինչպիսիք կը
բացատրէ համառօտը հարցման նիւթը և կըլնէ
որն ուղղեալ ըլլա՞ր . առնեապետը կընթեա-
նա զանի Ժողովին ։

Երեւոյթանէ առ երեսփոխան հարցադրու-
ղում արդէնկալ է ։ »

Սրբէ ինչպէս որ այս երկու յօդուածներէն
էրեւի է. Կանոնադրութիւնը նախատեսած է թէ
զորնիտի նիստ ըլլալու պարագաներն ո՞ք են .
առաջին՝ այն առնն պիտի ըլլայ զանփակ նիստ,
երբ Վարչութեան ղէմ անգլատահութեան պա-
բազայ մը պտտահի, և երկրորդ՝ այն առնն,
երբ Վարչութեան ուղղեալ հարցադրուով մը
պատահի, որն որ համառօտ պատճառաբանեալ
օրիտ ըլլայ ։ Ասոցմէ զատ՝ Կանոնադրութիւնը
զորնիտի նիստ ըլլալու երկրորդ պարագայ մ'ալ
նախատեսած է, Պատրիարքական խնդիրներու
համար միայն ։

Յոյս տուր, Մէրեւի-Վալի ԵՔ. ո՞րն է փա-
փուկ խնդիր ըսածդ, որուն համար զորնիտի
նիստ պիտի ըլլայ ։ Կանոնադրութիւնն ուրիշ
կէտ մ'ալ նախատեսած է. այն է՝ արտօնութիւն
չտար մեղաբեութեան աշխարհալարութեան վրայ
խօսիլ . առնես ալ զխանք որ ներկայ խնդիրը
բարբաբական խնդիր մ'է. բայց պարագաները
մեզ Ռատի լաւ է որ զորնայ նիստի մէջ յու-
զներս Թաղ շիրտէ Մէրեւի-Վալի ԵՔիտիտին
թէ ետ ճնշում կրանեցնել ժողովին մէջ . առն-
նեկն ո՞չ . ես ալ իբրև անդամ յանձնախորհրդ
մէջ գտնուեցայ, բայց բնաւ չտեսայ այնպիսի
կէտ մը՝ որ զորնիտի նստի կարօտ ըլլայ . անոր
համար համարձեք չեմ յանձնախորհրդ մեծա-
մասնութեան ըլլած առաջարկութեան զորնիտի
նիստամբ ։

ԱՏՆՆԱԳՅՏ ՓԱՇՍԱ. — Փախազեան ԵՔին
տի կոխարի եթէ կկարծէ թէ Մէրեւի-Վալի
ԵՔիտիտի արտատեսած ճնշում լառն առ ինքն
ուղղեալ է . ընդհակառակն՝ այդ խօսքն զեա-
նին կիկարարերի ։ Վարչութեան Մէրեւի-Վալի է-
Քիտիտին, եթէ փախու կ և կարնոր ըսած խըն-
դիրնիդ ձայն հանկ է, ի վերայ տանեաց բարո-
ղելու է . Ի՞նչ հարի կայ՝ որ զորնիտի կտա-
ջարկուի տանի ժամանակի մը մէջ . այնպէս
ըսելու Մէրեւի-Վալի ԵՔիտիտին կրնայ ճնշում
նկատել, բայց իմ խիղճս հանգարտ է . բնաւ
մէկերեսու մտքին մէջ չկայ մասնաւոր դիտում
մը կամ խնդիրը յիտաձգելու միտում . բայց
երբէք չէ պտտահած որ Աղբալիտի Ժողովն այս-
պիսի ժամերակելու խնդրով մը դրսիտ այս զիտի
փախուկ ժամանակի արարադրայն մէջ . եթէ փա-
փուկ կկարծէք խնդիրը և զորք փակելք որոն-
քն, ի՞նչու այս առեանք կը բերուի, զի հո-
սանն բան կը խօսուի և առնեադրութիւնն ու-
նինք որ զամենայն ինչ կը հոչակէ ։

Վարչութեան զորնիտ ինչ է եթէ մեք 180
անդամով ժողով մը այս տեսակ խնդիրներով
պիտի դադարէք, և այն ալ ի ծածուկ բացադրու-
թեամբ ։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԴԱՆ. — Մէրեւի-Վալի
ԵՔիտիտին ըսաւ որ ժողովին հարցուի. եթէ ուղէ
զորնիտայ կրնայ ընել . արեմն այս մասին վե-
ճաբանելու հարի չմնար ։

ԱՏՆՆԱԳՅՏ ՓԱՇՍԱ. — Սրբազան Հայր
գուք որ զԼու Սղդին, Ժողովոյս և Վարչու-
թեան, ի՞նչ կեանք, կհաճիք որ զորնիտի ը-
լլայ ։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԴԱՆ. — Եթէ երեւոյթ-
ան ԵՔիտիտինը արտաճակայ օրէնքէն զուր-
չելնեն և կրկն հասանքին մէջ չլնան, զորն-
իտի պէտք չկայ ։

ՉԱՅՆԵՐ. — Բուէ, քուէ ։

ԱՏՆՆԱԳՅՏ ՓԱՇՍԱ. — Որովհետեւ բուէի
ձայներ կը լսուին, և Սրբազանն ալ կրկնե-
րուէի դնելով կգոյցնք այս միջնողկպը ։

ՆՈՒՍՈՒՑՅԵԱՆ Տ. ԷՖ. — Սղբուներ կէտ
մը կայ այս խնդրոյն մէջ . անիկայ ջրացաւ

բուժած արկի չէ՛ քուէի դնել. ուստի խօսք կու-
ղեմ այդ կէտը բացատրելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Կարծեմ թէ՛ բու-
սական են մինչև ցարդ խօսուածներն . իբրև
փանչիր ատենախօս մէկ երկու անգամ խօսե-
ցաւ :

ՆՈՒՍՈՒՓԵԱՆ Ց. ԷՖ. — Օգտէն ԼՖէնտի
յանձնախորին անդամ չըլլալով խօսեցաւ, մեր՛
որ չեղբ ենք, ինչո՞ւ չխօսինք :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ղլխոնալ պէտք
է որ եթէ Եւստօֆեան ԼՖէնտին խօսի, սլա-
տասխան պիտի սանք .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՏԱ. — Խօսքը չերկարելու
համար պիտի հորցնեմ Ճողովին թէ՛ կոնճի՞
Եւստօֆեան ԼՖէնտին խօսք տալ և այնու-
հետև անմիջապէս գոցել վիճարանութիւնը :

Չայս ըսելով Ստենապետ փաշան քուէի
գրաւ, և Ճողովը 17 քուէի հակառակ 20 քուէ-
ով որոշեց՝ Եւստօֆեան ԼՖէնտին ընել էակե-
անմիջապէս վիճարանութիւնը գոցել :

Ղլւանը հրաւիրեց ՂԵւստօֆեան ԼՖէնտին
ի բեմ :

ՆՈՒՍՈՒՓԵԱՆ Ց. ԷՖ. — Պխտի ջանամ
որ բան կարելի է համաւստ խօսիլ, որպէս զի
Ճողովը չձանձորացնեմ :

Յանձնախորն ո՞ր կազմած ենք, որոյ ան-
դամներ բաց ի մէկէն՝ կառավարի են որ իրենց
բացատրութիւնը դռնփակ նիստի մէջ տան :

Այս առաջարկութիւնը նկատուածեան
անուր կարող ըլլալու համար Ղլւանը Կանո-
նադրութեան դիմելով յայտարարեց թէ՛ 10 ե-
րեսխօսանէ ստորադրեալ խնդրադիր մ՛ընդու-

նեց, Հոս պահ մը բուն խնդիրը մտանաք և զը-
ռնփակ նիստի խնդիր մտածենք : Կանոնադ-
րութիւնը դռնփակ նիստի պէտքը կանխտես-
ած է, բայց չէ՛ կանխտեսած թէ՛ ի՞նչ ստի-
պողական պարագաներու մէջ դռնփակ նիստի
պէտք պիտի ունենանք. ասոր համար՝ ըսեր է
խիստ զգոնութեամբ որ եթէ՛ 10 երեսխօսան

խնդրադիր տան և դռնփակ նիստ առաջարկեն,
կրնայ ընդունուիլ : Ի՞նչպէս հետեցնենք ասկէ
որ եթէ 10 երեսխօսան դռնփակ նիստ առա-
ջարկեն, անպատճառ ազգին շահուցը հակառակ
կամ հրապարակի մէջ չըսուելու խօսքեր պիտի
ըլլան դռնփակի մէջ : Մեզ համար տակաւին
անձանօթ են այն մեկնութիւններն՝ զորս տալու
համար յանձնախորնը դռնփակ նիստ առա-
ջարկեց, և զիս չդիտենք թէ՛ ի՞նչ պիտի ըլլան
մեր կարծիքներն այն մասին : Քանի որ չը դի-
տենք, և կը քաշկուտենք այսպէս դռնփակ նիս-
տի առաջարկութիւնը, ըսել է թէ՛ երբէք չլի՞
տի կրնանք դռնփակ նիստ ընել : Քանի որ
յանձնախօսին անդամները Ճողովին ուղած բա-
ցատրութիւնը հրապարակաւ տալ չենք ուղեր
կրնան. եթէ՛ կանոնադրութեան այն յօդուածն
ալ չըլլար, որ 10 երեսխօսանայ խնդրանօք
դռնփակ նիստ ընելու արտօնութիւն կուտայ,
պէտք էր մեզ ընդունիլ և կասկածներ յարու-
ցանելէ զգոյշ մնալ, Հոս յանձնախօսին ան-
դամները ճիշդ սյնալիս դեր մ՛ունին, որ դա-
տարօք կանչուած անձանց կը նմանի : Խնդրոյն
փախկութեան դաւով՝ թէ՛ և ամեն խնդիր փա-
փուկ է. բայց իրարմէ՛ քիչ կամ շատ տարբե-
րութիւններ ալ կրնան գտնուիլ. այն խնդիրն է
ամենէն փախու կ՛ որ որ և է ազգի մը մէջ մե-
ծամեծ շահուցը կը վերաբերի, ես չեմ կրնար
երեւակայել որ ասկից աւելի փախուկ խնդիր մը
գտնուի : Ղլւանը պատճառարանեալ խնդրադիր
ուղեց և ստացաւ. անկէ աւելի պատճառարա-
նութիւն պտահանջուիլ աւելորդ է ըստ լա. փա-
փուկ է ըսուիլն արդէն պատճառարանութիւն
իւր մէջ կը պարունակի : Կը վերջանանք խօսքս
եզրակայեցնելով թէ՛ մեզի համար ուրիշ բան չը
մնար, եթէ՛ ոչ՝ դռնփակի առաջարկութիւնը
քուէի դնելով մերժել կամ ընդունիլ :

Ստենապետ փաշան յայտարարելով որ
ըստ որումն Ճողովին վիճարանութիւնը գոց-
ուած է, անմիջապէս քուէի դրաւ դռնփակ
նստի առաջարկութիւնը :

Ճողովը 21 քուէի հակառակ 22 քուէով ու-
րոշեց դռնփակօք ընել յանձնախօսին ասլիք
բացատրութիւնը :

Օրը տարածանալ ըստով յաջորդ նստին
 ձգտեցաւ յանձնարարի տեղեկաւորին վիճարաւ
 նախիւնը դռնփակի մէջ, և որոշեցաւ 8 օրէն
 յաջորդ նկատը դաւարել :

Ատեանը գրչուեցաւ ժամ 10 ր՛ն :

ԱՏԵՆԱԳՊԻՐ

Գ. Յ. ՄԵԼԻՔ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. ԱՄԼԱՆԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԶ.

10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — Ս. ՊԱՏՐԱՐԻ ՀԱՅՐ
 ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԻՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԻՔ

ԵՐԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԻՔ

- ԵՐԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԻՔ
1. Խորեն Աշրեպտկ. Կար ՊԼԵ
 2. Կարապետ Եզկուն. Սեբորեան Բ.
 3. Մատթևոս " Իգորլեանց
 4. Ամբրոսիոս Վ. Ուրբեանց
 5. Գարեգին " Թաճարեան Բ.
 6. Խորեն " Կերթեանց
 7. Հայեակ " Իմաստաստ Բ. Պ
 8. Յովհաննէս " Փոխադրեան
 9. Ներսէս " Արամեան
 10. Պողոս " Խոջամեան
 11. Եղիշ " Արամեան
 12. Աբրահամեան Բ. Մամբրեան Բ.
 13. Գէորգ Արճառի Բ. Ս
 14. Գրիգոր Աճեմեան Բ. Պ
 15. Խորեն Փէշկովեան
 16. Յարութեան Սերոբեան
 17. Յովհաննէս Միքեան
 18. Առաքիտ Ստեփաննոսեան Բ.
 19. Սահակ Տ. Սարգսեան

ԱՅՐԱՐԻ ՀԱՅՐ
 (Ս. Վ. ԻճԱՆԿ)

- Պատկերային, Կրթիկի Դպրատան և
 Պատկերային դպրատան
21. Գրեգոր Արշակեան
 - Բ. Բացակայութեան առաջին :
 - Բ. 2 Բացակայութեան երկրորդ :
 - Բ. Պ Բացակայութեան քանադոր պատճառ :

22. Գրիգոր Ստեփաննոսեան
23. Խորեն Մանուկասեան
24. Կարապետ Ազարեանեան
25. Համբարձում Մաղպուղեան
26. Միստ Գաբրիելեան
27. Յովհաննէս Պրոսպերեան
27. Յովհաննէս Սուրբեան Բ. 6
28. Ն. Մելգոնեան Տարբոր
29. Պողոս Պատեանեան
30. Սարգիս Աղաբեկեան
31. Սահակ Աղբոր Բ. Պ
32. Սեդեգիս Մանուկեան Բ. Պ
33. Փէշկովեան Տարբոր
- 34.
- 35.
- 36.

(Ս. Վ. ԻճԱՆԿ)
 ՊԵՏԻՊԵՐ

38. Բարսեղ Հարամեան
39. Կարապետ Ս. Իւթիսեան
40. Յարութեան Մարգարեան
- ԵՆԿԵՐԱԿՈՒ
41. Խոջամուր Դադարեան
42. Կարապետ Գ. Փոխադրեան
43. Մարութ Յընկեան
- 44.

Խորեն Ս. Խորեն

45. Յովհաննէս Եսայեան
46. Յովակի Ս. Մաղպուղեան
47. Առաքիտ Պատեանեան
48. Ստեփան Արամեան

- Բ. Պ Խորեն Ս. Կարապետ
- Բ. 2 49. Սեդեգիս Պատեանեան
50. Յովհաննէս Շիւսեան Բ. 2
51. Նիկողոս Արամեան
52. Տրդատ Փոխադրեան
- (Ս. Վ. ԻճԱՆԿ)
 Բեքա և
 Դպրատան Դպրատան
53. Արիս Ուսեան Բ.
54. Գրեգոր Ալեքսիանեան Բ.
55. Մարտիրոս Յ. Տրիլեան Բ.
56. Միկայել Մամբրեան Բ. 2
57. Նշան Բարսեղեան Բ. Պ
58. Ստեփան Սեդեգիսեան Բ. Պ
59. Տեղեմար Մ. Կարամեան Բ. 2
60. Իլիաս Չալեան
61. Յարութեան Նորատուկեան
62. Գրեգոր Մարտիրոսեան Բ.
- ՄԻՔԱՅԻՆ
63. Կարապետ Պ. Պրեանց Բ. Պ
64. Յակոբ Կոտայեան Բ. Պ
65. Յակոբ Պ. Նորատուկեան
66. Յովհաննէս Աղաբեկեան Բ. Պ
67. Տրիլեան Երատուկեան
- ՊԵՏԻՊԵՐ և Դպրատան
78. Յ Մելգոնեան-Գրեգոր
- (Ս. Վ. ԻճԱՆԿ)
 Դպրատան և ԻճԱՆԿ
69. Յովհաննէս Եսայեան Բ.
70. Ստեփան Պրիլեանեան Բ.

Դատըրիչ
 71. Կարապետ Շահապետան
 72. Մկրտչ Մուրադանան
Ետրըրգասիտ
 73. Յակոբ Եջեյնճեան
Երկինահայլէ Սամարիայ
 74. Օղակ Խոճատարեան
Թովղամիտ
 75.
Էջուր Ս. Եղիս և Ս. Աստ.
 ուսումսին
 76. Գարեգէն Յ. Մեղիքեան
Գորոշիչի
 77. Ատահա Իկիտարեան
Հիտար և Պրյաճի զիւր.
 78. Յովհաննէս Նորեան
Նոր զիւր և Սրկեհա
 79. Դազար Հովուեան
Պարտա
 80. Մկրտչ Գ. Էսանան
 81. Յովհաննէս Կեփեկեան
 82.
Բարսիլիօսիկ
 83. Յարութիւն Չիլիքեան
 84. Յարութիւն Գ. Տատեան
 (Ե. Վիճակ)
Սամարիա
 85. Աւերսան Պելիքեան
 86. Աւետիս Բարսեւան
 87. Եղիազար Մեղիքեան
 88. Մինաս Ճափանքեան
 89. Յակոբ Բաղդադեան
 90. Յակոբ Անանեան
 91. Նազարէթ Շահապետեան
 92.
 93.
 94.
Խաղտիչ
 95. Առաքել Աւթուն Տիւրբի
 96. Խաչատուր Պ. Մաարեան
 97. Ռէթէոս Պելլիկեան
 98. Արզիս Արապեան
 99. Սարգիս Արապեան
 100. Արման Մկրտչեան


ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ
Դարիկ
 101. Մանուկ Արամեան
Քեօրահետ
 102. Մ. Փարազեան Տօրթօր
Սյրիսանուսիչի
 103. Ռօրէն Կիւմսիկեան
Նիկիտիկա
 104.
Սին
 105. Պետրոս Միտարեան
Հարանիտար
 106.
Սրարիկ
 107. Կարապետ Խաչիկեան
Բաղիչ
 108
Պրուտա
 109. Բրետատուր Դազարեան
Երդիկիս
 110. Մեղիքեան Հարանեան
Սեմսիս
 111. Համարձու՛ Աւանանեան
Բարա
 112. Յովհաննէս Աղիտարեան
Երեմիս
 113. Յակոբ Խթիլեան
Մանճըրիս
 114.
Հանըն
 115.
Երգեկա և Բարերչ
 116.
Թէրիտուր
 117. Տիգրան Գ. Սիմանեան
Կեօրիս
 118 Մատթէոս Մ. Արամեան
Խաղտիչ
 119. Յովհաննէս Կարանեան
Պարիլեան
 120. Յովհաննէս Յովհաննէս

Մուշ
 121. Ստեփան Պ. Պ. Փարազեան
Տիկիկ
 122.
Զէյրուկ և Մարտչ
 123.
Տրապիզօն
 124.
Պարտա
 125.
Տիգրանակերտ
 126.
Ղան
 127. Սեմոն Մարտուտեան
Արարար
 128.
Հարիչ և Այնրուր
 129.
Սերատիս
 130. Մկրտչ Մեղիքեան
Ռուսնուս
 131.
Խարս
 132. Արքաճար Յ. Արամեան
Զիկիսար
 133. Համարձու՛ Սարքիլեան
Դաղատիս
 134
Ստանա
 135
Սրդիկ
 136. Մատթէոս Արամեան
Եօզրուտ
 137. Լօռօֆիթ Պալեօզեան
Մարտիս
 138.
Խոփի
 139.
Երկիտուտ
 140

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Վիճարանորին ի վերայ Տղեկագրի բնական Յանձնախօսին՝ հկատարաբար առաջարկարեան Աջգ. Վարչութեան : [Գործնական]

Բ. Վերաբնորին Յանձնադրութեան . շարունակորին Վիճարանորեան յօյաւածոց Թաղական մատակարարութեան :



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐ

Ատեանը բացուեցաւ Ժամն 7 1/2 ին 'ի ներկայութեան 37 երեսփոխանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62 ի :

1.

Քննադատութիւն ճարտար տանադրութեանց

Ատենադատ Փաշան յայտնելով թէ տասնորորդ նստին սկսեալ վեց տանադրութիւնք կան վաւերամտիք , սակայն անոնցմէ չորրոր միայն պարատա՛ իսկ վերջին երկուրք տակաւին տարադրութեան ներքեւ են , ամսիջապէս Ժ. նստի տանադրութեան վրայ ի զխտորութիւն հրախրեց երեսփոխաններն , և տեսնելով որ զխտորութիւն ընող չկայ , բռնի դրաւ ըսյն , որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՆ :

Նշնայէս ի զխտորութիւն հրախրեց երես

փոխանները ԺԱ. և ԺԲ. նխտերու տանադրութեանց վրայ , սակայն զխտորութիւն ընող չըւարով՝ հետզհետէ բռնի դրաւ նաև զանոնք . որք միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՆ Ժողովէն Վերջապէս՝ ԺԳ. նխտի տանադրութեան վրայ ի զխտորութիւն հրախրեց երեսփոխաններն :

ԱՆԱՃԱՃԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԷՑ . — ԺԳ. նխտի առեւտարութեան երեսփոխանաց ցանկին մէջ երրորդ անգամ բացակայ նշանակուած եմ ես , բայց սխալ է . վստան զի բացակայ դըտ . նստած եմ միայն մէկ անգամ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ . — 3 անգամ բացակայ տէր չէ նշանակել ներկայութեան տու մարին մէջ , վստան զի երկրորդ բացակայութեանէ ետեւ երրորդ անգամին զիւանկին կողմէ ծառնուելու է Ժողովին բացակայից անունը , որպէս զի ըստ օրինի հրաժարեալ հրատարակուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Քրիստոստոր է :

Ֆէնտիի զխողութիւնն ձԳ. նիտի ատենադ-
րութեան աթիւ, անոր խմբագրութեան չիւ-
բարերիք. ուստի միայն Արամեան էֆէնտիի
գիտողութեամբն այն ատենադրութիւնը բուէի
կը զննմ :

Հեռագրէս՝ ձԳ. նիտի ատենադրութիւնն
բուէի գրուելով, միանայութեամբ ԸՆԳՈՒՆ.
ՈՒՆԵՍԱ Ժողովն :

ԱՅՆՆԱԳԵՏ ՓԱՏԱ. — Հիմա է Քրիստոս-
տոր էֆէնտիի զխողութեան պատասխանելու
ժամը : Աը յիշէ ժողովն որ 3 անգամ իրարու
վրայ առանց կանոնական պատճառ մը գրով
յայտնելու բացակայ գոմուող երեսօխանաց
համար եղած տրամադրութիւնը ամենուս ալ
խիտ երկնալով, ասիէ առաջ չզխտեմ որ
նիտիին մէջ խնդիր եղաւ և մասնախումբի մը
յանձնուեցաւ այս կէտին վրայ բարեխոխութիւն
մը նուաճարելու Ժողովն. բայց այդ մասնա-
խումբը դեռ ճրագիր մը ընթած չէ : Ահա այս
պատճառաւ է որ ներկայութեան տուժարին մէջ
բացակայութիւններն ըստ կարգին կը նշանակ-
ուին : Գլխաւորն այսպէս վարուելուն Ժողովն ալ
կերպիւ մը թոյլտուութիւն ըրած է. վասն զի
անցեալ նիտիին Սերէիեան էֆէնտիի չորրորդ
բացակայութիւնը դիւանի կողմէ հրատարակու-
է ետն : Ժողովը գործեալ յետաձգելը թոյլ
ըլն անոր հրաժարման մասին. ըսել կուզեմ
որ կանոնական զեղծում եղած չէ, այլ բարե-
փոխութեան մը անխիտութեամբ կանոնական
գործողութեան մէջ զիւանը թոյլտուութեամբ
վարուած է : Արի՛ն եկաւ որ ըսեմ, մեր նա-
խաճնիչ զեանները և մասնախումբերը թոյլ
կը վարուին իրենց յանձնարարուած խնդրոց
տեղեկագիրը ընդերս մասին, որով ոչ նուազ
արգելք կը տրուի Ժողովին գործոց յառաջիկ-
մութեան, ուստի կարգչեմ որ թի՛ դիւան և
թի՛ մասնախումբ, որոնց որ գործ մը յանձ-
նուի նախաճնութեան և կամ անգեկացրու-
թեան համար, չնոր՛ ընեն ազդեցութեամբ ոչ
խառութիւններն փութացնելու. և կամ զի՛

առանց ժամանակի կորստեան չիրնալ ոչխա-
տելիքին մեզ յայտնելու, որովս զի պարտա-
պարտածը տնօրինուի :

2.

Բացակայորիւն

Ատենադրալ փաշան ծանուցանելով որ ադ-
գային երեսօխաններին՝

- Նուրեան Զաֆաննիս էֆ.
- Ստամբուլեան Գէորգ »
- Խնդիրեան Ստեփան »

անձնական տխարութեան պատճառաւ լայնա-
կայութիւններն գրով յայտնած են, նշանակել
տուաւ ներկայութեան տուժարին մէջ :

3.

Հարցում 5 երեսօխանաց

Հինգ երեսօխանաց կողմէ մատուցու-
լիտազայ հարցումը կարդացուեցաւ.

« Աը հարցնեմք Վարչութեան թէ ստոյգ է
« Վանայ ցաւովի զեպրը և թէ ոյս մասին ի՞նչ
« պաշտօնական անգեկութիւնը հասած են » :

- Ս. Պ. Պ. Փախագեանց
- Մ. Յ. Մէլիքեան
- Յ. Կրճիկեան
- Ք. Ղազարեան
- Տ. Փախագեան

ԱՅՆՆԱԳԵՏ ՓԱՏԱ. — Առեցիք հարցումն,
որ Վարչութեան ուղղեալ է. այս մասին կը
հաճի՞ արդեօք Սրբազան Նախագաւը կարծիք
յայտնել :

ՍՐԱՅԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Եթէ Ժողովն
ուղէ, հիմա պատասխանեմ :

[Ըսցելք. — Այո՛ այո՛] :

Դստ ալիկ. անցեալ շարքի օր Պատրի-
արքարան նստած էի երբ վանեցի վասնուսխան-
ներէն ոմանք ինձ զխմելով Վանէն ստած հեռա-
զինին ցուցուցին, որով Վանայ շահան ուղար-
կուցի :

վնճրոց ճարտիկ վնճիլն և Հայոց ասորանքներուն կրօնապետիլն խնայ տրուած էր . բայց այդ հեռագիրն՝ ըստ որում պաշտօնական չէր : և միանգամայն չէր բացատրեր թէ հրկիւղով ինչը դիմումն էր թէ ոչ դիպումնով պատահած էր : ուստի նոյն օրն անմիջապէս հեռագրեցիք Վանոյ ասորիներու հեռագրահին՝ հարցնելով թէ հրկեհն ի՞նչ պարագաներով տեղի դասած է : թէ շուկան աւարի տրուիլն ստոյգ է և թէ ոչ : եղած են ուսարատք , եայն : Մհաւատիկ այս մտախն առած պատասխաննիս . [և կարդաց հետևեալը] :

« Չարչըլարն եանմուր , մալքըլն եալմն օրնալ սահի՛ : եալմնըլար սիվարի , րկտիֆ , ժանտարմն տարկըլըլի իլ ճիւղի սայլիլ խիլ : վեր . տարկիտն սալա մուսալիլն զրնալըլալման պաշա՛ կալմնաճըլար պուլըլար պուլըլար հասալի իլ : քաստն զուլ օրնալ սալըլըլը պիլիմիտուլ . կվիլ մէ տիլըլ օրնալ նան թէտտտալմն թահիլիլ իչիլն միլիլն յմիլիլիլիլ իրալըլն մէնուլ : Սիլ թէ սարքի փաշա շըլը կիւնտն պիլու հասիլա . միլիլ ռանմէն նափաղայս , ստաղայս մէ վիճուածն ըրգն քալիլիլ նա հափաղայս միսն : թա՛ պուլըլնալըլար : 92 բեանուի կվիլն և թիլիլիլիլիլիլիլ ճիլալ տըր . ֆիլման » : 7 փեան . կվ . 92 :

Երեւիս Խոյիսիպոս
Պոդու Վարդայիս
Սեդրաք Կասառակիս
Վարդարեան

[Չարուեակեղով] Մոյն հեռագիրն առնելով այս առաւօտ կանուի վ. սեմ . Օսեան կֆիլնաիկ հետ նորընտիր Մեծ Եղարքոս Բարձ . Միտհասթ փաշային դայի , իւր սլաշտօնը Հնորճաւութիւն ևս հեռագիրն իրեն մատուցի . և ինչպիս նոյն հեռագիրն մէջ ալ առաջարկուած էր , խնդրեցի որ թէ հին և թէ նոր սլախի ղեկութիւն ու հարստահարութիւնները մանրամասնաբար քննելու և պարտաւարտածն ի դարձ զըրբնուր համար վարքը յանձնածողով մը ղրկուի ի վան : Երբն բարձրութիւն խոյնը ընդունե-

լով այս առաջարկութիւն . երկու պաշտօնեայ՝ մէկը քաղաքական և միւրը գիւնտօրական դասն կարգել սրտեց և ինձ ալ յանձնարարեց որ երկու անձ ալ Պատրիարքարանի կողմէն կարգուի , յայտարարելով որ յետ քննութեան յանցնողները պլաց օրինակ ըլլալու չտի խիստ պատժոյ սխիռ ենթարկէ : Ես ալ անմիջապէս այս յանձնաժողովն Պատրիարքարանի կողմէն ցուցուելը երկու անգամայն մոյն համար խրիվեան Սրբազանի անունը ներկայացուցի , զոր հաճութեամբ ընդունեց , և միան ալ Քառ . Քառ . զովով սխիռ ընտրուի : Այս առթիւ կը յիշեմ նաև որ Վանոյ ընդարձակ դատար Արմոյ կուսակալութիւնէն զատուելով՝ առնմին կուսակալութեան վերածելու համար վերջերս Բարան մատուցած ֆաղկրիլս գործադրութիւնն ալ խնդրեցի Ն . Բարձրութիւնէն , որ խստապաւ կատարել :

Մոյն բացատրութեան վրայ մէկ քանի Երեւիսիանայ կողմէ մանր դիտարկութիւններ , իսկ ընդհանուրին կողմէն Սրբազան Պատրիարքին թէ բոլոր տնօրէնութեան և թէ՛ տուած բացատրութեան մտախն զոչուեակութիւնք ցոյց տրուելով , միջոցկալը գոյուեցաւ :

4 .

Առաջարկարիւն Ատենացիս Փաշայի .

ԱՏԵՍԱՊԵՏ ՓԱՏԱ . — Ես ալ առաջարկութիւն մ'ունիլ աւ Քառնոյ որ Վարչութեան կը պատկանի , զոր ըստ կանոնի սխաբ էր գրով ներկայացնելի , բայց ըստ որում մէկ քանի օրէն ճանապարհորդ պիտի ըլլամ առժամանակեայ պաշտօնով ղեկիլ Նիսուս , ներեցիլ ինձ՝ որ առաջարկութիւնը բերանացի յայտնեմ , զոր կը վստահուի որ Քառնոյ ինք ստանձնէ :

Վարչութիւնն երբեմն երբեմն ուղղային խնդրոյ համար քննիչներ կը ղրկէ ի դատաս . յանկողիլ է ղրկուել թէ ի՞նչ ընթացքով կ'ըլլուի Վարչութիւնն սլախի պարագայց մէջ . սլախի ի՞նչպիս կը նարուին այդ քննիչները :

ուսիկնց կանոնն իրենց կտարելիք պաշտօնին հրօշանդը, ծախքերնն ո՞վ կը հատուցանէ, վերադարձին որո՞ւ տեղեկագիր կը մտաուցանեն, վերջապէս Աղբը ի՞նչ դեր կը վարէ այդ ֆինընչական պաշտօնին մէջ, և Կառավարիւմ որ Վարչութիւնը չնորձ ընէ տեղեկագրով մը ժողովոց ծանուցանել այն կարեւոր խնդրոյն բոլոր հանգամանքը, որպէս զի ժողովը վիճարանութեան նիւթ ընէ զայն, և կամ օգուտը ճանչնալով ներքէ՛ որ այսուհետև շարունակուի և կամ եթէ անապուստ և ապօրդիւն դասէ՛, միանգամ ընդ միշտ վճախ անոր ծրագրումը :

Այս է իմ առաջարկութիւնս, որուն գրայ ժողովին ուշադրութիւնը հրաւիրել արժան կը դատիմ, և կը խնդրեմ որ Վարչութեան զաւելիք տեղեկագիրը ետ չը ձգէ իմ բացակայութեանս առթիւ :

ԵԱՆՊԱՋ Կ. ԷՃ. — [Փոխ Ասեւակտ Քաղ. Ժորովոյ] Այդ առաջարկութիւնն եթէ գրով հաղորդուի Վարչութեան, պարտաւ ենք հարկ եղած պատասխանը տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ Վարչութիւնը գրով կուզէ, դժուարութիւն մը չկայ ինձ համար գրով հաղորդել զայն. բայց ըստ որում գրով առաջարկութիւն ընելով պարտաւորութիւն պիտի ստանձնեմ վիճարանութեան մէջ զայն փաստարանելու, որն որ անկտրելի է բացակայութեանս պատճառաւ, ուստի ժողովին յանձնարարել համարձակեցայ այս խնդիրը. ազատ էք զայն ընդունել կամ յետաձգելու. ես կոնցնիմ մեր Օրակարգին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Ես ինքնս կատանձնեմ :



ՕՐԱՆՈՒՄԻՆ

Վիճարանաբիւն ի վերայ տեղեկագրի քննական յանձնախմբին նկատմամբ տուարկութեան վարչութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սիկէ 2 նիստ առաջ Աղբոյն Վարչութիւնն առաջարկութիւն

մը բերաւ մեզ, որով կ'այսոյնէր թէ ինք կարեւոր կ'ըմարի ներկոց պարագայոց մէջ գիր մը մտաուցանել յանուն Աղբոյն ժողովոց Բ. Գրան' խնդրելու համար որ ուրիշ ազգաց ըլլալով ընտրուեալներուն հայոց ազգն ալ անխորաքար մասնակցի :

Վարչութեան այս առաջարկութիւնը յանձնուեցաւ Հարաստահարութեանց յանձնախմբին, անոր անդամոց վրայ յաւելցնելով նաև Խորեն Սրբազանն, որպէս զի տեղեկագիր մը բերէ մեզ ծանուցանող թէ Վարչութեան առաջարկած գրութիւնը պէ՞տք է մի, և եթէ պէտք է ի՞նչ խմատով : Անցեալ նիստին յանձնախմբին կողմէ տեղեկագրեր Փելչոյմալճեան Եֆէնտին 'ի բնէ յայտարարեց թէ յանձնախմբին համաձայնութեամբ ընդունած է առաջարկեալ գրութեան պէտքը. կամ աւելի ճիշդ խօսելով, ներկոց պարագայոց մէջ յանուն Աղբին ձայն յատկաւ պէտքը. իսկ անոր խմատին և խըմբագրութեան գալով՝ մէջերին անհամաձայնութիւն պատահեր, անգամայ մեծ մասն ստորագրեր և մէկ մտքը չէ՛ մասնակցեր : Երբ յանձնախմբին բացատրութիւն ուղեցինք թէ ի՞նչ փաստ և պատճառներ ունեցաւ յիշեալ պէտքն ընդունելու, խոստացաւ դճնիտի նիստի մէջ տալ այդ բացատրութիւնը : Ժամ է՛ արդ այս խըմբի զիրը ձեռք առնուլ. և որպէս զի վիճարանութիւննիս զիստայն և բուռնոյն վախճանի մը կարեանք հասնիլ, խնդիրը մէկ քանի ճիշդութեամբ կը բաժնեմ որք են. առաջին՝ պէտքը. երկրորդ՝ խմատը. երրորդ՝ ձեռք. և վերջոյն՝ յառք կամ խնդրարարիւնը :

Այս այս չորս կէտերուն մէջ պէտք է ստանալու մտախափի մեր վիճարանութիւնը. ուստի կը հետախորհիմ նախ՝ յանձնախմբին տեղեկագրեր է՞ Քենտին որ բացատրութիւն տայ թէ ի՞նչպէս յանձնախմբին համազուեցաւ յանուն Աղբին ձայն հանելու պէտքն ընդունելու :

ՏՕԲ. ՓԵՏՏՄԱՆԱՆԱՆ ԷՃ. — [Տեղեկագրի յանձնախմբին] Այդ Վարչութեան կողմանէ արտօնուելի ժողովոց 1876 Նոյեմբեր 26 թվուստինով առաջարկութիւն մը ներկայացաւ հետևեալ կերպով .

«Ազգային վարչութեան Խառն ժողովը
 անկողնէլ որ Թուրքիոյ բարեկարգական ներկայ
 շնորհոյն մէջ բանի մը գաւառաց բացասիկ
 սկիզբիւ արտօնութիւն և առանձնաշնորհում
 արարեալ մտին դրան գործ տառապիութիւն
 սկըլլայ, առաջարկութիւն՝ որ բարեկարգու-
 թեան խնդրոյն հիմն կըլլէ հաւատարմեան
 սկզբունք և տէրութեան դարաւոր հաւատարմ
 հաստատին եղալ Հայոց ազգին զգացման միա-
 տեմ հակառակ է, հարկ դասեց Թուրքիոյ
 հայոց երեսօտիտանութիւնը կողմառ զառկա-
 տեղի ժողովոյդ կողմէ խնդրագիր մը մատու-
 ցանել Բ. Գրան յետագայ խնամող թէ՛
 մէկ կողմանէ կըլլենք որ բարեխնամ Տէրու-
 թիւնը պէտք եղած ընդհանուր բարեկարգու-
 թիւնները պիտի շնորհէ բովանդակ Օսմանեան
 սկիզբին, որպէս համար ուրախ եմք. բայց միս-
 վերջանէ խօսքեր ալ կըլլան որ միակայն մէկ
 արանի գաւառներու բարեկարգութիւններ պիտի
 ստորին խորհուրդար : Սոյն համբաւը մեծապէս
 սկը վերադարձ Հայոց ազգն, որ Օսմանեան տէրու-
 թեան բարեկարգեան հաւատարմ չարատին է
 և ընտ որ մը չէ վշտացուցած իւր վեհապետ տէ-
 րութիւնը, և որ առաւել իրաւունք ունի իւր
 հաւատարմութեանը համար տէրութեան շնոր-
 հայ մանակից ըլլալու առանց խորութեան :

«Խառն ժողովը կը փութայ սոյն առա-
 ձերը ներկայացնել պատկառելի ժողովոյդ
 պաշտօնութիւն և ի պատշաճ տնօրէնութիւն » :

Ազգային ժողովն այս առաջարկութիւնը
 նկատողութեան առնելով ուղեց անմիջապէս քնն-
 արութեան ենթարկել քայն, և գաւառական հա-
 յարաւարութեանց հաւաքածոյն պարբառաւոր
 իւր վերջին յանձնախումբին սրաշոտն տուաւ ա-
 նոր կարեւորութիւնը քննելու և եթէ հարկ
 տեսնէ ժողովին ծրագիր մը բերելու : Չէր
 հանձնախումբը շնորհապարտ է պատկառելի
 ժողովոյդ այս առթիւ տուած մեծ փառահա-
 թեան համար, որ նոր աղապարց մ'է յուս յանձ-
 նախարին իւր առաջին սղաշոտն յօգուտ Ազգին
 և ի դուռութիւն ժողովոյդ կատարած ըլլալուն :

Գանձախումբը փութայ նախ իրեն յանձ-
 նարեալ խնդրոյն առաջին կէտը քննութեան

տանուլ, այսինքն թէ՛ հարկ և կորեւոր էր Հո-
 յոյ ազգին ճայն բունուլ այս միջոցի և իշնդ-
 թել որ Օսմանեան կայսերական կրաւորարու-
 թիւնն արդի բարեկարգ վիճակին մէջ չը մնա-
 նայ նաեւ իր վարչմի հաստակ ազգն, որ այն-
 քան դարերէ հետե՛ ո՛չ միայն իւր անաղապտ
 հաւատարմութեամբը բնութն հոգ և անաղապտ
 պատճառած չէ իրեն, այլ նաեւ իւր բոլոր ձիր-
 քն ու աշխատանքն երկրին նկատելիս և բա-
 րայակն զորագանձը նախած է :

Ուրախ եմք ըսելու որ, յետ վիճաբանու-
 թեան յանձնախումբին մէջ այս կէտին վրայ կար-
 ծեաց տարբերութիւն չիկայ և անոր հարկը մի-
 աճայնութեամբ ընդունուեցաւ, ինչպէս որ այս
 նպատակու պարբառաւոր և յանձնախումբին
 մեծախնամութեան օտորագրութիւնը կրող ծը-
 րագիրը նախընթաց նիստին մէջ կարգաւոր պա-
 տին ունեցայ :

Չէր յանձնախումբը նախընթաց նիստին
 մէջ հարկ չտեսաւ սոս խնդրագրին պէտքը
 պատճառարաններու, վասն զի անոր պէտքն ու-
 բայց իր կողմը իրաւունքս չկար և այս վիճակին
 մէջ չէր սարսէր որ զայն պատճառարաններու
 պիտի հրաւիրուէր : Այսու ամենայնիւ Ատենա-
 պետ Փաշային տրուածն վրայ, ինչպէս փո-
 թաց յայտարարել թէ պարբառաւոր էր պատճա-
 րարաններու, կուշայ այսօր առաջին իւր պաշտո-
 նը կատարել :

Անոր ազգը այս երկրին ժողովրդոյ մէջ այն
 միակ ազգն է որ իւր ազգային ներքին գործոց
 վարչութեան համար սահմանադրութիւն մը
 ունի, որու շրջանակին որչափ և անձուկ ըլլայ,
 անոր բարիքը սիրած եմք վայելել, թէ և անոր
 արտադրութեանց գործադրութեան մէջ ակա-
 մայ թերութիւններ կը նշմարուին տակաւին :
 Արդ՝ երբ իրմէ անկատար ազգային կազմակեր-
 պութիւն ունեցող ռուրջ ազգերը, որոնք տակա-
 շին արտադրութեան գրութեամբ կը կառա-
 վարուին, յարմար տեսան որ և է կերպով դե-
 մեկ առ Բ. Գրան և աղերսել որ ըլլայիք բարե-
 նարագանց մէջ անմասն չը մնան, մեր Ազգին,
 զոր օրինաւորապէս ներկայացնող մարմինն է
 այս ժողովը, ըլլա կենսալ կրնար այլ և այլ մեկ

նութիւններու տեղի տալ, ինչպէս արդէն ըս-
կուած էր . մանաւանդ այն անհիմն զրոյցները որ
մեր ազգին եռանդն ու մտաւորական կեանքը
չը դեղատոնները սովորած են ստարածել, յար-
մար առիթ գտած էին առ սխալ գաղափարը
տալու թէ Լայր քաղաքացին կենաց օտար է ըս-
կարգին, թէ Լայն իր սուգազան ճակատադրին
հետ կը շփոթէ, և վերջապէս Լայն դուրի է այն
հասնող զգացումներէ, որ զուգը մը զէպի յառու-
ջադիմութիւն կը մղեն :

Յենք ուզէր բնուի տեղի տալ կարծելու
թէ յանձնարարին այս մասին ասանք որոշուէր
սրբազան այրոյ նմանորութեան կամ հետեւ-
գութեան համար եղած ըլլայ : Յենք ընել կու-
ղենք ինչ որ արդար է և իրաւացի և ինչ որ
օգտակար կրնայ ըլլալ մեր սուգազային : Եթէ
Լայր սովորութիւն անենար ուրիշ հզօտակ
ազգաց օրինակին հետեւի անխոհեմար, չար
օրինակներ պահուս չեզոռ մանուսանք վերջին
տարիներուս մէջ, դրոս Լայն ամեն ատեն զս-
տասարտեչ և իր հաւատարմութեանը վրայ
անդրուելի մնայ : Ազգային Ժողովին հարկ և
վայել էր ներկայ փախուի պարտաւայի մէջ իր
ազգին ներկայացոյցիչ ժողովնը յայտարարել
սրաշոտնակէ Լայր ազգին իրձն, փոխաբն օ-
տակարութիւնները և այս ստթէն օգուս քաղերթ
նորդէլ գրուորադիս իր անձնուիրութեան և
հաւատարմութեան հաւատարմ ան Օրոտոտիստ
ինքնակայն և առ նորա Արցաքական Լայրա-
խրնամ կառավարութիւնն : Եւ սաի հետեւեալ
զխաւար պատճառով :

Լուսաւորութեան մէջ որչափ կը յառաջա-
նանք, տարգրութիւնն ալ այնչափ կը ճօխս-
նայ, սրբերբարան թերթերն կը շտանան և
հետևարար զանանք ընթերցողներն ալ : Արք
եթէ մեր ազգին մէջ օրողիրներն կը բազմա-
նան, զրօղներն ալ կը բազմապատկին : Օրող-
րաց առ աղբն ըրած մեծամեծ ծառայութիւնք
անուրանալի են, բայց վերջապէս անոնց սր-
բանակութիւնները խորագրաց անհատական կար-
ծիքն են միայն, որ ենթակայ է միշտ սյլ և
այլ ձեեր տանուլ թէ Արքն ծառայութիւն մը
ընեալ համոզման, թէ իր ընթերցողները զս-

հացներու նորատարու և թէ ուրիշ զանազան
նկատումներով : Մեր աղբն ալ, ամեն ազգաց
պէս, օտար և չարափառ թշնամիներէ դուրի է,
սրանք կարող են զանազան մասնաւոր գրու-
թիւններն ընդհանրացնելով զանանք իրեն ամ-
բողջ ազգին կարծիքն ու քաղաքականութեան
ծրագիրն ներկայացնելու, որ ընդհանրապէս
վնասակար կըլլայ Լայրոյ տարագոյն կամ գոնե
օտարներուս ազգին վրայ ունեցած գաղափարը
կրտիւմանաց մէջ ձգելու և շփոթելու կը ծա-
ռայէ, ինչպէս որ եղան արդէն, և զորս ոչ սք
կրնայ արգելալ և թէ ասիկ ետքն ալ տեղի ու-
նենան : Այս անտեղութեանց պէտք էր միան-
գամ առաջին անեւլ և ներկայ բարոյական
յեղովիսութեան ժամանակ Արք . Ժողովոյ
ընեալ բարձրակարգ յայտարարել առ որ անկ
է, ազգին միտքն ու փոխարը . այնպէս որ թէ Ար-
գային փարչութիւն և թէ ամեն անհատ, գրած
ու խօսած ատեն կարող ըլլայ ըսել առանց փո-
րանման « Ահա Լայրոյ ազգին ծրագիրը, առ-
սաիկ նորա քաղաքական դասանութիւնը, անոր
փխտատէն դուրս ամենայն թօք կամ հրատա-
րակութիւն թի մասնաւորաց կարծիք են, քիչ
փիւս շատ ինտատութեանը յառաջ բերուած » :

Առանցիկ յետոյ և զլուսաւորաբար մէկ կէտ
մը կը մտար նորատարութեան արժանի, ինչպէս
չտակր կոտարիկին, թէ ներկայ խնդիրը զուս
քաղաքական խնդիր մը ըլլալով Արք . Ժողովն
իրաւատութիւն անեւր և կրնար կարծիք յայտ-
նել այն մասին, առանց Արք . Մահամարտու-
թեան շրջանակէն դուրս ելնելու և տէրութեան
օրինաց դէմ մեզունչելու : Այս ստարիսութիւնը
մեր յանձնարարին այնքան կիճատ չէրկայ որ-
րան կը թուէր խնդիրը հօրեանցի բննորդերուս
Թարուսք որ քաղաքական և վարչական խնդիր
ներ շատ անգամ այնքան կը շփոթին իրարու
հետ, որ խիտա դժուար կըլլայ երբեմն ճիշտ սուս
ման մը դժել անանց մէջ : Ներկայ սրբազային
մէջ ոչս դժուարութիւնն ալ չկայ . վտան զի
խնդիրը մի միայն երկրին ներքին բարեկարգու-
թեանց կը վերաբերի, այն երկրին որոյ բնակիչ
ժողովուրդներէն է Լայր աղբն և միանգամայն
նշանակութեան արժանի կարողէն : Մարդիւ շափ

խելք ունեցողը երբ կը տեսնէ որ իւր ասարած երկրին ընդհանուր բարեկարգութեան խնդիր կայ ծագած ; չը կրնար անգիտանալ որ իրեն անհրաժեշտ վերաբերութիւն ունի այդ խնդիրն և անոր ելլը կենսական կարեւորութիւն : Տարակոյս չկայ որ այս գիտակցութենէն յետոյ կարծիք մը կ'ըն մը փախար մը կը ծագի մարդու գլխին ու սրտին մէջ, զոր արտայայտելու պէտք կ'ըստ նոյն խի իւր անձին տրժանապատուութեան համար, և արդարև պէտք է յայտարարել, քանի որ այն՝ քննասիր և դատաստարան մը քննութիւն մը չը կրեր և իւր իրականց ստանձանին դուրս չմտար : Ընդ այս վիճակին մէջ է պարտ և Հայ ազգը : Ուստի և պէտք է ձայն հանել ապացուցանելու համար թէ կարող է ինք ձանձուր բարենորոգմանց խորհուրդին յարջը, զոր Օսմանեան կոյսերական կառավարութիւնը յղացած է . ապացուցանելու համար թէ՛ ընդունակ է ինք այն խորհուրդին օգուտ քաղելու և ի դարձապէս երկրին զանի արդիւնաւորելու . ապացուցանելու համար թէ՛ երբ այդ բարենորոգմանք կատարուել հաւասարութիւն վայելելու բողոքին հանգիստի և արգարութեան շնորհն անխորհրդ վայելէ, և երկրին զբուրեան և յառաջադիմութեան նշանաւոր մի տարրը կրնայ հանդիսանալ : Եթէ լուծութիւն պահէ այս պարագային մէջ, նոյն խի իւր ազգային կենդանութիւնն կրկնածի մէջ կը թողու առաջի աշխարհի և իւր արժանեաց վրայ նոյն խի Օսմանեան կառավարութեան շատ տխուր գաղափար մը կընծայէ, ինչպէս որ եթէ երբեք քննելու ելնէ թէ ընդհանուր բարենորոգմանց վերկարար խորհուրդն ուստի ծագում առած էր և ինչ կերպով ու համարով յառաջ եկած, և կամ թէ՛ այս մասին եղանակ ու ձև մը առաջարկելու յանդէսէր, այն ատեն քաղաքակրթութեան մէջ մտած և իւր իրականց ստանձանին դուրս ելած կըլար : Բայց ինչպէս բացատրեցի, ազգին ընկելքը բնական քաղաքագիտական խնդիր յուզել չը նը. շանտիւր և միտկոյն ուղղակի իրեն վերաբերող կէտի մը վրայ տեսակ մը պարտաւորութիւն կատարել անոյն շանցիկը : Ասկից

զատ՝ միթէ մեր Պատրիարքարանին հարեւար տարիներէ ի վեր առ Բ. Դուռն ըրած խնդիրները Ազգին օգտին և շահաց պաշտպանութեան համար չե՞ն : Միթէ օրինաց անկատար կամ անհաւասար զօրձադրութեան դէմ չե՞ն բողոքեր մեր բազմաթիւ քաղաքները : Միթէ հարաւորաւորութեանց հաւարածոյն պարունակող տեղեկագիրք՝ որ քիչ օր յառաջ պատրաստուցու և որ Պատրիարեկի Եղբայրք մտածոյն հուանու թիւնց ստացու, մեր Ազգային Եղբայրք ձեռնհասութենէն բարձր խնդիրներ կը պարունակէր իւր մէջ : Եւ ի՞նչ տարբերութիւն ունի ներկայ խնդիրն անոր մէջ նշանակեալներէն :

Կը յիշէք անուշա՞ որ ո՛չ ոք բողոքեց տնոր եղբակցութեան դէմ և ամեն ոք մեծ սիրով ու եռանդեամբ բռնարկեց : Այս կէտը ձեր յիշողութեան մէջ արթնցնելով կը յուսամ ձեր բուռական խօսած կըլլամ հաստատելու համար թէ ներկայ խնդրագիրք Բ. Դուռն մտաւոր քննելու խնդրոյն մէջ ո՛չ անպատեհութիւն կայ քանի որ կատարմանց տեղի տուող անհրաժեշտ և պարտաւոր մը, և հետեւաբար կանցնիմ Յանձնարարութիւն ծրարելու անգամ մ'ալ կարգուել, որ Բարձր Եղբայրքայն ներկայանալու համար պատրաստուած է, երբ ձեր բռնապետ տրժանանայ Եղբայրք ընդունելութեան :

(Հոս կարդաց Տեղեկարար ԼՖէնտին հոս կարդէ նախին մէջ կարգացած ծրագիրն, որ նոյն նիստի ատենադրութեան մէջ արձանադրուած է)

ԱՏԵՆԱՊԵՏ ՔԱՇԱ. — Լսեցիք յանձնարարութիւն պատճառարանութիւններն՝ որով Վարչութեան առաջարկուած գրութեան պէտքը կը յայտնէ . նմանապէս վերադառն մտիկ բրիք յանձնարարութիւն ծրագիրն՝ որ անցեալ նախին կարգացուած էր, այս անգամ կարգացուածին մէջ վտրիկ տարբերութիւն մը կը նշմարեմ . զոր պէտք է յայտնեմ, որպէս զի Եղբայրք զիմանց թէ՛ ո՞ր խմբագրութեան պիտի հետեւնիք :

բուժիչն չից, զիւանին արուած պատճէնն ալ
ասոր հետ նոյն է, որիչ բան է թէ որ զրչի
սխալ մը պատահած է ընդօրինակուելու ասոնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն հրատեղեցիք
տեսնել ձեր ուջօր, Գիւանին յանձնուած ծը-
րագրին մէջ՝ « Յանձնեալ կոչակրական կառավա-
րութեան և իւր յարկիս ճիւղարեանց ձեռք առ-
նելիք բարեկարգմանց կայն » գրուած է, և
հիւս կարգացուած ծրագրին մէջ « Յանձնեալ
կոչակրական կառավարութեան իւր յարկիս տե-
լարեանց համաձայնորեանք ձեռք առնելիք
կայն » գրուած է : Ասոնց ո՞րը պիտի ընդու-
նիք :

ՏՕՔՏՕՐ ՓԷՇՏՈՒՄԱԼՃԵԱՆ ԷՖ. — Այն՝ որ
Գիւանին յանձնուած էր անցեալ շարթուրնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ. հիմայ
որովհետեւ խնդիրը և ճիւղերու բաժնեցիները, և
ստակին ըրիւք պէտքը, ուստի պէտքին վրայ
խօսք սենցոյցը կ'ըստիւրեմ ի բնին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — [Կեղեւ Յանձնա-
խորհրդին] Յանձնարարութեան մասնաձեւութեան բերած
ծրագրիւր և անոր պատճառարանութիւնը լսելէ
ետեւ բնական է որ հետաքրքրութիւն պիտի ու-
նենայր խմանուլ յանձնարարութեան փորձարանու-
թեան՝ այն ծրագրին մասնակցելէ հետանալուն
պատճառները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Լեզուիչերով] Դե-
րեցիք, Փախաղեան էֆէնտի, թէ և յանձնա-
խորհրդին աշխատութեան պարագայներն խնդրոյն
մէկ կարեւոր մասն կը կազմեն, բայց վիճարա-
նութեան կարգը՝ նախ պէտքիկ վրայ է. ուստի
անոր վրայ խօսեցիք, կարգէ՛ք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ խօսելիքս ալ
նախ այդ պէտքին վրայ է, որ խմանութեան և
խմանարարութեան առթով մինչև անհամաձայնու-
թեան նիւթ եղած մէջերնիս : Ետևորդ նստին
Տեղեկարար էֆ. ն յայտարարութիւն մ'ըրած և
զուր՝ Առանձնաբեւ փոշու, կրիկեցիք զայն, ին-
քու թէ Հայոց ազգին Երեսօխոխանութիւնէն ստա-
լագրեալ խնդրագրով մը ձայն մը հանելու պէտ-

քը համաձայնութեամբ ընդունուած է յանձնա-
խորհրդին մէջ : Այս սխալ է. և հարկ կ'ըլլամ բա-
ցարեւել այդ կէտը : Իսկզբան երբ Վարչու-
թեան կողմէն առաջարկեալ գրութեանը պէտք
ըլլալու կամ չըլլալու կէտը վիճարանութեան
ենթարկուեցաւ յանձնարարութեան մէջ, ևս էի
միայն ընդդիմակոյ այս մասին, դեռ Մասթիչ-
ուս Արարոյն ճակարագութեան զարձած շըլու-
րով նոյն աւուր նիւթին հերկոյ չէր : Այն պատ-
ճառարանութիւններն՝ որ անդամակցայտ կողմէ
յառաջ բերուեցան, զիս չկրցան համոզել թէ
պէտք կայ յանուէն աղբիւն ստանկ զիր մը Ե-
րեսօխոխանութեան կողմէն մատուցանելու :
Կը նկատէի որ եթէ Հայոց ազգը զիր մը
մատուցանելով՝ ուրիշ ազգաց հետ հա-
մահաւասար պիտի կարենայ մասնակցել տեղու-
թեան շնորհացը, հարկաւ ամեն Հայ կանխու-
րով կը փութայ ստորագրել այսպիսի զիր մը :
Բայց միթէ զիրը բաւական պիտի լինի՞ : Գը-
րայն վրայ չկրնալով համաձայնել, առարկուե-
ցաւ որ նախ որոշենք թէ ձայն մը հանել
պէտք է թէ ոչ. ևս ալ այդ անորոշ եղա-
նալն ընդունցի. և ի՞նչ եղանակաւ ձայն հա-
նել որոշել ետքի թողուցինք միաձայնութեամբ
Յետոյ ևս առաջարկեցի որ փոխանակ Ազգա-
յին Ժողովին ծրագիր մը տանելու և ըսելու
թէ ստանց խորը քննելու հաւաստք ընծայէ մեզ
թէ՛ պէտք է ասանկ զիր մը տալ, և ստորագրել
այդ ծրագրիւր ու Բ. Իրան մատա, որիչ ու-
նելի զիւրին ձախայ մը ձեռք առնուք. այն է
Յանձնարարութեան կանոնադրութեան կարգի մը շինե-
որուն մէջ Հայոց ազգին քաղաքական ճշտա-
նութիւնը բացայայտ դժուր, տեղեկագիր մը
որուն պատասխանատուութիւնը միայն զայն
ստորագրողաց վերաբերի, և աւելի արտո գր-
ուի, և տանինք զայն Ազգ. Ժողովին ըսելով որ
ասչա մեր ըմբռնուած ազգին քաղաքական գա-
ւանութեանը մասին, հարկ չկայ այլ ևս Բ.
Իրան զիր մատուցանելու, բաւ է յայտարա-
րել միայն թէ Հայոց ազգը վտանգ է Օսմանեան
Կառավարութեան վրայ, որ անխոր իւր շնորհաց
մասնակից կենէ իւր բոլոր հպատակ ազգիւրը,
ինչպէս որ ըրած է ցարդ :

Յանձնախմբին անդամներն այս առաջարկու-
թիւնս ալ ընդունեցին, և երկու կերպն ալ կընենք
լին. բայց ևս չհամաձայնեցայ իրենց, և մատուց-
ուելիք ուղերձին վրայ միճարանութիւնն սկսան :
Բնականաբար եւս միայնակ չէի կրնար դէմ կենալ :
ուստի ես թի՛րք երեւոյթական և թի՛ջ մասնաւոր
կրբէ յանձնախմբին անդամ կարող չէի առանց
պատճառարանութեանց խորը բնեւէլստորագրել
պէտք է ըսելով անցնիլ և ստորագրել այդ
Նոյն նիստ՝ երես 302 էջ Ա. Խօսքիս երկրորդ պարբերութիւնը պիտի ըլլայ այսպէս. « Գալով մեր պաշտօնին, Ատենակալ տփառան ինչպէս ալ հասկցած ըլլայ, մեր չէինք կրնար կարծել որ ընդդիմաբանող կամ հերքող չեղած ատեն ալ փաստարանելու պարտաւորութիւն ունենայինք. այլ կը կարծէինք թէ այն պարագային մէջ պէտքէն ընդունելութեան տեղեկագիրը հոս բերելէ ետե մեր պաշտօնը կը լրանար »:

Նոյն նիստ՝ երես 303 էջ Բ. Խօսքիս շինգերորդ տողէն սկսեալ առնանադրութիւնը պէտք է սրբագրուի այսպէս. « Երբ Վիանը տեղեկագիրը բերող յանձնախումբին առաջարկութիւնը բաւական ըլլալուն դռնիակ ընելու, երբ խնդրոյն արտաքոյ կարգէ և փափուկ ըլլալը գործեալ բաւական չհամարիր, միթէ Փափաղ-

եան էջէնտի ըսածին պէս կասկածելի խնդիր մ'ունենալու է որ դռնիակի պէտք ծաղի »:

Նոյն խօսքիս երկրորդ պարբերութեան վերջին մասը նմանապէս պէտք է սրբագրուի այսպէս. « Իւր պատճառարանութիւնն այնպիսի խնդրոյ մը վրայ պիտի ըլլայ որ եթէ անոր վրայ ըլլալիք վիճարանութիւնը ճապաղի, կրնանք հաւանականաբար կէս ճամբան դռնիակ նիստի հարկ տեսնելու անպատեհութեան մէջ լինալ. ահա այս է ամենէն մեծ պատճառը դռնիակի նիստ ուղեկրուս, և այս կէտին վրայ կը հրահրեմ մասնաւորաբար ժողովոյ ուղարկութիւնը »:

Մերի գիտողութիւն ընող չըլլալով ժԵ. նոտի առնագրութիւնն ալ հանդերձ վերողրեալ գիտողութեամբ բուէր զըրահեցաւ և միաձայնութեամբ ԸՆԳՈՒՆԻՅԱՒ Ժողովէն:

2.

ԲԱՅՈՒՄԱՅՈՒԹԻՒՆ

Ատենակալ փառան յայտնելով որ քանի մի երեսփոխաններէ նամակներ և կամ են իրենց բացակայութեան պատճառը ծանուցանող, նախ Մանկատարեան Խաչատուր էջէնտի նամակը կարգաց, որով կը յայտնէր թէ 13 ըրջանակի ընտրողական ժողովոյ անդամակցութեան պաշտօն ունենալուն համար այսօր ժողովին չպիտի կրնայ դալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մանկատարեան էջէնտի այնպիսի պատճառ մը մէջ կը բերէ, որ թէև նախատեսուած է մեր կանոնադրութեան մէջ, սակայն կրնանք բանաւոր համարուիլ և ըստ իմ կարծեաց իրր օրինաւոր բացակայութիւն ընդունուի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի որ կանոնադրութեան մէջ այնպիսի սրբագրութիւն մը չկայ, ըստ իս պարզապէս բացակայ նշանակուելու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այնպիսի կարևոր պարագայ մը կը յայտնէ՝ որ թաղին մէջ հրկիզութիւն ըլլալու չափ դժուար կրնայ սեպուիլ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իմ կարծեօք Մանկասարեան էֆէնտիի ցուցած պատճառն իբր օրինաւոր բացակայութիւն կը ընայ նկատուիլ, թէ և կանոնադրութեան մէջ չկայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ըստ կանոնի չկրնար օրինաւոր բացակայ նշանակելու բայց որովհետև Մանկասարեան էֆէնտի այսօր երրորդ անգամն է որ բացակայ կը գտնուի առանց օրինական պատճառի, ըստ կանոնի հրատարակ չհամարուելու համար պէտք է զրեւ իրեն և ծանուցանել որ ուրիշ անգամ եթէ այսպիսի պատճառներ մէջ բերէ՝ չեն կրնար ընդունուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում թէր ոչէմ մէկ մէկ անգամ խօսուեցան, եթէ բաւական կը համարիք՝ քուէի պիտի դնեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնը քուէի չգրուիր :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Մանկասարեան էֆէնտի անկեղծօրէն յայտնած է իբր բացակայութեան պատճառը. եթէ որքան ըլլար թէ հիւանդ է, այն ատեն չպիտի խօսէինք. միթէ ճշմարիտը խօսելուն համար պէտք չէ՞ որ իւր բացակայութեան պատճառն իրբև օրինաւոր ընդունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ժողովը կը հասնի խօսքը չերկարենք, և քանի որ երկու կարծիք կայ, քուէի դնենք և ընցնենք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այնպիսի խընդուք մը համար քուէ կուզէք, որուն վրայ ժողովը ի պաշտօնէ տեղեկութիւն մը չուզէ. Չըմանակ ըսածն ի՞նչ է չգիտենք. երբ Օսմանեան Սահմանադրութեան գործարարութիւնը պաշտօնապէս այս դիւանին հարորդուին, այն ատեն բան մը կրնանք

հասկնալ և ըստ օրինի որոշում մը տալ : Իսկ հիմա աւելի լաւ է իմաց տալ Մանկասարեան էֆէնտիի՝ որ եթէ ուրիշ անգամ ալ այսպիսի պատճառներով երիցս բացակայ մնայ, ըստ օրինի հրատարակ պիտի համարուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն թոյլտուութեամբ ժողովին օրինաւոր բացակայ նշանակուիլ կընդունիք. այս կէտը քուէի կը դնեմ :

Ձայս ըսելով Ատենապետ փաշան քուէի գրաւ Մանկասարեան էֆէնտիի բացակայութիւնը, զոր ժողովը ընդունեց թոյլտուութեամբ իրբև օրինաւոր բացակայ նշանակել :

Յետոյ Ատենապետ փաշան կարգաց Խօշտամեան Պօղոս վարդապետի և Պէշիրեան Ալեքսան էֆէնտիի նամակներն, որոց առաջինն առժամանակեայ ճամբորդութեան և երկրորդն անձնական տկարութեան պատճառաւ բացակայութիւնին կը յայտնէին :

Ատենապետ փաշան այս երկուքին բացակայութեան օրինաւորութիւնը ներկայութեան տուժարին մէջ նշանակել տալէ ետև, յաւելցնելով որ Պէշիրեան էֆէնտի ժողովին ներկայացնելու խընդրանօք զբաւոր առաջարկ մը ներկայեալ զրկած է իւր նամակին հետ, յայտարարեց որ երբ կարգը գայ՝ ժողովին պիտի հարցնէ թէ նոյն առաջարկն իրբև բացակայ երեսփոխանի մը կողմէ եկած՝ ներկայացնել հարկ է թէ ոչ :

Ի վերջոյ Ատենապետ փաշան Նէմէնիճեան էֆէնտիի կողմէ եկած հետեւեալ բողոքագիրը կարդաց .

Վսեմ. Ատենապետ փաշա Ազգ. Ժողովոյ .

Կը ցաւիմ որ Ազգային ժողովոյ նշանակուող ներկայ չպիտի կարենամ գտնուիլ. որովհետև երեսփոխանական պաշտօնն անարգութեամբ է . . . որ ինչպէս բոլոր Մեծ. պաշտօնակցացս՝ նոյնպէս նուիրական է և

ինձ: ուստի բողոքելով յանուն երեսփոխանական պատուոյն ինձ դէմ եղած աւանորդանաց, պատկառելի ժողովոյը որոշմանը կ'ապասեմ:

28 յունիար 1877 Ազգ. երեսփոխան Յ. Ե՛ՎԵ՛ՆԻ՛ՏԵ՛ԱՆ:

ՓԱՓԱԶՆԱՆ Ս. ԷՖ. — Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ
Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒՒԻ բողոքագիրը թէև այնչափ մութ զրուած է որ բան մը չհասկցուիր, բայց ես եղելութեան վրայ քիչ շատ տեղեկութիւն ունենալով կրնամ բացատրել: Նախորդ Մեծ-Եպարքոս Միտհաթ փաշային մեր Պատրիարքարանն այցելութեան եկած օրը խօսք մը անցեր է Սրբազան Պատրիարքին և Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒՒԻՆ մէջ: Ընցի զայս և երկիցս Նորին Սրբազնութեան հարցուցի, ոչ ճանչցաւ զինքն և ոչ յիշեց այնպիսի խօսք մը բաձ՞ ըլլայն իբրև առ ազգային երեսփոխան մը: Կը կարծեմ որ Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒՒԻ կողմէ սխալ ըմբռնում մը կայ այս պարագային մէջ. ուստի կառավարիկեմ որ Ատենապետ փաշան յանձն առնու առանձին տեսնել և խօսիլ Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒՒԻ հետ:

ԱՏՆԵՆԱՊԵՏ ՓԱՇՆԱ. — Ատոր Ժամանակն անցած է, կարծեմ. գործը Ազգ. ժողովոյն դիւանը գալ հասնելէն ետքը, միայն Ատենապետն ո՞ր և է տնօրէնութիւն ընելու իրաւունք չունի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ կը բողոքէ թէ իւր երեսփոխանական պատիւն անարգուեր է, բայց չը բացատրեր թէ ի՞նչ կերպիւ և որո՞ւ կողմէ անարգուեր է. պէտք է այս մասին իրմէ գրաւոր բացատրութիւն ուզուի, որպէս զի այնուհետև ժողովը տեսնէ թէ նկատողութեան առնուլ հա՞րկ է թէ ոչ:

ՓԱՓԱԶՆԱՆ Ս. ԷՖ. — Ես այս խրնդրոյն վրայ Սրբազան Պատրիարքն ալ հարցուցած եմ, Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻՆ ալ. բնաւ խնդիր յարուցանելու տեղի չկայ. որտիկն զայրութէն այդ բողոքը գրեր զըրկեր է. ես չէ թէ խնդիրն ասկէ դուրս նետելու դիտմամբ առավարկեցի որ Ատենա

նազեռ փաշան յանուն ժողովին ստանձնէ այս խնդրոյն կարգադրութիւնն, այլ ստուգած ըլլալով որ այնպիսի շփոթ որուան մը մէջ համոզմամբ եղած բան մը չէ, չուզեցի որ մեծ կարևորութիւն մը առնու այս գործը. մանաւանդ որ երկու անգամ հարցուցած եմ Սրբազան Պատրիարքին, և յայտարարած է թէ զինքը չէ ճանչցած:

ԱՏՆԵՆԱՊԵՏ ՓԱՇՆԱ. — Երեսփոխան մը ցաւ կը յայտնէ իրեն դէմ եղած անարգութեան համար՝ առանց պատճառը բացատրելու. Փառիպետն Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ կառավարիէ որ դիւանը միջամտէ յանուն ժողովոյ, և երբ դիւանը միջամտէ՝ հարկաւարիւնքն ՚ի վերջոյ պիտի տեղեկագրէ ժողովոյն: Քրիստոսուոր Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ առաջարկութիւնն ալ զրեթէ նոյն է: Եթէ ուրիշ դիտողութիւն չկայ, քուէի կը դնեմ Փառիպետն Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ առաջարկութիւնը:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի զբաւ Փառիպետն Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ առաջարկութիւնն, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովին:

Նոյնպէս Ե՛Ֆ՛Ա՛Յ՛Ի՛ՏԻ՛ՃԵ՛ԱՆ Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ այս օրուան բացատրութեան օրինակ որ ըլլաւ ը ժողովին հաճութեամբ նշանակուեցաւ ներկայութեան տուձարին մէջ:

Ի վերջոյ Ատենապետ փաշան ծանուցանելով նաև թէ երեսփոխաններէն Մանուկեան Միքայէլ և Մէլիքեան Եղիշապար Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻներն անձնական տկարութեան պատճառաւ բացակայ լինելն ի վնաս սուած են՝ առավիճը Ալաճաճեան Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ ըրնով և երկրորդը Քալափաճեան Է՛Ֆ՛Ե՛ՆՈՒԻ ըրնով, ժողովին հաստատութեամբ օրինաւոր բացակայ նշանակելու առաւ զանոնք ներկայութեան ստեղծութիւն մէջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԲՐԻՍՏՈՍՈՍԻՐ ԷՖԵՆՏԻՒ
Ատենապետ փաշան Քրիստոսուոր է:

Ֆէյնտի կողմէ մատուցեալ յետագայ զբարոր առաջարկութիւնը ներկայացուց և կարգաց .

Վսեմախալ Ատենապետ փառա Ազգ. Ժողովոյ .

Ամոյս ց ին ազգային Պատրիարքարանի մէջ Մեծ-Եպարքոսի այցելութիւնը տեղի ունեցած է, ուր թէ՛ յանուն Ազգային Ժողովոյս և թէ՛ Սրբազան Պատրիարք Զոր կողմանէ ուղերձներ խօսուած և Նորին Բարձրութեան կողմանէ պատասխանուած է : Եթէ Ազգային Ժողովէս պատշաճ դատուի Ժողովոյս մէջ զիտուղութիւն ըլլալով արձանագրել ատենագրութեան մէջ, կառավարիւմ նոյն աւուր դրեանց Ժողովոյս ներկայացուիլն ու արձանագրուիլը :

28 յունվար 1877

Երեսփոխան
Ք. Ղալբաբեան :

ԱՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բրիտանոստոր Էֆէնտիի այս առաջարկը վիճարհուելիք տան չէ, մանաւանդ թէ օգտակար ազգային պատմութեան համար . եթէ շէտորդութիւն ընող չկայ, զիւսմը կրնայ Սրբազան Պատրիարքին դիմելով առաջարկեալ գրութիւնը խնդրել ատենագրութեան մէջ ամփոփելու համար :

Ժողովք առանց զիտուղութեան հաւանելու սոյն առաջարկութեան :

4.

ԱՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պահ մը առաջ յայտնեցի որ երեսփոխան Պէշերեան էրան Նամակին հետ զբաւոր առաջարկեալ զրկելով, Ժողովին ներկայացնելու որ ալ զրկելով, Ժողովին ներկայացնելու թէ կողմէն Գեշերեան էրանն առաջարկութեան ներկայացուիլ, կամ թէ ոչ՝ քանի որ ինք այսօր Էրան չէ, պահենք ատենագրութեան մէջ

միայն անցնելու և հոն կարդացուելու համար :

ԻԹԻԻՃԵՍԱՆ Կ. ԷՖ. — Կառավարիւմ որ յաջորդ նիստին մնայ :

ՁԱՅՆԵՐ. — Օրէնքն ի՞նչ կը արամագրէ այս մասին :

ԱՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պէշերեան էֆէնտի անձնապէս տկար ըլլալուն չէ երկեր և առաջարկութիւն մը զրկեր է : Օրէնքը չներեր որ բացակայ երեսփոխան մը Ժողովը գրառեցնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառավարիւմ որ գոնէ կարդացուի անգամ մը, առաջարկութեան նիւթն իմանալու համար :

ԻԹԻԻՃԵՍԱՆ Կ. ԷՖ. — Եթէ օրէնքը չներեր, ինչպէս Ատենապետ փառան յայտնեց, որ բացակայ երեսփոխանի մը խնդիրը նկատողութեան առուի, դարձեալ կառավարիւմ որ ուրիշ նստի մնայ :

Ատենապետ փառան քուէի դրաւ և Ժողովն ընդունեց Պէշերեան էֆէնտիի առաջարկութեան կարդացուիլը :

Նետապէս առաջարկութիւնը կարդացուցաւ, որ է՝

ԱՌԱՋԱՐԿ ԱՌԱՋԳ. ԺՈՂՈՎՆ

Վսեմալուք Ատենապետ փառա Ազգ. Ընդհ. Ժողովոյ .

Եթէ անցեալ մէկ քանի տարիներու վրայ ակնարկ նետեմք, իրաւամբ ստակում կ'ըզամք, վասն զի պատմութեան մէջ գրեթէ նմանը չտեսնուած աղէտը երկան հասան Տաճկաստանի վրայ :

Տաճկաստանի բնակիչ ազգաց շարքին մէջ ամենէն աւելի թշուառն ու ցաւախին Հայն էր միայն . ինչու որ իւր ազգային օրէնքն յեղաշրջեալ, վարկը վտանգեալ, պարտուց տակ ընկճեալ, և նա մանուշակ պատրիարքական գահու պատկառանքը բողբոլին նսեմացեալ վիճակի մը մէջ կը գտնուէր ու ազգասէր ազգայնաց բերնէն յուսահատական խօսքերէ գտնուան մը չէր լսուէր : — Ազգին սոյն վիճակին դարման մը տանելու համար պէտք

էր Յետև մը՝ որ բանակը աւետեաց երկիրը տանէր, կամ Քօլօմպօս մը՝ որ նաւը անվտանգ ցամաքն հասցնէր: — Ինչպէս շատ անգամներ, նոյնպէս և այս անգամ նախախնամօրէն Ատուած փութաց յօգնութիւն հասնիլ պարզեւելով մեզ արի, արթնուն և խոհական Պատրիարք մը, այն է Բարձրաշնորհ Տէր Ներսէս սրբազան արքեպիսկոպոսը, որ ազգին կրօնական փառքն ու վտանգեալ վարկը փրկելէ ու վերահաստատելէ զամ կրցաւ այսպիսի տաղանապալից և սպառնական ժամանակի մը մէջ, իւր անձնական հիւանդութեանն հետ մաքառելովն հանդերձ, երկիրն և նա մասնաւոր ազգին շահերը արիապէս պաշտպանել:

Թէպէտ և մեր մէջ կան ոմանք՝ որք երկիրն շահն ու ազգին շահը իբրև մի և նոյն շահ կը նկատեն, բայց ես այդ սկզբունքը մինչև մէկ աստիճան միայն կըրնամ ընդունիլ, ըստ որում մի վաղուց հետէ շատ մը տարբեր շահերու միացեալ մի զանգուած նկատած եմ զՏաճկաստան: — Մեր Սրբազան Պատրիարք հայրը լաւ գիտցաւ և գիտէ վարժել այս ամեն շահուց հետ և պաշտպանել միմիայն իւր ազգինը՝ որոյ համար արդէն ուխտեալ է իբրև իւր սրբազան մէկ պարարք:

Ղօնմարտը Տէր, աւելորդ է ըսել թէ մեք չեմք կարող լիուրի վարձատրել այսպիսի արժանաւոր հովիւ մը, քանի որ չունիմք ոչ իշխանութիւն և ոչ հարստութիւն. ուստի Նորին Սրբազանութեան ազգօգուտ ծառայութիւնքն, ինչպէս նաև լուրջ ու խոհական ընթացքը, փոքր ինչ հարակըջուելու համար, կառավարիւմ որ Ազգ. պատկառելի ժողովը, ինչպէս քանիցս արժանատիս չէ զըսցած իւր շնորհակալութեանն ու փառահովութեան քուէն, նոյնպէս և այս անգամ փութայ Աշխուհի փառաւոր պատուանդներ յատկացնել Նորին Սրբազանութեան, և զայս պատճառովս հրատարակել առանց միանգամայն պատրիարքական փոխանորդ Արք. Տ. Յովհաննէս հօր տարած անձանձիր աշխատանքը մասին իւր խորին շնորհակալութիւնը մատուցանել մոռնալու:

տանայը մասին իւր խորին շնորհակալութիւնը մատուցանել մոռնալու:

27 յունիս 1877 Ա. Գ. Պէշէր

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Լսեցիք. Պէշէրեան էֆէնտի կառավարիչ Աշխուհի տիրոջը յատկացնել Սրբազան Պատրիարքին, միանգամայն Նորին Սրբազանութեան փոխանորդին շնորհակալութիւնն մատուցանել: Թէ և Սրբազան Պատրիարքը չոր մեծարանք մ'ընելու նպատակն ունի այս առաջարկը, սակայն չենք կընար անիջապէս վիճարանութեան ելնարկիլ առանց նախաքննութեան յղելու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հարկ չկայ մեք ամեն տոնն մեր Սրբազան Պատրիարքէն շնորհակալ ենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սովորութեան հակառակ է այդ եղած առաջարկութիւնը:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Նախաքննելով զիւր անին անի է ըսել ատուք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մեր ներքին կանոնը չպահանջեր որ անպատճառ ամեն խնդիր Նախաքննութեան յղուի. նաև ժողովն սկզբունքը ընդունի կը յղէ Նախաքննութեան: Ըստ իս՝ նախաքննութիւնը պէտք է մերժել այս առաջարկութիւնը. վասն զի մեք արդէն Սրբազան Պատրիարքին ազատիրութեան վրայ կառավարելու մը չունինք որ քննութեան նիւթ ընենք յանձնաժողովի կամ զիւրաններու զրկելով:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Օգտէն էֆէնտի նախաքննութիւն կառավարիչ. այսպէս խնդիրը Նախաքննութեան յղելէ առաջ ընդունիլ կամ մերժել անոր սկզբունքը Նախաքննութիւնը վիճարանութիւնը կարճելու համար է: Ուրիշ խօսք ուղղող կայ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Մեք՝ որ ցրտին զիմանալով եկեր հոս կ'սպասենք, այդ խնդիրը կարծեմ չկընար զմեզ տարցնել. դատարարութեան խնդիրը կայ զիւրանին գրասեղանին վրայ, կաղաչեմ, զայն ներկայացուցէք, մեք անով միայն կըրնանք ցրտոյն հանդուրժել:

ՄԷՖԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՃ. — Պէջիրեան էֆէնտի տեսնելով որ Սրբազան Պատրիարքն ազգին վարկը բարձրացուցած է և, կառավարիչ Սուլտէ տիրոջը տալ նորին Սրբազնութեան: Ենթադրելով որ ասի բոլորովին անտեղի առաջարկութիւն մ'իսկ եղած լինի, դո՛նէ քաղաքավարութեան համար, փոխանակ նախաձեռով մերժելու, պէտք է յղենք նախաքննիչ դիւանին, և անկէ դալիք տեղեկագրին վրայ մերժենք կամ ընդունինք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՃ. — Մէրէէմ-Գուլի էֆէնտին կառավարիչ գո՛նէ քաղաքավարութեան համար յղել նախաքննութեան. ես ալ կառավարիեմ որ գո՛նէ քաղաքավարութեան համար կանխաձեռով մը մերժենք. վասն զի ինչո՞ւ համար աշխարհի առջև այսպիսի բան մը ընենք, քանի որ այսօր մեր խորհրդարանական տարեգրութիւր կամ նոր բացումը չէ, ո՛չ ալ տարեգրութիւր առթիւ համարառութեան ժամանակ է, որպէս զի առիթ ունենանք Սրբազան Պատրիարքին զորձոց քննութիւնն ընել և ըստ այնմ շնորհակալութիւն կամ տիտղոս մը տալու համար քուէ առաջարկել. ուրեմն ինչ տիտղոս որ Սրբազան Պատրիարքին համար պիտի առաջարկենք, պահենք մեր խորհրդարանական տարեգրութիւն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Օրածողում կառավարիեմ մինչև համարառութեան ժամանակ:

ՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կարելի չէ օրածուել. վասն զի խնդիրը քննուած և պարզուած չէ. կա՛մ պէտք է նախաքննութեան յղել և կա՛մ նախաձեռով խընդիրը վերցնել այս ատեսանէն. ուրեմն այս վերջին երկու կէտերէն մէկն ընդունելու համար խնդիրը քուէի կը դնեմ:

Զայս ըսելով Ատենապետ վաղան քուէի դրու հետդէտէ առաջին անգամ նախաքննութեան յղումը և յետոյ կանխաձեռով մը խնդրոյն մերժումը:

Ժողովը 11 քուէով ընդդէմ Յի չըն.

դունեց Պէջիրեան էֆէնտիի առաջարկութիւնը նախաքննութեան յղել, այլ նախաձեռով անոր ընդունն ՈՐՈՇԵՑ:

4.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Դիւանը կարդաց հետեւեալ տեղեկագիրն՝ որ Դաստիարակութեան դիւանի կողմէն եկած էր.

Ամենապատիւ Սրբազան Հայր նախագահ Ազգային Ժողովոյ.

Դաստիարակութեան դիւանս ստանալով Ձեր Բարձր Սրբազնութեան թիւ 377 և 5 ղեկիւ 1876 թուականու հրամանադիրն, ընդ նմին և Ազգային Ժողովոյ Մայր Դիւանին պաշտօնագիրն, որով կը ծանուցուէր թէ երեսփոխան Փափագեան Ս. էֆէնտիի ազգային դաստիարակութեան խնդրոյ մասին մատուցած առաջարկութիւնն Ազգային Ժողովն ուշադրութեան առնելով՝ որպէս է 1870 էն մինչև ցարդ Ուսումնական խորհրդոց կողմէն հրատարակեալ համարատուութեանց տեղեկագրերը Դիւանին նկատառմանը և տեղեկագրութեանը ենթարկել, Դիւանն նկատողութեան առնելով յիշեալ տեղեկագրերը, ընդ նոսին և նոյն ամաց Քալո ժողովոց համարատուութեանց տեղեկագրերն զաստիարակութեան վերաբերեալ մասերը, նաև 1865-66 թ Ուսումն. խորհրդոյ հրատարակած առաջին երկամեայ համարատուութեան տեղեկագիրը և վարժարանաց կանոնադրութիւնը և, ուրոնց յիշատակութիւնը 70-71 և 72-74 թ Ուսումնական խորհրդոց տեղեկագրերուն մէջ կար, կը փութայ այսօր իր տեղեկագիրը մատուցանել Ազգային Ժողովոյ:

1870-71 թ Ուսումն. խորհուրդը (որ կրթական անունով ճանչցուած է), իւր միամեայ պաշտօնավարութեան սկիզբը հետեւեալ երկու կարևոր որոշումներն ըրեր է.

1. Քաղաքային նախնական դպրոցներէն զատ կեդրոնական դպրոցներ ալ հաստատել թաղերուն մէջ :

2. Գարոցներն ու անոնց Հոգաբարձութիւնները կարգաւորեալ դրութեան մը ենթարկել, և դպրոցային Հոգաբարձութեանց և Քաղ. խորհրդոց փոխադարձ յարաբերութիւնները որոշ սահմանի մը ներքեւ դնել :

« Բայց, կըսէ յիշեալ տեղեկագիրը, այս որոշումները գործադրել չկարողացաւ խորհուրդս, վասն զի գործադրելու միջոցներէն զուրկ էր բոլորովին, մանաւանդ որ Կրթական խորհրդոյ կամ որ նոյն է Ազգային վարչութեան կրթական մասին իրաւասութեան սահմանը ճշգիւ որոշուած և բոլոր ազգային վարժարանաց ու անոնց Հոգաբարձութեանց հետ իւր յարաբերութիւնները սահմանուած չեն » :

Հետեւաբար յիշեալ խորհուրդը գոնէ ապագային պատրաստութիւն տեսնելու համար ազգային վարժարանաց միջակը քննելու և տեղեկանալու որոշում ըրեր, և նոյն քննութեանց ու տեղեկութեանց արդեանցը հետ՝ ութ ամենակարևոր աշակերտութիւններ մատուցանելով կնքեր է իւր տեղեկագիրը, որք են .

1. Մայրաքաղաքիս թաղերուն իրարու մերձակայ գտնուող վարժարանները միացնելով կեդրոնական ուսումնարաններ հաստատել, իւրաքանչիւր թաղի մէջ նախակրթարան մը թողլով, և քանի մը բարձրագոյն կարգի վարժարաններ բանալ գաւառագլուխները .

2. Գարոցական տեսչութիւններ հաստատել գաւառաց մէջ, որք կեդրոնական Կրթական կամ Ուսումնական խորհրդոց հետ յարաբերութիւն ունենան .

3. Գաստատուներ և վարժուհիներ հասցնելու համար երկու սեռի գոնէ առ այժմ երկու դպրոց հաստատել .

4. Նախնական և երկրորդական վարժարանաց համար դասադրքեր որոշել .

5. Ուսումնական կաճառ կամ սկիւղելիս մը կազմել .

6. Կրթական խորհրդոյ հրամանաց ներքեւ թողակաւոր պաշտօնատարներ կարգել .

7. Ընդհանուր վարժարանաց համար ուսմանց ծրագիր մը պատրաստել .

8. Կանոնադրութիւն մը հաստատել Կրթական խորհրդոյ և վարժարանաց հոգաբարձութեանց յարաբերութիւններն որոշելու համար :

1870-71 ամի Քաղ. ժողովն ալ իւր տեղեկագրով Ուսումն. խորհրդոյ յիշեալ ամենակարևոր առաջարկութիւնները ներկայացուցած է Ազգային ժողովոյ, ըսելով թէ՛ « անտարակոյս երեսփոխանական ժողովը դատարարականութեան կենսական մեծ խնդրոյն ստիպողականութիւնը ճանչելով՝ իւր խորին ուշադրութեանը պիտի ենթարկէ զայն » :

1872-74 ի Ուսումնական խորհուրդը թէ՛ իւր նախորդին առաջարկութիւններով և թէ՛ 1865-65 ի Ուսումն. խորհրդոյն աշխատութիւնները աչքի առջև ունենալով, ըստ այնմ իւր ընթացքն ուղղեր է, և Քաղ. ժողովոյ պատրաստած թաղական հրահանգին համաձայն մայրաքաղաքիս Քաղական խորհրդոց հետ իւր օրինաւոր յարաբերութիւններն հաստատուելու և վարժարանաց հոգաբարձութիւններ կազմել տալու սկսեր է :

Նոյնպէս գաւառաց մէջ հետզհետէ Ազգային Սահմանադրութիւնը գործադրուելու վրայ ըլլալով, Ուսումն. խորհուրդըն Քաղ. ժողովոյ որոշմամբ՝ սկսեր է յարաբերութիւններ ունենալ գաւառական Ուսումն. խորհրդոց հետ :

Թէ՛ այս յարաբերութիւններն արդիւնաւորելու և թէ՛ ազգային վարժարանաց ընթացքն միօրինակ բարեկարգուելու խորհրդով, Բարեկարգութեան Հրահանգ անունով վարժարանաց կանոնագիր մը պատրաստած է, որն որ վարչութեան կրօնական և Քաղաքական Խառն ժողովըն յետ քննութեան հաստատած և հրատարակած է ի գործադրութիւն :
Սոյն Ուսումն. խորհուրդն իւր տեղեկ-

կազմը կը կնքէ հետեւեալ երեք ամենա-
կարևոր առաջարկութեամբք .

1. Հաստատել կեդրոնական ուսում-
նարան մը կամ վարժապետանոց մը .

2. Սահմանել ուսումնական կաճառ-
քը, և Կ. Պօլսոյ վարժարանաց համար
ընդհանուր տեսուչ մը կամ տեսուչներ .

3. Որոշել կեդրոնական վարչութեան
հարկուկըսոյն մէջ զատարակութեան
համար գումար մը :

1872-73 ամի Քաղ. ժողովոյ համա-
րատուութեան տեղեկագիրն ալ կը հաս-
տատէ Ռուսիոյ խորհրդոյ այս աշխա-
տութիւններն ու առաջարկութիւնները ,
որոց ամենքն ալ Աղլային ժողովոյ ու-
ղարկութեան ներկայացուցած է :

Նոյնը կը հաստատէ նաև 1874-75 և
75-76 ամաց Քաղ. ժողովոյ համարա-
տուութեան տեղեկագիրը :

Ահա այս է համառօտ բովանդակու-
թիւն տեղեկագրաց, որոց նախաքննու-
թիւն գիւճանիս յանձնարարեցաւ Աղ-
լային ժողովից : Երեսփոխան Տեառք ար-
և՛ տեսած և կարդացած են այդ ամեն
տեղեկագիրքը, ուստի աւելորդ կը հա-

մարկէք անոնց պարունակութեանց վրայ
մտնուման խօսիլ : Միայն բաւական կը
համարինք յայտարարել ինչպէս նաև ան-
շուք մեզ պիտի ձայնակցին երեսփոխան

Տեառք, թէ՛ Սահմանադրութեան հաստա-
տութենէն ի վեր կազմեալ Ռուսիոյ . խոր-
հուրդէ իրենց պարտաւորութեան շրջա-

նակին մէջ ազգային դատարակութեան
բարեօրման համար հոգ և փոյթ տարած
են, կարևոր նախապատրաստութիւններ

և, ազգօգուտ խորհուրդներ և ա-
րարակութիւններ յլացած են, բայց
ստացուած կամ բաղձացուած արդիւն-

քն տեսնուած, որուն պատճառները
նախակուած են յիշեալ տեղեկագրաց
մէջ :

Սակայն Գիւանս այդ վիճակին ուրիշ
պատճառ մ'ալ կը գտնէ, այն է՝ ցարդ
դատարակութեան խնդիրն Աղլային
ժողովոյ ուղարկութեան և քննութեան
ուղարկայ չըլլալը : Աւստի եթէ ցարդ ժո-

ղովոյն գրադմունքներն ներած չեն այս
կենսական խնդրով գրադելու, դէժ ասկէ
ետքը՝ մտնաւանդ պարագայներուն բեր-
մունքէն Գիւանս արժան կը դատուի առա-
ջարկել Աղլային ժողովոյ .

1. Ստիպողականութիւն տալ դատար-
արակութեան խնդրոյն .

2. Քննել և վաւերացնել Աղլային
վարժարանաց Բարեկարգութեան Հրա-
հանգը, որ անցեալ Ռուսիոյ . խորհրդոյ
կարևոր առաջարկութեանց ամենամեծ
մասը կը պարունակէ իր մէջ : Սոյն Հրա-
հանգը Գիւանս քննելով օգտակար գտաւ
աղլային վարժարանաց բարեկարգու-
թեան և յառադրիմութեանը, և վայն կը
ներկայացնէ Աղլային ժողովոյ քննու-
թեան և վաւերացմանը, որպէս զի ըլլայ
ընդհանուր օրէնք Քուրքիոյ Հայոց ազ-
գային վարժարանաց համար, որն որ ի
հարկէ հետզհետէ փորձառութեամբ բա-
րեփոխուելով կը կատարելագործուի :

3. Ընդունել և հաստատել կեդրոնա-
կան վարժարանի կամ վարժապետանոցի
մը պիտոյ ըը, որն որ բոլոր վարչութիւն-
ներն ընդունած և հաստատած են : Այս
պիտոյ ըը խիստ լաւ բացատրուած է նոյն
վարչութեանց համարատուութեան տեղե-
կագրոց մէջ, զորս երեսփոխան Տեառք
խորին ուղարկութեան կը ներկայացնենք
և 1872-75 ամի Վարչութեան Քաղ. ժո-
ղովոյ որոշումը կրկնելու կը համարինք,
որ է՝ « Ղալաթիոյ վարժարանը կեդրոնական
ուսմանարևի կամ վարժապետանոցի վերածել,
պահելով անոր մէջ նախախնարան ալ, և Ղա-
լաթիոյ եկեղեցոյ կառուածական և վազմէի Ե-
կամարներն այս վարժապետանոցին յարկացնել » :
Սոյն որոշումը վերահաստատուած է 1874-
75 և 75-76 ամաց Քաղ. ժողովոյ ալ, և
միայն չէնքին ընդարձակման խնդիրն ար-
դեւք եղած է այս որոշման անմիջական
գործարկութեանը : Բայց 1875-76 ամաց
Քաղ. ժողովն արտօնութիւն տուած է
Ղալաթիոյ վարժարանին կից դասարան
ներ կառուցանել : սոյն շինութիւնը՝ որ Ե-
ուսայրկ պիտի ըլլար, ըստ որոշման վար-

չութեան, Ղալաթիոյ կալուածական Հրաբարձութեան միջոցաւ այժմ քառա-
յարկ շինուած և աւարտելու վրայ է, որ
ահա մեր աչաց առջև է: Սոյն շինքին
չորրորդ յարկին յաւելմամբ ինքնին լուծ-
ւած կը համարուի կեդրոնական ուսում-
նարանի կամ վարժապետանոցի գործադ-
րութեան խնդիրը, որով այժմէն Ազգը
կրնայ ունենալ այդ կեդրոնական ուսում-
նարանը կամ վարժապետանոցը, որ Ու-
սումն խորհրդոյ միջոցաւ կրնայ ծառա-
յել նաև ուսումնական կաճառի կամ Ա-
կադեմիայի մը, որուն պէտքն ալ յիշեալ
տեղեկագրոց մէջ խիստ լաւ բացատրե-
ւած է:

4. Կեդրոնական սնտուկին պիւտճէին
մէջ յանուն դաստիարակութեան գումար
մը սահմանել, որուն մէկ մասը պէտք է
յատկանայ Կեդր. ուսումնարանին արդի
պիտոյց, վասն զի շինութեանց երեսէն
Ղալաթիոյ կալուածներուն հասոյթին զը-
րեթէ 2/3 ը պարտուց դրամազլիսին և
տոկոսին պիտի յատկանայ, մինչև որ
պարաքն ամբողջ վճարուի, և յետոյ նոյն
հասոյթներն ամբողջ թաղային նախակը-
թական վարժարանին ու Կեդր. ուսում-
նարանին յատկանան և մէկ մասն ալ
պէտք է յատկանայ Ակադեմիային գոր-
ծոն դիւանին և թաղային վարժարանաց
տեղութեան ծախսոց:

« Կանոնաւոր դաստիարակութիւնը և
իրական յառաջադիմութիւնը դրամի կը
կարօտին, կըսեն Ռուսնմ. խորհուրդք,
և ամեն ինչ դրամով կը կատարելադոր-
ծուի. դաստիարակութեան համար դրամ
զբանաբար յառաջադիմութեան խոչընդոտ
յարուցանել է, և յառաջադիմութեան
դիմադրելը յայտնապէս Ազգն 'ի կործա-
նումն մղել է »:

Պիւտճէին մէջ սոյն գումարին քանա-
կութիւնը որոշելը ժողովոյն կը վերաբե-
րի՝ նոյն իսկ պիւտճէին քննութեան և հաս-
տատութեան պահուէն, բայտ պիտոյցն Ռու-
սումն. խորհրդոյ և ըստ տանելոյ Կեդր.
սնտուկին:

Պիւսան կեդրակացնէ թէ, Ազգային
ժողովը պէտք է որ

1. Ըստ առաջարկութեան Փափագեան
Ս. էֆէնտիի դաստիարակութեան խնդ-
րոյն ստիպողականութիւն տայ:

2. Օրակարգն անցնէ վարժարանաց
բարեկարգութեան կանոնագրին ծրագի-
րը, և զայն յօդուած առ յօդուած բըն-
նէ:

3. Հաստատէ 1772-73 ամի Բար. Ժո-
ղովոյ որոշման համաձայն Ղալաթիոյ
Կեդր. ուսումնարանի կամ վարժապետա-
նոցին հիմնարկութիւնը, և յամենարարէ
Ազգային վարչութեան, ասոր ուսանաց
ծրագիրն և ընթացից կանոնադիրը պատ-
րաստել և ներկայացնել Ազգային ժողո-
վոյ 'ի վաւերացումն:

4. Որոշէ թէ Կեդր. սնտուկին պիւս-
ճէին մէջ յանուն դաստիարակութեան
ծախսոց գումար մը սահմանելն անհրա-
ժեշտ է, այս գումարին որքանութիւնը
որոշելն պիւտճէին սահմանման օրին պա-
հելով:

5. Ռուսումնական խորհրդոց միւս
առաջարկութիւններն յղել առ Ազգային
վարչութիւնն 'ի պարտուպատշաճ
բէնութիւն:

Դաստիարակութեան դիւանս ահա-
ւասիկ իրեն յանձնարարեալ տեղեկագ-
րաց մասին իւր քննութեան արդիւնքը
տեղեկագրելով, և այս կարեւոր առաջար-
կութիւնները մատուցանելով Ազգային
ժողովոյ քննութեանն ու որոշմանը,
տիւ ունի լինել միշտ:

28 յունվար 1877

Ատենապետ
Յ. Նոթեան

Տեղեկարբը
Պ. Պառնտեան

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ մասին
նախ շնորհակալութիւն կը յայտնեմ Պառ-
տիարակութեան դիւանին, որ այս սու-
ղեկագիրը բերաւ ազգային դաստիարա-
կութեան խնդրոյն վրայ. երկրորդ շնոր-
հակալութիւն կը յայտնեմ այս խնդրոյն

ստիպողականութիւնն առաջարկող պաշտօնակցացս . և երրորդ՝ աւելի շնորհակալ պիտի լինիմ եթէ ստիպողականութիւնն որոշուելով անմիջապէս Օրակարգէն անցնի :

ԻԹԻՒԻՃԵԱՆ Կ. ԷԹ. — Ես ալ նոյն շնորհակալութիւնը պիտի յայտնէի թէ՛ Ղաստիարակութեան ղիւանին և թէ՛ Ուսումնական խորհրդոյ . բայց այսօր ստիպողականութիւնն որոշուելու համար մեծամասնութիւն ունի՞ ժողովը . միթէ կրնա՞նք առանց իսկական մեծամասնութիւն ունենալու օրինաւորապէս որոշում ընել . ես կը տեսնեմ որ մեծամասնութիւն չունի այսօր ժողովն :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իւթիւճեան էֆէնտի կանոնադրական ղիտողութիւն մը կրնէ, որ կրնար իրաւացի ըլլալ եթէ Օրակարգը գտնուած խնդրոյ մը համար ժողովը մէջու արձակելու վրայ եղած ըլլար . վասն զի այն ատեն մեծամասնութիւն կը փնտռուի . բայց հիմա այն վիճակին մէջ չենք , ղեւ առնական գործողութեանց մէջ կը գտնուինք . ուստի և հարկ չկայ մեծամասնութիւն փնտռելու ըստ կանոնի :

ՄԵԼԻԻԲԵԱՆ Մ. ԷԹ. — Ես ալ շնորհակալութիւն յայտնող երկու երեսփոխանաց կը ծայնակցիմ և կառաջարկեմ որ Ղաստիարակութեան ղիւանի տեղեկագիրը կանխապէս տպեալ հաղորդուի բոլոր երեսփոխանաց , որպէս զի ամեն ոք ուսումնասիրէ , և յետ այնորիկ վիճարանութեան ենթարկուի :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ ղիտողութիւն ունեցող չկայ , ես ալ փոքրիկ ղիտողութիւն մը պիտի ընեմ . ըստ որում այս խնդրոց առթիւ ընելիք որոշումնիս ազգին մէջ իբրև կանոն պիտի տիրէ , հարկ է նախ քան գամենայն Վարչական կարծիքը հարցնել , վասն զի Վարչութիւնն իբրև գործադիր ազգին օրինաց՝ կրնայ յետին պահուն առարկել թէ իմ կարծիքս չտաացաք , և այնպիսի կանոն մը հաստատեցիք՝ որ ես չեմ կրնար գոր-

ծադրել . ուստի վարչական տագնապ մէջ չկնալու համար հարկ է որ Օրակարգը անցնելէ առաջ Վարչութեան կարծիքն առնելու համար նմա յղենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷԹ. — Այդ ըսած դէպքերու համար արժան է որ Օրակարգէն անցնի չէ թէ բուն խնդիրն , այլ Գաստիարակութեան ղիւանի տեղեկագիրն . այն ատեն վիճարանութեամբ պիտի բռնենք՝ Վարչութեան յղել կամ հարցնել հարկ է թէ ոչ : Ասոր համար պէտք է որ տեղեկագիրն տպեալ օրինակներն օր յառաջ մեր ձեռքը հասնին :

ԷՆԻՍԷԻՃԵԱՆ Տ. ԷԹ. — Ես ալ փափակեան էֆէնտի այն կարծիքէն եմ որ տեղեկագիրը տպեալ ցրուի երեսփոխանաց յաջորդ նստէն առաջ :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներքեցէ՛ք որ նախ ձեռքենք խնդիրը . դաստիարակութեան խնդիր ըսելով թերևս վերացեալ բառ մը մէջ կը բերենք . ստոյգ է որ ժողովս երեսփոխանի մը առաջարկութեան վրայ ուզեց իւր վրայ առնուլ այս խնդիրը , վիճարանութեան առարկայ ընել , և ասոր համար Գաստիարակութեան ղիւանէն տեղեկագիր մը ուղեց . բայց այս տեղեկագիրը կատարելապէս պարգած չէ խնդիրը . նախ՝ դաստիարակութեան խնդրոյն ստիպողականութիւն տալ պէտք է կրսէ : Ի՞նչ պէտք է հասկընանք ասկէ . երկրորդ՝ 73 թուականի հրատարակուած ուսումնական հրահանգը վաւերացնել պէտք է կրսէ . այս ի՞նչ ըսել է . միթէ նոյն թուականի վարչութիւնը վաւերացուցած չէ՞ այդ հրահանգը . երրորդ՝ վարժապետանոց մը հաստատել պէտք է կրսէ . այս ալ այնպիսի խնդիր մ'է որ եթէ միայնակ գալու ըլլար ժողովիս , դարձեալ Վարչութեան չհարցուցած չէինք կրնար որոշել . չորրորդ՝ Պիւտճէի խօսք կրնէ . ղեւ Վարչութիւնը Պիւտճէ չունի օրինապէս վաւերացած , ի՞նչպէս կարելի է չկեցած Պիւտճէի մը մէջ դաստիարակութեան համար գումար մը սահմանել , և այն ալ վարչութեան կարծիքն առնելն :

առաջ: Ահա այս կարևոր կէտերուն վը-
րայօք կարծիք առնելու համար պէտք է
տեղեկացիր նախապէս յո՞ր վարչու-
թեան: Թեքնս պիտի ըսէ վարչութիւնը
թէ սա կամ նա կէտը ես արդէն կը
գործադրեմ: Իմ միտքս յետաճող է
այսինդիրն: Եթէ մեզ գրադիցնելու ար-
ժանի խնդիր մը կայ, դատարարակու-
թեան խնդիրն է այն: բայց իբրև սահ-
մանադրական ծողով պէտք է որ խնդիրն
օրինաւորութեամբ ներս առնենք, որպէս
յի վիճաբանութեան հիմ գտնենք և ըստ
այնմ լուծելու աշխատենք:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Այս խնդրոյն մէջ
ինչոյն որ յիշեցնող եղաւ, վարչական
կէտ ալ կայ, օրէնսդրական կէտ ալ: վար-
չական կէտերը կրնանք վարչութեան
յանձնել, իսկ օրէնսդրական կէտերը չենք
կրնար վարչութեան յանձնել: Այս խըն-
դիւք ժողովին օրակարգն անցնելու առա-
ջարկութիւնն ես ալ կը կրկնեմ: Վասն զի
օրակարգը չանցնելու բանաւոր պատճառ
մը չեմ տեսներ. ստիպողականութիւնը
ուրիշ ուրիշ բան չեմ հասկնար, բայց
եթէ ձեռնրու համար ժամանակի չկորսն-
ցնելով ժամ մը առաջ օրակարգն անցը-
նել, վարչութիւն և երեսփոխան տանըը
միասնաբար մէկտեղ խորհիլ, մէկտեղ պի-
ճարաբիլ: տարածիցս չկայ թէ վիճարա-
նութեան մէջ վարչութեան վերաբերեալ
կէտերը կրնան դատուիլ և օրէնսդրական
մասը միայն ընդունիլ: Աստի պէտք է օ-
րակարգն անցնելու որոշումը տալ անուի-
շապէս:

ՉՍՅՆԵՐ. — Կը կրկնենք Նոբերեան է-
ջնէտի ստաջարկութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Առաջարկու-
թիւն մը կայ խնդիրն իբրև ստիպողական
օրակարգն անցնել: ստաջարկութիւն մ'ալ
կայ՝ նախ վարչութեան կարծիքն առ-
նուլ և ապա խնդիրն օրակարգն անցնել:
Այս երկու առաջարկութիւնները բը-
ճի պիտի դնեմ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ատենապետ
փառալին ըսածը խնդիրը ձեւապահութեան

մէջ խղիւղ ըսել չէ: Թէ որ օրինաւորու-
թեամբ պիտի ընթանանք՝ պէտք է անոր
ըսածին հետեւենք: Սակայն որովհետև կը-
սէք թէ ժամանակ չանցնի, կրնայ այն-
մէն օրակարգն անցնիլ խնդիրը, և միւս
կողմէ. տեղեկացրին օրինակը վարչու-
թեան հարցը ուրի միեջև 15 օր իւր կար-
ծիքը բերելու պայմանաւ: Այսպէսով խոր-
դիրն ետ մնացած չըլլար և օրինաւորու-
թեամբ ձեր նպատակին կը հասնէք:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Շտա՞մ աղէկ, շտա՞մ
աղէկ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Օգտէն է փն-
տի ըսածը բարեփոխութիւն մ'է, նախ
զայն բուէի կը դնենք:

ՄԵԼԻԲԵԱՆ Մ. ԷՖ. — Բայց եթէ
վարչութիւնը 15 օրէն ետև իւր կարծիքը
չբերէ, այն ստեղծ ի՞նչ պիտի ընենք:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես չեմ կր-
նար հասկնալ թէ ի՞նչ ըսել է որ երբ ժո-
ղով գործ մը կատարէ, անոր վրայ վար-
չութեան կարծիքը պիտի ուզէ: Ժողովն
համարաւոր է. երբ վարչութիւնն այն
մարտաւորութիւնն զայ՝ այն ատեն պիտի
նայի, և երբ մէկու տալու վայրկեան
հասնի, այն ատեն վարչութեան թիւք
հարցնէ: Հիմակվրնէ հարցնելու տեղի
կայ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Իմ ըսածիս թի-
րիւնացութեան տեղի չարուեցաւ համար
նորէն կըսեմ թէ հիմակուրնէ չենք հար-
նար կապել գործը վարչութեան անցնիլ
ցընենք ըսելով: Թող խնդիրն անցնի Օ-
րակարգը, առաջին վիճաբանութեան մէ-
ջ խնդրոյն վարչական և օրէնսդրական կէտ-
տերը կրնան դատուիլ, վարչական կէտե-
րը վարչութեան կը յանձնենք: Մեր բո-
ւոյն ստիպողականութիւն ըսելով ուրիշ բան
չենք հասկնար, բայց եթէ դատարարու-
կութեան խնդիրն իբր կենսական խնդիր
այս ժողովը պէտք է ստանձնէ իւր Օր-
կարգն անցունելով: Թէ որ այնպիսի կէ-
տեր նշմարենք՝ որ ուղղակի վարչութեան
կը վերաբերին, կրնանք անոր յանձնել
կամ մեր վիճաբանութեան մէջ՝ ուր վարչ-

յութեան անդամներն ալ ներկայ կը գըտնուին, կրնանք հարցնել :

ՂԱՋԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ո՛ր են Վարչութեան անդամներն, որոնք ներկայ պիտի գտնուէին ժողովի նիստերուն, և այսօր ներկայ չեն :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇՍ. — Կաղաչեմ, և ասանդնիս մեզ անդր քան զօրինա չտանի շրայ սահմանադրական ազդ մը՝ որոյ և ընտրութեան և ժողովն երբ օրէնք մը պիտի հաստատէ, չուզէ կանխաւ Վարչութեան կարծիքն առնուլ : Մեր կուզենք դատարարական խնդիր մեր վրայ ստանձնել, բայց սա՛ ալ մտածենք որ մեր սահմանադրական ժողով ըլլալով ինչպէս կրնանք ասանց Վարչութեան կարծիքն առնալու վարժապետանոցի հաստատութեան ձեւնարկել և պիտածէին մէջ ուսումնական պիտոյից համար դուրս մը մտցնելու խնդիրներ որոշել. ապիս պարզապէս Վարչութեան անվարչութիւն և կամ անարդար կենթադրեմք, քանի որ Վարչութիւն մը ունինք սահմանադրապէս հաստատեալ, և պատասխանատու այս ժողովին, անոր իրատուութիւնն է, ինչպէս ուրիշ խնդրոց, նըմանապէս դատարարական խնդրոցն որոշ տանիլ. աշխատինք մենք ազդին դատարարական իւրեր բարդաւած վիճակի վերածել. բայց հարցունենք նախ Վարչութեան թէ ինք ի՞նչ ըրած է և ի՞նչ կարծիք ունի առաջադրեալ օրինաց վրայ : Ես չուզեցի ՚ի սկզբան այս ամեն բանը մեր եռանդն ունեղ այնչափ առաջ կրտանի, որուն ծայրը մինչև անխիսանութիւն կերթայ. ես չեմ կարծեր որ Ազգային ժողովն իւր Վարչութեան այս կերպով մեր անարդանք մ'ընելու կամք ունենայ : Աստի կ'եթ մէկ կողմէ խնդիրն Օրակարգն անցունելու և միւս կողմէ Վարչութեան կարծիքը 13 օրուան մէջ խնդրելու առաջարկութիւնն՝ որ Օգոսէն է ֆէնտիին է, անցունիք, կրնաք ամեն կողմը դու՛րս ընել :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Եթէ՛ Ատենա-

պիս փաշա՛, զիս կ'անհարկեք այդ կտրերով, ես այդպիսի մտօք չեմ. իմ առաջարկութիւնս թէ դատարարական խնդիրն ուղղակի այս ժողովն ինք ստանձնէ, ասանց պատճառի չէ. արդէն ժողովը Սահմանադրութեան վերաբնտարութեան խնդրոյն առթիւ իւր ըրած վիճաբանութեանց մէջ Ուսումն. խորհուրդն ալ միւս վարչական ժողովոց պէս ուղղակի երեսփոխանական ժողովոյս պատասխանատու ըլլալու կէտը նկատողութեան առած և այս մասին քուէ մ'ալ տուած է : Ես Վարչութեան հարցնելու կէտը բնաւ մերժել չուզեցի. իմ նպատակս ուրիշ բան չէ, բայց եթէ դատարարական խնդրոյն առիւղղակիաւ թիւն արուելով Վարչութեան աշխատութեանց մասամբ մը օղնել. վասն զի Վարչութիւնն իւր բաղմաղբազ վիճակին մէջ կարող չէ հասնիլ այս խնդիրը հողալու. այս կերպով իւր բեռը քիչ մը թեթեւցուցած կըլլանք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թէ և իբրեւայցի է Ատենապետ փաշային դիտողութիւնը Վարչութեան անվարչութիւն կամ անարդանք մը չընելու մասին, բայց ես կըսեմ թէ երբէք մտքերնէս անգամ չենք անցուներ Վարչութեան անվարչութիւն ընել. կը յիշե՛ք, այս ժողովն էր որ քանի մը նիստ առաջ Վարչական խնդիրներէն հարստաճարութեանց մասն ալ պատճառաւ մը իւր մէջ առաւ և յետոյ դարձեալ յիշեց Վարչութեան դատարարական մասն ալ այնպէս կրնանք ընել. յաջորդ նստին մէջ կը գտնեք այս խնդրոյն օրէնսդրական և վարչական մասերը, և Վարչութեան վերաբերեալներն իրեն կը յանձնենք պայմանաժամաւ մը իւր կարծիքները բերելու համար : Իսկ հիմա չգիտենք ՚ի՞նչ են հարցնելիքնիս. օրակարգն անցնելիքնիս դատարարականութեան դիւանի տեղեկագիրն է, և ո՛չ դատարարականութեան բուն խնդիրն. այս տեղեկագիրն՝ որոյ պարունակութիւնը նախորդ վարչութեանց համարատուութիւններէն քաղեալ տեսակ մը համարատուութիւն է, դեռ պիտի սերտենք. կէտը է նախ տե-

դեկազմերն ամբողջովին օրակարգն անցնի
և յետոյ անոր մէջ Վարչութեան վերա-
բերող կէտերը զատուելով՝ Վարչութեան
հարցունին : Ուստի այսօրու ընդ օրակարգն
անցնիլը կառավարիեմ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Այն դիտողու-
թիւնները թէ՛ Վարչութեան գործն է
դաստիարակութեան խնդիրը և պէտք է
անոր հարցուի, թէ և իրաւացի են և ես
ալ պիտի կրկնէի, սակայն ո՞վ կրնայ և
բաշխաւորել որ քաղաքական զանազան
տաղանտներ որք պատահեցան, դարձ-
եալ չպիտի պատահին և զբաղեցնեն ըզ-
մեզ : Ար տեսնէք որ Վարչութիւնը Յ-7
ամիսներէ ՚ի վեր կազմուած, տակաւին
չէ կրցած իւր առաջին նուիրական գոր-
ծըն եղող Պիւտէն պատրաստել և բե-
րել Ժողովիս. ինչո՞ւ, վասն զի այնպիսի
ստիպողական խնդիրներ եկան, որ ամե-
նէն կարեւորը ետ ձգել տուին. պէտք է
նախատեսենք՝ որ Վարչութիւն մը՝ որ
այսքան զբաղմունքներով շրջապատեալ է,
է՞րբ ժամանակ պիտի գտնէ դաստիարա-
կութեան խնդրոյն վրայ իւր ընդհանուր
ատենութիւններն ընել և մեզ բերել : Ուս-
տի Նուրեան և Փափագեան էֆէնտիսե-
րուն ձայնակցելով և ես կառավարիեմ որ
դաստիարակութեան խնդիրն անմիջապէս
օրակարգն անցնի. եթէ Վարչութեանէն
լոյս առնելու կէտ մը գտնենք, այն ատեն
Վարչութեան անդամոց ամենն ալ հրա-
պիրենք յառաջիկային մէջ զալ մեր վիճա-
րանութեանց մասնակցիլ և իրենց կար-
ծիքները տալ. որով քիչ ժամանակի մէջ
վախճան կառնու խնդիրը :

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Թ. ԷՑ. — Դաստիա-
րակութեան խնդրոյն առթիւ եղած խօս-
քերուն եթէ մի առ մի պատասխանենք,
չատ երկար կըլլայ. ուստի բուն խնդրոյն
դառնալով դիտել կուտամ թէ եղած խօս-
քերուն ամենն ալ երկու կէտի կուզան
կը յանդին. նախ տեղեկագիր մը կայ
դաստիարակութեան դիւանէն մեզ եկած,
դոր Ժողովը կը փախաքի առանց յապաղ-
ման ուշադրութեան և վիճարանութեան

ենթարկել. երկրորդ կէտն է մեր եռան-
դէն մղուելով աճապարանօք գործելու
մէջ Վարչութեան դպեղէ՛ զգուշանալ :
Ար տեսնէք որ ամենքս ալ մի և նոյն բանը
կրեսնք առանց իրարու հակառակելու. ոչ
ոք կըսէ թէ դաստիարակութեան խնդ-
րոյն ստիպողականութիւն տալու համար
փոյթ չէ թէ վարչական տաղանավ յառ-
նէ, և կամ՝ վարչական տաղանավ չյառ-
բուցանելու համար դաստիարակութեան
խնդիրն ետ թողուի, ուրեմն՝ ըստ իս՝ զըժ-
ուարութիւն մը չկայ, կրնանք այս խըն-
դիրն օրակարգն անցունելով և միանգա-
մայն Վարչութեան կարծիքն ուղեւորելով
կէտերն հաշտեցնել : Ասով խնդիրն ա-
ռանց անպատեհութեան կը լուծուի, և
տարակոյս չունիմ որ եթէ խնդիրն այս
կերպով բուլի գրուի, ոչ ոք ասոր հակա-
ռակ բուլ կուտայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ճիշդ ես ալ
այդ կերպով խնդիրը բուլի դնել ուղեցի
Օգսէն էֆէնտիի բարեփոխութիւնն ըն-
դունելով, բայց յետոյ այլ և այլ խօս-
քեր եղան. Օգսէն էֆէնտիի առաջար-
կութիւնն ամեն կողմ գոհ կրնայ ընել :
մէկ կողմէ խնդիրն Օրակարգը պիտի ան-
ցունենք և միւս կողմէ Վարչութիւնը պի-
տի հրապիրենք թէ՛ գրով և թէ՛ անձամբ
իւր կարծիքները հաղորդել մեզ յառա-
ջիկայ նստին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Բայց պայմա-
նաժամու պէտք է գրել Վարչութեան :
ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՑ. — Ո՛չ. ես պայ-
մանաժամու չառաջարկեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ուրեմն Օգսէն
էֆէնտիի առաջարկութեան համեմատ
խնդիրը բուլի կը դնեմ. ով որ կուզէ որ
Դաստիարակութեան դիւանի տեղեկա-
գիրն Օրակարգն անցնի և միանգամայն
անոր պատճէնը Վարչութեան յղուելով
խնդրուի իւր կարծիքը գրով և անձամբ
ներկայացնել յաղորդ նստին, ձեռքը վեր-
վերցնել շնորհ ընէ :

Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵԼ
վերոգրեալ առաջարկութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասի խնդրոյն
տեսական մասն էր, դանք այժմ գործ-
նականին. դուք կարծեցիք թերևս որ
խնդիրն Օրակարգն անցնելուն պէս ան-
միջապէս կրնանք վիճարանութեանն ալ
ձեռնարկել. այս ընելու համար պէտք է
որ այսօրուան ատենագրութիւննիս տըլ-
ուած մեր ձեռքը հասնի յաջորդ նստէն
դո՛նէ 24 ժամ յառաջ: Բայց ասկէ եր-
կու ամիս առաջ եղած նստին ատենագ-
րութիւնը չստացանք տակաւին տպարա-
նէն. Ի՞նչպէս պիտի ընենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Այդ մասին
պէտք է որ դիւանը Վարչութեան հետ
խօսի. Ի՞նչ ըսել է որ ժողովս ամեն յարգ-
կրճծայէ Վարչութեան և փոխարինարար
նոյնը չգտնէր Վարչութեանէ: Եթէ Վար-
չութիւնը ժողովին տպագրական գործո-
ղութեանց համար ստակ չգտնէր, ո՞ր է
դր պիտո՞ճէն, ինչո՞ւ չբերեր: Ի՞նչ է այս-
ինձի յանձնեցէք՝ ես ընեմ, տեղեկագիրն
անմիջապէս թող օրինակուի, բնագիրը
Վարչութեան և ընդօրինակեալը տպա-
րան ղրկուի, և առանձին տպել տալով
որ առաջ մէյմէկ օրինակ երեսփոխանաց
հարդրուի:

Ար յիշեցնեմ ձեզ, Երեսփոխան էֆէն-
տինը, որ երկու ամիս առաջ մեր պաշ-
տանակիցներէն Պէշրեան էֆէնտին առա-
ջարկութիւն մը բերած էր ժողովին տը-
պագրական գործողութեանց վրայօք:
Կարծեմ թէ նոյն առաջարկութիւնը Նա-
խաձեռութեան դիւանին յղուեցաւ. կը
հարցնեմ դիւանին, ո՞ր է մնաց այն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այժմ յիշեցու-
ցիք Պէշրեան էֆէնտիի առաջարկու-
թիւնը. Նախաձեռութեան դիւանի ա-
տենապետ Ռուսինեան էֆէնտիի վախ-
ձեռնման պատճառաւ այդ առաջարկու-
թիւնը Մամիկոնեան էֆէնտիին ղրկուե-
ր էր, որ անդամն էր նոյն դիւանին. ան
տալ էա ղրկէր է պահարանին վրայ սա
ղիտողութիւնը գրելով.

«Երբ դիւանիս վախճանեալ անդա-

«մին ընտրութիւնն ըլլալով ամբողջանայ,
«այն ատեն պէտք է յղել դասի»:

Մ. Մ. Գլխաւոր

Այժմ ասոր համար ի՞նչ կորոչէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Եթէ Նա-
խաձեռութեան դիւանն այս գործը չպի-
տի կատարէ, առժամանակեայ կերպիւ
ուրիշ դիւան մը կազմելով՝ անոր յանձ-
նել կառաջարկուի:

ԽՕՃԱՍՍՈՐԵԱՆ Օ. ԷՑ. — Որովհետեւ
այս ժողովը Վարչութեան պատիւը պահ-
պանած է միւշա, և որովհետեւ Վարչու-
թիւնը սա ատենագրութեանց տպագրու-
թեան մասին ամեն օր կանարգէ ժողովս,
կառաջարկեմ անարգանաց քուէ տալ Վար-
չութեան համար: Ի՞նչ ըսել է այս. 15
օրն անդամ մը ատենագրութիւն մը պի-
տի ունենալը, Վարչութիւնը 2-3 հարիւր
դուրուշ չկրնար տալ և ատենագրութիւն-
նիս հասցնել. ա՛լ ամօթ է, երեւոյ՞ցա՞նք
է այս:

Օ. Խօճասարեան էֆէնտիի այս անար-
գական խօսքին վրայ երեսփոխաններէն
մեծ մաս մը բողոք բառնալով ժողովարա-
նէն դուրս ելան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օգտէն էֆէն-
տի, այս ատենանին մէջ բեմական լեզուի
անվայելուչ խօսք ընել չնրերք մեր կա-
նոնը. ուրեմն կաղաչեմ ետ առէք այդ
խօսքը՝ զոր Վարչութեան համար արտա-
սանեցիք, չմոռնալով միանգամայն որ մեր
Վարչութիւն ըսելով երկու ժողով և մէկ
նախագահ կը հասկանանք, որ Սրբազան
Պատրիարքն է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Ես թէև Օգ-
տէն էֆէնտիի այդ առաջարկութեան չեմ
կրնար ձայնակից ըլլալ, սակայն երբ ա-
մեն բանի համար ստակ կը գտնայ Վար-
չութիւնը և ժողովին ծախուցը գայ նէ
ստակ չկայ կրնէ, այդ չըլլար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, Օգ-
տէն էֆէնտի, ետ առէք այն խօսքը՝ ո-
րով գայթակղութեան տեղի տուիք և ո-

րոյ համար երեսփոխաններէն շատերը կը մեկնին :

ԻՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես Վարչութիւնն անարգելու համար չբոսի, այլ գործը, որովհետեւ Վարչութեան ըրածն անարգութիւն է այս ժողովին. ատեն մը հաղար զուրուշ ամսականաւ նոր պաշտօնեայ մը առեր էին Պատրիարքարանի դիւանատան մէջ. այդ պաշտօնեայն մեռաւ. թող այն հաղար զուրուշէն 600 ը ժողովին տպագրական ծախսուցը սանձանէին: Ամիսը քանի մը հարիւր զուրուշ խնայելով բէռէ կընեն կոր գնեց:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Երբ այսպիսի շատաքի միջադէպեր կը պատահին, դիւանը պարտաւոր է ըստ կանոնի իւր պարտքը կատարել: Տեսէք՝ Օգոստին էֆէնտի, երեսփոխաններէն շատերը դայիթակղելով մեկնեցան. Վարչութիւն մը առանց լսելու այսպէս հրապարակաւ դատապարտել չըլլար. և ո՛չ մէկ պարագայի մէջ ներեալ է անբարեկամ բառ գործածել: Ուստի կրկին կը հրաւիրեմ զձեզ ևս կոչել Վարչութեան համար ըսած խօսքերիդ:

ԻՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իմ ըսածս սա է. քանի որ 15 օրն անգամ մը տեղի ունենալիք 2-3 հարիւր զուրուշի ծախսուց համար Վարչութիւնն ստակ չտար, ես կամշտեմ այս բանին վրայ, ապա թէ ո՛չ մարդ անարգելու դիտում չունիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Այս խօսքն ալ մինչև մէկ աստիճան յետոս կ'ըսեմ կը նշանակէ. բայց փոխարինութիւն չկայ: Խօսքն Ատենադպիր էֆէնտիին է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենադպրութեան տպագրական խնդրոյն վրայ չէի ուզեր խօսիլ. կ'ոպատէի որ Պէշիւրեան էֆէնտիի առաջարկութեան պատասխանը դայ Նախածնունդութեան դիւանէն, և այն ատեն խօսիմ. բայց որովհետեւ այս մասին բաւական խօսքեր եղան, ես ալ հարկ համարիմ պէտք եղածն ըսել: Փախաղան էֆէնտի կը բացատրէ թէ ի՞նչ կերպով վարուելու է որ Պատասխանութեան դիւանի տեղեկագիրը ութ օրէն ձեռքերնիս

հասնի: Ես կը համաձայնիմ Փափագեան էֆէնտիի և կրեմ մինչդեռ հարստահարութեանց տեղեկագիրն ութ օրէն կըրցու պատրաստուիլ շատ դիւրին է Դաստիարակութեան դիւանի տեղեկագիրը շոր աւուր մէջ պատրաստել: Ասկայն խնդիրն այլատուութեան խնդիր չէ միայն. դրամական խնդիր մ'ալ կայ որ ատենագրութեանց հրատարակութիւնը կուշարցնէ. այս մասին դարման տանելու համար դիւանը ջանք և զոհողութիւն թէ և մար դիւանը ջանք և բայց չէ ալ կրցած ըստ իւր չէ խնայած, բայց չէ ալ կրցած ըստ իւր բաղձանաց ատենագրութիւնները կանոնաւորապէս երեսփոխանաց ձեռքն հասցնել միշտ. ուստի դիւանն այս մասին երբէք պատասխանատու չմնար: Իսկ որովհետեւ խօսք եղաւ թէ Վարչութիւնն է պատասխանատու, ես Վարչութեան ճիւղերուն միոյն մէջ գտնուելովս կընայ այս մասին ունեցած տեղեկութիւնով յայտարարել որ եթէ Վարչութեան անդամը հոս ներկայ ըլլային կրնային իրենց պատասխանատուութիւնը շատ թեթեւեցնել: Պէշիւրեան էֆէնտիի առաջարկութեան և Երեսփոխանութեան Տնտեսական և Երկրտական ճիւղերը միաբանութեամբ յայտարարի մը առած են Վարչութեան, զոր հարկաւ հոս պիտի բերէ Վարչութիւնը, յորում յանուանէ ցոյց ուրուած են այն երեսփոխանը, որ ատենագրութեան տարուեալ թերթերուն դնին ունեցած պարտքերնին չեն վճարեր, և դժբաղդարարաւեալ բողոքողներն անոնք են՝ որ իրենց այս պարտքը չեն հատուցած: Վարչութեան պատասխանատուութիւնը նկատուողութեան անուով ուզող երեսփոխան պէտք է որ իրենց պարտաւորութիւնն որ ճանչնան և կատարեն: Եթէ անոնք Վարչութեան պատասխանատուութիւնը ծանրացնել ուզելով կը կարծեն թէ Վարչութիւնն իւր ամեն պիտոյքները կատարելապէս հոգացած է և միայն և չգիտնին հողը մնացած, կը սխալին և չգիտեն թէ Վարչութիւնն ի՞նչ տալիս պիտի մէջ կը գտնուի անտեսութեան մասին:

Այս խօսքերով իմ միտքս Վարչութեան համար փաստարան կանգնել չէ: Վերջին կէտ մ'ալ ըսեմ. Վարչութիւնը հաւանութեամբ Ազգ. Ժողովոյ դիւանին ուրիշ տնօրէնութիւն մ'ալ ըրած է Ազգ. Ժողովոյ ատենադրութեանց տարազրութեան մասին. ուրիշ անձի մը պիտի յանձնէ տարրեր պայմաններով. այն անձն է Մալխոյ լրագրոյ խմբագրապետ Իւթիւճեան էֆէնտին, որ յանձնառու եղած է այստեան նիստէն սկսեալ ատենագրութիւնները տպագրել իւր տպարանին մէջ: Այս կերպով կը յուսացուի որ ատենագրութիւնները կանոնաորակէս կը հասնին և այլևս խնդիր չմնար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷԾ. — Այս խնդրոյն վրայ 'ի սկզբան ըրած առաջարկութիւնս եր կրկնեմ. Պէշիրեան էֆէնտիի առաջարկութիւնը կարեւոր և ստիպողական ըլլալով Նախաձեռնութեան դիւանը պարտաւոր է անոր պատասխանը մինչև ԱՅ որ երբէք:

Ատենադպիր էֆէնտին ըսաւ թէ և լեւոտիաններն ալ իրենց հաշիւը պէտք է լայն. անոնցմէ մէկն ես ըլլալով կը յայտարարեմ թէ Ազգ. սնտուկին մէջ խնամար տուժար չկայ այս հաշիւ մասին. Ես ինքնս էի՝ որ երբ կասկած յարուցի իմ հաշուոյս համար, լուծութիւն պահեմ, և տեսնելով որ ինչ աւելի հարուաներն ու աստիճանաորները չեն վճարել, ես ալ իմս ետ թողուցի: Բայց այս կը հարցնեմ թէ ինչ իրաւամբ բռնի կը պահանջեն մենէ այդ ստակները, և դիւանէն մեզի այդ յանդիմանութիւններն ընել կուտան. թող գայ Վարչութիւնը և պատասխանէ. ես իմ մասին կը խորհեմ և պարտաւոր չեմ համարիր զիս պատահեալ ատենադրութեանց տետրակներուն համար ստակ տալ. փասն զի այդ տետրակներն իմս չեն, այլ Ազգին են. ինչ է Վարչութիւնն ալ իւր տպիւ տուած տպարատուութեանց չըջարեալիւնաց և այլ գրութեանց ծախքերն իւր քսակէն վճարէ. եթէ իւր քսակէն կը վճարէ,

միթէ մեք մինչև այդ տեղուանքը կը յառաջանանք: Թէ որ դիւանադպիր էֆէնտիններն իրենց պարտաւորութիւնը կատարեն իրենց պատկանեալ դիւաններուն մէջ, այսքան դիւանադպրաց հարկ չկրնար և քանի մը դիւանադպիր կը բաւէին մեզ. թող Վարչութիւնը բերէ իւր պիւտճէն և ցուցնենք թէ ինչ զեղծումներ կան անոր մէջ:

Ազգային Ժողովոյ ներքին ծախուց խնդիրը կուզենք որ ուղղուի. այն աստիճան նախատուած ենք որ տեսէք՝ Վարչութիւն չկայ հոս: Ես կը փափաքեմ որ ըսածներս ստույգ չընեն և հարկադրուիմ զանոնք յետս կոչելու. բայց եթէ ստույգ են՝ բնաւ ետ չեմ առնուր:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախ՝ Պէշիրեան էֆէնտիի առաջարկութեան թուղթերն՝ որոյ համար պահ մը յառաջ խօսք անցաւ թէ Նախաձեռնութեան դիւանէն ետ եկած է Ռուսիանէն էֆէնտիի մահուան պատճառաւ, նորէն նոյն դիւանին դարձնելու համար սապէս գրեցի:

« Կը խնդրեմ յանուն Ազգային Ժողովոյ՝ որ դիւանի երկու պատուական անդամք շնորհ ընեն քննել սոյն խնդիրը « և տեղեկագիր բերել Ժողովին »:

Երկրորդ՝ գալով մեր Ատենադպիր էֆէնտիի խօսածներուն, կը յայտնեմ թէ սոյն խօսքերը պարզապէս տեղեկութիւններ էին, զոր ինքն իր կողմէն Ժողովիս հարորդեց՝ առանց զոր թշնամանելու նըպատակ ունենալու անշուշտ:

Ի վերջոյ կաղաչեմ որ վերջ տրուի այս միջադէպին և խնդրոյն գործնական մասին միայն կարծիք յայտնուի. ես չէի սպասեր որ խօսքերը մինչև անձնականութեանց դպչելու չափ յառաջ երթան և մինչև իսկ Վարչութեան դէմ այս աստիճան վիրաւորիչ ակնարկութիւնք տեղի ունենան. արդէն զժողովութեամբ կրցինք Օղսէն էֆէնտիի խօսքն ըստ մասնեայ ետ առնել տալ. այժմ դուք ալ, Փափագեան էֆէնտի, նոր զժողովութիւն մի՛ յարուցանէք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդօրինակ) Եստի Ատենադպիր էֆէնտին թող ետ աւելու այն նախատինքը՝ զոր ըրաւ մեզի. միթէ Վարչութիւնն իրեն համար ըրած տպագրական ծախքերն իւր քսակէն կը վճարէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Շարունակելով) Չվայեր որ Վարչութեան դէմ այսպիսի ծանր խօսքեր ընէք՝ մինչ նա բացակայ կը գտնուի. պէտք է անոր ներկայութեան խօսիլ վեհանձնաբար և ոչ կրիւք. եթէ այսպիսի խօսքեր շարունակէք՝ պիտի ըստիպէք զիս ատենանը դոցել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենադպիր էֆէնտին ըսաւ թէ այս նստէն ըսկըսեալ ուրիշ կերպով պիտի տպուին ատենագրութիւններն. ստո՞յգ է այս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արդէն Տնտես. խորհուրդ և մեր դիւանին մէջ այսպիսի խորհուրդ մը կար, չորս հինգ ամիս յաւաք, և ես պայմանագրութեան մէջ մէկ երկու սրբագրութիւն ընելով յանուն դիւանին հաւանութիւն տուի, բայց կախ մնացած էր. հիմա ըստ որում Ատենադպիր էֆէնտին կըսէ թէ ներկայ նրատէն սկսեալ պիտի գործադրուի, ըսել է թէ որպէս առած լինցած է Վարչութեան մէջ:

ԱՏԵՆԱՂՊԻՐ ԷՖ. — Խնդրեմ, Փախազեան էֆէնտի, ինձի համար ըսիք թէ ժողովոյ նախատինք ըրաւ, որն է նախատական խօսքս՝ բացատրեցէք. ես

ոչ միայն ժողովոյ նախատինք ուղղելու նպատակաւ խօսք մը չուղղեցի, այլ նախ իմ խօսքերէս այդպիսի հետևութիւն չը կրնար եղնել. չեմ դիտեր թէ Փախազեան էֆէնտին ո՞րիկէ կը հանէ այդ հետևութիւնը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Դուք մեզի կըսէք որ ատենագրութեանց գիտնորը չըճարելուս համար ատենագրութիւնք ժամանակին չեն հասնիր, ես ալ կըսեմ որ Վարչութեան ըրած աւելորդ ու անտեղի ծախքերն են պատճառ ատենագրութեանց տպարանէն ուչ եղնելուն: Այս խօսքս արձանագրեցէք:

ԱՏԵՆԱՂՊԻՐ ԷՖ. — Ես ըսել ուղղեցի թէ երեսփոխաններէն անոնք որ ատենագրութեան համար պարտք ունին, պէտք է վճարեն, որպէս զի ժողովին տպագրական ծախքերը հակառակուն գէթ մասամբ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ. ըսիք թէ աւելի բողոքողներն անոնք են, որ իրենց պարտքը չեն հատուցաներ:

Ատենագետ փաշան տեսնելով որ երեսփոխանք հետզհետէ մեկնելով իր սակաւաթիւ մնացին, և ներկային մէջ յուզմունք տիրելով, կանոնաւոր վեհապետութիւնն անդամ անկարելի կըլլայ, ատենանը փակեց ժամը 9 ին:

ԱՏԵՆԱՂՊԻՐ
Գ. Յ. ՄԵԼԻՔ

ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. ԱՍԻՍԵՆԱՅ

ՈՒՂԵՐԶԲ ԵՒ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԻՔ

Թեթեքեղաբ յաւուր այցելութեան Մեծ-
Եպարքոս Միտնաթ փառայի 'ի Պատ-
րիարքարան Հայոց՝ յիններորդում
աւուր ամսեանն յունվարի 1877:

Ուղեր: Մատուցեալ Սէնն պէն:

Հայոց ազգին երեսփոխանական Ժո-
ղով պանդամները Ձեր Բարձրութեան
ներկայանալու շնորհին արժանացած Ը-
լալուն համար ինքզինքնին երջանիկ կը
համարին: Ի վաղուց անտի մեր ազգին
կայսերական կառավարութեան շնորհի-
վայելած խնամքն ու արտօնութիւնքը՝
Ձեր Բարձրութեան օրով տեղի ունեցած
օգուտակար և գեղեցիկ գործոց վրայ բար-
դեղով, այս մասին ունեցած շնորհակա-
լութիւննիս ըստ արժանւոյն յայտնելու
անկարող կը գտնուիք, ուստի կը բարե-
մտութեամբ միայն՝ որ բարձրեայն Ատուած
երկար կեանս պարգևեցցէ մեր Վեհա-
փառ և բարեխնամ կայսեր:

Արեւաբոսոմբէան Մեծ-Եպարքոս Միտնաթ
գաւառ:

Օսմանեան կայսրութեան հպատակ
անապան ազգաց պատմական կեանքը
անելու առեւննիս, կը տեսնուք որ Հայոց
ազգին առ Օսմանեան պետութիւնն ու-
նեցած հպատակութիւնն ու սերտ կա-
պակցութիւնը մասնաւորութիւն մ'է, նոյն
ազգին ինքնայօժար փափաքանք Օսմանե-
ան դրօշակին ներքև հաւաքուի ուղեկէն
կեամբ եկած: Անցեալ դարերուն մէջ
Հայք իրենց միութեան կապը և քաղա-
կական դերքը խղուելուն պատճառաւ աշ-
խարհի դանազան և հեռաւոր տեղերը ցըր-
ուելով, այն ինչ ազգութիւննին ջնջուե-
ան մերձեցած էր, Յովակիմ վարդապետին
Օսմանեան պետութեան հովան-
ւոյն տակ ապաստանեցան, և ահա նոյն
Օսմանական 'ի վեր' որ չորս հարիւր այս-
տեղ տարի կընէ, Հայք իրենց կրօնքն ու
ազգութիւնը պահպանելով՝ կատարեալ

անդորրութեամբ ու հանգստութեամբ
ապրեցան, և փորձով ու արդեամբ՝ ցոյց
տուին այն բարեհամարոյր կենցաղակցու-
թեան ոգին, որ քաղաքակրթութեան և
մարդավարութեան վեճով յատկութիւն-
ներէն մէկն է, և վերջին դարուս մէջ ալ
ուսմամբ բարոյականութեամբ և արհես-
տիւք իրենց ազգային բարքն ու սովորու-
թիւնները չեղազարդելու մասին ջանա-
ղիւր գտնուեցան: Այսպէս Հայոց ազգը
թէ՛ ազգային և թէ՛ մարդկային յատկու-
թիւնները ճաննցած և սոյն յատկութեանց
կարևորութիւնն զգացած ըլլալով, մեր
Վեհափառ կայսեր առհասարակ իւր բո-
լոր հպատակաց համար շնորհած Սահմա-
նադրութեան համեմատ Օսմանեան պե-
տութիւնը կազմող բնական տարերաց մէջ
կը գտնուի, և իւր ընդհանուր հայրենակ-
ցաց հետ ընդգրկած Օսմանեան դրօշա-
կին յարգն ու պատիւը պաշտպանելու
գործն իւր ազգային և քաղաքական բո-
լոր իրաւունքներուն պիտի նախադասէ,
և ես իմ հայրենակցացս հետ հաւաստի
եմ որ Հայոց ազգն այս մասին ամեն աշ-
խատութիւն նուիրելէ ետ չպիտի մնայ:

Արեւաբոսոմբէան Սրբազան Պարթևաբ հօր:

Տէ՛ր իմ, մեր պարտաւորութիւնն է
չարունակ ազօթոյ լինիլ առ Ատուած .
սակայն այս պահուս իմ բարեմաղթու-
թիւններս զլիաւորապէս երկու կէտի
յատկացուցած եմ. նախ՝ կը բարեմաղ-
թեմ որ բարձրեայն Ատուած Օսմանեան
պետութիւնը շրջապատող ներկայ հոգերը
բոլորովին ջնջելու և փարատելու չոր-
ընէ. և երկրորդ՝ ընդհանուր Օսմանեան
հպատակաց այսօրուսն օրս ունեցած եղ-
բայրական յարաբերութիւնը յարասե-
լարունակել տալու շնորհ ընէ:

Տէ՛ր իմ, դուք՝ որ մեր հպատակասէր
Վեհափառ կայսեր փոխանորդութեան
բարձր պաշտօնն ամենայն արժանաւո-
րութեամբ վարող, և քաղաքակրթութեան
ու երկրին շինութեան յոռաջացման մա-
սին Նորին Վեհափառութեան ունեցած

բարենայատակ դիտարութեանց ՚ի փաստ
Օսմանեան երկրին գործադրութեանը
համար քան զամենքս գերազանցող Վեճ-
Եսպարթոն էք, և Օգոստոսիտ կայսեր
մեծ հողին ու գեղեցիկ սիրան անձնա-
ւորած էք բարոյապէս, այսօր ՚ի Պատ-
րկարարան մեր այցելութեան զիջանե-
լու շնորհ ընելով՝ զամենին ալ անպատու
բերկրութեամբ լիացուցիք և մեր վշտաց
մեծապէս մխիթարութիւն պարգևեցիք:
Ուստի ՚ի զինաց աշխարհիս չորս կողմը
ընակող միտնաւոր Հայոց շնորհակալու-
թիւն կը յայնեմ:

Զեր բարձր այցելութիւնը մեծ շնորհ
մ'է մեզ, այնպիսի շնորհ մը՝ որուն Պատ-
րկարարանիս դիւանին մէջ ոսկի տատե-
լով իսկ արձանագրուելը բաւական չէ:

Մեք՝ Օսմանեան հպատաներս հինգ
հարիւր տարւան հօր մը զաւակներն ենք-
թէ է երբէք եղբարց մէջ մինչև ցարդ ան-
համաձայնութիւնք սեղի ունեցան, մեք
մեր հօր՝ այն է Վ. Ե. հարիտ կայսեր և Օս-
մանեան գահուն պարտուկառուցած յար-
զանաց և հաստատութեան մասին սրս-
կատուօր չբռնուեցանք. ստի ամենայն
պարձանօք կը յայտարարեմք. Օսմանեան
պետութիւնը մեզից աւելի հաւատարիմ
հպատակ չունի. Հայոց ազգին հաւա-
տարութիւնը չէ թէ արտաքին ցոյց մ'է,
այլ ճշմարիտ և սրտազին: Օսմանեան
մեծ ազն ՚ի բնէ ասիական ըլլալուն, մեր
իրաւունքն է ըսել թէ անոր աննեն զը-
բացի եղբարը Հայոց ազգն է: Մեք կա-
րող կ'զգամք ինքզինքնին ծոռայել այն
ձեւնարկութեանց, որ Զեր Բարձրու-
թեան շնորհս ՚ի լոյս եկին:

Զեր այս այցելութիւնը՝ մինչև ցարդ
իրարմէ հեռի պտըտող մէկ հայրենեաց
եղբայրները յօշիւ սիրոյ պիտի միացնէ.
հետևապէս՝ սորա շարունակութեանը փա-
փաքանօք միասիրտ և միաբերան կը բա-
րեմաղթեմք առ Բարձրեալն Ստուած,
գոչելով. « Կեցցէ՛ Օգոստոսիտ կայսրն
մեր Սուլթան Ապտիւլ Համիտ երկրորդ.
Կեցցէ՛ նորին հազուադիւտ Եսպարթոն
Միտնաթ փաշա: »

Ուղեք: Եսպարթոն Տէրբն Եֆեսիք:

Կայսերական հրամանաւ հաստատեալ
Ազգ. Սահմանադրութեան համաձայն ընտ-
րուած ազգային ժողովոյ անդամք, որ Օս-
մանեան հողին մէջ ընակող ընդհանուր
Հայոց երեսփոխաններն են, երևանիկ կը
համարին ինքզինքնին՝ Զեր Բարձրութեան
՚ի Պատրկարարանս մեր ըրած այցելու-
թեան մասին Հայոց ազգին զգայած ըլ-
նորհակալութեան և բերկրանաց թարգ-
մանը հանդիսացած ըլլալուն համար:

Հայոց ազգը 500 տարւան անձուէր
հաստատութեանին Օսմանեան գահն
ընդգրկած, սրտանց սիրած է զայն աչ-
քին լուսոյն պէս, և իւր կրօնական ա-
զատութեան հետ պահպանած է նաև
իւր կրօնական և քաղաքական գործոց
փառչութիւնն՝ որ ՚ի փաղուց անտի Օսման-
եան պետութեան կողմէ շնորհուած հաս-
տատուն արտօնութեամբք արահայեալ է:

Թանկութիւնք հաստատութեանէն ետև
Զեր Բարձրութեան Վեճ — Եսպարթոն-
թեան միջոցին հրատարակուած Օսման-
եան Սահմանադրութիւնն՝ անտարակոյս
ընդհանուր փառչութեան գործադրութիւ-
նը զորացնելով, Օսմանեան պետութեան
ոյժն ու փառքը պիտի նորոգէ և ըստ-
ւարացնէ, հետևապէս երկիրն ու հայրեն-
իքը այս բարձր շնորհս համար Օգոստոս-
իտ Սուլթան Համիտ Խան կայսեր և
նորա Վեճ — Եսպարթոն ու Օսմանեան երկ-
րին առաջին հայրենապէրն եղող Միտն-
աթ հաթ փաշային երախտապարտ պիտի մը-
նան:

Կեցցէ՛ մեր Վեհափառ կայսրն. կեց-
ցէ՛ Բարձր Միտնաթ փաշան. կեցցէ՛ ազ-
գըն Օսմանեան:

Ուղեք: Փոփուզեան Գետք Եֆեսիք:

Օսմանեան տէրութեան հովանաւորու-
թեան ներքև զսնուող այն Պատրկար-
բարանն՝ որ մինչև ցարդ այսպիսի շնորհ
մը արժանացած չէր, այսօր պատիւնե-
ցաւ փառք այցելութեան այն Բարձր

Մեծ Եպարքոսին՝ որոյ նուստն ծառայն
են: Քնդհանուր Հայոց ազգը հրճուեցաւ և
իւր շնորհակալութիւնը կարող չէ յայտնելը:
Բարձրեալն Աստուած հաճեցի երկար
կեանք պարգևել մեր Օգոստափառ Սուլ-
թան Ապտիւլ Համիտ կայսեր, և ներկայ
խնդրոց առթիւ Ղազի տիտղոսը շնորհել

Նորին Վեհափառութեան:

Յետ այսորիկ լրագիրք և պատմու-
թիւնք Ձեր Բարձրութեան գովեստներու
վը թող զարդարեն իրենց էջերը: Ձեր
բարձր պաշտօնին մէջ ամենայն յաջողու-
թեամբ շատ ապրիք՝ Միտհաթ փաշա:

Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Սոցն ատենագրութեան տպուած ժամանակ՝ նախորդ ատենագրութիւնը (որ
ուրիշ տպարանի մէջ կը տպուէր) զեռ տպեալ ըլլալուն, թերթահամարները ծա-
նոթ չէին: Բայց այժմ տպեալ ըլլալով, թերթահամարին շարունակութիւնը կըր-
ցու ճշդուիլ, որ պիտի ըլլայ 551 էն 556:

Diese ...
 ...
 ...
 ...
 ...
 ...

...
 ...
 ...
 ...
 ...

VEREIN

...
 ...
 ...

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բացում 1876 Ամին

Ն Ի Ս Տ Ժ Ը

11 Փետրվար 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՐ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Ա. Ժ. Ժ. Ժ.)

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓՈՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԲ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԲ

- ԵԿԵՂԵՍՏԻՆԻ
- 1 Խորեն Արքեպ. Նար Պէյ Բ. 2
 - 2 Կարապետ Ե Սերբեյեան Բ. Պ
 - 3 Մաթթէա Ե Իլիլիբեան
 - 4 Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
 - 5 Գարեգին Ե Թաթարեան Բ
 - 6 Խորեն Ե Կիրայեանց
 - 7 Շմայեակ Ե Գինարեան Բ. Պ
 - 8 Գովհաննէս Ե Փայազեան Բ. Պ
 - 9 Ներսէս Ե Այանեան
 - 10 Պողոս Ե Խաչատրեան Բ. Պ
 - 11 Եղիշ Ե Աղաճունի
 - 12 Արիտակէս Ե Քաչ. Վարդ Բ. Պ
 - 13 Գեորգ Ե Արծրունի
 - 14 Գրիգոր Ե Աճէմեան
 - 15 Խորեն Ե Փէշիփան. Բ. Պ
 - 16 Զարուբիւն Ե Սերոբ.
 - 17 Գովհաննէս Ե Մկրեան
 - 18 Ստեփան Ե Ստեփան. Բ. 3
 - 19 Սահակ Տ. Ե Սարգսեան

- 22 Գէորգ Սահարաճեան Բ. Պ
 - 23 Խաչիկ Մանկասարեան Բ. Պ
 - 24 Կարապետ Աղարտաճ. Բ. 2
 - 25 Համբարձում Մաղպուբեան
 - 26 Մինաս Գափամաճեան
 - 27 Գովհաննէս Պոյաճեան Բ. 2
 - 28 Ն. Ալպարեան Տօբթօր Բ. 2
 - 29 Պօղոս Պառնասեան
 - 30 Գովհաննէս Սուրբնեան Բ. Պ
 - 31 Սարգիս Աղարեկեան Բ. 2
 - 32 Մահակ Ապրօ Բ. Պ
 - 33 Սեփեքերիմ Մանուկեան Բ. Պ
 - 34 Փէշտրմաճեան Տօբթօր
 - 35
 - 36
- (Բ. Վ. Ի. Ժ. Ա. Կ)
- Պէշիփալ
- 38 Բարսեղ Հայաճեան
 - 39 Կարապետ Ս. Իւթիւճեան
 - 40 Զարուբիւն Մարգարեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԻՑ

- (Ա. Վ. Ի. Ժ. Ա. Կ)
- Գուճաղափու, Կէտիկ փառաւ և Գուճաղափուի դուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան
-
- Բ. Բացակայութիւն առաջին
- Բ. Բացակայութիւն երկրորդ
- Պ. Բաց. բանաւոր պատճառ :

- ԵՆՆԻՂԱՄԻՆ
- 41 Խաչատուր Ղազարոսեան
 - 42 Կարապետ Գ. Փափազեան Բ. Պ
 - 43 Մարուգէ Ֆրէնկեան
 - 44
- ԻԵՍԻԽԱՍԱՐ Ս. ԽՈՅ
- 45 Գովհաննէս Շահեան Բ.
 - 46 Գովսէփ Ս Մաղրմեան Բ. Պ
 - 47 Արքեպ. Պամաճեան
 - 48 Ստեփան Ասլանեան

- ԻԵՍԻԽԱՍԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ
- 49 Միհրան Պահճէքափուբեան
 - 50 Գովհաննէս Ճիւաճեան Բ.
 - 51 Նիկողոս Արճաճեան Բ. 2
 - 52 Տրդատ Փափազեան Բ.

- (Գ. Վ. Ի. Ժ. Ա. Կ)
- ԲԵՐԱ և ԳԱՍՐՄ փառաւ
- 53 Աբիկ Ունճեան
 - 54 Գրիգոր Սէլիմիճեան
 - 55 Մարտիրոս Գ. Տիլեան
 - 56 Միքայէլ Մամիկոնեան
 - 57 Նճան Քաղազեան
 - 58 Ստեփան Խնկիրեան Բ. Պ
 - 59 Տեղումբ Մ. Էքսէրճեան Բ.
 - 60 Իլիաս Չայեան
 - 61 Զարուբիւն Նորատունկ.
 - 62 Գրիգոր Մարկոսեան

- ՄԻՋԱԳԻՂ
- 63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
 - 64 Գալոր Կոստանդեան Բ. Պ
 - 65 Գալոր Պ. Նորատունկ.
 - 66 Գովհաննէս Արայեկեան Բ. Պ
 - 67 Տիգրան Եռսուֆեան
- Պէյքօղ և Ղալաթիա
- 68 Գ. Մէրեշի՛-Գուլի

- (Կ. Վ. Ի. Ժ. Ա. Կ)
- ՂՈՂՈՂՈՆՃԱՐ և ԻՃԱՏԻԿ
- 69 Գովհաննէս Լասեան
 - 70 Ստեփան Պէլիկեան Բ.

Գատըգիւղ	ԳԱՆՍՈՒԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՔ	Մուչ
74 Կարապետ Շահպաղեան Բ. 2	Կորին	121 Ստեփան Պ. Պ. Փափաղեանց
72 Մկրտիչ Մուրատեան Բ. Պ	101 Մանուկ Արամեան Բ. Պ	Տիվրիկ
Շարլըց արու	Քէօթաշեա	122
73 Յակոբ Եկմէնիճեան Բ. Պ	102 Մ. Փափաղեան Տօքթօր	123 Զէյթուն և Մարաշ
Ենիմահալէ Սամթիոյ	Աղբիւնուպօլիս	Տրապիզոն
74 Օղտէն խճառարեան Բ.	103 Ռուբէն Կիւմիւշէլէրու Բ. Պ	124
Թօլղափու	Նիկոմիդիա	Պաղտաս
75	104	125
Էյուպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	Սկն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլքեան	105 Պետրոս Միսաքեան	126
Գուրուչէմէ	Գարահիսար	Վան
77 Աստիա Իլիտպաղեան Բ.	106	127 Աիմոն Մաքսուտեան Բ. Պ
Հիսար և Պոյաճի գիւղ	Արարիկեր	Աղթամար
78 Յովհաննէս Նուբեան Բ.	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր գիւղ և Սթէնիա	Բաղէշ	129
79 Ղազար Հովուեան	108	Սերաստիտ
Պալատ	Պրուսա	130 Մկրտիչ Մէլքեան
80 Մկրտիչ Գ. Էսաեան	109 Գ. Ղազարուեան	Ռուսճուխ
81 Յովհաննէս Կրճիկեան	Եւդոկիա	131
82	110 Մելքոն Հալոճեան Բ. Պ	Կարս
Գարակճօմրիկ	Ամասիա	132 Արրահամ Յ. Ալվաղեան
83 Յարութիւն Զէնճիրճեան Բ. Պ	111 Համարձուժ Սլաճաճեան	Զմիկածաբ
84 Յարութիւն Գ. Տառեան Բ. Պ	Բալու	133 Համարձուժ Սարըբէշի Բ.
(Ե. Վ. ԶԱԿ)	112 Յովհաննէս Աղնաւոր Բ. 2	134
Սամաթիա	Եդեսիա	Պտանա
85 Ալքսան Պէշիրեան Բ. Պ	113 Յակոբ Իւթիւճեան	135
86 Աւետիս Բօթլեան Բ.	Մանճըլլու	Սըղերդ
87 Եղիազար Մէլքեան Բ. 3	114	136 Մարտիէոս Ալքրոսնեան
88 Մինաս Յաֆնաֆեան Բ. 2	Հաճըն	Եօղտատ
89 Յակոբ Քաղաղեան	115	137 Լօղօֆէթ Պալեօղեան
90 Յակոբ Ամասեան	Երզնիկ և Բաբերդ	Մալաթիա
91 Նաղարէթ Շահպաղեան Բ. Պ	116	138
92	Թէքլրտաղ	Իզմիր
93	117 Տիգրան Գ. Անանեան Բ. 2	139
94	Կեսարիա	Եգիպտոս
Խոսպիւղ	118	140
95 Աւաքել Աղթուն Տիւրրի Բ. 2	Խարբերդ	
96 Խաչատուր Պ. Միսաքեան Բ.	119 Յովհան Եղճեան	
97 Ռէթէոս Պէյլիճեան	Պալըբէսէր	
98 Սարգիս Արապեան Բ. 2	120 Յովհաննէս Յովակիմեան	
99 Սարգիս Արաւամեան Բ.		
100 Սիմոն Մէքայէլեան		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Տեղեկագիր Դաստիարակության ժամանակի վերջի դաստիարակության օրերին .
- Բ. Վերահսկման Սահմանադրության . Հարանակման վիճաբանության օրենսդրություն .
Թաղական Դաստիարակության , յերկրորդ ընթերցման :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՆՔ

Ատենը բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 51 երեսօտիանաց , որոց վերջին թիւը յանդեցաւ 55 ի :

Ամենապատիւ Ս. Պատրիարք հայրը տպարութեան պատճառաւ բացակայ ըլլալով Գլխակին առաջարկութեան և ժողովին կամաց համեմատ՝ Տ. Մտովէոս Եպիսկոպոս Իզմիրեան նախադահեց ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսք կուտամ Ատենադպիր Էֆէնտիին՝ նախորդ նստելու ատենագրութեանց մասին բացատրութիւն տալու համար :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Տասնուվեցերորդ նստի ատենագրութիւնը տպուած պատրաստ էր . կը յուսայի որ մինչև հիմա գար , բայց չեկաւ . թերևս մէկ քառորդէն կուգայ : Իսկ ժէ. նստին ատենագրութեանը դալով թէ և մեծ մասամբ տպուած է , բայց չէ աւարտած տպարանի փոփոխութեան պատճառաւ , որն որ ներելի կըր-

նայ ըլլալ այս առաջին անգամին համար . սակայն ես կառաջարկեմ որ յաջորդ նիստին 5 շարաթէն ըլլայ միայն մէկ անգամու համար , որպէս զի ետ մնացած վերջին ատենագրութիւնը հասնելով՝ ամենը մէկէն վաւերացուին :

ԲԱՓԱՄԱՃԵՍՆ Մ. ԷՖ. — Կառաջարկեմ որ վերջին նիստի ատենագրութեան ձեռագիրը կարդացուի :

ՓԱՓԱԶԵՍՆ Ս. ԷՖ. — Եթէ վերջին նստին ատենագրութիւնը պիտի կարդացուի , անկէ առջի ժՁ. նստինն ալ պէտք է կարդացուի . եթէ մէկին հրատարակութիւնը չհասնելուն համար ընթերցումն օրինաւոր է , ինչո՞ւ միւսինն ալ մի և նոյն պատճառաւ օրինաւոր չըլլայ : Բայց ես չեմ կրնար ըմբռնել թէ ինչո՞ւ դեկտեմբեր 10 ի նստին ատենագրութիւնը մինչև ցարդ չհրատարակեցաւ . բացատրութիւն կը խնդրեմ դիւանէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լսեցիք Ատենադպիր Էֆէնտիի տուած բացատրութիւնը . դժբաղդարար ժՁ. նստի ատե-

նազրութիւնը չ' կրցեր հրատարակուիլ և ցրուիլ ժամանակին, և այսօր զայն ձեռքերնիս չունենալով՝ քանի՜ որ անոր պարունակութեանը պիտի չկրնամք փեղեկանալ և վաւերացունել, ի՛նչ ոգուտ կրնայ ընել թէ. ի ձեռագրին ընթերցումն. ուստի եթէ պէտք ըլլայ, սոյն ձեռագրէն ընթերցմամբ տեղեկութիւն քաղելու պայմանաւ, վերջին երկու նստերուն ատենազրութեանց վաւերացումն՝ առաջիկայ նստին կը թողումք:

Իսկ յաջորդ նիստն 5 շաբաթ յետաձգելու մասին Ատենադպիր էֆէնտի ըրած առաջարկութեան դալով, այդ ալ տոտեանի փախման պահուն կրնայ որոշուիլ: Հիմայ կանցնինք ատենական միւս գործողութեանց:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուղեմ. եթէ չհրաւիրէիք Ատենադպիր էֆէնտին բացատրութիւն տալու, ևս չէի պահանջէր զայն. նախընթաց նստին մէջ Ատենադպիր էֆէնտին ատենազրութեանց ասպարտութեան խնդրոյն առթիւ անմարտելի խօսքեր ըրաւ երեսփոխանացս համար. կը պահանջեմ որ կրինէ այսօր նոյն խօսքերն՝ վարչութեան ներկայ եղած պահուն, այն ինչ անցեալ նստին ներկայ չէր վարչութիւնը. կուղեմ գիտնալ թէ վարչութիւնն ալ համախօս է արդեօք այն խօսքերուն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՆՇԱ. — Փափաղեան էֆէնտի ըրած խօսքերը թէ և ատենազրութեանց նկատմամբ, սակայն մասնաւոր պարագայից կը վերաբերին. օրինակի համար՝ ատենազրութեանց մասին եղած խոստման չկատարուիլը, վարչութեան համախօս ըլլալը կամ չըլլալը, եւ, ասոնք զատ խնդիրներ են. թող ներէ Փափաղեան էֆէնտին որ չյուզենք առայժմ այսպիսի մանր խնդիրներ, վասն զի ժամանակը չէ:

1.

ԲԱՅԱՎՈՅՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ փոլան՝ անձնական տկա-

րութեան պատճառաւ բացակայ դանըւող քանի մի երեսփոխանաց անունները՝ թուելէ ետեւ, որք են՝

- Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան,
- Տ. Արիստակէս քահանայ Մամբրէեան,
- Նազարեթ Էֆէնտի Շահապալ,
- ՄԷԼՔՈՆ » Հալաճեան,
- Նշանակել տուաւ ներկայութեան տուումն ըն մէջ:

2.

ՆՏԻՔ ԲՈՎ ԺՊՈՂԱՅ ԱՂԷ. Վարչութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՆՇԱ. — Ժողովոյս վերջին նիստին մէջ՝ ատենազրութեանց հրատարակութեան խնդրոյն առթիւ մեր ընկերներէն Օ. Էֆէնտի Աղբ. վարչութեան ընթացքը սողոտանելով՝ անարդանաց քուէ առաջարկելու միջոցին՝ Էռեղէշը-Քեռէ բառ մ'արտասանեց ուղղեալ սոյն ինքն վարչութիւնն:

Սոյն բառը բեմական լեզուի բնաւին անվայել և Աղբային գործոց մէջ մեղ պաշտօնակից մարմնոյ մը նախատինք ըլլալով, կանոնադրութեան պատճառան տրամադրութիւնը կը հրաւիրէր անգղղիւն ատենախօսին վրայ: Չեր ատենապետը նոյն պահուն այդ ցաւալի խօսուածքին անվայելութեան ատիճանէն գայթակղեալ, թերևս և չուարեալ, միւս կողմէն՝ մեր ընկերին պատճոյ աստիճան թեթեւեղունելու դիտմամբ՝ քաղաքափարութեամբ յորդոր կարդաց նմա յետս կուչել այն նախատական բառը: Եւ թէ պէտք մեր ընկերը յետ կրկին և երեքին յորդորանաց անուղղապէս ետ առնել նիւրոտեցաւ, սակայն նախատինքը մեծ ըլլալով, չէր կրնար գինքը բոլորովին գերծառնել կանոնադրական պատճէ:

Աւստի մտաղիւր էի այսօր սոյն պարագայից համար հարկ եղած կանոնական պատիժը՝ որ է յանդիմանութեան քուէ առաջարկել, զոր դուք պիտի վճուէք առանց վէճի. լայց դիտնալով որ չէք հաճիր՝ առանց մեր ընկերը լսելու՝ որ ըստ կանոնաց իրաւունք ունի խօսք առնուլ գինքն

արգարացունելու համար, վճիռ դատու պարտութեան արձակել, և ըստ որում ինքն ներկայ չէ այսօր, խնդիրը կը ձգենք առավելայ նստին և կանցնինք մեր ուրիշ ստեճական գործոց:

Հիմա այս առթիւ վարչութեան Քաղ. ժողովէն դիր մ'եկած է. այն ալ կարգանք և անցնինք մեր գործողութեանց:

Չայս բնելով Ատենապետ փաշան կարգաց Քաղ. ժողովը նամակն՝ որ է.

Վսեմալայ Ատենապետ փաշա Արք. երեսփոխանական ժողովը.

Ազգային ժողովը վերջին նիստին մէջ՝ երեսփոխաններէն մին՝ Օղաէն էֆէնտի Խօճասարեան, առենադրութեանց տաղարութեան խնդրոյն առթիւ օրինաւոր քննադատութեան սահմանէն շեղելով գլխովին, բեմական բարբառի անուայել լեզուով վարչութիւնը անարգած և հայհոյած է անոր դէմ:

Արք. վարչութեան Քաղաքական ժողովն իւր պաշտօնն Ազգային ժողովէն ընդունած՝ իւր արժանապատուութեան դէմ եղած այս անարգանաց համար պատկառելի ժողովոյդ զիմեղով՝ արժանաւոր հատուցում կը խնդրէ, և վստահութեամբ կ'սպասէ որ Ազգային ժողովն իւր վարչութեան պատիւն ու բարոյական ազդեցութիւնը յարգել տալու համար զարժանն անյսպաղ ՚ի գործ դնէ:

10 փետր. 1877 Մնամբ յարդանօր ՚ի զիմաց Քաղ. ժողովոյ Կ. Պօլիս Ազգ. վարչութեան վստահ Ատենադարի Ֆուլք Քաղաքէան Սեպուհ Մասնաբեան

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք կը խնդրեմ զիտողութեան մը համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդրոյն վրայ խօսք տալու հարկ չեմ տեսներ, խնդիրն ամբողջ յառաջիկայ նստին ձեռնարկէ:

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Չհասկըցած մէկ կէտին համար խօսք և հարցում մը պիտի ընեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուղեմ: ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, Մէրեւնի-Գուլի էֆէնտի, այսօր ոչ հարցում, ոչ բացատրութիւն և ոչ որ և է խօսք չը կայ այս նիւթին վրայ. յառաջիկայ նիստին ժողովն իւր վճիռը պիտի տայ. ինչո՞ւ կը պնդէք. եթէ մեք այստեղ ժողովներ ենք ո՞չ թէ ազգին գործերը տնօրինելու, այլ անձնական կրքերին յարեցունելու համար, աւելի աղէկ կընենք ձգել տեղերին երթալ, որով զէթ բարեկամութիւնն անտեսող զը պահուի:

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Եւ եթէ Օղաէն էֆէնտի յաջորդ նստին չներկայանայ, ի՞նչ պիտի ընենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այն ստեղծ կը մտածենք՝ ի՞նչ պէտք է ընել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ խօսք խնդրեցի կանոնական զիտողութիւն մը ընելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կրնար և ոչ մէկու մը խօսք տալ այս նիւթին վրայ:

3.

Հրաժարագիր և նամակ Սրբազան Պատրիարքին

Ատենապետ փաշան կարդաց Սրբազան Պատրիարքի կողմէն եկած հետեւեալ հրաժարագիրն ու նամակը.

Հրաժարագիր.

Վսեմալուք Ատենապետ Արք. Ընդհ. երեսփոխանական ժողովը.

Անձին տկարութեան պատճառաւ չը կրնալով այլ ևս Պատրիարքութեան զըմբարին պաշտօնը պատշաճապէս և արժանապէս վարել, կը խնդրեմ կը պաղատեմ և թախանձագին կ'աղաչեմ որ այսօր ուրիշ մը ընտրէք փոխանակ իմ, քանզի մինչև ցարդ քանիցս տուած հրաժարականներս չընդունելովիդ՝ ուրիշ բան չըրիք՝ բայց միայն ազգին գործերը բարիք տրնտեսութենէ զրկելով պարսպ ժամանակ անցունել տալու պատճառ եղաք, մինչդեռ

իմ տեղս ազգասէր և առողջ անձ մ'ընտ-
րելով մեծամեծ արդիւնքներ կարող էիք
ձեռք բերել: Ազգին կողքը յարգել
պարտքս է, բայց անկարելին ալ չպա-
հանջել ձեր պարտքն է:

Քաջայայտ եմ որ այլ ևս չէք կրկնել
ուար այսպիսի դիր գրել պատկառելի ժո-
ղովոյդ, որուն իմ յարգանքներս մատու-
ցանելով
Մնամ խոնարհ ծառայ
և աղօթարար փոսն բարեւ
1877 իետր. 11 լաւութեան ազգին
Բերա Ներսէս Եպիսկոպոս

Նժամէ

Առ Պատկառելի Ընդհանուր Ժողովն
Հայոց .

Վսեմ: Ատենապետ Ստեփան փաշա.

Եկեղեցական համադումար ժողովոյ
անդամակիցք մեծազոյն մասամբ և ըս-
տորադրութեամբք՝ ժողովոյ համար մը-
նայուն դիւան ունենալ որոշած են. տես-
նելով և մեր եկեղեցական հարց բազ-
ձանքը՝ մինչև յառաջիկայ մայիսի համար
ըրած դիւանական ընտրութիւններն ըն-
դունեցինք: Ոմանք կը պնդեն թէ՛ Սահ-
մանադրութեան դէմ է այս որոշումը .
ուստի կը խնդրեն որ Ընդհանուր ժողովդ
իւր կարծիքը յայտնէ այս մասին թէ՛ Հա-
մադումար ժողովոյ մնայուն դիւան ու-
նենալը Սահմանադրութեան դէ՞մ է կամ
համաձայն:

Յոռապով որ պատուական ժողովդ կը
բարեհաճի իւր իմաստութեամբը Սահմա-
նադրութեան սոյն տրամադրութիւնը
պարզել, Մնամ ընդմիջոտ աղօթարար
1877 իետր. 8 Պ. Կ.
ի Պատր. Հայոց Ներսէս Արեւիկոպոս

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ
Ս. Պատրիարքի հրաժարագրի մասին:
(Այս միջոցին ատենաբան էֆէնտին
կարգաց կանոնադրութեան 87 ըդ յօդ-
ւածն որ է.)

« Եթէ Պատրիարք Սրբազանը զիւր հը-
րածարականը տայ, պատճառարանեալ

պէտք է ըլլայ այդ հրաժարագիրը: Ժո-
ղովը յետ ընթերցման՝ ատենապետաց
դիւանին նախաքննութեանը կը յանձնէ
հրաժարագիրը, և այս դիւանին եզրա-
կայութեանը վրայ՝ պատճառները քնն-
նելով կընդունի կամ չընդունիր առ-
ջարկեալ հրաժարումը: Եթէ չընդունի,
պատճառարանեալ կը հաղորդէ զիւր ո-
րոշումը Պատրիարք Սրբազանին, որում
միայն կը մնայ որոշել իւր ընելիքը »:

Ուրեմն կանոնադրութեան սոյն տրա-
մադրութեան համեմատ կառավարկեմ
ատենապետաց դիւանին յըլում և անցնիլ
անմիջապէս օրակարգին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ դի-
տուութիւն ընդ չլայ, Փափազեան է-
ֆէնտին առաջարկութեան համեմատ կը
յղենք Ս. Պատրիարքի հրաժարագիրն ա-
տենապետաց դիւանին: Գալով Ս. Պատ-
րիարքի միւս գրին՝ որ Համադումար ժո-
ղովոյ մնայուն դիւանի խնդրոյն կը վե-
րաբերի, այս ալ՝ ըստ որում կանոնական
խնդիր է, և նախաքննութեան կարօտ
պէտք է յղել Նախաձեռնութեան դիւա-
նին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ որում Ս.
Պատրիարքը հրաժարական չըրած է, և
եթէ հրաժարած չըլլար ինք պէտք էր
ներկայացնել այդ առաջարկութիւնը, ուս-
տի օրաձեռել կառավարկեմ մինչև հրաժա-
րական խնդիրը լուծուի:

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Կը ձայ-
նակցիմ Փափազեան էֆէնտինին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում Ս.
Պատրիարքն իւր հրաժարականէն 5 օր
առաջ գրած է այս նամակը, ըստ իմ
կարծեաց նախաքննութեան յղելովն մէկ
կողմէն խնդիրը քննութեան ենթարկած
կըլլանք, միւս կողմէն բնականաբար
ըրածդած:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դի-
տուութիւն ունիմ այս մասին. անցեալ
նտին բացակայ երեսփոխանի մը զրկած
գրաւոր առաջարկութեան առթիւ դիտու-
ղութիւն եղաւ թէ ընդունելի չէ այն՝

բայց եթէ իւր ներկայութեան ատեն : Հիմա Սրբազան Պատրիարքի հրատարած միջոցին և իւր բացակայութեանը տուած մէկ առաջարկութիւնն եթէ Նախաքըն նուիրան յղեմք, կանոնական սխալ մը գործած չէ՞մք մի ըլլար. ա՛յս կողմէն հասկնալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սխալ կը գործենք եթէ կարծիք ընենք որ Ս. Պատրիարքը նոր առաջարկութիւն կընէ . Սրբազան իւր Պատրիարքութեան օրով պատահած դէպքի մը առթիւ հարցում կընէ և կողմէ հասկնալ միայն թէ արդեօք Սահմանադրութեան համաձայն է այն . ուստի արգելք չեմ տեսներ խնդիրը Նախաքընութեան յղելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կըսէք թէ իբր Պատրիարք դիտողութիւն կամ հարցում մը կընէ և բացատրութիւն կուզէ ժողովէն թէ արդեօք Համազումար ժողովոյ մնայուն զիւանի կազմութեան արտօնութիւն ստով Սահմանադրութեան համաձայն վարուած է թէ ոչ : Ես դարձեալ կըսեմ թէ քանի որ Ս. Պատրիարքը հրատարած է, այս արցումը պէտք է մնայ մինչև իւր հրատարական խնդրոյն լուծուելու և եթէ հրատարականը ետ չտանուիւր իւր յաջորդին կը մնայ այդ խնդիրը :

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Կը հարցընեմ զիւանին, միթէ իբրև Պատրիարք ստորագրած է այդ գիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛, իբրև Պատրիարք ստորագրած է և իւր հըրատարագրէն՝ որ այսօրուան թուականը կը կրէ, Յ օր առաջ գրած է այս նամակը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ Փափագեան էֆէնտիի համաձայն պիտի խօսիք, նախ պէտք է հակառակ կողմէն եթէ խօսող կայ, այն լսենք : (Քիչ մը ժամանակ սպասելէն ետքը չարուանկերով.) Եւ ըստ որում ուրիշ խօսք ուզող չկայ, խօսքը Քըրիստոստուր էֆէնտիին է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Սահմանա

դրութեան մէջ չկայ այնպիսի կէտ մը որոյ համեմատ Ազգային ժողովը կարենայ Համազումար ժողովը համար գիծ մը դնել կամ որոշել. Համազումար ժողովն անկախ է Ազգային ժողովէն . աւոր գիտնալիք բանն է իւր դիւանը տարեկան կամ առժամանակեայ կազմել : Այս էր ըսելիքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ դեռ բուն խնդրոյն վրայ բացուած չէ վիճաբանութիւն, աւելորդ է խօսիլ անոր վրայ . պէտք է խօսիլ միայն այն կէտին համար թէ արդեօք օրածագե՞լ պէտք է թէ ոչ նախաքընութեան յղել : Այս մասին որովհետեւ երկու կարծիք երևան ելաւ, պէտք է որ քուէի դնեմ երկուքն ալ :

Չայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ հետզհետէ . Ա. Նախաքընութեան յղելու առաջարկութիւնը . և Բ. պարզապէս օրածագման առաջարկութիւնը : Ժողովը միաձայնութեամբ Օրածագումն ընդունեց :

ՅՐԷՆԿԵԱՆ Մ. ԷՖ. — Հրատարականի խնդիրն ի՞նչ եղաւ . կը խնդրեմ որ հրատարագիրը կարդացուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հրատարակիւն անգամ մը կարդացուեցաւ և լսեցիք . առաջարկութիւն եղաւ ըստ կանոնի՝ ասենապետաց զիւանին յղել նախաքընութեան համար, և որովհետեւ հակառակ խօսող մը չեղաւ, յղումն ընդունուած համարուելով խնդիրը վերջացաւ : Կը մնայ հրատարագիրը վերստին կարդացուելու կէտն, որով արգելք մը չունինք, թող անգամ մ'ալ կարդացուի :

Այս պահուս Ատենադպիր էֆէնտիին կարդաց վերստին Սրբազան Պատրիարքի հրատարագիրը :

4.

Տեղեկաբեր երեսփոխանան ընդհանրական Ատենապետ փաշան ժողովին ներկայացուց Տիգրանակերտու և Տիվրիկի վիճակաց դաւառական երեսփոխանաց ընտրութեան վերաբերեալ երկու տեղեկա

գիրներն, որք Պատրիարքական ծանօթագրով մը Կիւանին մատուցուած էին, և կարգացուեցան՝ որք են.

Ա.

Տեղեւոյի Տէրմանկերոս

Ամեն. Սրբազան Հայր Հոգևոր.

Թիւ 42 և ներկայ ամսոյ 3 թուոյն գրեալ և առ Ժողովս ուղղեալ պաշտօնական նամակ Ձեր Ամենապատուութեան ստացաք, որն որ Զօպանեան Միհրան էֆէնտոյ յերեսօխանութիւն ընտրուելու մասին գրիածնու տեղեկագրին մէջ ընտրական ընկիչ յանձնաժողովոյ նկատած թերութիւնքն ծանուցանելով լրացումն կը պահանջուէր:

Հարցումն

1. Գաւառական ժողովոյ անդամոց և քուէարկուաց թիւն.
2. Ընտրելոյն ստացած քուէից թիւն.
3. Գաւառական ժողովոյ անդամոց հետ նախագահի ստորագրութիւնը:

Պատասխան

1. Ժողովոյս անդամոց թիւն արդէն յայտնի է, բայց նոյն նստին ներկայ եղող և քուէարկուաց թիւն էր երկուսասուն.
2. Ընտրելին ինը քուէ ստացաւ.
3. Ժողովոյս անդամոց հետ առ անգամ նախագահն ալ ՚ի ստորև ստորագրած է:

Ահաւասիկ ըստ բարձու հրամանի Ձեր Ամենապատուութեան՝ պահանջեալ կէտերն ներկայիս նշանակելով կը ներկայացնենք Ձեր ազգասիրութեան. ալ կը մնայ Ձեր բարեհաճ կամաց օր և ժամ յառաջ յիշեալ էֆէնտոյ յանուն Տիգրանակերտի երեսօխան ընդունին և վաւերացումն:

Մնամք միշտ բարձր հրամանի Ամենապատուութեանդ ակնդէտ ՚ի դիմաց դաւառական ընդհ. ժողովոյ Տիգրանակերտի

Ատենաղապր Ատենապետ
Յօաննէս Գաղաղայեան Մ. Թովմաս Մէնքիճեան

Սոյն քուէարկութիւնն և երեսօխանի որոշումն մեր ներկայութեանը լինելուն կը կնքեմք.

Առաջն. փոխանորդ 1876 դեկտ. 22
Տիգրանակերտի Ս.ա.ա. Ն. Հայոց Տ. Յօաննէս Գաղաղայեան ՚ի Տիգրանակերտ

Բ.

Տեղեւոյի Տէրմանկ

Բարձրաշնորհ Պատրիարք Սրբազան Հայր և Վսեմաշուք էֆէնտիք Ազդ. ընդհ. վարչութեան.

Ձեր Բարձր Սրբազնութեան յունիս 19 թիւ դրութիւնն ընկալաք, որով դաւառիս կողմանէ ցուցուած երեսօխանի մասին հինգ օրինական պայմաններու յայտնուած չըլլան յիշելով սոցա կատարելութիւնը կը պահանջուի:

Որոց առաջնոյն համար կը պատասխանեմք թէ ՚ի դիմաց Պատրիարքարանիդ երեսօխանի ընտրութեան մասին այդ օրինակ մասնաւոր հրահանգ մի ստանալու չեմք բողոքուորած. — Բ. ին և այլոց նմար թէ և քուէարկութիւնը գաղտնի կատարած եմք ըստ օրինի Սահմանադրութեան, սակայն ի գղուութիւն ձանձրութեան Ձերդ Վեհութեան չէինք մանրամասնած. բայց այժմ այդ օրինակաւ պայմանները լրացնելու հարկը տեսնալով ահա առաջի առնումք: Ըստ թուոյ գաւառական ժողովոյ 21 ընտրող ժողովականաց երեք անձանց վերայ գաղտնի քուէարկութեամբ ընտրութիւնը կատարուեցաւ, որոց առաջինը այն է արդէն յիշեալ ՚ի Մէրճանն զբաւաճառ նշանիկ էֆէնտին նոյն 21 թուոց քուէարկուաց 17 քուէին արժանաւորելով՝ ըստ օրինի տեղւոյս ներկայացուցին լինելու իրաւանց տիրացած է:

Վասնորոյ և մեք յօժարութեամբ սըրտի յիշեալ էֆէնտին Տիգրիկոյ օրինաւոր երեսօխանն ձանչելով և ընդունելով՝ կը խնդրեմք վեճ ժողովեդ որ բարեհաճք վաւերացունել նորին պաշտօնը ՚ի համար զոր իշխանութիւն և յանդամակցութիւն

Ազգ. Ընդհ. երեսփոխանական Ժողովոյ
ի յառաջադիմութիւն զաւտարի :

1876 օգոստ. 14 Մնամբ անձնուէրք ազգիս
ի Տիւրիկ ասկնախոնարհ ծառայք
Փոխանորդ Առաջն.

Տ. Պաղարտար
Ատենապետ
Սարգիս Մենենրեան

Գ.

Ծանօշագրէր Սրբաշան Պարբերէի

Վսեմախայլ Ատենապետ փաշա ազ-
գային երեսփոխանական Ժողովոյ .

Ազգային Ժողովէն պահած Տիգրա-
նակերտի և Տիւրիկի վիճակաց դատաւ-
ական երեսփոխանաց տեղ նոր ընտրու-
թիւն կատարուած և տեղեկագրերը գա-
ւառական Ժողովոց կողմէն հասած ըլլա-
լով, Պատրիարքարան քննեց ընտրելոց
սահմանադրական հանդամանքը և Սահ-
մանադրութեան համեմատ գտաւ : Ըստ
այսմ Տիգրանակերտէն երեսփոխան ընտ-
րուած է Միհրան էֆէնտի Չօպանեան և
Տիւրիկէն Նշան էֆէնտի Գարագաշեան :

Սոյն ընտրելոց յանձնառութիւնն ալ
սպառնալուած ըլլալով, գաւառական Ժո-
ղովոց տեղեկագրերուն հետ ներկայ ծա-
նօթագիրս կըմատուցանեմք Ազգային Ժո-
ղովոյդ ի փաւերացումն :

10 փետրվար 1877 Մնամբ աղօթարար
ի Պատրք. Հայոց Պ. Կ. Ներսէս Աբեղա .
Կ. Պոլիս

Յետ ընթերցման Ատենապետ փաշան
ի գիտողութիւն հրաւիրեց երեսփոխան-
ները նախ Տիգրանակերտի գաւառական
երեսփոխանի ընտրութեան տեղեկագրին
վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Կտորու-
թիւն ունիմ կէտի մը վրայ . տեղեկագրի-
րը գաւառական Ժողովոյ ներկայ անդա-
մոց և քուէարկուաց թիւը 12 է կըսէ .
բայց Ժողովոյն անդամոց ընդհանուր թիւը
չյիշատակեր և Պատրիարքարանիդ յայտ-
նի է ըսելով կանցնի . սկտք էր նշանա-

կել թէ Ինչ պատճառաւ պահած է դա-
ւառական Ժողովոյ անդամոց թիւը , քանի
որ Պատրիարքարանն ալ հարցուցեր է .
որովհետեւ գաւառական Ժողովոց անդա-
մոց թիւն ըստ տեղւոյն 21 էն մինչև 70
կընան լըլալ ըստ գաւառական հրահան-
գի վարչութեան :

ԱՏՆՆԱՊՈՍԵ ՓԱՇԱ. — Քանի որ տե-
ղեկագիրը կըսէ թէ Պատրիարքարանի դի-
ւանատունը դիտէ Տիգրանակերտի Ժո-
ղովոյ անդամոց թիւը , նորէն Տիգրա-
նակերտ դրել հարցնելն տւելորդ է և
անվայել . կընանք Պատրիարքական դի-
ւանատունէն խնդրել պատասխանը . բայց
ըստ որում մանր պարագայ մ'է այս ,
թերևս այժմ ոչ որ կընայ յիշել և ղեկու-
ցանել մեզ . հարցնեմք ղիւանապետին .
եթէ կը յիշէ թող պատասխանէ մեզ :

Այս միջոցին ղիւանապետը տեղեկու-
թիւն տուաւ թէ Տիգրանակերտի գաւա-
ռական Ժողովոյ անդամոց թիւը 21 է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պատրիարքա-
րանը 5 հարցում ըրեր է , ինչպէս կերեի
տեղեկագրէն . հարցումին մէկն այն է թէ
քանի է գաւառական Ժողովոյ անդամոց
թիւը . ըսել է թէ Պատրիարքարանը չգի-
տեր եղեր և հարցնել հարկ տեսեր է :
Իձայնդրութեան համար չէ ըսածնիս .
քանի որ Պատրիարքարանը հարկ դատեր
է հարցնել , պատասխանն ալ սկտք է ին
տալ . չտալին պակասութիւն է :

ԻԻՓԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իբրև անգամ
ընտրական քննիչ յանձնաժողովոյ վար-
չութեան քանի մի Խօսքով պարզեմ իրն-
դիրը : Սովորութիւն է ընտրական տեղե-
կագրոց մէջ յիշատակել թէ Ժողովին
այսչափ անդամներէն այսչափին ներկա-
յութեամբ և քուէովն ընտրութիւնը կա-
տարուեցաւ . ասիկա ընտրական տեղեկա-
գրոց համար օրինական ձև մ'է : Տիգրա-
նակերտէն եկած նախորդ տեղեկագրին
մէջ յիշուած չէին այս կէտերը . անոր
համար հարցնել տուինք . այժմ եկած
պատասխանին մէջ կըսէ թէ արդէն թիւը
յայտնի է . և յիրաւի գաւառական Ժո-

ղովոյ կազմութեան տեղեկագրէն յայտնի եղած է անոր անդամոց թիւը. ըսել է թէ տեղեկագրին օրինական թերութիւնը լրացած է արդէն, որով կատարուած երեսօխոսանական ընտրութեան վաւերացման համար արգելք մը չէ մնացած:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեր ընտրական յանձնաժողով չեմք ճանչնար պաշտօնապէս. բայց տեղական տեղեկագիրն և Պատրիարքական վկայագիր ունինք ձեռքերնս, անոնք պէտք է քննենք. հիմա լեցիք ասոնց վրայ արուած բացատրութիւնը. ուստի քուէի կը դնենք Տիրքանակերտի մէջ կատարուած ընտրական գործողութիւնը. ով որ վաւերական կը դատէ, ձեռքը վեր վերցնել չնորճ ընէ:

Ժողովը 1 քուէի հակառակ ամենաւե՛ մեծ մասով ընդունեց և վաւերացուց Զօւպանեան էֆէնտիի ընտրութիւնը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագիրը պակասաւոր կը դատեմ, բայց ոչ ընտրութիւնն անվաւեր:

Յետոյ՝ Ատենապետ Բաշան Տիրքիկի գաւառական երեսօխոսանի ընտրութեան տեղեկագրին վրայ ալ 'ի դիտողութիւն հրաւիրեց երեսօխոսանները. սակայն տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ, անմիջապէս զայն ալ քուէի դրաւ, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ Ժողովէն:

Հետեապէս՝ ըստ վճռոյ Ժողովոյն երեսօխոսան հոշակուեցան՝

Միհրան էֆէնտի Զօպանեան
Նշան » Գարագաշեան.

Յ.

Տեղեկութեան դիտանակաւ

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենական գործողութիւնն ինքեզ առաջ պարտք մը ունիմ կատարելիք: Անցեալ նստին՝ Ժողովը յանձնարարութիւն մ'ըրած էր ինձ, կուզեմ անոր վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրել. կը յիշեք անշուշտ որ մեր ընկերներէն Եֆէնտիեան էֆէնտի բողոք

մը զրկած էր աստ՝ յայտնելով թէ իւր երեսօխոսանական պատուոյն դէմ անարգանք մ'եղած է. այս խնդրոյն համար գրեցի նմա և մանր պարագայիւք տեղեկութիւն խնդրեցի և ստացայ, զոր երկու խօսքով կրնամ յայտնել ձեզ:

Նախկին Մեծ Եպարքոս Միտհաթ փաշային մեր Պատրիարքարանն այցելութեան եկած օրն Եֆէնտիեան էֆէնտիի Սրբազան Պատրիարք հօր մերձենալով կըսէ թէ Քաղ. ժողովոյ ճառը չպիտի կարգացուի: Նորին Սրբազնութիւնն ալ մեր ժողարար ըսեր է թէ դու ո՞վ ես և ի՞նչ իրաւամբ կը խօսիս. և վերջապէս՝ ըստ Եֆէնտիեան էֆէնտիի, անպիտան բառն ալ արտասաներ է: Ահա այս կէտն է որ Եֆէնտիեան էֆէնտի իւր երեսօխոսանական պատուոյն արատ համարելով բողոքելու նիւթ ընտրած է իրեն: Իսկ միւս կողմէն ստուղբցի որ Եպարքոսին գալու վրայ եղած առեւն՝ այն ինչ Ս. Պատրիարքըն ոտքի վրայ կը շտապէ իջնալ զնա դիմաւորել, նոյն շփոթութեան մէջ Եֆէնտիեան էֆէնտի Նորին Սրբազնութեան կը մերձենայ և չդիտենք ի՞նչ իրաւամբ յանուն երեսօխոսանութեան խօսելով կը բողոքենք, չենք ընդունիր եւ խօսքեր կընէ: Նորին Սրբազնութիւնն ալ՝ առանց անոր ով ըլլալը ճանչնալու ժամանակ ունենալու, մերժողական պատասխան տուեր է թէ և, սակայն անարգական բառարտասանած ըլլալը չյիշեր Ասկէց յայտնի է որ ոչ Սրբազան Պատրիարքի կողմէն անոր երեսօխոսանական պատիւն անարգելու դիտում մը տեղի ունեցած էրքէք, և ոչ մէկը կրնայ Նորին Սրբազնութեան կողմէն Եֆէնտիեան էֆէնտիի իբր երեսօխոսան անարգուած համարիլ վասն զի եղելութիւնն ամբողջ շփոթութեան մ'արգիւնք է: Ուստի՛ ըստ իս պէտք է զրել Եֆէնտիեան էֆէնտիին թէ իւր երեսօխոսանական պատիւն անարգուած համարելու իրաւունք չունի, հետեապէս պէտք է շարունակել իւր պաշտօնը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Երբ Սրբազան Պատրիարքը կըսէ թէ չեմ անարգած,

ԵՆՎԵՆԻՃԵԱՆ ԷՖԵՆՈՒՆԻ պնդելու չէ . եթէ Նորին Սրբազնութեան բերնէն թուած ալ ըլլայ անարդական բառ մը այնպիսի խառնաշփոթ պահու մը , ԵՆՎԵՆԻՃԵԱՆ ԷՖԵՆՈՒՆԻՆ պարտքն է ետ կենալ իւր բողոքէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՏԻ. — Իբրև յուզեալ ժամանակի մէջ եղած խօսք մը պէտք չէ այնչափ կարևորութիւն տալ և խնդիր ըսել ժողովին մէջ . ես կընդունեմ Ատենապետ փաշային առաջարկութիւնը , այն է գրել ԵՆՎԵՆԻՃԵԱՆ ԷՖԵՆՈՒՆԻՆ Թէ բընաւ զինքը անարգելու դիտում մը ունեցած չէ Ս. Պատրիարք Հայրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Իմ ըրած քննութեան արդիւնքն հասկըցաք և Ղազարոսեան և Փափագեան ԷՖԵՆՈՒՆԻՆԵՐՈՒՆ դիտողութիւնները ըսեցիք . հետեւապէս՝ առաջարկութիւնն քուէի կը դնեմ :

Ժողովը միաձայն քուէով ընդունեց Ատենապետ փաշային առաջարկութիւնն , այն է՝ ԵՆՎԵՆԻՃԵԱՆ ԷՖԵՆՈՒՆԻՆ բողոքին պատասխանել թէ իբրև երեսփոխան աւարդուած չէ երբէք , և հրաւիրել որ իւր երեսփոխանական պաշտօնը շարունակէ :

6.

ԲՈՒՅՈՒՆԻՆ 15 ԵՐԵՎԱՆԻՆ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՏԻ. — Օրակարգին չանցած՝ կանոնադրական դիտողութեան համար խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ներեցէք . տեսաք որ հիմա դաս մը երեսփոխան հետը հետէ խորհրդարանէն մեկնեցան սա՛ղիքը ներկայացնելով դիւանին :

(Եւ Ատենապետ փաշան կարգաց հետեւեալը)

«Նախընթաց նստին մէջ Ազգային վարչութեան դէմ եղած անարգանաց հատուցումը մայր դիւանն անպայման և անորոշ վիճակի մէջ յառաջիկայ նստին թողած լինելով , այս պարագային մէջ ստորագրեալ երեսփոխանքս չեմք ուզեր մեր գործադիր իշխանութեան պատուոյն

պաշտպանութեան անտարբեր կարծուիլ . ուստի և կը մեկնիմք ժողովարանէն՝ բողոքելով այն յետաձգման դէմ» :

11/25 փետրվար 1877

- Յ. Մերեթ-Գուլէ
- Մ. Ֆրէնկեան
- Յ. Աճառեան
- Յ. Նորասրահեան
- Գ. Պերդիբեան
- Յ. Յովակիմեան
- Տ. Փետրեան
- Մ. Գափասեան
- Յ. Կրէնկեան
- Մ. Էսաբեան
- Է. Չալեան
- Ղ. Հոսեփեան
- Ա. Ունեճեան
- Ն. Քաղապետ
- Լ. Պալեոլեան

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՏԻ. — Մարդս տկար է . ունի այնպիսի վայրկեաններ , որոց մէջ կրնայ մտքէն չանցածն ու սրտէն չը բղխածը բերնէն դուրս տալ , և անով իւր դէմինը կրնայ արհամարհեալ համարուիլ : Սակայն անոր հոգին ու սիրտը քննելու է թէ արդեօք կամա՞ւ և գիտութեամբ ըրաւ այդ արհամարհանքը՝ թէ ոչ ակամայ բերնէն սարդելով : Դարձեալ ամեն յանցանք իրեն թեթեւացուցիչ պարագաներ կրնայ ունենալ : Ինձ համար շատ զարմանալի է սա զուգարկութիւնն՝ որոյ առջև կը գտնուինք այսօր : Այն ինչ երեսփոխան մը բողոք կը բանոյն Նախագահ Սրբազանէն անարդուած ըլլալուն համար , վարչութիւնն ալ նմանօրինակ բողոք մը կրնէ երեսփոխանէ մը անարգուած ըլլալուն համար : Երբ Ատենապետ փաշան յայտարարեց թէ Նախագահ Սրբազանին միտքն անգամ չգար այդպիսի անարգանք մ'ընելը , ժողովն զգալով թէ այն եղելութեան մէջ որ և է գիտում մը չկայ , իսկոյն գոցեց խնդիրը :

Նախընթաց նստին երեսփոխան մ'ալ ատենադրութեանց տպագրութեան յապաղմանն ու յետաձգմանը դէմ բողոքած պահուն , վարչութեան դէմ բերնէն թըլլանմանական բառ մ'արտասանեց , զոր հայհոյանք կը կոչէ վարչութիւնը , և առ անմօթոյն , թէ և ոչ բացարձակապէս՝ գէթ կերպիւ իւրք՝ ըրած թշնամանքն ետ առաւ , ինչպէս կը յիշեն ներկայ գտնուող

ները, և դիւանին յայտարարութեամբ այդ միջոցէսը դոցուեցաւ: Այսօր վարչութիւնն անարգեալ ենք ըսելով ըրած բողոքոյն յետաձգման ամօրիւ կը մեկնի ժողովարանէն . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ներեցէք, Փափաղեան էֆէնտի. Նիսա վարչութեան բողոքոյ առարկայ եղող խնդրոյն վրայ խօսելու ժամանակը չէ. այն խնդիրն առաջիկայ նստին ձգուած է արդէն. այսօր վիճարանութեան չընար ենթարկուիլ: Եթէ այժմ խօսելու նիւթ մ'ունենք, այն ալ երեսօխոսանաց մէջ մասին բողոքելով ժողովարանէն մեկնին է, ես կարծեցի թէ անոր վրայ պիտի խօսէք:

ՓԱՓԱՊԵՏ Ա. ԷՖ. — Շատ աղէկ կընեն այդ երեսօխոսան էֆէնտիները չէ թէ առնել քաղցնուն այլ բողոքելուն մասին. վասն զի վարչութիւնն ըսուած մարմինն այս ժողովին ընտրուած է. անոր պատիւը մեր ալ է. ուստի ամենա ալ բողոքելու և հատուցում պահանջելու պարտաւոր ենք կրք վարչութեան պատուոյն դէմ արատ մը դայ: Սակայն պէտք է նըկատել թէ քանի որ օրինակոր պատճառի մը վրայ յետաձգուեցաւ խնդիրն, այն և երեսօխոսաններն որ այն բողոքողի տալով առին քաղցին, միթէ իրաւունք ունին այսպէս ընելու. ոչ երբէք. վասն զի խնդրոյ մը յետաձգումը մերժում չէ: Բայց ո՞րչափ ուրախ եմ տեսնելով որ երեսօխոսանութեան մէջ պատուոյ զգացումը մինչև այս ատիճանները բարձրացեր է և վարչութեան դէմ փոքր ակնարկութիւն մ'անդամ այժմ աններելի կը համարուի. մինչդեռ կը յիշէք անշուշտ թէ ասիկց քանի մը տարի յուսով դտնուած վարչութեան մը դէմ նորա նախագահին կողմէ ինչ ծանր նախատիքներ կ'ըսն և մինչև իսկ անոր անդամները ժողովաստղին դուրս քաջըռուեցան և ցրուեցան և այն ատեն նոյն իսկ վարչութեան, որոյ անդամ կը դառնուէի ես, բողոքին վրայ ալ արդի նախանձախնդրութիւնն ոչ միայն չերեցաւ, այլ և լուսթիւն պահուե-

ցաւ, և ուրիշ կերպով նախատական միջոցներ ալ ձեռք առնուեցան երեսօխոսանաց ոմանց կողմէն, որովմէ կը դտնուին այժմ այդ բողոքողներն ստորագրուաց մէջ: Բայց այսօր ո՞րչափ փոխուած է ժամանակն. այսօր իրենք ամենէն առաջ իրար կանցնին արդի վարչութեան համար: Ես չեմ յուսար որ կուսակցութեան համար է անոնց այս վարմունքն, ոչ, այլ կը յուսամ որ իրենց նախկին սխալը քաւելով օրինակ տալու համար է թէ վարչութիւնն ինչ որ ալ ըլլայ և ով որ ալ ըլլայ պէտք է պաշտպանուի. այո՛, ամեն Հայ պարտաւոր է յարգել վարչութիւնն. այս է սկզբունքը: Իսկ երբ հակառակ Սահմանադրութեան արարք մը տեսնենք վարչութեան վրայ, այն ատեն իրանք դատել վարչութիւնը և անխտառութեան քուէով մը արխանել իւր պաշտօնէն: Այս նկատմամբ ամեն երեսօխոսանաց պարտք է մասնակցիլ վարչութեան դէմ եղած անարգանաց համար բողոք բարձողներուն ըսյց յետաձգման մասին բողոքներուն մասնակցելու առեղի չկայ. ուստի ես կառաջարկեմ որ այս խնդրով ժամանակաճառ չըլլանք և օրակարգին անցնինք: Բայց օրակարգին ձեռնարկելէ առաջ խօսք կուղեմ կանոնադրական քանի մը դիտողութիւններ ընելու համար:

Տ. ՄԱՏԹԻՈՍ ԵՊՍ. — Այդ մէկ քանի երեսօխոսանաց կողմէ ստորագրեալ բողոքը քաղցրը տարակոյս չկայ թէ երեսօխոսանաց մեծամասնութեան որոշմանը դէմ բողոք մ'է. ամենա ալ ընդունեցինք որ յուսովիկային մնայ խնդիրը. վասն զի որ և է երեսօխոսան շնորհուհիք լսել այնպէսի նախատական բառ մը իւր վարչութեան համար. ըսյց որովհետև օրէնքն ու արդարութիւնը կը պահանջեն որ ամբաստանեալն ալ ներկայ ըլլայ և ինքզինք արդարացնէ, անոր համար յուսովիկայ նստին յետաձգել հարկ եղաւ, և այս յետաձգումը չնշանակի թէ խնդիրը մերժուեցաւ: Ուստի այդ մի քանի երեսօխոսանաց բողոքն ոչ միայն անտեղիք ու սպորինուոր, այլ և անընդունելի կը դա-

սիմ, և կառավարիեմ որ անմիջապէս
օրակարգին անցնիք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քուէի դրէք :

ՉԱՅՆԵՐ. — Մեկնող երեսփոխանաց
բողքին մերժումը բուէի դրէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դիւանը վար-
չութեան եղած անարդանաց հատուցումը
ո՛չ մերժեց և ո՛չ անորոջ և անպայման
վիճակի մէջ թողուց . ռուսի մեր բողքը
ընկերաց այսպէս մեզ ձգել երթալն ու-
րի բան չնշանակեր , այլ Ազգային ժո-
ղովն անգործութեան դատապարտելու
կամք , որ կանոնադրութեան ալ դէմ է ,
ազգասիրութեան ալ . այդանը բաւա-
կան է և հարկ չեմ համարիր քուէի դնել :

ԱԼԻԻՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Պահ մ'ա-
ռաջ դաւառներէ եկած ընտրական տե-
ղեկադրեր կարգացուցան , և դիտորդ-
թիւն ընողներ եղան թէ թերի են . կը
ցաւիմ որ այս ժողովն՝ որուն վրայ դրած
են դաւառացիք իրենց յոյսերը , ետակա-
նութեան խնդիրներով ժամանակ կանցնէ :
Դիւանը պարտք մը կատարեց ըսելով թէ
ամբաստանեալ երեսփոխանը ըսելէ ետե-
վէն տանք . այր՝ արդարութիւնն այս-
պէս կը պահանջէ , քանի որ մեք ղեյադէն
հեռա՛ ընելու օրէնք չունինք . միթէ այս
պարագային մէջ տեղի կար խել մը ե-
րեսփոխանաց ձգել երթալուն . անոնց
այս բրածն ուրիշ բան ըսել չէ , բայց եթէ
ժողովն անգործութեան դատապարտել .
պարզապէս ըսել է այս թէ , ամբողջ ազգ ,
մեզնէ յոյս մի՛ ունենար . ըստ իս՝ շատ
աղէկ էր որ ըսէին Ազգին թէ մենք չպիտի
կրնանք քու գործերդ նայիլ : Մինչդեռ
այսօր առաջին անգամ Դատարարակու-
թեան խնդրով զբաղելու համար եկած
ենք հոս , ետութեան խնդիրներու կը պա-
տահինք , որով կը պարտաւորեն զմեզ
Դատարարակութեան խնդիրն , Ազգին հա-
մար մահու և կենաց խնդիրը մէկտէ թո-
ղու : Ռուսի ես ալ կառավարիեմ կարե-
ւորութիւն չապայք բողքին , և անցնիլ
մեր Օրակարգին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ետութեան խըն-

դիր ըսուեցաւ , ես չեմ յուսար որ ետու-
թեան խնդիր ըլլայ հոս . և ոչ իսկ կը հա-
ւատամ թէ այն մեկնող երեսփոխաններն
այդ մտք մեկնեցան . ամեն երեսփոխան
ազատ է կամ նստիլ հոս և կամ մեկնիլ .
բա՛ւ է որ ժողովը չփակուի . ըստ կանո-
նադրութեան ՉԱճայնից միաբանութիւնը
բաւական է ամեն վճիռ արձակելու : այն-
պէս չէ՞ մի՛ Ատենապետ փաշա :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը փակ-
եալ է ըսող չկայ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երեսփոխանա-
կան ժողովն արդարև ծանր կը քալէ ,
բայց պատճառը մի՛ կարծէք թէ երեսփո-
խաններն են : Իրա՛ւ է թէ ժամանակու
կանոնադրութիւն չունէինք և ժամանակ-
նիս շատ անգամ կանոնադրական խըն-
դիրներով կանցնէինք . բայց այսօր կա-
նոն ունինք՝ որով ղեղճումներու դուռը
դոցուած է . նաև բազմահմուտ և կարող
անձ մ'ունինք Դիւանին գլուխը , ամեն
բան լաւ հակցող և ըստ կանոնի մեզի՛ր
առաջնորդը : Եթէ ծանր կը քալէ ժողո-
վը , միայն սա՛ պատճառներով է որ՝ ժո-
ղովն որդեալ ժամանակին չբացուիր ,
Վարչութեան անդամները ժամանակին
չեն ներկայանար , դիւանադպրոններն ալ
նոյնպէս ժամանակին չեն զրկուիր հոս .
նա մտաւանդ մեր ատենադրութիւննե-
րը ժամանակին չեն հասնիր մեր ձեռքը ,
Վարչութեան յղեալ կամ անցեալ խնդ-
րոց պատասխանները չեն գար , Վար-
չութիւնէն սպասեալ առաջարկութիւնները
չեն ներկայանար : Ահա այս պատճառ-
ներով է որ ծանր կը քալենք : Այս տարի
քաղաքական պատճառներով նիստերնիս
բաւական ժամանակ ետ մնաց . նոյնպէս
Ս. Ծննդեան տօնին առթիւ դարձեալ
բաւական միջոց նիստ չեղաւ . անցեալ
նստին մեծամասնութիւն չզոյացաւ . լա՛ւ
է որ հիմակուրէն գոցենք ժողովը և մա-
յիսին նորը բանանք : Եթէ չէք ուզեր որ
ժողովն անգործութեան դատապարտուի
այս կերպով , միայնք ինձ հետ , Դատ-
արարակութեան խնդիրն այսօր այս դըռ-

նէն ներս մտաւ , ահա՛ խնդիր մը՝ որ ժա-
մանակին ամենէն ստիպողականն է , ին-
չու հեցեր էք , այսոր ձեռք առէք զայն :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փարիզեանն է-
ֆէնտիի յայտնած ցանն ամենուս զգա-
ցածն է . ինձ համար արտայայտած ներ-
բողական բառերը մերժելով հանդերձ կը-
սեմ թէ երեսփոխանաց կողմէ երբէք աշ-
խատելու կառք պակասած չէ , և այս աշ-
խատութիւնն անշուշտ արդիւնք մը կրնայ
ունենալ . դժբաղդարար երբեմն հով մը
կը փչէ մեր մէջ , ամեն բան տակնուվրայ
կըլայ , գիտե՛ս թէ փոթորիկ կը հանդը-
պինք . տեսէ՛ք սա միջոցիս , Տէրութեան
փրճակը փոփոխութեան ենթարկեալ ըլ-
լալով , ազգինն ալ բնականաբար անոր
հետ Պատրիարքնիս կը հրատարի , վար-
չութեան Քաղաքական ժողովը կը բողոքէ ,
երեսփոխանաց մեծ մասն անոր պատուոյն
նախանձամղդութեամբ կը բողոքեն զի-
ւանին դէմ , մէկ ուրիշ մաս մ'երեսփո-
խանաց ալ անոնց դէմ կը բողոքեն , և այս
ատենանին մէջ փոքրամասնութիւն մը և
Կիւանը միայն կը մնան Դատարարակու-
թեան խնդիրն 'ի ձեռին' , բայց մի՛ կար-
ծէք որ Կիւանն զձեզ կը թողու կերթայ-
ոչ , զիւանը իր սրտին կակիծը կը յայտնէ
այս ամեն եղելութեանց վրայ , բայց ան-
յողղողդ իր պաշտօնը կը շարունակէ . հի-
մա պիտի անցնինք Օրակարգին՝ որ է
Դատարարակութեան զիւանի տեղեկագի-
րը . միայն թէ երբ քուէի կարգին գա-
լու ըլլանք՝ պիտի կանգ առնուք , վասն
զի մեծամասնութիւն չունինք . այսու ա-
մենայնիւ , ըստ որում այս խնդիրն այն
տեսակ խնդիրներէն է՝ որ իբրև օրինա-
կան ծրագիր երկու երեք անգամ ընթեր-
ցանութենէ անցնիլ պէտք է , ուստի իբր
առաջին ընթերցում կրնանք մտնել մէջը
և վիճարարութիւն բանալ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դի-
տողութեան համար 'ի սկզբան խօսք խնդ-
րած եմ . նոյեմբեր 28ի նստին հարցում
ըրած եմ վարչութեան Պիւտճէին համար,
գէթ առժամանակեայ պիւտճէն չբերե-

լուե համար , և դեռ պատասխան չբերու-
վարչութիւնը : Հարցում ըրած եմ միև-
նոյն ատեն նաև վանօրէից խորհրդոյ և
Կոտակաց հոգարարձութեան չկադրուե-
լուն համար . ինչո՞ւ չեկաւ ասոնց պա-
տասխանը : Կառաջարկեմ որ մինչև 15 օր
Պիւտճէն բերուի հոս . եթէ չբերուի՛ ես
առաջինը պիտի ըլլամ ամբաստանող զվար-
չութիւնն : Ասկէ վեց եօթն ամիս առաջ
Ասլոթ էֆէնտին Քաղ. ժողովոյ կողմէ
խոստացաւ առժամանակեայ Պիւտճէ մը
բերել . ո՞ւր է , ինչո՞ւ չբերին ցարդ :

Կաղաչեմ , Ատենապետ փաշա , Կա-
նոնական պահանջումն ինչ է նէ այս մա-
սին գործադրեցէք :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնական պա-
հանջումներէն առաջինն այն է որ իւրա-
քանչիւր ոք իւր պարտքն ու սահմանը
ճանչնայ , և բեմական լեզուի վայելուչ
կերպով խօսի : Կանոնը չներեր որ երես-
փոխան մը վարչութեան հարցում ուղղե-
լէ ետև պատասխանն ալ բունադատելով
պահանջէ յատենի ժողովոյ . գիտեմ որ
այն եռանդն՝ որ զձեզ կը վառէ , նըպա-
տակ ունի միայն ազգին օգուտը . սակայն
պէտք է չափով և հանդարտութեամբ
վարուիլ . այո՛ , ստոյգ է որ վարչութեան
ուղղեալ հարցմանց մեծ մասին պատաս-
խանն չեկաւ ցարդ , սակայն գիտնանք
նաև թէ վարչութիւնն զբաղեալ է ծանր
գործերով . նաև չէ՛ վայել կանխաւ գո-
չել թէ պիտի ամբաստանեմ վարչութիւ-
նը . ինչ որ պիտի ընէք դուք՝ պէտք է
գիտնաք և ըստ օրինի վարուիք : Վար-
չութեան գլուխն հրատարման վրայ է այ-
սօր . ատենապետը բացակայ կը գտնուի՛
փոխ ատենապետն և անդամոց մէկ քա-
նին արդէն հրատարած են . սա՛ վիճակին
մէջ փոքրիկ շունչ մը բուսական է վար-
չութիւնը տապալելու . բայց խոնձմու-
թիւն է տապալել . մտածեցէ՛ք և այն-
պէս վարուեցէ՛ք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութեան
մասին ըրած ակնարկութիւններս՝ որչափ
ալ հանդարտ լեզուով խօսուած չթուին ,

կարծեմ թէ իրաւունքի սահմանէն դուրս
չեն. իրաւունք չէ ըսողներուն՝ ահա՛ կա-
նանադրութեան 84րդ յօդուածը ցոյց
կուտամ, որ Արքայան Պատրիարքին հա-
մար կը տրամադրէ թէ « Կրնայ ամբաս-
տանուիլ երեսփոխանաց կողմէն՝ Սահմա-
նադրութեան հակառակ ընթացքի մը հա-
մար, կամ անոր գործադրութեան ան-
հոգութեանը համար »:

Մի և նոյն յօդուածոյ գորութեամբ
կրնայ ամբաստանուիլ նաև Աւրջութիւնն՝
երբ անհոգ և անխոյժ գտնուի իւր սահ-
մանադրական պարտաւորութեանց մէջ:

Կաղաչեմ, հանդարտութեամբ մտիկ
ըրէք իմ ըսածներս, որպէս զի իմանալը
թէ ո՛չ Սահմանադրութեան և ո՛չ Կանո-
նադրութեան զձէն դուրս չեմ ելած:

Անցեալ յունիսին մէջն էր Քաղ. ժողովոյ
ըրած խոստումը յատենի աստ Պիւտձէ-
ին համար. այսօր փետրվար 11 է, տա-
կաւին Պիւտձէն չէ եկած. եթէ կարե-
ւորութիւն մը չունի Պիւտձէն՝ չիմտունըք.
բայց սահմանադրական ազգի մը երես-
փոխանութեան պարտաւորութեանց ա-
ռակին է գրեթէ իւր Պիւտձէն նալիլ.
չատ բան լսած ունիմ այս մասին, զորս
առ այժմ չեմ յայտարարեր. երբ Պիւտ-
ձէն դայ՝ այն ատեն կը խօսիք:

Կը կրկնեմ թէ մինչև 13 օր Պիւտձէն
գալու է հոս. ապա թէ ո՛չ պիտի պար-
տաւորիմ ամբաստանադիր ներկայացնել:
Չկարծուի թէ ՚ի կրից շարժեալ են այս
խօսքերս. ո՛չ. ես իմ խզճմտանքի պար-
տաւորութիւնս կատարել կուզեմ. եթէ
տաճնեցուս մէջ Սահմանադրութեան
կամներքին Կանոնադրութեան հակառակ
կէս մը կայ, ետ կտնտում: Երբ կըսեմ
թէ պիտի ամբաստանեմ վարչութիւնը,
դուք ինձ կըտէք՝ Ատենապետ փաշա, թէ
ինչո՞ւ այս աստիճան յառաջ կերթաք. ձեր
այս ըսածը կ'զգամ և լաւ կերպով կըմ-
բռնեմ. ստոյգ է որ դեկտեմբեր 11 ին
Օսմանեան Սահմանադրութիւնը հրատա-
րակեցաւ. անկէ առաջ միապետական
կառավարութեան տակ սահմանադրա-
կան ազգ կը կոչէին զմեզ և զԲուշաու-

րութեան կը հրաւիրէին, որով շատ ան-
գամ մեր երեսփոխանական պարտաւո-
րութիւնը ճշդիւ կատարելէ կ'զգուշանա-
լինք. հիմա քանի որ կառավարութիւն-
նիս ալ սահմանադրական եղաւ և Օսման-
եան երեսփոխանութիւնը քէջ օրէն իւր
նիսաք պիտի ընէ, և թերևս իւր առա-
ջին խնդիրն ընէ Պիւտձէն, մինչդեռ Հա-
յոց երեսփոխանութիւնը տակաւին իւր
պիւտձէն չըննեց, պէտք է ուրեմն մեր
սահմանադրական պարտաւորութիւնները
լիովին կատարելք և պահանջելք՝ որ մեր
ազգային Պիւտձէն ալ, որուն երեսը
ցարգ պահուած է, Ժողովիս ներկայս-
նայ անյապաղ և առանց զանցառութեան:
Այս նկատմամբ կը կրկնեմ իմ հարցում-
ներս և կը խնդրեմ Պիւտձէն՝ որ քուէի
դնէ:

Մինչև հիմա ըսածներս վարչութեան
միայն վերաբերեալներն էին. ուրիշներու
համար ալ խօսք ունիմ: Յա՛ւ է ըսել որ
մեր դիւաններն ալ անգործութեան մէջ
են. մինչև հիմա դիւաններուն ինչ խըն-
դիրներ որ յանձնեցինք՝ պատասխանները
չտրինք. անոնք որ այս կալուիթեան
փոյթ տարին, ինչո՞ւ չեն հոգ տանիր
նաև անոնցմէ պարտաւորութիւն պահան-
ջելու. ինչ կարծէ կազմութիւն մը՝ երբ
անգործ է:

Համարտու յանձնախումբ մ'ալ կազ-
մեցինք, որ 70 թուականէն սկսեալ եկող
գացող վարչութեանց համարները պիտի
քննէր և արդիւնքը պիտի բերէր մեզի.
Ո՞ր է, ինչ ըրաւ մինչև ցարդ՝ չզիտնէք:
Ո՞ր է 71-72ի վարչութեան համարա-
տուութիւնը՝ որ շատ անգամ խոստաց-
ուած է ու ցարգ բերուած չէ. ո՞ր է
74-76ի Խառն ժողովոյ համարատու-
թիւնն. այս ալ դեռ չներկայացաւ. եթէ
մինչև յառաջիկայ մայիս չներկայանան՝
ասոնց համար ալ ամբաստանադիր պիտի
մատուցանեմ Ժողովին:

Թող չկարծուի թէ անձնական նկա-
տումներ կան խօսքերուս մէջ. ամենեւին
չեմ ընդունիր. իմ երեսփոխանական պար-

տաւորութիւնս կը պահանջէ որ անգործութեան և զանցատուութեանց դէմ բողոքեմ, և միշտ պիտի բողոքեմ. այն որ ազգային պաշտօնի մը հետամուտ է և յանձնառու, պէտք է որ իւր պարաստութիւնը կատարէ, և մեք ալ իրբեւեւ րեստիտան մեր հսկելու պարտաւորութիւնը պէտք է որ ճշդիւ կատարենք: Ինչ բաներ տեսանք ու լսեցինք անցեալ ամիսներու մէջ և բողոքելէ ետ կեցանք մինչև ցարդ. ազգային պաշտօնի վրայ դեռ ժամանակին չէ լրացնող անձինք դուրս թողուցան իրենց պաշտօնէն, և լաւ համարեցին լսել, որպէս զի վարչութեան գործերուն դէմ որ և է արդեւք մը յարուցած չլլան: Ահա այսչափ զուլութիւն և համբերութիւն դործածուած է: Արարութիւնն ինչո՞ւ տապալի. նա պէտք է որ իւր պաշտօնն ու պարտաւորութիւնը ճշդիւ կատարէ, և երեսփոխանական ժողովիս վերաբերեալ պիտոյքները չանտեսէ: Ես երեսփոխանական պաշտօնէս զատ ուրիշ պաշտօն չունիմ այժմ և հետամուտ չեմ. բայց այս պաշտօնն ալ խզի մտօք պիտի կատարեմ. ապա թէ ոչ պէտք է դայն ալ թողում խզմտանքիս խայթէն ազատ մնալու համար:

ԴԱԶԱՐՈՍՆԱՆ Ք. ԷՖ. ԵՒ ԱՅԼՔ. — Զայնակեց ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ճիշդ պահ մ'առաջ ըսածիս պէս կանխառ յայտարարել թէ սա'պէս կամ նա'պէս պիտի ընեմ, հակառակ է կանոնադրութեան, հակառակ է ազգին շահուց, և միանգամայն սպառնալիք ընել է, որ ըսել է ազդեցութիւն բանեցնել: Գոցեք այս խնդիրն և անցնինք Գաստիարալութեան տեղեկագրին. խօսք ուզողները կը հրաւիրեմ ՚ի բեմ. առաջին ընթերցման մէջ ենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գաստիարալութեան դիւանի տեղեկագիրը ծայրէ ՚ի ծայր և ուշադրութեամբ կարդացի և տեսայ որ դիւանը խիստ գեղեցիկ ամփոփում մը կը ներկայացնէ անցեալ վարչութեանց ուսումնական մասին համարա-

տուութեանց տեղեկագրոց, և կեցրակացնէ քանի մ'առաջարկութեամբք, որոց մէկն է ստիպողականութիւն տալ Գաստիարալութեան խնդրոյն ըստ իսն առաջարկութեան. այս կէտն անմիջապէս թուէի դուրի կառաջարկեմ: Ներկորով վարժարանաց բարեկարգութեան հրահանգի ծրագիրն օրակարգն անցնելու և յօդուած առ յօդուած քննելու համար ըրած առաջարկութիւնն ալ կը նշուենիմ: Այս երկուքին թուէարկութեան դուրիւլ կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ խնդրոյն առաջին կէտին թուէարկութեան հարին երևան ելաւ, բայց երեսփոխանաց շատերը ցրուելուն պատճառաւ, մնացողաց մէջ դոնէ 24 ձայնից միարանութիւն չեմ կարծեր որ գոյանայ, և ըստ որում խնդիրն ՚՞ անդամ միճարանութենէ պիտի անցնի, ուստի այսօր ուռանց մանր պարզաներուն մէջ մտնելու այսքանով բաւականանալք, և յառաջիկայ նստին շարունակենք:

Կը մնայ յաջորդ նստին օրն որովհետև որովհետև ՚ի սկզբան Ատենադպիր էֆէնսին ՚՞ չարաթ միջոց խնդրեց վերջին մի քանի ատենադրութեանց հրատարակութիւնը հասցնելու համար: Գուք ինչ կորուշք:

Երեսփոխանք միաձայն որուցին որ ըստ սովորութեան 18 օրէն գումարով յաջորդ նիստը:

ԱՏԵՆԱՊԵՏ Ք. ԷՖ. — Գուք այդպէս կորուշք. բայց ես ալ կը յայտարարեմ թէ այս նիստին ատենադրութիւնը չպիտի ունենաք:

Ժամն ցին քառօրդ մնալով՝ ատենադրոցուցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ Ք. Յ. ՄԵԼԻՔ **ԱՏԵՆԱՊԵՏ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բացում 1876 Ամին

Ն Ի Ս Տ Ժ Թ.

25 Փետրվար 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ԽՈՐԷՆ ՆԱՐ-ՊԷՅ ՍՐԲԱԶԱՆ (Առժամայն)

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇՆ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1 Խորէն Արքեպ. Նար Պէյ

2 Կարապետ Ե Սերոբեան Բ. Պ

3 Մատթէոս Ե Իգիլիբեան

4 Անբրուսիոս Վ. Առերինեանց

5 Գարեգին Ե Թաթարեան

6 Խորէն Ե Կիրայեանց

7 Հմայեակ Ե Դիմաքեան Բ.

8 Յովհաննէս Ե Փափազեան Բ.

9 Ներսէս Ե Արամեան Բ. Պ

10 Պողոս Ե Խաչատրեան Բ. Պ

11 Եղիշի Ե Աղաչունի

12 Արտակէս Քաչ. Մանր Բ.

13 Գեորգ Ե Արծրունի Բ.

14 Գրիգոր Ե Սէյմեան

15 Խորէն Ե Փէշկովան.

16 Յարութիւն Ե Սերոբեան

17 Յովհաննէս Ե Մկրեան

18 Սուքիաս Ե Ստեփան.

19 Սահակ Տ. Ե Սարգսեան Բ.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վ. Ի. Զ. Ա. Կ.)

Գառնի-Քաթուհ, Կեդէի քաղաք

Գառնի-Քաթուհի քաղաք

Գրիգոր Պէրպլերեան Բ.

Բացակայութիւն առաջին

Բացակայութիւն երկրորդ

Պ. Բաց. Բանաւոր պատճառ:

22 Գեորգ Ստիարածեան

23 Խաչիկ Մանկասարեան Բ. Պ

24 Կարապետ Աղարամեան.

25 Համարձու Մազպուրեան

26 Մինաս Գափամածեան

27 Յովհաննէս Պոյաճեան

28 Ն. Սէզպուրեան Տքթօր

29 Պողոս Պառնասեան

30 Սարգիս Աղարեկեան Բ. 3

31 Սահակ Ապրո Բ. Պ

32 Սենեքերիմ Մանուկեան Բ. Պ

33 Փէշկովան Տքթօր

34

35

36

(Բ. Վ. Ի. Զ. Ա. Կ.)

Պէշկովան

38 Բարսեղ Հարածեան

39 Կարապետ Ս Իւթիւճեան

40 Յարութիւն Մարգարեան Բ.

ԵԿԵՂԵՑԻՆ

41 Խաչատուր Ղազարոսեան Բ.

42 Կարապետ Գ. Փափազեան Բ. Պ

43 Մարուզէ Յիւնկեան Բ.

44

Իսկիւհար Ս. Խաչ

45 Յովհաննէս Շահեան

46 Յովսէփ Ս Մաղլումեան Բ. Պ

47 Սերոբէ Պամածեան

48 Ստեփան Արամեան

Իսկիւհար Ս. Կարապետ

49 Մինաս Պաշտօնապետեան

50 Յովհաննէս Ճիւղաճեան

51 Նիկողոս Ալաճաճեան

52 Տրդատ Փափազեան

(Գ. Վ. Ի. Զ. Ա. Կ.)

Բերք Լ. Գառնի քաղաք

53 Արիկ Ունճեան Բ.

54 Գրիգոր Սէլիմիճեան

55 Մարտիրոս Յ. Տիլեան

56 Միքայէլ Մամիկոնեան

57 Նւնաս Քաղազեան

58 Ստեփան Խնդիրեան

59 Տիլիմար Մ. Էքսէրճեան

60 Իլիաս Զայեան

61 Յարութիւն Նորատունկ.

62 Գրիգոր Մարկոսեան

Սէշկովան

63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ

64 Յակոբ Կոստանդեան Բ. Պ

65 Յակոբ Պ. Նորատունկ.

66 Յովհաննէս Ողայկեան Բ. Պ

67 Տիգրան Եւստուֆեան

Պէշկովան Լ. Ղաթնիք

68 Յ. Մէրեէմ-Գուրի

(Գ. Վ. Ի. Զ. Ա. Կ.)

Գառնի-Քաթուհ Լ. Իճարէի

69 Յովհաննէս Էսաեան

70 Ստեփան Պէշկովան

Գարեջէղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մաս
71 Կարպետ Շահպաղեան Բ. 3		121 Ստեփան Պ. Պ. փափաղեանց
72 Մկրտիչ Մուրատեան	Կարէն	Տէ՛ւրէ՛ի
Գարեւոյն	101 Մանուկ Ասլանեան Բ. Պ	122 Նաւն Գարազաղեան
73 Յակոբ Ելմէնիճեան	Բեռնանէս	Զէյնուս և Մարաշ
Ենիեմանլէ Սասնիչ	102 Մ. փափաղեան Տըթթօր	123
74 Օղտէն Խոճասարեան	Սարգիսեան	Տրապիշ
Թահթաթ	103 Ռուբէն Կիւմուշկէրու. Բ. Պ	124
75	Նիկոսիորէս	Պարսադ
Էյոսոյ Ս. Ելէս և Ս. Ասորոս	104	125
Յաճէ	Սիւն	Տէրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Պետրոս Միսաքեան Բ.	126 Միհրան Զոպանեան
Գարունշէ	Գարսնէսար	Վաս
77 Աստիա Իկիտաղեան Բ. 2	106	127 Սիմոն Մաքսուսեան Բ. Պ
Հիսար և Պոյոճի ճէղ	Արթիւր	Աշխատար
78 Յովհաննէս Կուրեան	107 Կարպետ Լազիկեան	128
Նոր ճէղ և Սնէնի	Բաղէշ	Հալէոյ և Այնթապ
79 Ղազար Հովուեան	108	129
Պարս	Պարս	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան	109 Բ. Ղազարոսեան	130 Մկրտիչ Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան	Երոսիմ	Ռոստոմ
82	110 Մելքոն Հալաճեան	131
Գարակիտի	Ամասիա	Կորս
83 Յարութիւն Զէնճիրճեան Բ. Պ	111 Համբարձում Ալաճաճեան	132 Արրահամ Յ. Այվաղեան
84 Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ	Բալու	Զհիսթաթ
(Ե. Վիճկ)	112 Յովհաննէս Աղնաւօր	133 Համբարձում Սարքէշլի
Սասնի	Կրեմի	
85 Ալեքսան Պէլիքեան Բ.	113 Յակոբ Իւթիւճեան	134
86 Աւետիս Բօլօլեան Բ. 2	Մանշլլի	Գաղաթիս
87 Եղիազար Մէլիքեան Բ. 4	114	135
88 Մինաս Ճաֆճաֆեան	Հաճի	Արան
89 Յակոբ Քաղաղեան	115	Սուէրտ
90 Յակոբ Ամասեան Բ.	Երէն և Բաբերդ	136 Մատթէոս Ալբուսեան
91 Նաղարէթ Շահպաղեան	116	Երզնար
92	Թէրտար	137 Լօղօթիթ Պալեօղեան Բ.
93	117 Տիգրան Գ. Սինանեան	Մալնիս
94	Կեսարիա	138
Խասնի	118	Կղեր
95 Առաքել Ալթուն Տիւրքի	Խաբերդ	139
96 Խաչատուր Պ. Միսաքեան	119 Յովհան Կաղճեան	Ենիկորոս
97 Ռէթէոս Պէլիճեան Բ.	Պալէտիէր	140
98 Սարգիս Արապեան	120 Յովհաննէս Յովակիմեան	
99 Սարգիս Արրահամեան		
100 Սիմոն Միքայէլեան		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Տեղեկագիր Դաստիարակութեան դեմնէ՛ ՛ շերտ, դաստիարակութեան խնդրոյն .
- Բ. Վերահանութեան Սահմանադրութեան . շարունակութեան փճաբանութեան յօդուածոյ թաղական ճարտարարութեան , յերկրորդ ընթերցման :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամն 7 1/2 ին
ի ներկայութեան 40 երեսփոխանաց , ու
րոց վերջին թիւը յանգեցաւ 75 ի :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք
Նոր բացակայութեան պատճառաւ , ներ-
կայ եկեղեցական երեսփոխանաց աստի-
ճանաւ երիցազոյն Տ. Խորէն Նար-Պէյ
Սրբազան հրաւիրուեցաւ նախագահել այ-
սորեայ նստին :

Նոյնպէս Ատենադպիր էֆէնտիներուն
բացակայութեան պատճառաւ , կրտսե-
րազոյն երեսփոխաններէն Մելիքեան Մը-
կրտիչ էֆէնտի հրաւիրուեցաւ յստոր-
եայ ատենադպրութիւն :

1.

Վերահանութեան Ժ.Ձ. նստի Արեւմտաբանութեան
Ատենապետ փայան հրաւիրեց երես-
փոխաններն ՚ի դիտողութիւն Ժ.Ձ. նստի
ատենադպրութեան վրայ , և տեսնելով որ

դիտողութիւն ընող չկայ , քուէի դրաւ
զայն՝ որ միաձայնութեամբ ընդունին
ՅԱԻ ժողովէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Կը յիշէ ժողովը
որ վերջին օրերս ատենադպրութեանց տը-
պադրութիւնը վարչութեան կողմէ պայ-
մանադրութեամբ մը յանձնուած է Մա-
սիս լրագրոյ Տնօրէն և Խմբագիր Իւթիւ-
ճեան էֆէնտիի . այս կերպով հրատարակ-
ւած է ժէ. նստի ատենադպրութիւնը՝ զոր
իմ ձեռքս պատրաստ ունիմ , հարկաւ
երեսփոխանը ալ ընդունած են :

ՉԱՅՆԵԹ. — Ոչ , ոչ , ընդունած չենք
տակաւին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Չեմ յիշեր քաջ ,
թէ պէտե ևս ինքս ալ տեսած , սրբազ-
րած և ստորագրած եմ պայմանադրու-
թիւնը , թէ անոր մէջ « տպեալ ատենա-
դպրութիւնը երեսփոխանաց ամեն մէկուն
դրկելու » սրամադրութիւնն ընդունուած
է թէ ո՛չ : Կրնայ արդեօք վարչութիւնը
մեզ բացատրութիւն տալ այս մասին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենադրու-
թեանց մասին Կանոնադրութեան 17րդ
յօդուածը սակայն կը տրամադրէ :

«Ատենադարաց պաշտօնն է իրարու
«օղնականութեամբ ատենական դրու-
թեանց հոգ տանիլ, և նստի մը ատենա-
գրութիւնն ամիսի ու ըստ կարի ձիւղ
«խմբագրեալ՝ հետեւեալ նիստէն զոնէ 24
«ժամ առաջ տպեալ հասցնել երեսպիտ-
«սանաց ամեն մէկուն : Այս հոգը զլիսա-
«տրապէս առաջին ատենադպրին կը պատ-
«կանի , միւսներն իրենց յանձնուած տօ-
«մարներով զրադեալ (յօդ. 6) » :

Արդ՝ այս յօդուածին համեմատ պէտք
է որ առաջին ատենադպրը էֆէնտիին ա-
տենադրութիւնն հասուցած ըլլար մեզ
ուստի մեք անկէ կը պահանջենք այդ պար-
տաւորութիւնը և ուրիշներուն ճարգնելու
պէտք չունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Ըստ Կանոնադ-
րութեան՝ Փափաղեան էֆէնտիին ըսածն
ստոյգ է , բայց պայմանադրութիւն մը
կայ , զոր ո՛չ միայն վարչութիւնն՝ այլ
և դիւանս քանի մի մանր փոփոխու-
թեամբ ստորադրած է . սակայն չեմ յի-
շեր թէ արդեօք անոր մէջ դրուած է
24 ժամ յոռաջ ատենադրութեան երես-
վոթանաց ձեռքը հասցնելու կէտն , ինչ-
պէս կը տրամադրէ Կանոնադրութիւննիս-
եթէ չէ դրուած , դիւանին կը պատկա-
նի այդ անուշադրութիւնը կանոնական
կէտի մասին , զոր իբր կարևոր պահաս
մը կրնամք լցնել իսկ եթէ դրուած է և
այս անգամ ո՛չ դործադրուած , պակա-
տութիւնը տպագրելին վրայ կը մնայ , որ
կրնայ հրաւիրուիլ իր ստանձնած դործը
նչրութեամբ կատարել : Սակայն պէտք է
նախ պայմանագրին օրինակն ունենալ և
ստուգել այս պարագայները :

Հիմա քանի որ վարչութեան կողմէ
բացատրութիւն տուող չկայ , իւթիւճեան
էֆէնտիին կը հրաւիրեմ բացատրութիւն
տալ մեզ այս մասին :

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պայմանագ-
րին օրինակը քովս պատրաստ չունիմ , և

չեմ յիշեր այդ մանրամասն պարագայ-
ները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Ուրեմն այս
խնդիրը ձգենք յառաջիկայ նստին , որ-
պէս զի պայմանագրութիւնը տեսնելք և
եթէ պակաս մը կայ լրացունենք . թերևս
մինչև այն օր ետ մնացած ատենադրու-
թիւնը ալ ամբողջ տպեալ կը հասնին ձեռ-
քերնիս :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ի՞նչ պայ-
մանագիր է այն և ո՞վ ըրած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Վարչութեան
Տնտեսական և Ելեմտից խորհուրդներուն
և Իւթիւճեան էֆէնտիին մէջ եղած է այդ
պայմանագրութիւնը . ես ալ տեսած և
ստորագրած եմ անոր ծրագիրը :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Վարչու-
թիւնը հարկաւ կը յիշէ զայն և կրնայ
բացատրել ինչ ըլլալը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Հարցուցի վար-
չութեան , բայց պատասխանող չգտնիլ-
եցաւ :

ԲԱԶԱԶԵԱՆ Յ. ԷՖ. — (Յանուն վար-
չութեան) : Եթէ դեռոնայինք որ այսօր լըն-
դիւր պիտի ըլլար , կը բերէինք պայմանա-
գրքին օրինակը . բայց չգիտնիմք , և պայ-
մանագրին պարունակութիւնն ալ չենք
յիշեր , որպէս զի կարող ըլլանք այսօր
բացատրել :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մեզի պայմա-
նագիր տեսնելու հարկ չկայ . մեք չենք
ձանձար ոչ պայմանագիր և ոչ այլ ինչ :
մինչև իսկ հրովարտակ ալ թէ որ ըլլայ
մեզի չվերաբերիր այն . մեք կը պահանջ-
ենք Ատենադպրի էֆէնտիէն՝ որ ըստ
Կանոնադրութեան՝ 24 ժամ առաջ ատե-
նադրութիւնը տպեալ հասցնէ մեր ամեն
մէկերուս ձեռքը . կողմէնք որ առաջի-
կայ նստին տպեալ հասնին ետ մնացած
բոլոր ատենադրութիւնք : Այս ատենադ-
րութեանց ժամանակին չհասնիլը ժողո-
վոյս ընթացքը կաղապնել և անոր հար-
ուած տալ է . մեք Ատենադպրի էֆէնտի-
էն կ'սպասենք որ այս յետաձգման պրոտո-

ճառը բացատրել և թէ որ վարչութեան զէմ ըսելիք մ'ունի՝ թող ըսէ մեզ :

ՔԱՓԱՄԱՃԵՈՒՆ Մ. ԷՖ. — Քանի որ ստաջին աստենադպիր էֆէնտիին վրայ է խօսքը և ինք ներկայ չէ, ի՞նչպէս կրնայ յուզուիլ այս խնդիրը : Ուրեմն հարկ է սպասել յաջորդ նստին, որպէս զի Ատենադպիր էֆէնտիին պէտք եղած բացատրութիւնն առնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քափամաճեան էֆէնտի ալ ձայնակից կըլլայ ինձ՝ այս խնդիրն առաջիկայ նստին ձգելու համար, որպէս զի պայմանադիրը ատենելով եթէ պակասութիւն մը կայ ուղղինք՝ արդէն աստենադպիր էֆէնտիին ալ ներկայ չէ, ուստի պէտք է գոցենք այժմ այս խնդիրն և անցնինք աստենական ուրիշ գործողութեանց :

ՓԱՓԱՋԵՈՒՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդրոյն վրայ այլ ևս խօսք չեմ կրնար տալ. դուք արդէն երկու անգամ խօսեցաք, և Աստենադպիրին ներկայ չէ՝ այս խնդրոյն վրայ այսօր ո՞րքան զբաղինք՝ մէջէն չենք կրնար ելնել. ուստի յառաջիկայ նստին ձգելու պայմանաւ կը գոցեմ զայն, և ուրիշ գործողութեանց սկսելէ առաջ կանցնիմ Ատենապետաց զիւանդին տեղեկագիրը կարդալ ՚ի վերայ Ս. Պատրիարքի Հրամարագրոյն :

2.

ՏԵՂԷԿՔԻՆ Արեւնապետաց քիւանին ՚ի վերայ խնդրոյ հրամարագրան Ս. Պատրիարք Հօր .

Ատենապետ փաշան կարդաց յետաւրայ տեղեկագիրը .

Տեղք .

Չեք յանձնարարութեան համեմատ Ատենապետաց զիւանք Արապան Պատրիարքի հրամարագիրը նախաքննութեան անկողով խելամուտ եղաւ որ Նորին Սրբազնութեան հրամարի կամենալուն պատճառ՝ Ազգին ներքին և արտաքին վիչ-

տերն են : Ատոնցմէ առաջինն է այն ներդաշնակութեան պակասութիւնն որ զըժբաղդարար կը տիրէ ազգային գործոց տնօրինութեան կոչուած պաշտօնակալաց մէջ, որը փոխանակ Հայրենեաց նուիրական սեղանին վրայ ամեն անձնական նըկատմունք և կիրք զօհելու, իրարու անվրտահութեամբ և զիրեար անգոսնելով Ազգին մէջ յուզմանց միայն տեղի կուտան, իսկ յառաջդիմութեան ո՞չ : Յետեւ ասոր վրայ տգիտութեան խաւարը, որ ժամանակիս ձախողութեան պատճառաւ, փոխանակ փարատելու՝ օր քան օր կը ծաւալի, զինքն հալածող վարժարաններուն դռները փակելով, կրնաք հասկնալ թէ ո՞րքան մեծ են մեր ներքին վիշակեր : Իսկ արտաքին վիշակերն Ազգիս՝ այն հարստահարութիւնը են որ Ազգիս վրայ մահուանդ մեր հայրենական երկիրնեւրուն մէջ կը բռնանան, և որոց բարձմանը՝ ժամանակիս պարագաները փոխանակ օգնելու՝ գիտես թէ ընդհակառակն աւելի ծանրացնելու կը նկրտին : Աւստի այս պարագաներն են որ մեր աչքայն ընդհանրութեան կոչուելու իրաւունք ունին, զոր մէջ վիշտ անուանեցինք, քանզի ազգասէր սրտերու վրայ ունեցած ազդեցութեամբք աչքայն շեշտէր կը կազմեն, որոնցմէ չէք կրնար ազատ մնալ մեր անձնուէր Պատրիարքին սիրտը, որ ո՞չ այնչափ քաջառողջ մարմնոյ մը պատուական մէկ մասն ըլլալով՝ աւելի զիւրազգած ըլլալու իրաւունք ունի :

Արդ՝ Ատենապետաց զիւանն այս անձնային խելամուտ ըլլալէն ետքը պարտահամարեց երէկ խորովին երթալ Արապան Պատրիարքին յայտարարել թէ իրաւունք ունի վշտանալու, բայց յուսահատելու և հետեւաբար հրամարելու ո՞չ երբէք, զի ասով ուրիշ բան ըրած չըլլար, այլ յաւելուլ Ազգին ներքին և արտաքին վիշտաց վրայ երրորդ մ'ալ, որ ո՞չ նուազ աղետալի է քան զայլ, զի Ազգն այս փոթորիկայն ժամանակիս մէջ իր ճարտար նաւապետէն կը զրկէ : Սոյն յայտարարութեան հետ Գիւանը զանց չըրաւ :

նաև մեր Սրբազան Հօր խոստանալ որ իր կարողութեան ներած չափով պիտի աշխատի բոլոր անհամաձայնութեան տարերքը բանալ ազգային իշխանաւորաց մէջէն, և ամենուն կարողութիւնն ուղղել ՚ի բարւոյ տնօրէնութիւն ազգային գործոց:

Բարերախտաբար սոյն միջոցին Բ. Դուռն ալ ազգային բարձր պաշտօնակալի մը ձեռօք Սրբազան Պատրիարք Հօր յուսադրական խօսք և խոստում հարողոցեց, որ հարտաւհարութեանց մեծ խնդրոյն համար նոր նախարարութիւնն ալ փոյթ և ջանք պիտի ընէ ըստ օրինակի իւր նախորդաց, որով Սրբազան Պատրիարքի յուսահատական հրաժարականին այլ ևս տեղի չէր մնար:

Ատենապետաց զիւանը բարեբաստիկ կը համարի զինքը Զեզ յայտ առնել որ Տէրութեան և Ազգին սոյն կրկին խոստմանցն առջին՝ Սրբազան Պատրիարքի սիրտը կակրացաւ և զիւանիս թախանձանաց միայ յանձն առաւ շարունակել իր Պատրիարքական պաշտօնը՝ մինչև որ Ազգային ժողովը իր միջնուր մտնէ. թերևս մեր սիրելի հայրը բողբոջին յետս կը կռչէ իր հրաժարականը՝ եթէ Տէրութիւն և Ազգ իրենց ցոյց տուած բարի կամքերնին գործով արդիւնաւորեն:

Այս պարագաներուն հետևութեամբ զիւանը ուրիշ եզրակացութիւն չկրնար ընդունիլ և Զեզ առաջարկել, այլ

1. Սրբազան Պատրիարքի հրաժարականն անընդունելի մձուել, և

2. Պատասխանել Նորին Սրբազնութեան հրաժարագրոյն որ Ազգային ժողովը իր կատարեալ առողջութեան բարեմաղթու ըլլալով հանդերձ, վտառնութիւն ունի իր անձնուէր ազգասիրութեան, և չընդունիր որ Նորին Սրբազնութեան հրաժարականը չընդունելով ազգային գործոց բարիք տնտեսութեան արգելք եղած կըլլայ երբէք:

24 Կետ. 1877

Ս. Աւանան

Ա. Ատենապետ Մայր զիւանի

Սոյն պահուն Ատենադպիր Էֆէնտիի գալով իւր պաշտօնին գլուխն անցաւ:

ԱՏՆԵՆԱՊԵՏ ՓՍՇՍ. — Լսեցիք ատենապետաց զիւանին տեղեկագիրը և անոր եզրակացութիւնը Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդրոյն վրայ. եթէ այս մասին պարզապէս մէկ կամ երկու ատենաբանի խօսք տալով կրնանք որդման մը հասնիլ, շատ բարի՛. իսկ թէ որ երկար վիճարանութիւն պիտի բացուի, պէտք է զայն Օրակարգն անցնենք:

ԽՕՃԱՍՍԱԲԱՆ Օ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ առանց վիճարանութեան ընդունուի ատենապետաց զիւանի բերած տեղեկագիրը. վասն զի ոչ ոք կընդունի Ս. Պատրիարքին հրաժարականը:

ԲՄՓԱՄՄՃԵՆ Մ. ԷՖ. — Կը ճայնակցիմ Օգոսէն Էֆէնտիի առաջարկութեան:

ԱՏՆԵՆԱՊԵՏ ՓՍՇՍ. — Եթէ ուրիշ խօսք ուղղով չկայ, քուէի կը դնեմ տեղեկագրին եզրակացութիւնը մաս առ մաս:

ՓՍՓԱԶԵՆ Ս. ԷՖ. — Արդեօք Ատենապետաց զիւանը՝ Ս Պատրիարք Հօր հրաժարագրին այն կէտը՝ յորում կրակ թէ մինչև ցարգ բանիցս տուած հրաժարականներս չընդունելով ուրիշ բան չըրիք, բայց միայն ազգին գործերը բարւոյ տնտեսութենէ զրկելով պարապ ժամանակ անցնել տալու պատճառ եղաք՝ քննելով համոզուած է այնպիսի զրկողութիւն մը եղած չըլլալուն. ատենապետաց զիւանը պէտք է բացարձակապէս յայտարարէ այս կէտը, որպէս զի ժողովը խոջի մտօք կարենայ տալ այն բուէն՝ զոր պատրաստ է տալ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը չընդունելու համար. բայց միանգամայն պէտք է գիտնայ թէ այդ հրաժարականը մերժելով ազգին գործոց բարւոյ տնտեսութեան վնաս մը հատուցած չըլլար. կուզեմ զիտնալ թէ այս կէտին պատասխանատուութիւնն ատենապետաց զիւանը կրնայ մի ստանձնել:

ԱՏՆԵՆԱՊԵՏ ՓՍՇՍ. — Ես քաջ չըրցայ ըմբռնել թէ ի՞նչ ըսել կուզէ Փափաղեան Էֆէնտի:

ՄԷՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Իբրև առնանապետաց զիւանին անդամ հասկըցածս այն է որ Փափագեան էֆէնտիկ ըսածը մեր տեղեկագրին մէջ պարունակեալ է . վասն զի իւր ըսած զնութիւնն արդէն զիւանը կատարած և վերջապէս խմբովին զնացած ազաչած է զՆորին Սրբազնութիւնն յանուն ժողովիս՝ իւր հրատարականն ետ առնուլ . եթէ զիւանն համոզուած ըլլար որ Նորին Սրբազնութեան հրատարականը մերժուելով ազգին դործոց բարուք տեսչութեանը վնաս մը չպիտի հասնի, հարկաւ չէր երթար և միջնորդէր հրատարականն ետ առնել տալու համար . ուստի զիւանը խղճի մտք համոզուած է որ Նորին Սրբազնութիւնը՝ թէև անձամբ տկար՝ սակայն խիստ ազէկ կը վարէ ազգին Պատրիարքական դէպք և թէպէտ ցաւելու ինչ ինչ պատճառներ ունի, սակայն իւր հրատարումն ազգին վնաս մ'ալ կը յաւեցնէ :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ատենապետաց զիւանն այն աստիճան իմաստութեամբ վարուած է այս խնդրոյն մէջ՝ որ մեզի ուրիշ բան չմնար ընել, բայց եթէ չնորհակալութիւն յայտնել :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Առնանապետաց զիւանին շարունակել իւր պաշտօնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենապետաց զիւանին կողմէ կրօնի թէ զիւանն ինքզինք շատ երջանիկ կը համարի թէ որ ընտաղատութենէ ազատ մնայ, և մասնաւոր չնորհակալութեան չ'պատար :

Հիմն Փափագեան էֆէնտիկ դիտողութիւնը լսեցիք, Մէրեմ-գուլի էֆէնտիկ բացատրութիւնն ալ լսեցիք . միթէ այս բանը բաւական կը համարիք :

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արեւմն քուէի կը դնեմ Ատենապետաց զիւանի տեղեկաւորոյն եզրակացութիւնը :

Չայս ընելով Ատենապետ փաշան հետաքննուած քուէի դրաւ եզրակացութեան

Ա. և Բ. կէտերը, որք ընդունուեցան ժողովէն միաձայն հաւանութեամբ :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ատենապետաց զիւանին համար չնորհակալութիւն առաջարկեցիք, այն ալ քուէի դրէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ կէտն ինչպէս քուէի կրնամ դնել, քանի որ ատենապետաց զիւանի նախագահն ես խկեմ և անդամք հերիք կը համարին իրենց պարտաւորութիւնը կատարած ըլլալն, և յատուկ չնորհակալութեան չեն սպասեր, ինչպէս և ես :

4.

Պատճախն որոշելու-նիւն ընորդէ՞
Օգտէն էֆէնտիկ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ ժողովը կը յիշէ, վերջընթեք իտտին մէջ՝ առնանապետութեանց տաղարկութեան իրնորոյն առթիւ մեր ընկերներէն Օգտէն էֆէնտի անդուլութեամբ նախատական բառ մը արտասանեց վարչութեան դէմ, որոյ համար վերջին նտտին զիւանը մտազիր էր կանոնադրութեան պահանջած սնորէնութիւնն ՚ի դործ դնել . բայց ըստ որում Օգտէն էֆէնտի ներկայ չէր, և կանոնապանցը անձին արդարացուցման համար ըստ կանոնի իրաւունք ունի անդամ մը խօսք առնելու, պատժոյ տնօրէնութիւնն այս նտտին ձգուեցաւ :

ԽՕՃԱՍՍԱՐԲԱՆ Օ. ԷՖ. — Կանոնապանց մի՛ ըսէք, այլ ամբաստանեալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստոյգ է որ Օգտէն էֆէնտիի համար Քաղաքական ժողովը բողոք բարձաւ, բայց ամբաստանող չեղաւ զնա . ուստի Օգտէն էֆէնտի գինքըն ամբաստանեալ նկատելու իրաւունք չունի, զի բողոք և ամբաստանութիւն մի և նոյն բան չեն նշանակեր : Օգտէն էֆէնտի մեր ճարտարախօս ընկերներէն մէկն ըլլալով հանդերձ՝ նախատական բառ մ'արտասանեց այս ժողովին մէջ, անհուշտ անդուլութեամբ . մեր կանոնադրութեան

հեղինակը՝ լուսահոգի Ռուսինեան էֆէն-
տի կանոնապահնց կանուանէ զայսպիսիս .
ուստի ես ալ անոր հետևութեամբ նոյն
բառը գործածեցի : Արդ՝ Օգսէն էֆէնտի
պատճախան տնօրէնութեան պիտի են-
թարկուի ոչ թէ անոր համար որ Քաղա-
քական ժողովը բողբալի որ մատուցած է
իրեն դէմ, այլ վասն զի նա կանոնի դէմ
մեղանչեց յատենի աստ, և զիւանը պար-
տաւորութիւն ունի՞ծողովին պատուոյն նա-
խանձանդի որ ըլլալ և կանոնական պատ-
ժով հատուցում պահանջել կանոնադրան-
ցէն : Բայց օրինաց գործադրութեան ձեռ-
նարկելէ առաջ կը հրաւիրեմ Օգսէն է-
ֆէնտին խօսք առնուլ եթէ արդարացուց-
ման համար ըսելիք մը ունի :

ԽՕՃԱՍԱՐԵՆՆ Օ. ԷՖ. — Խօսելէ ա-
ռաջ պիտի աղաչեմ զժողովն որ իւր դիր-
քը լաւ ըմբռնէ . վասն զի դատաւորական
դիրք մ'ունի այսօր . Ատենապետ փաշան
թէ և կանոնապահնց նկատեց զիս, բայց
ստենապետը ժողով ըսել չէ . ես ինքզին-
քս ամբաստանեալ նկատելով պիտի խօ-
սիմ . ուստի կը կրկնեմ որ ժողովն իւր
դիրքը լաւ ըմբռնէ արդարացուցման հա-
մար կոչուած անձը լսելու ատեն, մա-
նաւանդ երբ նա մէկ անգամ պիտի խօ-
սի : Այժմ կ'սկսիմ խօսիլ, և ներեցէք որ
ձեր ամենէն աւելի կարճ խօսող ատե-
նաբանն այսօր իւր սովորականէն մէկու-
կէս աւելին խօսի :

Անցեալ նստին մէջ կըր ամենքս՝ մա-
նաւանդ ես՝ Քաղաքական ժողովոյ բոլո-
րովին բացակայութեանը իւր իրաւունք-
ները կը պաշտպանէինք, իբրև մենէ ընտ-
րեալ վարչութիւն մը դատարարութեան
խնդրոցն միայ անոր կարծիք տալու իրա-
ւունքը կը յարգէինք և ժողովին միաձայն
որոշմանը հասնելով անոր իրաւունքը պաշտ-
պանեցինք և յարգեցինք, կարգն եկա-
այդ դատարարութեան տեղեկագրին
տպագրութեամբ օր յառաջ երեսօխոխա-
նաց ձեռքն յանձնուելուն կարևորութեանը
և ստիպողականութեանը :

Քաղ. ժողովը բոլորովին բացակայ էր

և չէր կրնար խոստանալ մեզ այդ տպագ-
րութիւնը օրին հասցնել . ասոր վրայ Ա-
տենապետ փաշա յայտարարեց սա խօս-
քերը բուն իր բառերովն :

«Ռուք կարծեցիք թերևս որ՝ խնդիրն
«օրակարգն անցնելուն պէս անմիջապէս
«կրնանք վիճարանութեան ալ ձեռնարկել,
«այս ընելու համար պէտք է որ այսօր-
«ւան ատենագրութիւննիս տպուած մեր
«ձեռքը հասնի յաջորդ նիստէն դոնէ 24
«ժամ յառաջ : Բայց ասիէ երկու ամիս
«առաջ եղած նստին ատենագրութիւնը
«չ'ստացանք տակաւին տպարանէն, ի՞նչ
«պէս պիտի ընենք : »

Ատենապետ փաշային այս խօսքը ատե-
նագրութեան մէջ տպուած է նոյն ինքն
հարկաւ իրեն սրբագրութեամբը, ճիշդ
այնպէս՝ ինչպէս սրբագրութեան միջոցին
յաւելուածներ եղած կը տեսնուին երբեմն
զիւանական պատասխանատուութեանց
իրևև նախնական պատրաստութիւն :

Այդ պէտք չէ ինձ հոս խնդիր ընել .
այլ պէտք եղած բանն է Ատենապետ փա-
շային՝ ի՞նչպէս պիտի ընենք ըսելով ժողով-
վին ուղարկութեանը յանձնել Ազգ. ժո-
ղովոյ տպագրութեանց օրին հասնելու
խնդիրն :

Ի՞նչ պատասխան կ'սպասէր զիւանդ
ժողովն իր այդ հարցմանը փոխարէն :
Պիտի ըսէք հիմա՝ Էթեթիզմիւն բառը
լսել չէր սպասեր . այո՛, ես ալ ձեր կար-
ծիքէն եմ թէ չէր սպասեր և պիտի դամ
տալ այդ բառին պատասխանը, որու
դէմ Քաղ. ժողովը բողբ բառնալու ա-
ճապարեր է՝ առանց սպասելու այդ բա-
ռին ի՞նչպէս ըսուած ըլլալուն պարագա-
ներն իմանալու . աճապարեր է Մասիսի
մէջ տեսնելով այդ բառը իբրև հայհոյու-
թիւն . աճապարեր է այս ու այն երես-
մեր կերպով լրածներուն գոհ ըլլալով և
ատոնք իբրև ստոյգ կամ վաւերական ըմ-
բռնելով . մինչդեռ իւր պարտքն էր ըս-
պասել ատենագրութեան մէջ տեսնելու
այդ բառը իր բոլոր պարադաներով և
իրևև ստուգիւ ըսուած :

Հող չէ, թող աճապարած ալ չսեպ-
 ւի. ես գոհ և շատ գոհ եմ որ այդ բո-
 ղքն ըրաւ. միայն կը ցաւիմ թէ Քաղ-
 ժողովը որո՞ւ ղէ՞մ բողոք բառնալու պար-
 տաւոր ըլլալն ալ մոռցեր է իր աճապա-
 բանաց մէջ և այս մոռացումը նպատակի
 մը համար է. վարչութիւնը որ և է երես-
 փոխանի հետ ուղղակի յարաբերութեան
 մէջ չընար ըլլալ. իր յարաբերութիւնը
 այս ժողովին ամբողջութեանը հետ է.
 երբ հարցում կուզէ երեսփոխան մը՝ այս
 ժողովն առանց այդ հարցումը իւրացնելու
 Քաղ. ժողովն պարտական չէ պատասխան
 տալ. երբ յարձակում մը կընէ երեսփո-
 խան մը վարչութեան ղէ՞մ, վարչութիւնն
 այդ յարձակման ղէ՞մ ինքզինքը արդա-
 բացնելու պարտական չէ յարձակումն ը-
 նող երեսփոխանին առաջը. այլ ինքզինք
 արդարացնելու պարտական է այս ժողո-
 վին հանրութեան առջև՝ երբ ժողովն այդ
 յարձակումը իւրացնելու ըլլայ. վարչու-
 թիւնը իրաւունք չունի բողոք բառնալ
 երեսփոխանի մը ղէ՞մ՝ եթէ այդ երես-
 փոխանը մինչև անգամ էն ծայրայեղու-
 թեանց դիմէ. այլ վարչութիւնը պիտի
 դիմէ թէ՛ արդեօք այս ժողովն իւրացո՞ւց
 այդ ծայրայեղութիւնը և այն առնելու
 ողբ պիտի բառնայ այս ժողովոյն ղէ՞մ
 հրաժարական տալով, զի իւր յարաբե-
 րութիւնը այս ժողովին հանրութեանը
 հետ է, զնոյն կազմող մասնաւորութեանց
 հետ չէ. ասոր համար է որ ատենական
 կանոնագրութիւնը շատ մը տրամադրու-
 թիւներ ունի յարաբերութեան մասին
 ր մէջ Ազգ. ժողովոյ և Վարչութեան,
 բայց ընաւ յօդուած մը չունի այն մասին
 թէ՛ երբ վարչութիւնը բողոք բառնայ
 մասնաւոր երեսփոխանի մը ղէ՞մ իր երես-
 փոխանական պարտաւորութիւնը կատա-
 ղելու մասին, այդ բողոքն ի՞նչպէս և որ
 օրինօք պիտի անցնի ժողովէն. արդէն ալ
 չէր կրնար ասանկ յօդուած մը գրուիլ,
 զի այն ատեն երեսփոխանայ ազատու-
 թիւնը կերպով մը ճնշուած կըլար վար-
 չութեան զանազան ձևերու տակ ընելիք
 բողոքներուն տակ :

Պիտի ըսէք հիմայ, միթէ երեսփոխան
 մը երբ հայհոյութիւն ընէ վարչութեան
 ղէ՞մ, վարչութիւնը բողոք ընելու իրաւունք
 չունի. հիմա եթէ չունի ըսեմ՝ թերի
 խօսած պիտի ըլլամ ու պիտի սրտոտիք :

Արդացէք ատենական կանոնին պատ-
 ժական դուլը, հոն պիտի տեսնէք թէ՛
 բոլոր այդ խնդիրները ժողովն իրեն վե-
 րապահած է և ուրիշի բողոքելու իրաւունք
 տուած չէ. զի եթէ այդ իրաւունքը ժո-
 ղովն իրեն չվերապահելով՝ վնասելոյն բո-
 ղքելու իրաւանցը ենթարկէր, հարկ կըլ-
 ար ուրեմն ժողովին սպասել որ բողոք
 ըլլայ վնասելոյն կողմէն. սակայն այն ա-
 տեն քանի մը շարամիտ մարդիկ՝ քաւ լի-
 ցի որ մեր մէջ գտնուին՝ կրնային միա-
 բանելով ժողովն հայհոյութեանց սրահ մը
 դարձնել իրարու ղէ՞մ բողոքելու իրա-
 ւունքին չգործադրելով, սակայն կանոնը
 լաւ նախատեսած է այդ կէտը և իր պատ-
 կանքին ու բարեկարգութեանը հողն
 իր վրայ ունենալով ուրիշի իրաւունք չէ
 սահմանած, որպէս զի անոր բողոքելուն
 սպասելու հարկ մը չմնայ. և իր այս իրա-
 ւունքը այնքան խստիւ իրեն վերապահած
 է՝ որ մինչև իսկ վիճարանելու ժամանակ
 չթողլով՝ ատենապետին անկախ հեղինա-
 նութիւն տուեր է պէտք եղածն անմիջա-
 պէս գործադրելու. և ալ աւելի հետոն
 երթալով՝ իրաւունք տուեր է ատենապե-
 տին՝ ի կարգ կոչելէն ետքը անմիջապէս
 ինքզինք արդարացնելու խօսք ուզող ե-
 րեսփոխանին խօսք չտալ, եթէ չհաճիր
 խօսք տալ :

Տեսաւ տեա՛րք, թէ պատուոյ և բա-
 րեկարգութեան խնդիրը կանոնը որ աս-
 տիճան խստիւ իւր վրայ աւեր է և ան-
 կախ հեղինակութեամբ Ատենապետին
 յանձնել է անմիջական պատժական և
 այլ գործադրութիւնը՝ առ ոչինչ գրելով
 երբեմն Ատենապետին խիստ վարուելով
 ընելիք թեթեւ անիրաւութիւնն անգամ:
 Ար մոռնանք յիշել թէ՛ ատենական կա-
 նոնագրութեան սկզբամբ այս կարգի բարե-
 դիրները յաճողը նիստի ալ չեն կրնար
 մնալ, ինչպէս որ չէր մտացած նաև այս

խնդիրն, բայց հող չէ, դիւանն իւր պարտաքը կատարած ըլլալով թող նորէն կըրկենուած ըլլայ հակառակ կանոնի :

Այս բողոքը իրաւանց կէտը պարզելէս և ինքզինքը երբէք Քաղ. ժողովոյ բողոքին տակ չըմբռնելէս ետքը, զի նա իրաւունք չունի ինձ դէմ՝ բողոքելու այլ ընդհանուր ժողովին դէմ բողոքելու իրաւունք ունի երբ զայն վարչական պատուոյն անտարբեր նկատէ և իւր այս իրաւունքն ալ իւր պատճառարանեալ հրաժարական մը տալու առհմանէն անդին չանցնիր, կը պատրաստուի միայն Ազգ. ժողովին առջև ինքզինքը արդարացնելու՝ յանուն այս ժողովին իբրև անկախ հեղինակութիւն՝ Ազգ. ժողովոյս ղիւանը դատախազ ըմբռնելով ինձ դէմ :

Խնդրոյն այս դոյնը պարզելուս պատճառը այն է որ Քաղ. ժողովը գիտնալով թէ մասնաւոր երեսփոխանի դէմ բողոքը ընելու իրաւունք չունի՝ փախուտ տուեր է այս միջոցաւ իւր բողոքախառն հրաժարական տալու պարտականութենէն :

Ատենապետ փառչ, դուք ժողովին հարցուցիք թէ ի՞նչպէս ընելու է. ես ալ իբրև երեսփոխան առաջարկեցի թէ վարչութիւնն ամեն օր կանարգէ այս ժողովութեան և ժողովս պէտք է քուէ տայ թէ՛ Քաղ. ժողովին անարգանք ընդունած կը համարի ինքզինքը - ես չրի թէ Քաղ ժողովոյ դէմ անարգանաց քուէ տալ կառավարիւմ, այս երկուքին մէջ մեծ տարբերութիւն կայ. ասոնց ո՛րն աւելի ծանր ըլլալը չեմ բնութեր, այլ բնածիս ինչ ըլլալը կը հասկցնեմ :

Արդ՝ պիտի հաստատուի նախ թէ ժողովս անարգուած է սորդեք Քաղ. ժողովէն : Եւ յետոյ իբրև անոր հետևութիւն, խնդրոյ նիւթ ըրած բառերնուդ բացատրութիւնը պիտի տամ :

Ատենական կանոնագրութեան 94 բղ. յօդուածը կրոյ :

« ժողովրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարուած է ատենապարտութեանց հրատարակմամբը, որ՝ իբրև

« արձագանք ժողովին՝ համարէն ազգին « լողութեանը կը հասնի : »

Գիտէք երեսփոխան էֆէնտիներ՝ թէ այս ժողովս ունկնդրութեան պատրուակին տակ ի՞նչ յարձակումներ կրեց, ի՞նչ ղեղձումներ չգործուեցան և ի՞նչ վտանգալից օրեր չանցան. — ինչպէ՞ս աւանուցաւ ատոր դէմը, և որո՞վ իրաւամբ այսօր ժամանակին տոմսակ շքնդուտող պաշտոնի դէմ դռները կը փակես և դու՞ կըլլաս թէ սոյ գիտնամբը անիրաւութիւն մը գործած չես, թէ խիղճդ կատարեալ հանդարտ է այս մասին. — ասոնք միմիայն ժողովին ատենագրութեան հրատարակմամբը եղան և ժողովուրդն ու երեսփոխանութիւնն ատով դոհացաւ, ժողովն իր ներքին բարեկարգութիւնը և ազատ խօսելու ապահովութիւնը ատով զերտաւ :

Արդ որովհետև ժողովրդեան իրաւունքը տրուած է կանոնով ժողովին խօսքերն իմանալ և դու կը զբանս ատոր այդ իրաւանց գործադրութիւնը, ի՞նչ ըրած կըլլաս. — անիրաւութիւն և բռնապետութիւն ըրած կըլլաս. անիրաւութիւնն ու բռնապետութիւնը միշտ իրենց կը քաշէ դէմինին ալ անիրաւութիւնն ու բռնապետութիւնը. ՚ի մի բան, երբ դու ժողովրդին դէմ անիրաւութիւն և բռնութիւն կընես, այն ալ անոչուշտ կը պատարաստուի անիրաւութիւն և բռնութիւնը նեղ քեզ դէմ :

Այս կը նշանակէ ըսել թէ այս ժողովն այդ կերպով կը զրկուի ժողովրդէն ըստանալիք բարոյական գորութեանէն, և ժողովրդին դէմ եղած կըլլայ իրաւանակ նոր իրաւանց կողմը ժողովը՝ ժողովին իրաւանց կողմն ալ ժողովուրդը զանուանուալ :

Հիմա երբ Քաղ. ժողովն զԱզգ. ժողովս ըստ սկզբան այս մահացուցման վիճակին մէջ կը դնէ իւր ազգէն ասած այնքան դրամին դէմ՝ աղքատ իւր համարատական իրաւունքը գործադրելու միջոցէն զրկելով, մեք որ հոս ազգին իրաւունքը պաշտպանելու պաշտօն ունինք

լուս կենալու էինք. — ո՛չ, մեք լուս չը կեցանք երբէք. 1870 էն ՚ի վեր երբ այս Ազգային Ժողովը բացուեցաւ, անկէ ՚ի վեր այս ատենագրութեան հրատարակութեան խնդիրը կը յուզուի, հոգեւոյս Այվատեան Մատթէոս էֆէնտին կրնամ ըսել երկար տարիներ այս խնդրոյն համար մաքառեցաւ. խիստ շատ անգամ խնդիր յարոյց այս Ժողովին մէջ. մէկ քանի դիւաններ ամբաստանեց. Ժողովս միշտ ճանչցաւ անոր բարձրացուցած ձայնին իրաւացի ըլլալը. քանի քանի անգամ այս Ժողովս վճռեց որ ատենագրութիւններն անպատճառ յաջորդ նիստին տալարեալ հասնելու են ազգին ձեռքը. սակայն եթէ երբեմն այս մասին ուղղութիւն պահուեցաւ, միշտ զեղծում տեղի ունեցաւ. միթէ աննպատակ է այս տեսական զեղծումն այս աննշան ծախքին Քաղ. Ժողովը կողմէն զյացուելովը:

Երեսփոխանաց բարեմտութիւնը չուզեց այս զեղծման նպատակ մը յատկացնել, բայց ես կըսեմ թէ նպատակաւոր է այս և պիտի հաստատեմ և ըստ այնմ պիտի ամբաստանեմ Քաղ. Ժողովը թէ սա զինքը ծնող մարմնոյն զէմ անարգական զեղք մը բռնած է:

ՄԵՐԵՏԻՄ-ԳՈՒՂԻ Թ. ԷՅ. — Արդարաւորապէս է այս, ատենապետ փաշա:

ՔՈՒՍՄԱՆՅԵԱՆ Մ. ԷՅ. — Ինքզինք արդարացնելու իրաւունք ունի ըստ կանոնի, բայց ոչ ամբաստանելու, որոյ զէմ կը բողբեմ:

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՅ. — Մտիկ ընենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՄ. — Կաղաչեմ, մի ընդմիջէք. սկիզբէն յայտնեց Օզտէն էֆէնտի որ երկարորէն պիտի խօսի, թե՛ ըստ նիստադրելու համար այն պարաբաններն որ զինք ակամայ անվայել բառ արտասանելու մղեցին, և դուք ներողամբութիւն ցոյց տուիք. ուստի պէտք է համբերէք, մանաւանդ որ իբրև դատաւոր պարտաւորութիւն ունիք երկայնմտութեամբ ըսել զինքն արդարացնելու համար խօսողը:

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ազգային անհատը չը կայ մասնաւոր վայելմունք մը որու զէմ տուրք մը չլվարեն. եկեղեցի կերթան, կամաւոր տուրքերնին կուտան. դպրոց կը զրկեն զաւակնին՝ թոշակնին կուտան. դատ մը կունենան՝ տասանորդնին կուտան. իմուխտայէր մը պիտի աւնեն՝ կը վճարեն. վերջապէս ինչ որ կը տանին անհատապէս փոխարէնը կը վճարեն. և սակայն բաց ատենցմէ ազգային տուրք մ'ալ կուտան. ինչ կը վայելեն ազգային այս ընդհանուր տուրքին փոխարէն. ոչինչ ուղղակի, այլ պիտի ստանան ընդհանրապէս, այն է զիտակցութիւն ազգային դործոց ընթացքին և բարոյական համարաբանութիւն միայն. ասկէ անդին բան մը չունին վայելելիք: Միթէ միայն քուէ տալու իրաւունք մը ունիք ըսելով պիտի խաբէ՞ք Ժողովուրդը:

Արդ ո՞րն է այն միջոցը որով ազգը իւր վճարած ընդհանրական տուրքին փոխարէն վայելէ իւր ազգային դործոց ընթացքին վրայ ունեցած գիտակցութեան իրաւունքը. — այդ միջոցը միմիայն Նիդէրլանդներու ատենագրութեանց հրատարակութիւնն է. մեք հոս հարցում պիտի ուղղենք ձեզ. և դուք պատասխան բացատրութիւն պիտի տաք. այդ պիտի հրատարակուի ատենագրութեան միջոցաւ և ազգը իւր դործոց վրայ գիտակցութիւն պիտի ստանայ. մեք հոս ձեր ազգային, քաղաքական և դրամական գործերուն համարը պիտի աւնենք, դուք ալ ձեր համարը պիտի տաք. ատենագրութիւնը պիտի հրատարակուի օրին և ազգը ատով պիտի գիտնայ իւր ազգային դործոց ընթացքը, ատով ազգը իւր այլևամբ ուղղակի տուրքին վայելումները պիտի ստանայ:

Դուք կը զրանաք ազգին այս իրաւունքը և չէք տպեր ատենագրութիւնները որ ազգն իւր գիտակցութեան իրաւունքը դործադրէ. բայց ազգը չճանչեր զձեզ. կը ճանչէ զձեզ իբրև իւր երեսփոխանը. ազգը ձեզ չմեղադրեր իւր այս իրաւանց

բռնարարութեանը համար, մեզ կը մեղադրէ իւր իրաւունքը տեղը չտանելնուս համար. Արդ ուրեմն Քաղ. Ժողովը ազգին այդ գիտակցութեան միջոցը զլանալովը զԱզգ. Ժողովս ինչ ղիբքի մէջ շրած կըլլայ ազգին առաջը. Թող Ժողովս տայ ասոր պատասխանը :

Կրտէք մեզ թէ ստակ չկայ :

Ենթադրենք պահ մը թէ իրաւ ստակ չկայ. լաւ, ինչո՞ւ ուրեմն ստակ չկայի խօսքերն ուղղակի չէք բերեր Ժողովիս, որ պաշտօն ունի ստակ չկային դէմն առնելու համար ձեր առաջարկած միջոցներուն վրայ վիճարանելով վճիռ տալ կըրնա՞ք ըսել մեզ թէ դուք ստակ չկային դէմ առաջարկութիւններ բերիք Ժողովոյս և Ժողովս զլացաւ իւր վճիռը տալ. ազգային տրոց վրայ ինչ խնդիր որ բերիք, բոլորն ալ վաւերացուց Ժողովս : Աւերմն Բնչ հարկ կար Ժողովոյս աստեղադրութեանց միջոցաւ ըլլալիք համարառութեան իրաւունքը զլանալու : Այս առարկանք մ'է որ բրիք Ժողովիս, զայն ազգին առջև իւր իրաւանց պաշտպանութեան անտարբեր ցուցնելով :

Սակայն արդեօք իրաւ ստակ չկայ :

Քաղ. Ժողովոյն Ընդհ. Ժողովոյս առջև ստակ չկայ ըսած ըլլալուն պահ մը այս Ժողովս խարած չըմբռնելու համար պիտի հաւատամ :

Ստակ չկայ կրտէք Քաղ. Ժողովը, լաւ ըմբռնեցէք երեսփոխան Տեառք այս յայտարարութիւնը որ Քաղ. Ժողովէն կուգայ :

Ստակ չկայ, լաւ, բայց Քաղ. Ժողովն այս ասոր իւր փետրվար 10ի նիստին մէջ Պատրիարքարանի պաշտօնէից ամսականաց հետեւեալ յաւելումն ըրաւ .

Վէբէլ Տէր հօր ամսականը, ՚ի բայ առեալ նշանտուքի աջահամբոյրը, 2000 դրի աւելցուց, ազատ թողով զնա դարձեալ աջահամբոյրն ստանալու :

Տ. ՅՈՒՂ. ՔՂՆՅ. ՄԿՐԵԱՆ (Պատրիարքական փոխանորդ). — Սխալ է :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. (Առանց կօտ

Էնդրելու) — Երբ մեք Օգոստէն էֆէնտիի երկար խօսելուն թողտուութիւն ըրինք, այն համոզմամբ էր որ խնդրէն դուրս ելած ասեմն Կիւսանն զնա ՚ի խնդիր կը կուէ՛ բայց դուք չէք կատարեր ձեր պարտաւորութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, էֆէնտի, այս ասեմնին մէջ ասանց խօսք խնդրել և ընդունելու խօսիլ ներելի չէ՛, բայց աստի Կիւսանն դէմ «կանոնական դիտողութիւնք» ընելու համար խօսք կըրնաք առեալ, բայց յանդիմանական ո՞ճով Կիւսանը թշնամանելու իրաւունք չունիք. բայց դուք նորեկ էք մեր մէջ. ուստի այս անգամ միայն այս դիտողութեամբ կանցնեմ. ուրիշ ասեմն ուշադրութիւն ըրէ՛ք, կ'աղաչեմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Քարու քէշեաթի էֆէնտիին ամսականն էր 1800 դր, 5200 ըրաւ : Թումաս էֆէնտիին ամսականն էր 1750 դր, 2600 ըրաւ : Թէլեան էֆէնտիի ամսականն էր 1000 դր, 1690 ըրաւ : Խաչատուրեան էֆէնտիի ամսականն էր 1000 դր, 1690 ըրաւ : Սեպուհ էֆէնտիի ամսականն էր 800 դր, 1500 դր ըրաւ : Գանձապետիին ամսականն էր 580 դր, 650 ըրաւ. չեմ ուզեր ասիլեալի մանրամասնութիւն սիւշել. չեմ ուզեր նաև Ս. Պատրիարք հօր ամսականին 2000 դրի մօտ գումար մը աւելցնելն ըսել :

Թող ներեն ինձ անուանին յայտնած դիւանական պաշտօնեաներն. իմ խօսքս անոնց ամսականին աւելնալուն վրայ չէ՛ այլ Քաղ. Ժողովոյ ստակ չունինք ըսելը ջրելուն վրայ է :

Հիմայ կը հարցնեմ ձեզ. կա՞մ ստակ ունինք, կա՞մ չունինք. եթէ ունինք ՚ի՞նչո՞ւ ազգին իրաւունքն եղող ասեմնադրութեանց հրատարակման ստակ չէք տար. եթէ ստակ չունինք՝ այս յաւելեալ գումարը ո՞ւնակից ճարեցիք :

Ներեցէք ուրեմն որ բեմական լեզուով ըսեմ՝

Քաղ. Ժողովը կա՞մ կը խարէ Ազգ.

ժողովը առակ չունիմ ըսելով, կամ ազգային սնտուկը սնանկութեան պիտի հասցնէ՞ չունեցած ատակը դիւանապետաց տակ խոստանալով : Չեմ ուզեր հոս ծանրանալ այն խնդրոյն վրայ՝ որ Քաղ. ժողովը դանձապետ կարգած անձը առանց ժողովը գիտութեան իր կողմիցը կանցնէ՞ քանի մը հազար դրը, և անպատիժ մնալէն զատ տակաւին իր պաշտօնին վրայ կը կենայ, մինչդեռ ոչ թէ քանի մը հազար դրը, այլ եթէ մէկ դրը ալ իր կողմիցը անցուցած ըլլար՝ այն վայրկիւնէն պարտու պատշաճ տնօրինութեան մը ենթարկուելու էր՝ հասարակաց դրամական վտանգութիւնը չկործանելու համար : սակայն բնաւ որ և է տնօրէնութիւն մը չեղաւ և դեռ նոյն դուռնը անոր կողմիցը անցած է . բայց Ազգային ժողովը ատենադրութեանց խեղճ տպագրիչին ստակ չը կայ, որ ազգին գիտակցութեան իրաւունքը տեղը երթայ մինչդեռ անդին ամառկան 5000 դրը յաւելում կըլլայ սրաշօնելից :

Բնեմ ուրիշ մ'ալ, որ տեսնուի թէ անոնք որ դրամի գործողութեանց մասն են՝ դիւրութիւն տրուած է անոնց ձեռքերին դիւրութեամբ դրամի տանելու : Տնտեսական խորհրդոյ դիւանադպիրը այսօր պարտական է սնտուկին քանի մը հազար դրը, մինչդեռ միւս դիւանադպիրներն առնելէք ունին սնտուկէն . այս ամօթ չէ նոյն դիւանադպիրն, ամօթ է արդար բայտում չընող մենէ ընտրեալ պաշտօնէութեան, որ դրամ չունիմ ըսելով դատական հարստահարութեանց ատենադրութիւնն ալ չտպեց և դուրսէ գործու մտարացկանութեամբ տպուեցաւ այն :

Ար հարցնեմ հիմա Քաղ. ժողովին . ինչ է այս դրամական անխլանութիւնը, լատի հաճոյից ոմանց ամսականաց յաւելում, այլոց զեղչում, ասոր անոր փոխատուութիւն և որ առաւելն է՝ այսքան ընտայութեան մէջ մի միայն ազգին իր գործաց գիտակցութեանը միջոց Ազգ. ժողովը պարտաւարութեանց տպագրութեանը պիտի :

Այս անխլանութիւնը ծախսոց կողմն է . մտաբեր կողմն ալ կայ անխլանութիւնը :

Ամեն սահմանադրական ազգաց մէջ ազգին վրայ տուրք դնելու իրաւունքը երեսփոխանականին է . սակայն մեր Քաղ. ժողովը՝ առանց երեսփոխանութեան հարցնելու՝ ազգին վրայ դրուած տրքը 100ին 50 յաւելում ըրաւ՝ թղթադրամը 100 դրէ ի առնելու դիմակին տակ : Եթէ այդ դիմակին սկզբունքը կընդունիր և Քաղ. ժողովը ձեռնհաս կը նկատէք այս մասին, նա եթէ վաղը 100նոց ոսկին 100 դրէ ի առնելու ըլլայ և ազգին վրայ դրուած տուրքը կէս առ կէս աւելցնէ, դուք իրաւունքը չպիտի ունենաք դանդատելու, և ազգային անհասարկ այդ ծանր տուրքին տակ պիտի ճնշուին ինչպէս հիմայ կը ճնշուին 100ին 50 յաւելման տակ առանց գոնէ այսչափ չտայլութեան և անխլան տուրքին տակ ազգին իրաւունքն էրդը ամսական 4-500 դրը սպազրական ծախքը հանելու :

Արդ ինչնքը եղբայրութեան և Քաղ. ժողովը կողմէն ես ինձ հարցնեմ թէ՛ այս ամենքը սակասութիւն է, բայց միթէ էրեպիտիլիթն է :

Ես ալ կըրեմ թէ՛ այս ամենքը հարկաւ անուն մը ունին, բայց այդ անունը երեպիտիլիթն էրաւ չէ, դի մեր բնական բառարանին մէջ այս բառը չկայ, թէ և մեր անհատական և ընկերական խօսակցութեան բառարանին մէջ կայ, դորդուք ամենքնիդ ալ ամեն օր գրեթէ ալ մեն պարագայի մէջ կը հանէք բերնելու նուզ առանց հայհոյել մ'ըլլալու :

Ես Քաղ. ժողովին երեպիտիլ չըսի . ըսի նաև թէ Քաղ. ժողովը երեպիտիլիթն էրաւ, այլ ըսի. եթէ մեր այս ատենադրութիւնները թարգմանուին՝ Եւրոպոսի մը երեպիտիլիթն է ըլլանք ասոր . խօսքս հաստատական ձևի տակ չէր, հարցական ձևի տակ էր . սակայն ստակ աւելին ըսած էի նոյն խօսքս մէջ, ինչո՞ւ ասոր դէմ չըրողքեցին :

Ըսի թէ Քաղ. ժողովը զԱզգ. ժողովի

կանարգէ և առաջարկեցի որ ժողովս ինքզինքն համար Բաղ. ժողովէն անարգեալ ըլլալու քուէ տայ :

Բաղ. ժողովը չըողքեց ասոր դէմ, ինչ որ իր պատուոյն դէմ ըմբռնեց՝ ասոր դէմ բողոքեց, ինչ որ իր պարտաւորութեանը դէմ՝ ասոր վրայ լուս կեցաւ. ըսել է թէ Բաղ. ժողովն ասելի պատուոյ նախանձախնդիր է՝ քան թէ պարտաւորութեան. կրնաք հասկնալ այս երկուքին տարբերութիւնը դուք, առանց իմ կողմէ բացատրուելու :

Արդ կը կրկնեմ առաջարկութիւնս թէ Բաղ. ժողովը սկիզբէն ՚ի վեր Ազգային ժողովոյս դէմ անարգական դիրք մը բռնանած է և այս այլ ևս անտանելի եղած է ժողովոյս :

Բաղ. ժողովը չը ներկայ դատուիքներ. կայացուցչով մը զոնէ Ազգային ժողովիս նիստերուն, որ պէտք եղած բացատրութիւնները տայ հարկ եղած տեսն. այս նախախնդր է :

Բաղ. ժողովը մենէ ընտրեալ և մեր ժողովոյն անդամ՝ Բաղ. ժողովոյ ատենադպիր Մեծ. Նուրեան էֆէնտին պարտաւանաց քուէով կը պահէ և շինացներ այս ժողովոյս, որ իրեն համար պարտաւելի դատուած անձը իբրև պարտաւելի դադրի նստ այս ժողովոյս անդամակցութենէ, այս անարգանք է ժողովիս :

Բաղ. ժողովը օրէնսդրական խնդիրներ կը ներկայացնէ Բ. Գրան առանց այս ժողովիս հարցնելու. ատենցմէ մէկն է 21 տարեկանէն վար եղողին կրօնախօսութիւնը չընդունուելու առաջարկութիւնը, որ սակ օրէնսդրական է և այս ժողովոյս իրականութեանը սահմանեալ, Բաղ. ժողովոյ այս ըրածը անարգանք է այս ժողովիս :

Բաղ. ժողովը ամիսներով պիտէ չըբերի ժողովիս. և ըստ քմաց տղիին վրայ տուրք կը դնէ և ամսականաց շուսլ յաւելուաներ կընէ, այս անարգանք է ժողովիս :

Բաղ. ժողովը՝ երբ ատենապետ փայան ամիսներով Պօլսէն բացակայ ըլլայ՝

չգումարեր Ազգ. ժողովս. այս անարգանք է ժողովիս :

Բաղ. ժողովը՝ երբ կը տեսնէ թէ Ազգային ժողովոյս զիւանին վրայ խնդիր է եղած Ղալաթիոյ վարժարանին կեդրոնական վարժարան կամ վարժապետանոց ըլլան, անդին կ'առաջարկէ դայն պատրիարքարան ընել. այս անարգանք է ժողովիս :

Բաղ. ժողովը վերջապէս իր բոլոր շտաբով թեմային հանդերձ՝ ամիսը 4—500 դրը Ազգ. ժողովոյս ատենապետութեանց տալարութեան ծախքը վճարել չուզեր, որ ազգին իր գործոց ընթացքին վրայ ունենալիք դիտակցութեան միակ միջոցն է. այս սլ անարգանք է ժողովիս :

Ուրիշ մ'ալ կայ, որ ամենէն մեծն է, բայց ինձ կը վերապահեմ ասոր վրայ խստելու ժամակարարողն՝ երբոր այդ մասին արդէն ուզուած գրութիւնը հասնի ժողովիս ձեռքը, որպէս զի հոն տեսնել թէ Քուրանն ու Աւետարանը ինչ կերպով հաշտեցուցեր է մեր Բաղ. ժողովը :

Արդ՝ մեր բեմակախ բաղդըքին մէջ չըտնուած, սակայն ընկերական խօսակցութեան բաղդըքին մէջ գտնուած և ձեր ամենուն ամեն օր գործածած երեւելու թէ բառին համար, որնոր բերնէս փոխած է և Բաղ. ժողովը անձնականութեանը դէմ երբէք թշնամանաց կամ հայհոյանաց համար գործածուած չէ, զի կը յարգեմ Բաղ. ժողովոյ անձնականութիւնը այնքան որքան ուրիշներ չեն յարգեր. դատաւարտեցէք զիս ձեր քուէովն չորստ օրինի, սակայն խղճի օրէնքով հարցուցէք դատաւարտութեան քուէ տուած ատեննիդ թէ արդեօք Բաղ. ժողովը Ազգ. ժողովոյս դէմ բռնած անարգական դիրքին և ամսական 4—500 դրէն ամենաւընջին ծախքի մը համար այսքան խնդիր մեծցնելուն ինչ անուն տալու է :

Բայց անկէ անմիջապէս ետքը կատարեալ Լարկեմ է կը պահանջեմ ժողովէդ որ Բաղ. ժողովին բռնած անարգանաց դիրքին դէմ ալ իր դատաւարտութեան քուէն տայ, զի եթէ իմ յանցանքս բառ

մը բերնէս փախցնելս է, անոնց յան-
ցանքը գիտակցութեամբ Ազգ. ժողովս
անարգած ըլլալու գործն է, չեմ կարծեր
որ դուք ալ բառին նախանձախնդիր ըլ-
լաք, իսկ գործին նստաբերք:

Ահա իմ բացատրութիւնս և առաջար-
կութիւնս, զոր ստորագրեալ կը յանձնեմ
դիւանին:

Օ. Խօճաարեան

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փոխ. Արե-
ւոյեռ Բաղ. ժողով) Օգսէն էֆէնտի կար-
գացածը վերէն 'ի վար ամբաստանութիւն
մ'է, վարչութիւնն իւր պարտաւորութիւ-
նը կը ճանչնայ և պատրաստ է հարցա-
պնդումներուն պատասխանելու: Այս
գաստ խնդիր մ'է: Գալով այն նախատա-
կան բառին որ յատենի աստ արտասան-
ւած է, վարչութեան պարտաւորութիւնն
էր այդ նախատանայ համար հատուցում
պահանջել. ուստի և իւր բերած բողոքն
Օգսէն էֆէնտի անձին վերագրութիւն
չունի, այլ այս ժողովին պատիւը պա-
հելու նախանձախնդրութեամբ է որ առ-
ինքն եղած նախատանայ համար հատու-
ցում կը պահանջէ:

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՍ. — Ինչպէս որ լը-
սեցիք, Օգսէն էֆէնտի ինքզինք արդա-
բացներու պատրուակաւ ամբաստանու-
թիւն մը ներկայացոյց Քաղաքական Ժո-
ղովին դէմ: Սոյն ամբաստանութեան կէ-
տը առ այժմ մէկդի թողով և այս մա-
սին Վարչութեան տալիք պատասխանն
ալ իրեն վերապահելով, անմիջապէս մեր
կանոնադրութեան տրամադրութեան կը
դիմեմ Օգսէն էֆէնտի կանոնադանցու-
թիւնը պատժելու համար և կը հրաւի-
րեմ զձեզ որ ձեր խղճին հասնուտ ար-
դարութեամբ դատեք զնա: Կանոնն այս-
պիսի պարագայից համար յանդիմանու-
թեան պատիժ կը տրամադրէ, և Ստե-
նապետին կուտայ զայն առաջարկելու ի-
րաւունքը: Չեզմէ շատերը ներկայ չէին
այն նստին ուր Օգսէն էֆէնտի անզգու-
շութեամբ այն նախատական բառն ար-
տասանեց Վարչութեան դէմ. իսկ ես

ներկայ էի, և այն օրուան տեղի ունեցած
յուզման թեթեացուցիչ հանգամանքնե-
րը նկատողութեան առնելով՝ պարզ յարի-
մանութեան աստ պիտի առաջարկեմ ձեզ
'ի պատիժ այն պակասութեան զոր մեր
ընկերը գործեց: Իսկ եթէ պարզ յանդի-
մանութիւն բաւական չհամարելով պար-
սաւանօք յանդիմանութիւն պահանջող
ըլլայ, թեր ու դէմ խօսելու համար եր-
կու ատենաբանի խօսք պիտի տամ՝ որո-
շելու համար թէ պարզ կամ պարսաւա-
նօք յանդիմանութիւն պէտք է ընել Օգ-
սէն էֆէնտի:

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Կանոնա-
զանց երեսփոխանին համար Գիւանին ա-
ռաջարկած պարզ յանդիմանութեան տը-
նօրէնութիւնը թեթև նկատելով, աւելի
ծանրացնելու պէտքն վրայ խօսք կուզեմ:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — Իբրև դա-
տին տէր՝ Ատենապետ փաշային առա-
ջարկած պարզ յանդիմանութեան տընօ-
րէնութիւնը բաւական գոհացուցիչ կը
համարիմ. իսկ Վարչութեան դէմ եղած
ամբաստանութեան խնդիրն ետքի կը պա-
հեմ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կարծեմ թէ դըլ-
խատոր կէտ մը կայ, որուն ուշագրութիւն
ընել պարտի ժողովն: Երեսփոխանին մէ-
կը նախատական բառ մը արտասանած է
այս ժողովիս մէջ. թէ և ես ներկայ չէի
այն նստին՝ ուր այդ բառն արտասան-
ւած է և պարագաներուն ալ ըստ բա-
ւականին տեղեակ չեմ, սակայն ամենքս
ալ մեր երեսփոխանական պատուոյն նա-
խանձախնդիր՝ կրնանք միանալ և այդ
նախատական բառին հետքը ջնջել մեր
մէջէն: Իսկ երբ կը տեսնեմ որ Վարչու-
թիւնը դատի տէր կը կանգնի և բողոք
կը բառնայ այն երեսփոխանին դէմ, որ
այդ նախատական բառը գործածած է,
մեր իրաւանքը դէմ բռնաբարութիւն կը
համարիմ և երբէք չեմ ընդունիր այս պա-
մէկը գայ դատախազ կանգնի ոչս պա-
րագայիս մէջ: Ստոյգ է որ Օգսէն էֆէն-
տի արտասանած բառն օրինաց դէմ ան-

ներելի պահատութիւն մ'է : Ուստի կաւաջարիւմ որ Վարչութիւնէն եկած բուրբը մերժելով հանդերձ միանանք ի գործ դնել այն կանոնական պատիժը՝ զոր Կիւսնն առաջարկեց :

ՄՍԳՄՈՒՑԱՆ Ս. ԷՖ. — Նուրեան էջֆէնտի սխալ հասկցած է իմ բաժնս . ես ըսել չուզեցի թէ Վարչութիւնը դատ բանալու դիտաւորութիւն ունի , այլ ըստ որում նախատական բառին արտասանւած օրը կանոնական գործադրութիւն մը չէր եղած , Վարչութիւնը զայդ պահանջեց և կը պահանջէ այսօր . ուստի Ատենապետ փառային առաջարկած պարզ յանդիմանութեան տնօրէնութիւնն ալ բաւական հատուցում մ'է ըստ մեզ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Վարչութիւնէն եկած բողոքն անտեղի դատելով կընդունիմ ինչ կանոնական պատիժ որ ժողովն ուզէ տնօրինել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուշադրութեան արժանի կէտ մը կայ զոր կազմելով աղեկ ըմբռնէք . Օգսէն էջֆէնտիի գործած պահատութիւնը Քաղաքական Ժողովին նախատինք , միանգամայն Ազգային Ժողովոյս արժանապատուութեան զպող յանցանք մ'էր . դիւանը անցեալ նստին Քաղաքական Ժողովոյ բողոքը չկարգացած պատճառն տնօրէնութիւնն առաջարկեց Օգսէն էջֆէնտիի համար . ըսել է որ այս գործը Օգսէն էջֆէնտիի և Քաղաքական Ժողովոյ մէջ չէ , այլ նորա և դիւանին մէջ որ ժողովն ներկայացունելու պատիւ ունի և անոր պատուոյն նախանձխանդիր ըլլալու պարտականութիւն : Ուստի ձեր ատենապետը Օգսէն էջֆէնտիի համար պարզ յանդիմանութեան քուէ կ'առաջարկէ , և արդէն մէկ քանի երեսփոխանք համամուտութիւն կը յայտնեն . եթէ հակառակող չկայ , սիրինք գործադրութեան : Իսկ եթէ հակառակ կարծիք պարտականել ուզողներ կան , պէտք է նախ այս կէտին վրայ վիճաբանութիւն բանալու կամ չբանալու խնդիրն որոշել քուէով :

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Խօսք կու

զեմ ցոյց տալու համար այն պատճառներն՝ որք կը հատուցեն զիս աւելի ծանր պատիժ տնօրինել , այն է պարտաւանօք յանդիմանութեան պատիժը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դեռ խնդրոյն մէջ մտնելու համար խօսք չեմ կրնար տալ . դուք ըսել կուզէք որ պարզ յանդիմանութեան քուէով գոհ չէք ըլլար , և պարտաւանօք յանդիմանութիւն կ'առաջարկէք :

ՓՈՓՈՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես պարզ յանդիմանութեան տնօրէնութեանն անգամ չեմ ընդունիր , և խօսք կուզեմ իմ կարծիքս բացատրելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Տակաւին չեմ կրնար խօսք տալ բացատրութեանց մէջ մտնելու համար :

ՓՈՓՈՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես աւելի խօսք չպիտի ընեմ , Ատենապետ փառա , այլ ձեր առաջարկած պարզ յանդիմանութեանն անգամ պէտք չըլլալը պիտի յիշեցնեմ ձեր սա՛ ստորագրութեամբը :

(Այս սահուն ատենաբան էջֆէնտիին կարգաց Ատենապետ փառային մէկ պաւտօնական նամակն ուղղեալ առ Երեսփոխան Նէմէնիսեան էջֆէնտին՝ որոյ օրէնակն է այս .

« Աւեճապատիւ էջֆէնտի .
 « Ձեր առ Ազգային Ժողովն մատուցած դրոյն վրայ՝ յանձնարարութեամբ ժողովին պէտք եղած քննութիւնն ընելով ստուգեցի և ժողովին հաղորդեցի թէ « Քարձրապատիւ Միտհաթ փառայի մեր Պատրիարքարանն այցելութիւն ըրած օրը Աջրազան Պատրիարքին ձեր հետ ունեցած մերժողական վարմունքը զձեզ իբր երեսփոխան արհամարհելու դիտմամբ տեղի ունեցած չէ , այլ պարզապէս պարտաւանօք և չխոթութեան արդիւնք է » . ուստի ժողովը որոշեց ձեզ աղղ առնել որ նոյն օրուան ցաւալի դէպքով ձեր երեսփոխանական պատիւն աղարտեալ չըրնար նրկատուիլ , և կրնար հանդարտ սրտիւ շարունակել ձեր պաշտօնը » : Մնամ ին . և յետոյ շարունակեց)
 Լաւ . երբ Աջրազան Պատրիարքը

զիտմամբ անարգած չէ ըսելով խնդիրը գոցեցիք առանց դատապարտութեան հարկ տեսնելու, ուրեմն ինչպէս Օգսէն էֆէնտիի համար դատապարտութիւն կառաջարկէք՝ երբ նա ալ զիտմամբ չըրի կրակ. ո՞չ ապարէն Պատրիարք և երեսփոխան անկերը հաւասար են հոս :

ԱՏՆԱՊՊԵՏ ՓԱՇԱ. — Պարտ կը համարիմ՝ փոքրիկ բացատրութիւն մը տալ այն կէտին վրայ՝ զոր Փափաղեան էֆէնտի յիշեցուց իմ առ Եէմէնիճեան էֆէնտի գրած նամակս կարդալով : Ժողովը կը մէջ որ Եէմէնիճեան էֆէնտիէն բողոք մ'եկած էր իւր երեսփոխանական պատիւն անարգուած ըլլալու համար, որոյ քննութիւնն առեւտրական յանձնուեցաւ. սոյն քննութեան արդիւնքը ցոյց տուաւ որ նախկին Մեծ-Եպարքոսին մեր Պատրիարքարան այցելութեան եկած օրը Արքայան Պատրիարքին կողմէ առ Եէմէնիճեան էֆէնտի մերժողական վարմունք մը տեղի ունեցեր է, զի նա չիտիւթեան պատու մը մէջ Նորին Արքայութեան մերձեցեր և հրամայողական ձևով բողոքախառն խօսքեր ըրեր է, որոց Արքայանը զնա ո՞չ իբր երեսփոխան նախատելու, զի ասոր պատճառ չկայ, այլ սարգապէս իբրև անվայել կերպով և անպատշաճ միջոցի մը իբրև բողոք և հրամայական խօսքեր ընող մէկու մը պատասխանելու նպատակաւ մերժողական խօսք մ'ըրեր է : Արքայանը նոյն միջոցին Եէմէնիճեան էֆէնտիին չէ՛ թէ երեսփոխան ըլլալը, այլ նոյն իսկ ո՞վ ըլլալն անդամ չէ կոչեր ճանչնալ. ուստի այսպէս առանց զիտման մասնաւոր պարագայից և չիտիւթեան արդիւնք եղող վարմունքի մը ժողովս կարևորութիւն տալ չուզելով՝ վրձուեց որ նոյն օրուան դէպքը Եէմէնիճեան էֆէնտիի երեսփոխանական պաշտօնին և պատուոյն արհամարհանք չկրար ընտանալ. և ահա՛ այս վճիռն էր որ ես իրեն հաղորդեցի և ինք ընդունեց :

(Այս միջոցին Եէմէնիճեան էֆէնտի առջի ելնելով բողոք ըրաւ թէ ինքն այդպէս չէ՛ ըմբռներ նամակին իմաստը, և

յաւելցուց թէ Արքայան Պատրիարքին արտասանած անարգական բառը ժողովիս կողմէն չը գրուցուած ըմբռնուելուն համար ինքն ալ ներողամիտ գտնուելով ժողովին եկած էր այսօր. իսկ Առեւտրական փառան չարունակելով ըսաւ.)

Եէմէնիճեան էֆէնտիին բողոքելու իրաւունք չունի, զի նամակիս իմաստը բացայայտ է և ինք զայն ընդունելով ոչ միայն չբողոքեց՝ այլ և եկաւ այսօր իր պատուով վարելու : Իսկ գալով այն կէտին թէ Օգսէն էֆէնտի անդուշտութեամբ անարգական բառ ըմբռնէ սպողած ըլլայն յայտնելով կրնայ ազատ մնալ կանոնական պատժէ, ես այս պարագան իբրև թեթևացուցիչ յանցանաց ժողովոյս յայտնեցի. վճիռը դուք պիտի տար. ես միայն պարզ յանդիմանութեան քուէ առաջարկեցի՝ դատաւորը դո՛ւք էք, որոշեցեցէք ձեր վճիռը. բայց մի՛ չիտիւթե Եէմէնիճեանի գործը Օգսէն էֆէնտիի խնդրոյն հետ, զի երկուքն իրարմէ տարբեր բաներ են :

ՓԱՓԱՊՊԵՏ Ս. ԷՖ. — Ոչ, ոչ, չըլլար, վարչութեան մեզի ըրած անարգանքն ալ ծանր է :

ԱՏՆԱՊՊԵՏ ՓԱՇԱ. — Զգեցէք զիս, մի՛ չիտիւթե կարգչեմ, ժողովին դատաւճանայն պիտի դիմեմ. եթէ կը հաճիք՝ վիճարանութիւն բանանք. մէկ կողմէ Մէրեխմուրի էֆէնտիին խօսք կուտանք դատապարտութեան աւելի ծանր ըլլալու պէտքին վրայ խօսելու համար, ինչպէս որ արդէն խօսք ուզած է, միւս կողմէ ալ դուք՝ Փափաղեան էֆէնտի, խօսեցէք :

Ուստի կը հարցնեմ ժողովին թէ կուզէ՞ արդեօք լսել Մէրեխմուրի և Փափաղեան էֆէնտիները, և վիճարանութիւն բանալ Օգսէն էֆէնտիի արունելու պատժոյն սահմանը որոշելու համար :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Ոչ, ոչ. Օգսէն էֆէնտիի դատապարտութիւնը ըլլաւ չէրէք :

(Ազմուտ) :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վարչութեան անդամները քուէ չունին այս կէտին մէջ:
ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Կիտամար ըլլալուն կամ չըլլալուն համար քուէ կը սահանջենք:

(Նորէն — Կոնստանտինոպոլիս):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, հանդարտեցէք. բաւական է. եթէ չհասկըցաք նորէն ըսեմ. դիւանը պատրաստ է խօսք տալ թեր ու դէմ երկու հողոյ, եթէ ժողովը վիճարանութիւն կուզէ:

ԶԱՅՆԵՐ. — Ոչ, ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն քուէի կը դնեմ վիճարանութիւն բանալու կամ չբանալու կէտը. ով որ վիճարանութիւն կուզէ՝ ձեռքը վեր վերցնել չնորժ ընէ:

27 ձեռք համրուեցան:

(Գրեւոր — Կոնստանտինոպոլիս):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չըլլայ որ սըխալ ըմբռնէք յուզման առիթով. Օգոսէն էֆէնտիի դէմ յանդիմանութեան համար չէ այս քուէարկութիւնը. այլ ըստ որում յանդիմանութեան քուէի առաջարկութեանն թեթեւ կամ ծանր ըլլալուն նըկատմամբ դիտողութիւններ եղան, այս կէտը պարզուելու համար միայն երկու հողոյ խօսք տալով վիճարանութիւն հարկ է թէ ոչ, այս է քուէի դրածս. 27 ձեռք համրուեցան վիճարանութիւն ուզող. հիմա ալ ով որ վիճարանութիւն չուզեր՝ ձեռքը վեր վերցնել չնորժ ընէ:

Գարձեալ 27 ձեռք համրուեցան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Որովհետեւ վիճարանութիւն ըլլալու կամ չըլլալու մասին քուէներն հաւասար եկան, և այս պարագային մէջ Նախագահ Սրբազան Պատրիարքին կողմը կը հակի որոշումն, և ըստ որում Սրբազան Պատրիարքին բացակայութեանը՝ Առեւտրային կը մնայ սոյն իրաւունքը կանոնին 48րդ յօդուածով, ուստի եւ ժողովին որոշումն որպէս լու համար աւասիկ իմ կարծիքս կը յայտնեմ որ բացարձակապէս հակառակ է վիճարանութեան բացուելուն: Ուստի պար-

զապէս Օգոսէն էֆէնտիի պարզ յանդիմանութեան քուէի կը ձեռնարկենք:

Տ. ԽՈՐԷՆ ՎՐՈՊ. ԿԻՐՕԵԱՆ. — Խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը չներք ոչ մէկուն խօսք տալ: Ով որ Օգոսէն էֆէնտիի համար պարզ յանդիմանութեան վճիռ արտասանել կուզէ, ձեռքը վեր վերցնէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վարչութեան անդամներն այս մասին քուէ չեն կրնար տալ, անոնք դատախազ են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասկէ առաջ բացատրեցի թէ ժողովը ոչ վարչութեան բողոքը և ոչ Օգոսէն էֆէնտիի ամբաստանութիւնը նկատողութեան կանոնացման այլ իւր պատուոյն նախանձախնդրութենէն շարժեալ պարտաւոր է կանոնական տրամադրութեան մը գործադիր ըլլալ և կանոնազանց երեսփոխանի մը գաւազարտութիւնը վճուել ուստի Նրեպիտան գտնուող վարչութեան անդամներն ալ այս քուէին մասնակցելու իրաւունք ունին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնազանց երեսփոխանին մեղանշած օրը պէտք էր այդ կանոնական գործադրութիւն ընել: Երբ տակաւին Գաղ. ժողովոյ բողոքն և կած չէր. կանոնն այնպէս կը պահանջէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ մտքերնից ժողովին գործողութեանց շարունակութեանն արգելք ըլլալ է, կը մեղանշեմ ազգին դէմ: Եստ կը ջախիմ որ այնպիսի ատեւապէս մը դրեր էք ձեր դիւանը որ շարունակ անոր պակասութիւնները պակասարկելու հարկ կը տեսնէք: Արդէն Օգոսէն էֆէնտիի պակասութեանն արժանացած պատժոյն նոյն օրը չտնօրինուելու խօսքը բանիցս եղած է. ի՞նչ հարկ նորէն զնոյն յուզելու:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս որ գուրնոյն օրը չուարեցաք, նոյնպէս Օգոսէն էֆէնտիին ալ չուարեցաք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Միթէ գուր-

Փափաղեան էֆէնտի , ժառտարանն էք Օգսէն էֆէնտիին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ , գառաւուրական պաշտօն կը կատարեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հիմա գործի պիտի ձեռնարկենք . Օգսէն էֆէնտիին համար պարզ յանդիմանութեան քուէ պիտի առաջարկեմ . բայց ըստ որում ձեռնարարձ քուէարկութիւնը չիօթութեան և սխալանաց տեղի կուտայ ըսողներ կան , յոսն կրնողիլ կը հրաւիրեմ անոնք որք կրնողուն թէ «Օգսէն էֆէնտի արժանի է յանդիմանութեան քուէի :

Յ՞ նոք ելնողներ համարուեցան :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Միայն համարուեցաւ . գաղտնի քուէ կառաջարկեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գաղտնի քուէ խնդրուիլ զբաւոր պէտք է ըլլայ . ես հակափորձը քուէի կը դնեմ . ով որ Օգսէն էֆէնտիին դէմ պարզ յանդիմանութեան վճիռ արտասանել չընդունիր՝ ոտք ելնէ :

(Մշտարե Բողոքի) :

Մէկ հողի միայն ոտք ելաւ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գուէները ուր խալ համարուեցան ըսի , չենք ընդունիր և կը բողոքենք այդ քուէարկութեան դէմ . յակնէ յանուանէ քուէ կը պահանջենք :

(Սուրուի և Բողոք) :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բանի մը անգամ բացատրեցի . ամեն մարդ հասկըցաւ : Խնչպէս սխալ քուէ տրուած կրնայ ըլլալ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը պնդեմ , միայն է , չենք ընդունիր :

ԶԱՅՆԵՐ. — Չենք ընդունիր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը ցաւիմ , Փափաղեան էֆէնտի , որ ձեր այդ ընթացքով պարտաւորութեան մէջ կը դնէք դիմ ձեր դէմ ևս պատժական տրամադրութիւնը գործադրել :

ՀԱՄԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Բայց եթէ իրօք

միայն համրուած են քուէները , միթէ փորձը նորոգել պէտք չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դուք կը կարծէք որ սխալ համրուեցան քուէները . 27 քուէի տեղ Յ՞ հաշուեցան . լաւ , բայց ես դարձեալ քուէարկութիւնը նորոգել հարկ չեմ դատեր . զի եթէ յանդիմանութեան քուէ ընդունողները 20 անձինք ալ ըլլային , դարձեալ մեծագոյն մասն կը կազմեն . զի հակափորձի ժամանակ միայն մէկ անձն՝ Փափաղեան էֆէնտի ոտքի կանդնեցաւ . ըսել է թէ ժողովը բացարձակապէս կրնուի և կորոյն Օգսէն էֆէնտիին դէմ յանդիմանութեան վճիռ արձակել : Այս որոշումը կատարեալ է և անդառնալի ամենուս համար :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ոտքի վրայ էի փորձին դէմ բողոքելու համար և ոչ թէ հակափորձի քուէի տալու համար :

ԶԱՅՆԵՐ. — Կը բողոքենք , չենք ընդունիր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենադպիրը կամբաստանենք :

(Աղջնակ և Գործարար Բողոքի յարմարեմ) :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ այսպէս շարունակէք , կ'ստիպեք զիս խմբովին ձեռք դէմ բարեկարգական պատիժ տնօրինել :

ԳԱՐՁԵԱՆ ԵՄՅԱՆ ԱՆՁԻՆԻ. — Օգսէն էֆէնտիին ըրած ամբաստանութեանց ձայնակից ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ի լուրթիւն կը հրաւիրեմ զձեզ :

4.

Հրաժարական Անդրեան Եֆէնտի

Ատենապետ փառանքալի Գաղաքական Ժողովին եկած հետեւեալ տեղեկագրերը կարդաց .

Ասեմափայլ Ատենապետ փառանքալի գային ժողովը .

Գաղաքական ժողովս Ազգային երեսփոխան Սուրբենեան Յովհաննէս էֆէնտիին

հրաժարման խնդրոյն նկատմամբ Ազգա-
յին ժողովոյը կողմէ ընդունած յանձ-
նարարութեան համաձայն , թէ և պէտք
է դաժ ըննութիւնն ընելու համար Սու-
րբնեան էֆէնտիի նամակ գրեց և բա-
ցարութիւն ու տեղեկութիւն խնդրեց ,
այլ սակայն ցարդ պատասխան մը չստա-
նալով Նորին Մեծապատուութիւնէն , կը
փութայ իրեն յանձնարարուած այն խընդ-
րոյն միճակը ներկայիս հաղորդել Ազգա-
յին ժողովոյը ի գիտութիւն և ի պատ-
շահ տնօրէնութիւն :

25 փետր 1877 Մնամբ յարգանքը
/Պատրիարքարանի ի Կիւմայ Բազ. ժողովոյ
Հայոց Կ. Պօլիս Ազգ. վարչութեան
Ատենադպիր Փոխ. Ատենապետ
Յ. Պօյաճեան Սեպուհ Մատուցեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը յիշէք անուշտ
որ ասկէ քանի մը նիտ առաջ Սիւրբնեան
էֆէնտին երբ առ ինքն ուղղեալ ստորա-
կան հրահրադիրը տանողն իրմէն ստո-
րագրութիւն ուղեր էր գիրն ստանալը
հաստատելու համար , ոչ միայն ստորագ-
րութիւն չէր տուած , այլ և հրահրա-
գիրը մերժած էր , ժամանակ չունիմ ,
չեմ գար և չեմ ստորագրութիւն տար
բսելով : Այն ատեն ժողովը չուղեց ա-
ճապարանօք վճիռ տալ , և վարչութեան
յանձնեց գործը քննել : Այժմ վարչու-
թիւնը կը յայտնէ թէ Սիւրբնեան էֆէն-
տիին նամակ գրեր է , բայց անպատաս-
խանի մնացեր է և չէ կրցեր տեղեկու-
եան էֆէնտիի բացատրութիւնը ներկա-
յութեան առումարին նայելով մինչև ու-
թերորդը հասած է . ուրեմն ժողովին
կը մնայ որոշել թէ Սիւրբնեան էֆէնտիի
ոչս վարմունքն իբր հրաժարական կըն-
դունուի՞ թէ ոչ :

Չայս բսելով Ատենապետ փաշան քը-
ւէի գրաւ Սիւրբնեան էֆէնտիի հրաժա-
րականն , որ միաձայնութեամբ ընդուն-
եցաւ ժողովէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բստ որում ժո-

ղովն իւր վճիռը առաւ Սիւրբնեան էֆէն-
տիի հրաժարականի մասին , պարտք կը
համարիմ յայտարարել ի դիւանէ թէ այս
կերպիւ հրաժարող երեսփոխան մը պա-
տահած չէր ցարդ , և կը ցաւիմ որ այս
օրինակ կը մեկնի և կը բաժնուի ժողովն
Սիւրբնեան էֆէնտին :

Յ.

Հարցադիմումս աւ վարչութիւնն

Ատենապետ փաշան հետեւեալ 4 հար-
ցադիրերը ներկայացուց ժողովին , որը
կարդացուեցան :

Ա.

1876 նոյեմբեր 1 թուականաւ սպագ-
րեալ և հրահանգ կեդրոնական ուղղակի
տրոց անուշով թերթ մը ձեռքս անցաւ ,
որ վերջին անգամ Քաղաքական ժողովոյ
կողմէն առաջարկեալ և Ազգային ժողով-
վէս որոշեալ բարեփոխութեանց համա-
ձայն տրոց կանոնադրի մասին նոր խըն-
բագրութիւն մ'էր :

Այս խմբագրութիւնը Ազգային ժո-
ղովիս հաստատած տրոց կանոնադրին
համաձայն չեմ գտնար :

1. Քաղաքական գործոյ մը համար
Պատրիարքարան կամ Թաղ. խորհրդոց
գիտող ազգայինն մը տակաւին անվար
թողուած ու զիջուած սուրբերը պիտի
սունուին , կրտէ . — և կանոնադրին ստ-
եական պայմանները զանց առնուած են ,
որք են՝ առինքն Լրացած և երէտ անգամ
անձ' բայց տակաւին անվար թողուած են :

2. Երեսփոխանական ընտրութեան
մասնակցողաց սուրբը ըստ 65 բող յօդ-
ւածոյ Ազգ. Սահմանադրութեան նախա-
պէս պիտի առնուի , կրտէ — որ Հիւսիս
տրոց կանոնադրին մէջ :

Այս մասերուն միայ Քաղաքական ժո-
ղովէն բացատրութիւն կը խնդրեմ :

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փափաղեան

Բ.

Շահնադար-Նուպարեան վարժարանը

ազգային է թէ մասնաւոր : Եթէ ազգային է, ինչո՞ւ փակուեցաւ և ի՞նչ է անոր հաշիւը . կը խնդրեմ որ թէ՛ փակման պատճառները և թէ՛ հաշիւները ժողովիս ներկայանան : Իսկ եթէ մասնաւոր, ի՞նչ է հոգեւոյս Շահնազարեան վարդապետին կտակը . Ազգին կը վերաբերի թէ մասնաւոր անհատի, կը խնդրեմ որ կըտակին պատճէնը ժողովիս ներկայանայ :

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փափաղէանց

Գ.

1870 մայիս 24ին պատահեցաւ Բերայի մեծ հրդեհը : Ան ատեն հրկիզելոց օգնութեան համար ամեն ազգէ ընտրեալ յատուկ մասնաժողով մը կազմուեցաւ : Մեր Ազգային Պատրիարքարանն ալ նոյն մասնաժողովը անդամակից ընտրեց Մեծապատիւ Մանուկեան Սենեքերիմ և Նորատուենկեան Յակոբ էֆէնտիները :

Ըսուեցաւ ան ատեն թէ մասնաժողովին 8-10 հազար ոսկի յանձնուեր է Նորատուենկեան Յակոբ էֆէնտիին, որպէս զի Հայ հրկիզելոց և մանաւանդ կաթողիկոց բաժնուի :

Մինչև ցարդ չհրատարակուեցան ոչ յանձնուած գումարին որքանութիւնը կամ ատոր ի՞նչ բանի գործածուած ըլլալը : Ուստի կը հարցնեմ վարչութեան Քաղ. ժողովը թէ՛ այս հաշիւներն առնուած են . եթէ առնուած են, զանոնք ժողովիս ներկայացնէ, իսկ եթէ առնուած չեն ցարդ, բարեհաճի առնուլ և բերել ժողովիս :

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փափաղէանց

Գ.

Սևոյս 19ին Փռեմ անուն լրագրոյն մէջ նամակ մը կարդայի՞ որուն մէջ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Արժ. Տէր Միքայէլ քահանային կարծիքը խաչ կրելու կոնդակը կը շնորհաւորէ Այլթաւ մարայ Աթուղիկոս Խաչատուր Արքազանէն տրուած, և ամսոյս 22ին Մասիս անուն լրագրոյ մէջ խմբագրական յօդուած մի ևս կը հաստատէր ոչ թէ միայն մէկի՞

այլ մէկ քանի կրօնականներու նոյն շնորհն ըլլալը : Թէ և Մեծ. Խմբագիրն Այլթաւ մարայ Արքազան Աթուղիկոսի այս արարքը եկեղեցական բարեկարգութեանց դէմ սխալ մը ըլլալը բաւական բացատրութիւն էր, բայց ի վերայ այս ամենայնի հարկ կը համարիմ առաջարկել Ազգ. ժողովոյս կողմանէ կեդրոնական Վարչութեան կըրօնական ժողովոյ հարցնել, նախ թէ՛ ճշմարիտ է յիշեալ Արքազան Աթուղիկոսի այսպիսի շնորհարարութիւնը : Բ. Ս.յս մասին Արարատայ Մայր Աթոռոյ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին հաճութիւնը և կամ թոյլատրութիւնը նախապէս առնուած է : Գ. Եթէ այսպիսի հրաման մը Ս. Հայրապետէն չէ առնուած, կրօնական ժողովը ի՞նչ բրած էր այս դէպքին համար, մանաւանդ կը լսենք թէ՛ այդ կոնդակները ընդունողներէն երկուքը կրօն. ժողովոյ անդամք են, ուստի բացատրութեամբ պատասխանել բարեհաճի Ազգային կրօնական ժողովը :

25 փետր. 1876 Բ. Ղազարեան

ԱՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ չորս հարցապնդում, որք վարչութեան թէ՛ կրօն և թէ՛ Քաղ. ժողովոց կը պատկանին . եթէ այս երկու ժողովոց կողմէ ալ իւրաքանչիւրին վերաբերեալ մասանց համար կարծիք յայտնող կայ, կը լսենք . իսկ եթէ չկայ կը յղենք իրենց :

ՄՍԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փ.Բ. Արեւադեղ Բաղ. ժողովոյ վերաբերեալները պէտք է որ յղուին առ Քաղ. ժողովը, որպէս զի պատասխանը տանը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ս.յո՛ւ, պէտք է յղուին, բայց սլայմանաժամաւ, որպէս զի անպայման կերպիւ չյետաձգուին պատասխանները :

ԲԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Նախ՛ հարցուցէք, ժողովը կընդունի՞ մի այդ հարցումներն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանխարարութեան ՅՏր յորոտածը կարգաւ Վանոնք կը պահանջէ նախ՛ վարչութեան կարծիքը ըր-

սել, և բառ որում Բաղ. ժողովին վերաբերեալներուն համար Մագուստեան է-Ֆէնտին կարծիք յայտնեց, այժմ Կրօն. ժողովին կարծիքը կը հարցնեմ իրեն վերաբերեալ հարցման համար :

Տ. ՅՈՎ.Ն. ՔԷՆՅ ՄԿՐԵԱՆ. — (Անդամ Կրօն. ժողով) Կրօն. ժողովին վերաբերեալն ալ յղեցէք առ նոյն ժողովն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Շատ արեկ, հիմա ժողովին կը հարցնեմ միթէ կուզէ՞ լսել սոյն հարցապնդումները, և ո՞ր օր :

Ժողովը 24 քուէով ընդդէմ 15 քուէի որոշեց լսել հարցապնդումներն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Կը մնայ արդ՞ օրն որչէլ, կառաջարկեմ որ իւրաքանչիւր հարցապնդում մէյ մէկ նստի մնայ, ինչ կարգով որ կարգացուեցան՝ նոյն կարգով, առաջին՝ արոց խնդիրը, երկրորդ՝ Նահնապարեան կոտակի խնդիրը, երրորդ՝ հրկիւելոց խնդիրը և չորրորդ՝ Աղթամարայ Կաթուղիկոսին Խաչ Նշան ընծայելու խնդիրն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Էջմիածնայ իրաւասութեան դէմ եղած դործոյ մը մասին վերաբերեալ հարցումն, որ իմն է, աւելի կարևորութիւն ունենալով, դալ նստին պէտք է լսենք. ուստի այսօրուընէ Կրօն. ժողովին յղուելու է, որպէս զի ժողովիս յառաջիկայ նստին պատասխան տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Ես կը կարծէի թէ տրոց խնդիրն իբր Պիւտձէի մասն աւելի նախամեծար կը համարէք երեսիւ լսանական ժողովս և անոր առաջնութիւն կուտար :

ՄԷՐԵՒՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ հարցապնդումներն ամենը մէկէն յառաջիկայ նստին Օրակարգն անցնին :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ինձ կը թուի որ այսօրուընէ չենք կրնար օրն որչէլ պատասխանները գալին ետև կրնայ ըլլալ : Իսկ ստիպողականութեանը գալով՝ կառաջարկեմ Քրիստոստուր էֆէնտիի հար-

ցապնդած խնդրոյն ստիպողականութիւն տալ և միւսներուն համար սպասել վարչութեան պատասխանին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Կանոնադրութեան 85րդ յօդուածը՝ զոր հիմա կարգացի, թէ և տարրամ գրուած է, բայց կը արամադրէ որ այժմէն օրը որչէնք չէ թէ հարցմանց պատասխանները վիճարանութեան ենթարկելու, այլ հարցապնդումները լսելու համար : Ուստի կառաջարկեմ որ իւրաքանչիւր հարցումն լսուածին մէկ նստի : Այսու հանդերձ առաջնութեան կարգ սահմանելու առաջարկութիւն ընող կայ. առաջարկող ալ կայ՝ որ ամենը մէկէն յաջորդ նստի Օրակարգն անցնին : Ասոնց ո՞րը պիտի ընդունիք :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՈ. — Կողաչեմ, Ատենապետ փաշա, ուշադրութիւն ըրէ՛ք, սաղին քանի մի երեսիտխանք կրօնական խնդիր մը ծաղու նիւթ կընեն :

ՄԷՐԵՒՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Կը բողբուքեմ. կրօնական խնդիր մը ծաղու նիւթ կընեն ի՞նչ բաւ է. այդպիսի բան չկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Մէք այստեղ յօդուտ Ազգին աշխատելու համար ժողովուած ենք ի տաճարիս. չեմ կրնար հաւատալ որ մեր մէջէն մեր կրօնքը ծաղրելու յանդուող մարդ գտնուի : Մեր կրօնքը մեր ազգութեան զրոյմն է, զանի ծաղրել ուղղ երեսիտխանն ինք ծաղու արժանի կըլայ, և չկայ մէջերեխա մէկը որ գասի չղիտայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տրոց լարն դիրն ալ նախապատիւ է ըսիք, Ատենապետ փաշա. ուրեմն կառաջարկեմ որ անոր ալ պատասխանը յառաջիկայ նստին լսենք :

Տ. ՄԱՐԲՈՍԻՈՍ ՂՐԿՊ. — Հարցապնդումները չորս են. ասոնցմէ 5ը Բաղ. ժողովին և մէկը Կրօն. ժողովին պատասխանեալ են. քանի որ երկու ճիւղ են որ պիտի պատասխանեն, յառաջիկայ նստին երկուքն ալ կրնան բերել իրենց պատասխանները :

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Երեք կարծիք կայ, առաջինն է իւրաքանչիւր հարցապնդում մէյ մէկ նստի ձգել. երկրորդ՝ չորսը մէկէն մէկ նստի մէջ լսել, և երրորդ երկերկուք իւրաքանչիւր նստի մէջ. ուրեմն քուէի կը դնեմ, նախ՝ չորսը մէկէն յառաջիկայ նստին մէջ լսելու առաջարկութիւնը:

Ժողովն այս առաջարկութիւնը միանշարժութեամբ ԸՆԴՈՒՆ ԵՅՑ, որով միանշարժութեամբ ԸՆԴՈՒՆ ԵՅՑ, որով միանշարժութեամբ պէտք չմնաց:

6.

Խորհրդի քործարարութեան Յանդիմանական շնորհ ընդունելու օրինակէ

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ժամն 9 քառորդ անցած է. ի՞նչոք ինչ ժամանակ կայ Օրակարգին առաջին խնդրովն զբաղելու, բայց ատենապետինը յոգնած լլալով պիտի մեկնի. ուստի կը խնդրեմ Երեսուցեան էֆէնտիէն որ բարեհաճի իմ տեղս անցնիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրակարգին անցնելէ առաջ Օդսէն էֆէնտիի կարդացած ամբաստանագիրը պէտք է նկատողութեան առնուի, և յլուի ՚ի նախաքընտրութիւն Կանտոնադրութեան ՅՎրդ յՕԴՆԱՅԻՆ տրամադրութեանը համեմատ:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ձեր ամբաստանագիր ըսածն ՚ի սկզբան Օդսէն էֆէնտի ինքզինքն արդարացնելու համար կարողաց, ամբաստանագիր լլալը չզիտենք և անոր հեղինակին Օդսէն էֆէնտի աստ ներկայ չէ որ հարցունենք թէ՛ իրր ամբաստանագիրը կը ներկայացնէ զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍՈՒՐ ԷՖ. — (Մէյայն) Մեք ալ կ'ստորագրենք այն ամբաստանագիրը: Կամբաստանենք Վարչութիւնն որ զրամ չկայ կըսէ, և կայ լլալը պիտի հաստատենք իւր դործերովը:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ես կը վստահեցնեմ զձեզ որ Քաղ. Ժողովը չփախչի պատասխանատուութենէ. եթէ ժողովն ընդունի այն գիրն ՚ի բացակայութեան

Օդսէն էֆէնտիի իբրև կանոնաւոր ամբաստանագիր՝ առանց վէճի, միայն կարծիքը յայտնելով ինչպէս կը տրամադրէ Կանտոնադրութիւնը, ևս ալ զայն Օրակարգն անցնելու վրայ խօսք կրնամ ընել:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փոփ. Արեւապետ Գալ. Ժողով) Եթէ Ազգային Ժողովն Օդսէն էֆէնտիի կարդացած գիրն իբրև ամբաստանագիր ալ չնկատէ, ևս պիտի առաջարկեմ որ իբրև առանձին կարգապնդում մը Վարչութեան յլուի այն, որպէս զի անոր պարունակած ամեն կէտերուն մի առ մի պատասխանենք:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք ուզեցի Կանտոնական դիտողութիւն մ'ընելու համար: Ըսելիքս սա՛ է թէ Օդսէն էֆէնտիի կարդացած գիրն արդէն իւր անձին արդարացուցման համար լլած և ընդունած է ժողովը. հետեւապէս չենք կրնար նկատել զայն իբր ամբաստանագիր Վարչութեան դէմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՛չ, այնպէս չէ. իսկպէս ամբաստանագիր է այն:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Յաւապի է որ հիմա արդարացուցման գիր է կըսէք Քալիամանէեան էֆէնտի, մինչ կարդացուած միջոցին ամբաստանագիր կը կոչէիք զայն, և ես հազիւ կըցայ զձեզ և ձեր համակարծիք ընկերները հանդարտեցնել:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այդպէս չէ, Ստենապետ փալա, ևս կանխաւ բողոքած էի ամբաստանութեան դէմ, յայտարարելով որ խնդրոյն վրայ ինքզինք արդարացնելու իրաւունք ունի, և ժողովն ալ այնպէս ընդունած է:

Սոյն պահուն Օդսէն էֆէնտի Ժողովարանը մտաւ և իւր տեղը բազմեցաւ:

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Օդսէն էֆէնտի, պէտք է որ ծանուցանեմ ձեզ թէ ժողովն ՚ի ձեր բացակայութեան ձեզ դէմ յանդիմանութեան քուէ տուաւ, ուստի կը հրաւիրեմ Նախագահ Սրբազանը գոր-

ծաղրել ժողովին սոյն վճիռը . Կանոնադրութեան 105րդ յօդուածը անոր կը յանձնէ գործադրութեան իրաւունքը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երբէք , որ է ժողովին յանդիմանութեան վճիռն . երբ այդպիսի վճիռ մը չկայ՝ Նախագահն ի՞նչ փրփի գործադրէ :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Կըբըրքեմ , Ատենապետ փաշա , ձեր այդ առաջարկութեան դէմ , որ է հակառակ կանոնաց և արգարութեան . կը տեսնեմ որ ձեր դատաւարական պաշտօնն աչառութեամբ կը կատարէք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ ուրիշ մը նմանօրինակ դէպքի մէջ դիտմամբ չըրի կրտէ և կը ներուի իրեն , այս կէտին մէջ ի՞նչպէս կարելի է տարբեր դիրք բռնել :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Պէտք և զած կերպիւն ներկայացուցած չէք խընդիրն Ատենապետ փաշա , նախ հարցը ներու կիք . . .

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. ԵՒ ԱՅԼ.Ք. — (Էրեզիւտ) Ատենապետ փաշա . դա՞ս կուտայ ձեզ Խորէն վարդապետը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ դասառուս միայն մէկ ըլլար , երջանիկ պիտի համարէի զիս : Հէրիք է , հայր սուրբ , նախ կանոնապէս խօսք ուղեցէք , և յետոյ՝ մի՛ այդպիսի թշնամական կերպով խօսիք զիւանին դէմ . պէտք է գիտնաք թէ Կանոնը այդպէս վարուողներուն համար ալ պատիժ տնօրինած է :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Ներկեցէ՛ք՝ ատենապետ փաշա , ի մկրդան խօսք ուղեցի և չուտիք ինձ . չեմ կարծեր որ ժողովին զէմ մեղանջած ըլլամ դիտողութիւնս յայտնելով . եթէ մեղանջեցի , մեղայ . ես կը յարգեմ ժողովն ալ զիւանն ալ , և զիտաւարութիւն չունիմ որ և է թշնամանք մ'ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կրկին կը հրաւիրեմ Նախագահ Սրբազանը գործադրել ժողովին վճիռը :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նախ՝ խօսք տուէք ինձ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կրնար տալ :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նախ՝ կուզեմ գիտնալ թէ պատժական տրամադրութեանց որ մասին մէջ զիս դատաւարտել կուզէք : Կանոնագրին 102րդ յօդուածը յանդիմանութեան արժանի կը համարի գանտը , որ կա՛մ ատենադրութեամբ ՚ի կարգ կոչումէն ետքը չեն դատնար ՚ի կարգ և ՚ի պարտականութիւն և կամ երեք անգամ ՚ի կարգ կոչման պատժին կարժանանան : Ես բնաւ ՚ի կարգ կոչուած չեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չորսրդ տըրամադրութիւնն ալ կարողացէք , ուր կրտէ թէ այն որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մասին դէմ նախատիք կամ դրդով սպառնալիք ուղղէ , յանդիմանութեան վճիռ կընդունի : Ահա ճիշդ այս չորսրդ տրամադրութեան առկ յանցապարս դատուած էք :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես նախատինք չեմ ըրած , այլ դուք կրնաք դատել թէ նախատիք է ըրածս . ես Քաղ. Ժողովին անձերը չեմ նախատած , այլ գործը քննադատած եմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ , Նախագահ Սրբազան , այս խօսքերուն վերջ մը տալու համար ինչ որ հարկն է խօսեցէք և ձեր պաշտօնը կատարեցէք :

Տ. ԱՄԲԻՈՒՌՈՍ ՎՐԴՊ. — Կաղաչեմ Սրբազան Նախագահն որ հաճի ժողովին թոյլտուութիւնն ընել ինձ . չեմ կարծել որ Նախագահ Սրբազանն իրեն եկեղեցական մը գործադիր լինի այնպիսի յանդիմանութեան վճուող մը՝ որ օրինապէս ընդունելի չէ . չկայ օրէնք մը որ վճիռ հատանէ յանդիմանել այնպիսի մէկն երբ կրտէ թէ դիտմամբ չանարգեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հայր սուրբ , երբ դուք նախագահ լինիք՝ այն ատենին պահեցէք ձեր այդ իրաւաբանութիւնները : (Յողջանէ) : Ի՞յդ խօսքերն աղմկայո՞ւյ տե՛ն :

սարան մը յարուցանելու կը ծառայեն. այս ալ պատժոյ ենթարկեալ է ըստ կանոնի: Կաղաչեմ, Խորէն Սրբազան, ըսէք ինչ որ պիտի ըսէք և կատարեցէք ձեր պաշտօնը:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես պիտի խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ոչ, չէք կրնար խօսիլ. թէ որ այսպէս շարունակէք, կը պարտաւորիմ ատենը փակել: Միանգամ ևս, Նախագահ Սրբազան, ձեր պաշտօնը կատարեցէք և այս տեսարանին վերջ տուէք, կաղաչեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ երբէք կրնայ կատարել, քանի որ օրինակը քուէտարկութիւն չեղաւ, բողոքած ենք և դարձեալ կը բողոքենք եղած քուէտարկութեան դէմ:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Վճիռը գործադրուելէ ետև չվերաքննուիր. ես վերաքննութիւն կը պահանջեմ, և կը բողոքեմ՝ եթէ առանց վերաքննութեան վրձնոյն գործադրութիւն լինի: Վճիռն եթէ վաւերական ալ համարուի, ես դարձեալ վերաքննութիւն պիտի ուզեմ. ուստի պէտք չէ որ Նախագահը գործադրէ, զի կը կորսնցնեմ վերաքննութեան իրաւունքս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օգտէն էֆէնտին ըսել կուզէ թէ ժողովը թէ և վճիռարձակած է, սակայն ժամանակ տուէք, վերաքննել տամ. իսկ Կանոնադրութիւնը կրէ թէ յանդիմանութիւնները՝ թէ՛ պարզ և թէ՛ պարսաւանօք, ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի՝ ատենապետին յանուն Կանոնադրութեան առաջարկութեանը վրայ, և Նախագահը կը գործադրէ: Քանի որ ժողովը դատաւորա-

բար իւր վճիռը տուաւ, առանց նոր վէճերու տեղի տալու պէտք է որ Նախագահը գործադրէ անվիջապէս ժողովոյն տուած վճիռը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ժողովը սաւկաւին չվճռեց:

ԻԽԹԻՒՃԵԱՆ ՅԱԿՈՒԲ ԷՖ. — Կամբաստանեմ ատենադպիրն՝ որ 27 քուէն 53 համրեց:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Օգտէն էֆէնտի ինձ դիմեց իմ դատաւորական կարծիքս լսել ուզելով. ըսել է թէ պիտի համաձայնի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, ձեր կարծիքը չենք կրնար ընդունիլ, զի դուք ալ միւս կողմին քուէ տուիք:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ խօսքս ձեզի հետ չէ:

Սոյն պահուն Օգտէն էֆէնտի յետագայ բողոքագիրը մատուց Կիւանին՝ իւր ստորագրութեամբը:

« Կը բողոքեմ վճռոյն դէմ՝ լսելով որ Քաղ. ժողովը քուէ տուեր է ինձ դէմ: »

Օ. Խօճասարկան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովոյ վճիռը վճիռ ըլլալն Օգտէն էֆէնտի իւր ստորագրութեամբը կը հաստատէ. այս ալ բաւական է վճռոյն դոյուլթիւնը հաստատելու համար:


Արմիայոյ բողոքներ շարունակելով և ժամը տասնին քաւորդ մնացած ըլլալով Ատենապետը զանգակը զարկաւ և փակեց ատենը:

ԱՏԵՆԱՂՊԻՐ

Գ. Յ. ՄԵԼԻԻԲ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Բացում 1876 Ամին

Ն Ի Ս Տ Ի

11 Մ Ա Ր Տ 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ (Ա-ժ-ժ-ժ-ժ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՀՍ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՂՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

- 1 Խորէն Արքեպ. Նար Պէյ
- 2 Կարապետ Ե. Սերոբէան Բ. Պ
- 3 Մատթէոս Ն. Խլովրդեան
- 4 Ամբրոսիոս Վ. Բուրիսեանց
- 5 Գարեգին Ն. Թաթարեան Բ.
- 6 Խորէն Ն. Կիրոյեանց
- 7 Հմայեակ Ն. Գիմաքեան Բ. Պ
- 8 Յովհաննէս Ն. Փափաղեան Բ. Չ
- 9 Ներսէս Ն. Այլանեան
- 10 Պողոս Ն. Խոյտամեան Բ. Պ
- 11 Եղիշ Ն. Ապաղուհի
- 12 Արիտակէս Ն. Բաճ. Մամբր Բ. Չ
- 13 Գէորգ Ն. Արծրուհի Բ. Չ
- 14 Գրիգոր Ն. Աճէմեան
- 15 Խորէն Ն. Փէշիկյան Բ.
- 16 Յարութիւն Ն. Սերովբ
- 17 Յովհաննէս Ն. Մկրեան
- 18 Ստեփան Ն. Մտեփան
- 19 Աւահակ Տ. Սարգսեան Բ. Չ

- 22 Գէորգ Ստիմարաճեան
- 23 Խաչիկ Մանկասարեան
- 24 Կարապետ Աղարամաճ. Բ.
- 25 Համարձու Մաղպուլեան
- 26 Մինաս Գափամաճեան Բ.
- 27 Յովհաննէս Պոյաճեան
- 28 Ն. Մէջլուրեան Տօթթօր
- 29 Պողոս Պառնասեան
- 30 Սարգիս Աղարեկեան Բ. Պ
- 31 Սահակ Սպարո Բ. Պ
- 32 Սեփեքերիմ Մանուկեան Բ. Պ
- 33 Փէշարմաճեան Տօթթօր Բ.
- 34
- 35
- 36

(Բ. ՎԻՃԱԿ) ՊԵՆՏԵՔՈՆ

- 38 Բարսեղ Հարաճեան
- 39 Կարապետ Ս. Իւթիւճեան
- 40 Յարութիւն Մարգարեան

ԵՆԻՔՈՒՄ

- 41 Խաչատուր Ղազարոսեան
- 42 Կարապետ Գ. Փափաղեան Բ Պ
- 43 Մարուգէ Յրէնկեան Բ. Չ
- 44

Ի-ԿԵՂՈՆԱԿՈՐ Ս. ԽՈՒՆ

- 45 Յովհաննէս Շոշեան
- 46 Յովսէփ Ս. Մաղլուճեան Բ. Պ
- 47 Սերոբէ Պաամաճեան Բ.
- 48 Ստեփան Այլանեան

Ի-ԿԵՂՈՐ Ս. ԿՐԱՊԵՏ

- 49 Մինաս Պաճճեղախուրեան
- 50 Յովհաննէս Ճիւղաճեան
- 51 Նիկողոս Արամաճեան Բ.
- 52 Տրդատ Փափաղեան

(Գ. ՎԻՃԱԿ)

ԲԵՐԱԼԵ ԳԱՐՍԻ ԺԱՅ

- 53 Արիկ Ունճեան Բ. Չ
- 54 Գրիգոր Սէլիմիճեան Բ.
- 55 Մարտիրոս Յ. Տիկեան Բ.
- 56 Միքայէլ Մամիկոնեան Բ.
- 57 Նան Բաղապեան
- 58 Ստեփան Խոջիրեան Բ.
- 59 Տէրիմար Ս. Էջեքճեան Բ.
- 60 Կիլիս Չայեան
- 61 Յարութիւն Նորատունկ
- 62 Գրիգոր Մարկոսեան Բ. Պ

ՍԵՒՔՈՒՄ

- 63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
- 64 Յակոբ Կոստանդեան Բ. Պ
- 65 Յակոբ Պ. Նորատունկ
- 66 Տիգրան Եռսուճեան
- 67

ՊԵՆՏԵՔՈՆ Ե ՂԱՄՆԻՒՄ

- 68 Յ. Մերեճիճ-Գուլի Բ.

(Գ. ՎԻՃԱԿ)

- ԳՐԱՊԵՏԱՆՈՒՄ Ե ԻՃԱՊԵՏ
- 69 Յովհաննէս Էսաեան Բ.
- 70 Ստեփան Պէլիկեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ո. ՎԻՃԱԿ)

- Գրաձեռնարկ ԿԵՂԵՑ Ե
- Գրաձեռնարկ ԿՐԱՊԵՏ
- 21 Գրիգոր Պէրպլեան Բ. Չ
- Բացակայութիւն առաջին
- 2 Բացակայութիւն երկրորդ
- Պ Բաց. բանաւոր պատճառ:

Գործիչը	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ. 4	Կարէն	121 Ստեփան Պ. Պ. Փափաղեանց
72 Մկրտիչ Մուրատեան Բ.	101 Մանուկ Այսյանեան Բ. Պ	Տէշէէ
Նորբէնի	Քէօթմհե	122 Նշան Գարադաշեան
73 Յակոբ Ենիմիշեան Բ.	102 Մ. Փափաղեան Տըթօր	Զէյնուս և Մարշ
Ենիմիշեան Ստամբուլ	Արքեանադուլե	123
74 Օրսէն Խոճասարեան	103 Ռուբէն Կիւմուշեան Բ. Պ	Տըպիշե
Թոփթափո	Նիկոմիդի	124
75	104	Պաղտար
Էյուս Ս. Եշե և Ս. Արսուս	Ան	125
Շաշե	105 Պետրոս Միսաքեան	Տէքրանիբեր
76 Գարեգին Յ. Մէլիբեան	Գարահիսար	126 Միհրան Զօպանեան
Գարուշեշե	106	Վան
77 Ասափա Իկիապաշեան	Աբթիբ	127 Աիսն Մաքսուտեան Բ. Պ
Հիսար և Պայաշե քեշ	107 Կարապետ Խաչիկեան	Աշխատար
78 Յովհաննէս Նուբեան	Բաշեշ	128
Նոր քեշ և Սիմէն	108	129
79 Ղազար Հովուեան	Պրոս	Սեբասթի
Պալար	109 Ք. Ղազարոսեան	130 Մկրտիչ Մէլիբեան
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ.	Երդուի	Ռոստոմ
81 Յովհաննէս Կրճիկեան	140 Մելքոն Հալաճեան	131
82	Սմաեան	Կար
Գարուշեօթի	141 Համբարձում Արամաճեան	132 Աբրահամ Յ. Այվազեան
83 Յարութիւն Զինծիրճեան Բ. Պ	Բալար	Զէշիշա
84 Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ	142 Յովհաննէս Ազնաւոր	133 Համբարձում Սարգիսեան Բ.
(Ե. Վիշու)	Երդուի	Գաղտարի
Ստամբուլ	143 Յակոբ Իւթիւճեան	134
85 Ալիքսան Պէշիբեան Բ. 2	Մանշուլե	Արան
86 Աւետիս Քօլոլեան Բ. 3	144	135
87 Եղիազար Մէլիբեան	Հաճե	Սաշե
88 Մինաս Ճաֆճաֆեան Բ.	145	136 Մատթէոս Ալիբանեան
89 Յակոբ Քաղաղեան	Երշի և Բօթերդ	Եղար
90 Յակոբ Ամասեան Բ. 2	146	137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ.
91 Նազարէթ Շահպաղեան	Թեթերդ	Մալմե
92	147 Տիգրան Գ. Աինանեան Բ.	138
93	Կեսարե	Իշիբ
94	148	Եփեդոս
Խափեի	149 Յովհան Իսղճեան	139
95 Առաքել Ալթուն Տիւրրի Բ.	Պալմաթե	140
96 Խաչատուր Պ. Միսաքեան	120 Յովհաննէս Յովակիմեան	
97 Ռէթէոս Պէլիկեան Բ. 2		
98 Սարգիս Արապեան Բ.		
99 Սարգիս Արապեան Բ.		
100 Աիսն Մէլիբեան		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Տեղեկագիր Դաստիարակութեան դեմնէ ի վերայ դաստիարակութեան ինքրոյն .
 Բ. Վերահանութեան Սահմանադրութեան . շքանակութեան վեհաբանութեան յօդուածոյ
 Թաղական Դաստիարակութեան , յերկրորդ ընկերցման :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՅԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամն 7 ին 'ի ներկայութեան Ա երեսփոխանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 37 ի :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր բացակայութեան պատճառաւ նախ Տ. Մատթէոս սրբազան , և անոր մեկնելէն վերջը Տ. Խորէն Նարպէյ սրբազան որ քիչ ետքը եկաւ , հրահրուեցաւ նախագահել Ժողովին առժամանակ :

Այս միջոցին Փոխանորդ Մկրեան Տէր Հայրը սրբազան Պատրիարք Հօր կողմէ առ ինքն ուղղեալ մէկ նամակը յանձնեց Ատենապետ փառային , որ անմիջապէս կարգաց զայն . որոյ պատճէնն է .

Տէր Փոխանորդ .

Մեծապատիւ Աղայէկեան Յովհաննէս էֆէնտի ազգային երեսփոխանն առ Ատուած փոխեր է յայտմ' ղիւերի , և յուղարկաւ որովհետեւ հանդէսը այսօր 'ի ժամ ութ պիտի կատարուի յՕրվագեղ : Հանդուցելոյ բարեմասնութիւններն և

ազգային ու ընտանեկան առաքինութիւններն' իբրև նշանաւոր ազգայնոյ և իբրև պատուական և ազգասէր երեսփոխանի' նորա միշտակը պատուել նուիրական պարտք կը դնեն մեր ամենուս վրայ . ուստի 'ի բանալ Ժողովոյն կամ նախ քան զԺողովն ընդհանուր Վսեմափայլ ատենապետին և երեսփոխանաց զեկուցէք այս ցաւալի մահը . կը յուսամ որ չեն վարանիլ շուք դնել նորա ազնւութեան յուղարկաւորութեան հանդէպին : Ես անձամբ տկար լինելով' իմ կողմանէս բարեհաճեցէք խնդրել Գեր. Տէր Մատթէոս սրբազան եղբորէն որ բարեհաճի անձամբ երթալ և նախագահել հանդիպին :

Ձեզ ամենեցուն բարերաստ կեանք մաղթելով , մնամ ընդ միշտ ազօրթանուէր առ Ատուած

1877 մարտ 11
 Բերա

ՆԵՐՍԷՍ

Իբբ Պատր. Կ. Պելոպ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խմացաք այն սգալի լուրն' որ մեր ընկերներէն բարե-

բարոյ և ազգասէր Աղայէկեան Յօհաննէս էֆէնտիին առ Աստուած փոխելուն առթիւ կը հասնի մեզ այս ժամուս : Արբաղան Պատրիարք հօր հրամանին համեմատ Տ. Մատթէոս սրբազան ընականաբար պարտի երթալ նախագահել յուղարկաւորութեան հանդիսին . անշուշտ մեր ընկերներէն ալ ներկայ գտնուիլ ուղղոյներ պիտի ըլլան . սակայն ես կառաջարկեմ որ մեր մէջէն պատգամաւորութիւն մ'ընտրենք որ Մատթէոս սրբազանին նետ երթայ պաշտօնապէս ներկայացնէ Ազգային ժողովս այն տխուր հանդիսին մէջ :

ՆՈՒՍՈՒՑՅԵԱՆ Տ. ԷՖ. — Արդէն Աղայէկեան էֆէնտին շատերնուս բարեկամն էր ոչ միայն իբր երեսփոխան , այլ և երեսփոխանական պաշտօնի մանեկէն առաջ ալ շատեր զինք ճանչցած են . երբ նա այս միջոցին 'ի գերեզման պիտի իջնէ , ներելի չէ կարծեմ եթէ մեք հոս մեր գործերովն զբաղինք անտարբեր : Այս ժողովը չկարանեցաւ իր մէջէն որ և է մէկ ընկերին պահած ատեն՝ անոր յուղարկաւորութեանը ներկայ գտնուելու . այսօր ալ ճիշդ ժողովին բացման ժամուն մեր ընկերներէն միոյն յուղարկաւորութիւնը կը պատահի . այս պարագան կը պարտաւորէ մեր գործերն՝ որչափ ալ ստիպողական ըլլան՝ թողուլ այսօր 'ի պատիւ մեր այն ընկերին՝ որ 'ի գերեզման կիջնէ : Ուստի կառաջարկեմ որ ժողովն իւր այսօրուան նիստն անմիջապէս փակելով առաջիկայ ուրբաթին ձգէ , որպէս զի երեսփոխաններէն ով որ կը փափաքէ կարող լինի յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Անշուշտ մեր հանդուցեալ ընկերին յուղարկաւորութեան գնացողներ պիտի ըլլան երեսփոխաններէն . սակայն ստոնք թէ և բազմաթիւ ըլլան , դարձեալ չեն ներկայացուներ զԱզգային ժողովս , ուստի պատգամաւորութիւն մ'ընտրել առաջարկեցի որ երթայ 'ի դիմաց ժողովոյն չուք դնէ հանդիսին , ինչպէս որ Արբաղան Նախա-

գահնիս ալ մեզ կը պատուիրէ : Այսու հանդերձ դարձեալ ամեն ոք ազատ է և կրնայ երթալ յուղարկաւորութեան ներկայ գտնուելու :

ՆՈՒՍՈՒՑՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ատենապետ փաշային առաջարկութիւնը պատգամաւորութեան մասին սխալ ըմբռնած էի . հիմա քանի որ իւր տուած վերջին բացատրութեամբ խնդիրը պարզուեցաւ , ես կ'անուամ իմ առաջարկութիւնս :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Աղայէկեան էֆէնտիի մահուան համար ամենքս ալ կը ցաւինք , որովհետեւ մեր ամենէն պատւական և բարի ընկերներէն մէկն էր . բայց նորա յուղարկաւորութեան ներկայանալու պատճառաւ այսօրուան նիստերնիս չենք կրնար փակել : Եւսուֆեան էֆէնտին էր ասի առաջարկողը , բայց նա ետ առաւ իւր առաջարկութիւնը : Կը մնայ ինձ այս առթիւ կէտ մը միայն յիշեցնել զիւրանին . մեք հանդուցեալ երեսփոխան մ'ալ ունինք , այն է Այվատեան Մատթէոս էֆէնտին , որ մեր գործունեայ ընկերներէն մէկն էր , և որոյ մահը ցայսօր անյիշատակ թողուած է այս ժողովէն : Կառաջարկեմ որ անոր յիշատակին համար ալ քանի մը խօսք ըսուի , որպէս զի պատմութեան առջև միոյն աշատութիւն և միւսոյն բացաւորութիւն ըրած չհամարուիք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եթէ ես մեռնիմ , չեմ ուզեր որ իմ յուղարկաւորութեան պատճառաւ ժողովին նիստը փակուի . թոյլ տուք մեռելոց թաղել զմեռեալս . մեք պէտք է այսօրուան նիստերնիս շարունակենք . Աղայէկեան էֆէնտիի յուղարկաւորութիւնը վաղուան ալ կրնայ մնալ թէ որ կուզենք պատուել անոր յիշատակը ներկայ գտնուելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Յիւանն Աղայէկեան էֆէնտիի մահուան առթիւ իւր պարտքը կատարել ջանաց , և պատրաստ է միշտ իւր ընկերաց յիշատակը յարգել : Իսկ Այվատեան էֆէնտիի յիշատակն զպլով , ստոյգ է որ նա ալ երեսփոխա-

նացս շարքին մէջ նշանակուած էր, բայց ես երկու տարի է որ չտեսայ զիբըր ժողովիս մէջ, վասն զի իր երեսփոխանութիւնն հրաժարագրոյ մը առթիւ առ կախուալ մնացած էր. այսու ամենայնիւ թէ որ ժողովն ուզէ, անոր ալ յիշատակութիւնը կրնայ ըլլալ յատենի աստ սրաշտանապէս: Հիմա օրուան խնդրոյն դատարով Աղայէկեան էֆէնտի յուղարկաւորութեան հանդիսին շուք դնելու համար, ինչպէս որ Սրբազան Պատրիարքը մեզ կը ներշնչէ, կարծիք մը կայ խմբովին երթալ գտնուիլ, և այս պատճառաւ այս օրուան նիստերնիս փակել. կարծիք մ'ալ կայ՝ առանց ժողովն ընդմիջելու թողուլ որ ամեն ուզող երթան հանդիսին ներկայ գտնուելու, և պատգամաւորութիւն մ'ալ որուէլ որ Մատթէոս Սրբազանին հետ երթայ պաշտօնապէս ժողովս ներկայացնէ: Այս երկուքէն ո՛րն ընդունուելիքը գիտնալու համար ձեր բնական զիմեւ կը պարտաւորիմ:

Ժողովը 21 քուէով ընդդէմ 19ի պատգամաւորութեան մը երթալն ընդունելով որոշեց շարունակել իւր նիստը:

Առենապետ փաշան ժողովին հաճութեամբ հրաւիրեց

Յակոբ էֆէնտի	Նորատունեկեան
Տիգրան	Եռսուֆեան
Յովհաննէս	Աղնաւորեան

Երբ պատգամաւոր ՚ի զիմաց ժողովին ընկերակցելի Մատթէոս Սրբազանին ներկայ գտնուելու հանգուցելուն յուղարկաւորութեան, յայտ առնելով միանորամայն թէ երեսփոխաններէն թէ՛ ուրիշ փոփոխողներ ալ կան՝ ազատ են երթալ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Պատրաստ եմ երթալ Սրբազան Պատրիարք Հօր հրամանը կատարելու համար. բայց մեկնելէ առաջ կը խնդրեմ որ թոյլ տաք ինձ երկու խօսք նուիրել հանգուցեալ Այվատեան էֆէնտի յիշատակին. թոյլ տաք ինձ պարտաւորութիւն մը կատարել և մեր սուգը կրկին ընել Այվատեան էֆէնտի յիշատակը պատուելով. Այվատեան է

Ֆէնտի երեսփոխանական պաշտօնին առ կախ մնալն առանց սրատմանի չէր, նա պատճառաբանեալ հրաժարական մը մատուցած էր: որ յանձնուեցաւ վարչութեան քննութեանը, սակայն քննութիւնն անկատար մնալով՝ չկրցաւ նա շարունակել իւր պաշտօնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՍ. — Մատթէոս Արքազան մեկնելէ առաջ երկու խօսք ընել կուզէ Այվատեան էֆէնտի յիշատակը պատուելու համար. Կրկանը չկրնար խօսքը վրանէլ նմա այսօրիս պարագայի մը մէջ, վստահ ըլլալով միանգամայն որ Արքազանն իր դատբանականը ճոխացնելով չ'վտայցներ առաւել մեր սրտերը որ կրկնակի վիրաւորեալ են:

Չայս ըսելով Առենապետ փաշան հրաւիրեց Մատթէոս Սրբազանն ՚ի բեմ:

Սոյն պահուն վերոյիշատակեալ պատգամաւորք և ուրիշ երեսփոխանք ոմանք մեկնեցան ժողովարանէն:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Երեսփոխան տեա'րք. ազգային երեսփոխան և Արարատ լրագրոյ խմբագիր Այվատեան Մատթէոս էֆէնտի տարածամ մահն արդէն անցեալ դեկտեմբեր 14ի առաւօտուն ազգին գուժեցաւ. այսօր ալ կը գուժի Ազգային ժողովս մէջ իմ միջոցաւ:

Տարբարող Այվատեան ազգային պարտք մը կատարած ըլլալով սխալ մեկնուեցաւ և չարաչար դանակիծուելով՝ երկամեակ հիւանդութենէ ետք հանգուեալ ՚ի Տէր: Սորա մահը կը յուսանք թէ ինքնակամ կառավարութեան վերջին զոհը կըլլայ:

Այվատեանի յուղարկաւորութեան հանդէսը պատուեցաւ խիստ բազմաթիւ ուղեկիցներէ, և Առենապետի Սրբազան Պատրիարք հայրն իր սրանչելի դամբանականին մէջ իրանամբ անուանեց զնա «Ճարտարութեան սիրոյ և արդարութեան նահատակ»:

Տարակոյս չունիմ, երեսփոխան տեա'րք, թէ դուք ևս մի և նոյն զգացումը կը կրէք Այվատեանի մահուն ցաւալի հանգու

մանաց վրայ : Հարկ չէ ըսել թէ կորու-
 վածիսն Այվատեան՝ իր կեանքը մեծ մա-
 սամբ ազգային ծառայութեանց նուիրած
 էր, իբրև դաստիարակ, իբրև խմբագիր,
 իբրև Թաղական խորհրդոյ անդամ և իր-
 բեւ երեսփոխան : Նորա սկզբունքն էր
 պաշտպանել ազգային շահերը և դաւա-
 նել թէ Հայ ազգն ունի այնպիսի մաս-
 նաւոր շահեր, որոնք չեն կրնար երբէք
 համաձայնիլ օտար շահերու հետ : Ազ-
 գային ժողովիս ատենադրութեանց մէջ
 իր ատենաբանութիւնը կը կենան, մի և
 նոյն ուղղութեամբ և հաստատամտու-
 թեամբ փայլած է և մանաւանդ աւելի
 փայլած է կաթողիկոսական խնդրոց մէջ-
 զի կը դաւանէր թէ Ազգին միութեան և
 զօրութեան կեդրոնն է Ս. Իջմիածնի մայր
 աթոռը : Ճշմարիտ սահմանադրական մ'էր,
 և Սահմանադրութեան վերաքննիչ յանձ-
 նաժողովոյ անդամ և ատենադպիր, նոյն
 իսկ տեղեկարեւն էր, բացատրելու հա-
 մար թէ շատ քիչ բան կայ վերաքննելի
 նորա մէջ, և եթէ կարելի է համոզել ըզ-
 մեզ թէ՛ բնաւ չկայ : Ազգային ժողովիս
 գոյութիւնն ու յարատեւութիւնը հարկա-
 ւոր երաշխաւորութիւն կը համարէր սահ-
 մանադրական կանոնաւոր ընթացից և
 ազգային յառաջադիմութեան, ուստի և
 անոր վրայ մեծ էին իւր գուրգուրանքն
 որք ծանօթ են արդէն Ազգային ժողովիս :

Այվատեան մեռաւ չորս որր և դե-
 ոսփթիթ դաւակ և այրի կին մը թողով-
 մեռաւ աղքատ և պարտուց տակ, զոր
 չէր յայտներ իւր կենդանութեանը : Ազ-
 գին կը մնայ ազգային աշխատաւորի մը
 գաւակները խնամել, որ քաջալերութիւն
 մ'է ուրիշ աշխատաւորներ յարուցանե-
 լու : Եւ ես կը կնքեմ Այվատեանի պատ-
 ւաւոր յիշատակին համար իմ այս դուզ-
 նաքեաց ատենաբանութիւնս, յայտարա-
 ղելով թէ՛ Այվատեան Մատթէոս իր ազ-
 գային պարտքը կատարած ըլլալով, իւ-
 բառուք ստացած է Ազգային երեսփո-
 խանական ժողովիս դովանանաց քուէին,
 զոր կը յուսամ թէ ժողովս յոսն ելնե-
 լով կը հռչակէ և կաւանդէ պատմութեան :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓՆՇԱ. — Ահաւասիկ այս
 պարագային մէջ մեր երկու կորուսեալ
 ընկերաց՝ Աղայէկեան և Այվատեան է-
 ֆէնտիններուն համար կը հրաւիրեմ երես-
 փոխան էֆէնտիններն իրենց ցաւը յայտ-
 նել յոտն կանգնելով :

Երեսփոխանը միահամուռ ոտքի ելնե-
 լով ցաւազնութիւն յայտնեցին :

1.

Բացուցումներ

Ատենապետ փաշան անձնական տկա-
 րութեան պատճառաւ բացակայ գտնուող
 մի քանի երեսփոխանաց անունները թը-
 ւելէ ետև, որք են՝

- Տ. Հմայեակ վրդպ. Դիմաքեան
- Տ. Սահակ քհնյ. Տ. Սարգսեան
- Սարգիս էֆէնտի Աղաբէկեան
- Գրիգոր » Մարկոսեան

նշանակել տուաւ ներկայութեան տումա-
 րին մէջ :

2.

Խորէր նախորդ 3 նստերու արեւմտեան

ԱՍԵՆԱՊԵՏ ՓՆՇԱ. — Ատենադրու-
 թեանց խնդիրն ինչպէս կը յիշէ ժողովիս
 նախորդ նստին մէջ յուղուեցաւ և այս
 նստին որոշման մնաց : Իւթիւճեան էֆէն-
 տիի հետ եղած պայմանադիրն ուղեցիկը
 տեսնել հասկնալու համար թէ ինչպէ՞ս
 պայմանուած է ատենադրութիւնները
 տպել և ժամանակին երեսփոխանաց ձեռ-
 քը հասցնելու կէտն : Գնացի անձամբ իւ-
 թիւճեան էֆէնտիի գրասենեակը և տե-
 սայ պայմանադիրն որ ճիշդ նոյնն էր ինչ
 որ մէկ քանի ամիս առաջ ցոյց տրուած
 էր Գիւանին, և Արաբութեան Տնտես-
 խորհրդոյ զիւանի ստորագրութիւնը կը
 կրէր : Անոր մէջ յիշուած է յատկապէս
 թէ յաջորդ նստէն 24 ժամ առաջ պիտի
 հանի ատենադրութիւնը, բայց ոչ թէ
 ցրուելու՝ այլ ի վաճառ հանելու համար
 տեսնելով որ այս կէտը չէր պատասխա-
 նէր ճշիւ մեր կանոնին տրամադրու-

Թեան, որ կը պահանջէ նիստէն գեթ 24 ժամ առաջ ատենագրութիւնը տպեալ եւ րեւսիօսանաց ձեռքը հասցնել, անմիջապէս գրեցի Տնտես. խորհրդոյ Ատենապետին, որ եթէ կարելի է սրագրելով պայմանագրին այն կէտը՝ 24 ժամը 48 ի վերածէ, և ամեն անգամ տպեալ ատենագրութեանէն երեսօրսանաց թուով սպազրիչէն ծախու առնելով Ատենագրակիր էֆէնտիին յանձնել տայ, որպէս զի նա ալ կարող ըլլայ գոնէ 24 ժամ առաջ ցրուել տալ երեսօրսանաց: Եւ որպէս զի ոչ միայն Ազգային ժողովը, այլ և կեդրոնական սնտուկը գոհ ըլլայ, առաջարկեցի որ երեսօրսանութեան հաւաքութիւն մէջ մի ատենագրութեան տպագրութեան ծախքը մէկ կամ արեւի օրինակի համար ըստ հաճոյից ի նպատակ Ազգ. սնտուկին. և եթէ այս կերպով ծախքը ամբողջապէս չգողուի, մնացորդը դիւանական ծախուց վրայ յաւելնայ, որով ամսական փոքրիկ գործարկութեան մը շնորհիւ երեսօրսանաց ամենուն գոհունակութիւնը կը շահուի և Ազգ. ժողովոյ դիւանի վրայէն ատենագրութեան խնդիրը միանգամ ընդ միշտ կը վերնայ: Այս ամենը նամակաւ իմաց տուի նաև մեր Ատենագրակիր էֆէնտիին, որ դժբաղդաբար նամակս մինչև այս վայրկեան չստանալով, այս անգամին համար չէ կրցեր ուշագրութեան առնուլ և գործարկութեան դնել. սակայն հիմա Տնտես. խորհրդոյ Ատենապետն ինձ յայտնեց թէ՛ առաջարկութեան ընդունուած է խորհրդին մէջ և պիտի գործարկուի յետ այսօրիկ:

Այս վերջին 5 ատենագրութիւններէն երկուք ունինք տպեալ և պատրաստ վաւերացման համար. վերջինն ալ կիսով չափ տպեալ է, բայց ձեռագիրն ամբողջ աստ է. թէ՛ որ ժողովը կուզէ, երկու տպեալները վաւերացնենք. եթէ ոչ՝ ամենը մէկէն ձգենք յառաջիկայ նիստին վաւերացման:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛. յառաջիկայ նստին թող մնայ, վասն զի

ատենագրութիւնները, թէ՛ և տպեալ, ձեռքերնիս չհասան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն կանցնինք ատենական ուրիշ գործարկութեանց: Ա.Լ.ՃԱՃԵԱՆ 2. էֆ. — Իմ հասկացքս այս է. ատենագրութիւնները 24 ժամ առաջ պիտի ստանանք. ուշորը ծախքը պիտի տայ իրբև նուէր. այսպէ՛ս է Ատենապետ փառա:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսի թէ առաջարկութիւնն ընդունուած է Տնտես. խորհրդէն. այսօրուան ատենագրութիւնով չորս ատենագրութիւն պիտի ունենանք յառաջիկայ նստին տպեալ և պատրաստ ամենուն ձեռքը: Ես կրնամ հաւաստել ձեզ թէ՛ Տնտես. խորհուրդն և Ատենապետը կից էֆէնտին իրենց պարտաւորութիւնը պիտի կատարեն և կատարելարեւապէս գոհ պիտի ընեն Աստուծոյ թիւնն և Երեսօրսանութիւնը, ինչպէս որ խոստացան ինձ: Անցնինք ուրիշ գործարկութեանց: Այսօր խել մը գրութիւններ ունինք, նախ գանձք պէտք է կարդանք:

3.

Գրասր առաջարկութեան 50 Երեսօրսանաց Ատենապետ փառա կարգաց հետեւալ առաջարկութիւնն, որ 50 երեսօրսանաց կողմէ մատուցուած էր:

Մեծապատիւ Ատենագրակիր էֆէնտի Ազգային ժողովը.

Ստորագրեալ երեսօրսանք Ազգային ժողովոյ այսօրուան նստին մէջ Օ. Խոճաւարեան էֆ. երեսօրսանին զէմ արուած յանդիմանութեան քուէին մասնակցողներէն ըլլալով, կարգուէնք որ մեր յիշեալ մասնակցութիւնն ատենագրութեան մէջ յանուանէ նշանակուի:

25 փետրվար 1877

- Յ. Մերեթ-Գոյի
- Յ. Կրճէկեան
- Մ. Գալուստեան
- Գ. Սէլեպէճեան
- Օ. Եղաճեան
- Ն. Գաբրիէլ
- Յ. Խաւսեան
- Յ. Գաղաթեան

- | | |
|-----------------|-----------------|
| Կ. Իռլենդեան | Յ. Ալեքսանդրեան |
| Տ. Փեյրիսիան | Ս. Պեյլիգեան |
| Յ. Նորարոսիկեան | Տ. Եռասփեան |
| Մ. Չոպանեան | Մ. Էսեան |
| Գ. Մարկոսեան | Մ. Հալաճեան |
| Ղ. Հոփանեան | Ն. Շահպաղ |
| Մ. Արխանանեան | Պ. Պատանեան |
| Յ. Պաշտեան | Մ. Մարտրեան |
| Յ. Նորարոսիկեան | Յ. Յովակիմեան |
| Հ. Մարտիրոսեան | Ա. Տէրբէ |
| Ն. Քաղաղեան | Յ. Շահեան |

Յեաւ ընթերցման, երեսփոխան Միսաքեան Պետրոս էֆէնտին ալ ելաւ նոյն թիւովն ստորագրել :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կուղեւնք զիտնալ թէ այդ ստորագրողներուն ամենն ալ վերջին նստին ներկայ էին և քուէ առին :

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Ես ներկայ չեի վերջին նստին, ուստի և չեմ կրցած քուէ էին մասնակցիլ :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ուրեմն իրաւունք չունէիք ստորագրել :

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Ես ներկայ չեի թէև, բայց համարեմ եմ. և կարծելով թէ զբաւոր քուէարկութիւն կըլլայ այսօր, ստորագրեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեսփոխանէ առ երեսփոխան խօսակցութիւնն արդիւեալ է ըստ կանոնի. զանք որ կարդացած զիրն այսօրուան նստին վերաբերութիւն մը չունի, այլ անցեալ նստին մէջ կատարուած քուէարկութեան գործողութեան մը կը վերաբերի. այս տեսութեամբ Միսաքեան էֆէնտի քանի որ անցեալ նըստին բացակայ էր, իրաւունք չունի ըստ ստորագրութիւն դնել. ուստի կը հրահրեմ զինք որ իր զբաժ ստորագրութիւնն իւր ձեռքը ջնջէ :

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Շատ լա՛ւ. (և որեւանին մերջնալով իւր «որոտքոտութեանը» ԶԵԵ) :

ԱԼԱԶԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Յաւ կըլլայտնեմ ես այս խնդիրն այս կերպով դարձ

եալ այս առեանին մէջ բերուելուն համար. մեր ներքին կանոնագրոյն մէկ տրամադրութիւնն առաջին անգամն է որ գործադրելու ելանք. յիշատակելով մը միայն անցնիլ բաւական էր կարծեմ. բայց կը տեսնեմ որ խնդիրն ուրիշ գոյնով մը դարձեալ նորոգել կուզուի. ա՛ստնք չափազանցութիւններ են, և ստորհամար իբր երեսփոխան ցաւ կըլլայտնեմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Անցեալ նըստին ինձ դէմ ՚ի գործ դրուած պատժական քուէարկութիւնը գաղտնի էր, և իբր այն ներկայ չէր կրնար ըլլալ այսօր քուէարկուաց անունները յայտնաւզէս նշանակել. բայց որովհետև ժողովն ստորագրեալ առաջարկութեան մը ձևին տակ այդ անուանական քուէարկութեան սկզբունքն ընդունեց և հաստատեց այսօր, շնորհակալ եմ որ այս կերպով մեզի ալ առիթ սուած եղաւ, որպէս զի զա՛ւ նստին մեք ալ բերեմք ստոր հակառակը հաստատող ստորագրողաց ցուցակ մը :

ԳՐԱՐԳԱՇ Ն. ԷՖ. — Ստորագրողներն մէկն ալ ես ըլլալով կըլլայտարարեմ թէ այդ առաջարկութիւնն ընելով մեր զխաւորութիւնը չէ կրկնել նորէն թէ Օղակն էֆէնտի արժանի է դատաստարութեան, այլ պատճառն այն է որ անցեալ նստին քուէարկութեան արդիւնքն անորոշ և շփոթ ցուցնելու համար ըսող եղաւ թէ քուէի մասնակցողաց թիւն այսչափ կամ այնչափ էր, ուստի այս կէտը պարզուելու համար և քուէարկութեան մասնակցողաց թիւը յստակ կերպով յայտնուելու համար է միայն այդ ստորագրութիւնը դնելնիս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Միջողէյ ո՛րէն այս, որուն վրայ խօսքն երկարածքել չարժեք. արդէն մէկ և միւս կողմէ մէյ մէկ անդամ խօսուած ըլլալով, կրնանք փակիլ միջադէպն, սա համառօտ բացատրութեամբ : Ես ալ ՚ի սկզբան տեղեան չեի այս դրոյն պարունակութեան. զի մը կար առեանագպիլ էֆէնտին ուղղուած, կարդացինք զայն անմիջապէս և

չինք կրնար ուրիւ կերպով ընել . բայց դիւանն այդ գրոյն ընթերցմամբ անպատեհութիւն մը գործած ըլլալու տեղի չը տուաւ , կարծեմ : Ես բացարձակապէս բռն՝ ձեզ այդ գրոյն նշանակութիւնը . անցեալ նստին մէջ Օդաէն էֆէնտիի դէմ կանոնին արամադրած պատժական տնօրէնութեանը համար կատարուած քուէարկութեան արդիւնքն էր մէկ քուէ հատակ կողմէն , իսկ միւս կողմէն մեծամասնութիւն . սակայն յետոյ բողբոջ եղաւ իբր թէ քուէից մեծամասնութիւն չկար և քուէն սխալ համրուած ըլլար , և այսպէս նոյն քուէարկութեան արդիւնքը կասկածի տակ ձգել ուզուեցաւ : Հիմա այս զիրն ստորագրողաց միւսըն ուրիշ բան չէ՛ , այլ զայն ատենադրութեան մէջ անցունել տալով ցոյց տալ որ նոյն քուէարկութեան մէջ երբէք սխալ կամ խարդախութիւն մը տեղի ունեցած չէ :

Ս.ՃՈՒԿԻԱՆՆԻՍ Ուրիւ կէտի մը , զոր այս առթիւ հարկ կը համարիմ բացատրել , քանի որ բարեբաղդաբար Խորէն Արքայան այսօր ներկայ է և դարձեալ Բողոքին կը նախադահէ : Ըստ որում մեր ներքին կանոնը կը արամադրէ որ Բողոքին մէջ քուէից հասարակութիւն ստատահած ատեն մի միայն Նախադահ Պատրիարք Արքայանին քուէ տուած կողման պէտք է հակի որչումն , իսկ նորա բացակայութեան միջոցին Ատենապետին կը թողու նոյն իրաւունքը , կանոնին ճիշդ այս արամադրութեանը համեմատ անցեալ նստին Օդաէն էֆէնտիի վերաբերեալ քուէարկութեան առթիւ քուէից հասարակութիւն պատահելուն պատճառաւ ատենապետինից իւր վրայ առաւ այն պարտաւորութիւնը կատարել , զոր Արքայան Պատրիարքն ինքն պիտի կատարէր թէ ներկայ ըլլար . և զայս ընելով երբէք մտքէս չէր անցներ թէ Խորէն Արքայանին որ առժամանակեայ նախադահութեան պաշտօնն ստանձնած էր , իրական դէմ բռնարարութիւն մը գործած ըլլամ . սակայն իմացայ որ Խորէն Արքայան այս պատճառաւ ցաւած է՝ կարծելով թէ իւր

նախադահական իրաւունքը կապտած եմ իւր ձեռքէն . ուստի գիտնալով որ ասի սխալ հասկոցողութեան մը հետեւանք է , պարտք սեպեցի բացատրել հաստատարել համար թէ Գիւանը սխալ քայլ մ'առած չէ այս պարագային մէջ :

ՂԱԶԱՐՈՒՆ Բ. ԷՃ. — Խօսք կուղեմ , Ատենապետ փաշա , ձեր բացատրութեան մէկ սխալ կէտն ուղղելու համար : Ձեր տուած քուէն յանդիմանական վճուոյն համար չէր , այլ վիճաբանութեան փակման համար . իսկ յանդիմանական քուէին դալով՝ արդիւնքն երկրպագութեան մէջ մնաց . Փախաղեան էֆէնտիի միայն չէր բողբոջը քուէարկութեան արդիւնքին դէմ , այլ ամեն մէկէն կը պտտչինք և չէինք ընդունել յանդիմանական վճուոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ յանդիմանական վճուոյ մասին քուէ տուի չեմ բեր . այլ վիճաբանութեան փակումն ըստ որում ուզող ալ կար , չուզող ալ կար , քուէի դրուելով , երկու կողմէն ալ քուէները ՉՂական հաւատար եկան , այս պարագային մէջ էր որ իմ քուէս տալ հարկ եղաւ ըստ կանոնի : իսկ յանդիմանական վճուոյն չմասնակցեցայ :

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՃ. — Խօսք կուղեմ . քուէներուն սխալ ըլլալը պիտի ցուցնեմ , անցեալ նստին քուէից թիւն 33 է ըսուեցաւ . այլ ստորագրութիւնները նոյնքան թիւ չեն կաղմեր և չեն համաձայնելք քուէից արդիւնքին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք , պէտք է որ գոցուի այս միջադէպը . ստոյգ է որ այս ստորագրութեանց թիւը ճշդէն չպատասխաներ անցեալ նստին իբր քուէարկու համրուած թուոյն . այս ամեն պարագայներն ատենադրութեան մէջ պիտի հրատարակուին , այլ ևս թե՛ն հարկ երկարելու :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԿԱՅԱՆ. — Ըստ որում ինձ ակնարկութեամբ քանի մը խօսք ըրիք , Ատենապետ փաշա , հարկ է որ բացատրութիւն մը տամ : Ես ցաւ չեմ յայտ

նած, և ոչ նախագահութեանս կարևորութիւն մը տուած, վասն զի առժամայ էր. բայց զարմանք յայտնած եմ անոր համար որ նախագահը քուէից հաւասարութիւն պատահած ատեն չէ փնտռուած, այլ միայն յանդիմանական վճռոյ գործադրութեան միջոցին փնտռուած է. այս էր միայն զարմանալուս պատճառը, կը խնդրեմ որ արձանագրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Ըստ որում մէկ քանի անգամ հրաւիրեցի Ձեր Սրբազնութիւնը՝ որ Ժողովին վճիռը գործադրէք, և չգործադրեցիք, պատճառն որոնեցի և փտահնութեան արժանի անձէ մը իմացայ թէ դուք նոյն օրը վշտացած էք՝ իբր թէ նախագահական պաշտօնին աղէկ կողմը չձգուեցաւ ձեզ, և տխուր կողմը միայն արուեցաւ : Ս, յգ ցաւերնիդ փարատելու համար փութացի պահ մը յառաջ բացատրել Կանոնադրութեան նոյն կէտին վերաբերող տրամադրութիւնը, որ եթէ իւր թեքի կողմն ալ ունենայ՝ ինձ չը վերաբերի. ես կանոնին տրամադրութիւնը միայն գործադրեցի: Աստի խնդրել կը գոցենք :

4.

Ղաւթիոյ Ժողովրդեան յօդագիրք .

Ատենապետ փառանքալ ժողովին ներկայացուց և կարդաց յետագայ աղերսագիրքն, որ Ղաւթիոյ Ժողովրդեան կողմէ մատուցուած էր .

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Բնիկ. Ժողովոյ .

Ղաւթիոյ Ս. Լուսաւորէչ եկեղեցւոյ Թաղին Ժողովուրդքս, թէ և նոյն Ս. եկեղեցւոյ մէջ միշտ կաղօթենք և մեր տուրքն անոր կը վճարենք ամենայն յօժարութեամբ և ըստ կարեաց մերոց, բայց մեր Թաղին խորհուրդն ընտրելու մասին իրաւունքնիս ցարդ անտես աւելուած ըլլալով, այժմ Ազգային գերագոյն ժողովիդ կը դիմենք և կը խնդրենք որ մեր

ընտրական իրաւունքը Սահմանադրութեան համաձայն մեզի տրուի :

(Սորաբերանք)

Թաղ. խորհուրդը հրատարեալ ըլլալով Թաղիս Ժողովրդեան սոյն ստորագրութիւնը կը վաւերացնենք, յայտնելով միանգամայն թէ ատոնց մէջ կան սեղանաւոր, հացագործ, սենեկակալտ, սափրիչ և այլ արհեստաւոր անձինք :

1877 մարտ 10 Ա. Բրուտի Թ. Լըբու Գարոյիչ Ղաւթիոյ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Օրէնքը կը պահանջէ որ այսպիսի աղերսագրերն արձանագրեալ ըլլան Պատրիարքարանի մէջ և ըստ որում այս աղերսագիրքն արդէն Պատրիարքարանի ղիւանական արձանագրութիւն և կարգահամար կը կրէ, այժմ է յղուի Յարաբերութեան ղիւանին փոխաբնութիւն :

Ժողովն Ատենապետ փառանքալ զարկած սոյն յղումն ընդունեց ատանց ղիտողութեան :

5.

Առաջարկութեան Քրիստոսոսուր Էֆէնոյէ

Ազգային երեսփոխան Քրիստոսոսուր Էֆէնոյի յետագայ առաջարկութեան գիրքը կարդացուեցաւ .

Ասեմափայլ Ատենապետ փառանքալ Ազգային Բնիկանուր Ժողովոյ .

Աշխարհիս ամեն կողմ գտնուող Հայ գաղթականաց (ոչ թէ միայն Կ. Պոլսոյ Պատրիարքական Եկեղեցւոյն ներքին գտնուող երկիրները՝ այլ ուր որ Հայ կը գտնուի) թէ նիւթական թէ բարոյական և նոցա ազգային կենաց վիճակը ազգին գիտնալ պէտք է. ինչպէս վաճառական մը իրեն պատկանած զբամազի մասն ուրքանութեան հաշիւը կուենեայ և միշտ կը դիտէ, նոյնպէս նաև բարեկարգեալ ազգերը իրենց Ժողովրդոցն թէ թուոյն ուրքանութիւնը և թէ ամենայն մասի նո-

ցա վիճակը միշտ խնամօք նկատողութեան կատուուն, այսպէս նաև մեր Հայ ազգը երբև բարեկարգութեան հետամուտ ազգ պէտք է դիտնայ թէ ո՞րը Հայ կայ և ո՞րը չպիէ նոցա թիւը, նոցա նիւթական և բարոյական ազգային վիճակը և ստացուածքը: Թէև մինչև ցարդ թէ ազգային և թէ օտարազգի այլ և այլ ճանապարհորդաց ումանց օրապրութեանց այս մասին եղած հատուածները հրատարակուելովն փոքր ի շատէ հետաքրքիր ազգայնոց ուշադրութիւնը գրաւած են բաց իւրաքանչիւր անհատի էկամ մասնաւորաց կարողութիւնքն շին ներքեր ընդհանուր և գործնական կերպիւր վիճակազրութիւն ընել և որով տեղեկանալ նոցա անհատական, ընտանեկան, կրօնական և ազգային կեանքն, այսինքն յառաջման, բարւոքման վրայ են թէ նուազման. ի լաւութիւն թէ ի յոռութիւն կը դիմեն:

Արդ անհրաժեշտ պէտք է ազգային պաշտօնական յատուկ մարմնոյ մը հաստատուիլը, որ կարենայ այս վիճակազրութիւնը լիովին ի զլուս հանել, մեր ազգային անհատական թուոյն և ստացուածոց սպառման պատճառները քննելով նոցա պէտք եղած դարմանին ծրագիրն շինել:

Աւտի կը խնդրեմ Ազգային ժողովէս որ այս առաջարկս յօդուտ ազգի նրկաւ տողութեան առնելով վիճակագրական տեղեկութիւնքն հաւաքէ այս մասին հրատու և գործունեայ անձանցմէ կազմեալ խառն ժողովոյ մը միջոցաւ, որ ծրագիրը խննդելով բերէ Բնդհանուր ժողովոյս, և Ազգ. ժողովս պէտք եղած անօրէնութիւնն և որոշումը տայ:

11 մարտ 1877 Ազգային երեսփոխան Բ. Ղալաբոբեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդիրն ալ իբր վարչական խնդիր պէտք է յղել նախաքննութեան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Որ խնդիրն որ կուզենք յետաձգել՝ այն կը յղենք նախա-

քննութեան. որովհետև ինչ խնդիրներ որ մինչև ցարդ յանձնուեր են նախաքննելի դիւանաց, առ կարև մնացեր և պատասխանները չեն եկեր: Նախաքննութեան յղուած և անպատասխանի մը նացած այս տեսակ խնդրոց մէջ ցուցալին աւատիկ պատրաստած եմ և պահ մը վերջը պիտի ներկայացնեմ ժողովին: Գոնէ յղելի խնդրոց իւրաքանչիւրին համար մէյ մէյ պայմանաժամ որոշուի և այնպէս յանձնուի դիւանաց, որպէս զի պարտաւորին պատասխանը փութացնել մինչև պայմանեալ օրը, և եթէ զանց ընեն ճշգրտին իրենց պարտօնէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իբր թշնամա՞նք կուզէք այդ խօսքը Դիւանին, Փափագեան է՞քէնտի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՛չ, ո՛չ. իմ խօսքս Դիւանին չկրաբերիր. Նախաքննելի դիւանաց համար է, որ չեն գործեր և իրենց յանձնուած խնդրոց տեղեկագրերն չեն բերեր ժամանակին, կտաւ ջարկեմ որ պայմանաժամաւ յոռտին այսուհետև խնդիրները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն մտքերնուդ համեմատ կարգադրեցէք խօսքերնիդ. զի «Ինքաններու յանձնուած չորժերն չեն կարողութեամբ ըսելը զժողովութեան խօսք մ'է, բայց ներելի. իսկ Ո՞ր Խորհրդն որ յետաձգէ կողմէ զայն նախաձեռնութեան կը յղէ» ըսելը թշնամանք է և ոչ ներելի:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Բրիտոստոնք է՞քէնտի տաւաղարկութեան կարևորութիւնն ես ալ կ'զգամ, ուստի ինչպէս ուրիշ պարագայից մէջ եղած է, այս մասին ալ կրնայ ժողովն իր մէջէն մասնաժողով մը կազմել և անոր յանձնել պէտք եղած վիճակագրութեան պատրաստութիւնը:

ԽՕՃԱՍՍՈՐԵԱՆ Օ. ԷՖ. — Փափագեան է՞քէնտի խօսք մ'ըբաւ, Ատենապետ փաշան թշնամանք համարեց, և երբ հարցուց թէ թշնամական մտօք ըսաւ արդեօք, նա ո՛չ պատասխանեց, և ասով դուք եղաւ Ատենապետ փաշան ու ներեց. ցաւ ալի է որ Դիւանը մի և նոյն ընթացքով

չվարուիբ համապատասխանող դէպքերու մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇԱ. — Քանի որ թըւնամանքը Գիւանին ուղղեալ էր, հարցուցի ե ներողամիտ եղայ, զի դիտումար եղած շըլլան հասկցայ . իսկ ժողովին ուղղեալ թըւամանքի մը ներել Գիւանին ձեռքն հասուլեանէն վեր է . ժողովն իրեն վերաբերեալին համար ինք միայն կրնայ որոշորէնութիւն ընել :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Թշնամանք րա որ չեմ ընդունիր . ես ըսի թէ երբ խընդիր մը յետաձգել ուղենք՝ նախաքննութեան կը յղենք . այս յրուած խնդրոց ցուցակն առ ձեռն ունիմ ըսի, հոն պիտի տեսնէք թէ ո՛րչափ խնդիրներ առ կախ մնացած են . այս պատճառա պայմանաժամառ յրում առաջարկեցի . Գաստիարակութեան խնդրոյն ատենն այ այդ առաջարկն ըրի, որ ընդունուեցաւ, և պատասխանն ալ օրին եկաւ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վիճակագրութեան համար բրած առաջարկութիւնս նախաքննիչ զիւանաց երթայ բոււեցաւ, և Մէլիքեան էֆէնտիին մասնաժողովի մը յանձնել առաջարկեց : Թէ՛պէտե առաջարկութեանն նիւթն երկար է և ես չուզեցի երկարօրէն գրել ձանձրոյթ չպատճառելու համար, սակայն այնքան կարևորութիւն ունի որ հարստահարութեանց խնդրէն աւելի փաստ կը պատճառէ . ազգին ստացուածքը ծովամոյն կըլլայ պէտք չէ որ ասանկ կարևոր խնդիր մը դիւանաց ձգուի, ժողովն ինք ուշադրութեան առնելու է իր մէջէն մասնաժողովի մը յանձնելով : Ետո տեղեր չայսց ազգէն գաղթականութիւններ ունինք, սակայն անոնց ազգային բարոյականն և նիւթականն վիճակին վրայ տեղեկութիւն մը չունինք . մեր մէջ չկայ այնպիսի ընկերութիւն մը որ վիճակագրութեան ճիւղն իրեն նիւթ ընտրէ և անով գրադի . չըրեաներն անգամ Խորայէլեան անունով ընկերութիւն մ'ունին՝ որ կը գործէ շարունակ . ինչո՞ւ մեր չունենանք, անչո՞

կազմեալ ընկերութիւն մը՝ որ է այս ժողովն եկեղեցական և աշխարհական ամեն կարգի անդամներէ խառն : Ուստի Մէլիքեան էֆէնտիի կը ձայնակցեմ, որ ժողովն ինք ստանձնէ այս գործը և իր մէջէն կազմեալ մասնաժողովի մը յանձնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇԱ. — Քրիստոստոր էֆէնտիին առաջարկութիւնը ուղղակի վարչութեան զրկել անկ էր, ես նախաքննութեան յղել առաջարկեցի, դիտելով քաջ թէ նախաքննիչ դիւանն ալ դնոյն պիտի առաջարկէ : Ասկէց մի քանի տարի առաջ երբ հարստահարութեանց խնդիրը կը յուզուէր ժողովի մէջ, դիտողութիւն ըրած եմ թէ այս տեսակ խնդիրներ չեն կրնար Ազգային ժողովի մէջ ՚ի հրապարակի յուզուիլ զի վարչութեան կը պատկանին և պէտք է անոր յանձնուին : Այսոր դարձեալ նոյնը կը կրկնեմ . եթէ վարչութիւն մ'ունինք՝ թողունք վարչական խնդիրներն ինք տնօրինի . եթէ չունինք կամ եթէ ունինք ու չգործեր, վարչութիւն մը կազմելու ենք և կամ հնոյն Եսելու ենք թէ տեղի աւար այլում, և թողելու ենք որ նա գործէ և մեր հսկենք : Եթէ այս տեսակ խնդիրներ՝ որ վարչութեան կը պատկանին, մեր վրանիս առնունք և յանձնախմբեր կազմելով՝ յանուն և ՚ի դիւանց ժողովոյ տնօրինենք, ո՞ր պիտի հսկէ մեր վրայ և համարառութեան պահանջ միթէ վարչութիւնն իրաւունք օրոնենար մեզ պատասխանելու թէ դուք փոխանակ հսկելու՝ կը գործէք և կուզէք որ ե՞ս ըլլամ պատասխանատու : Զը յենգալըջենք Սահմանադրական արարաւորութիւննիս . Ազգահամարի և Վիճակագրութեան գործը վարչութեան գործն է . նա գործող պէտք է մնայ և մեր հրակող . եթէ մեր պիտի գործենք և հսկող չունենանք, վարչութեան ի՞նչ հարկ ուրեմն . և Սահմանադրութիւնն ալ չենրեր այսպիսի յեղաշրջումներ որ Ազգային գործոց տնօրէնութեան մէջ Գեֆթու անունը բառ կը ձգեն : Ուստի սոյն խնդիր փոխանակ մասնաւոր ժողովական յանձնախմբի մը տնօրէնութեան յանձնելու :

4.

Բարեգործական Օգնական Եկեղեցի

Առեւտրական փառանքաւորութեամբ իսկ
Առեւտրական Սրահաճեան Եկեղեցիին կար-
գալ յետագայ բողոքագիրն, որ Օգոստէն է-
ֆելտի կողմէ մատուցուած էր :

Վսեմապետ Առեւտրական փառանքաւոր
Առեւտրական Ազգային Ժողովոյ :

Անցեալ նիստին հրահրած էիք զիս
զալ ինքզինքս արդարացնելու Քաղ. Ժո-
ղովոյ բողոքին առջև . ես ամենայն ան-
կեղծութեամբ բացատրեցի այն նախա-
տալի պարագաներն որք Քաղ. Ժողովոյ
կողմէն տեղի ունեցած էին Ազգ. Ժողո-
վոյս դէմ, ուստի և ամբաստանելով զայն
իւր այդ հակասահմանադրական գործոցը
համար, ամենայն ճշգրտութեամբ խոստո-
յանեցայ թէ՛ այն բառը որու դէմ բողո-
քեր էր Քաղաքական Ժողովը՝ բերնէս փա-
խած է իմ կամքէս անկախ պարագանե-
րու բերումով, պարագաներ՝ որոյ չեղինա-
կը նոյն ինքն էր Քաղաքական Ժողովն :
Եւ զայս խոստովանելէն ետքը մեկնեցայ
խորհրդարանէն, որպէս զի Ժողովը անձ-
նականութեան ազդեցութենէ ազատ իր
որոշումը տայ . Քաղ. Ժողովն ալ իբրև
բողոքող պարտական էր իմ օրինակին հե-
տեւելով Ժողովը ազատ ձգել իր բողոքին
վրայ վճիռ արձակելու . սակայն ոչ մի-
այն չէ մեկներ նա խորհրդարանէն՝ այլ
մինչև անգամ ինձ դէմ քուէ տալու եղեր
է իբրև դատաւոր օգուտ քաղելով Ժողո-
վոյդ Քաղ. Ժողովոյ բողոքարկու ըլլալու
իրաւունք չունենալով վճռելէն, մինչդեռ
Ժողովոյդ այդ վճիռը դատաւարութիւն
մ'էր Քաղ. Ժողովին դէմ՝ իբրև իւր ի-
րաւանց սահմանը չգիտցող մարմին մը,
չգիտնալ ձևանալով այն դատաւարական
օրէնքը թէ՛ բողոքողի մը բողոք ունենա-
լու իրաւունք չունենալով վճռելին ալ բո-
ղոքողին դէմ մինչև մէկ ատուհան դա-
տաւարանութիւն է, թէ և անոր բողոքը
նիւթը դատարանը իրեն իրաւաստութեան
սահմանին տակ անեղծով դատաւարանէ
նակ ատոր էնթակայն :

ինչպէս կառավարիկն Գրիտոստոսը և Մ.
Մեկքեան էֆելնտիները, կամ նախաբն-
նութեան յղեք որպէս զի նախաբնիչ
զիւանը խնդրոյն վարչութեան սրտակա-
նին տեղեկագրելով յուսմն առաջարկէ,
և կամ աւելի կարճ ընթացքով գրոյն վը-
րայ յէտ Աղբային Ժողովն աւելի բարե-
բեան աւելի սրտագրական օրէնքներն զը-
րելով յղեք վարչութեան, և գործադ-
րութեան հսկենք . և եթէ չգործադրե-
այն ատեն պէտք եղածը մտածենք :

ՉԱՅՆԵՐ. — Կրնողունիք վարչութեան
յղել :

ՂԱԶՐԱՐԱՆՈՒՄ Բ. ԷՑ. — Ես ալ կրն-
ողունիմ որ ճիշդ սահմանադրական ըն-
թացքով վարչութեան երթալու են այս-
պիսի խնդիրները, և առաջարկութիւնս
զբի առած ատեն նոյն դիտարկութեամբ
պիտի գրէի թէ վարչութեան յանձնուի
այս խնդիրն և անոր գործադրութիւնն
ստիպողական կերպով պահանջուի . աւ-
կայն պաշտօնակիցներէս յիշեցուցին ինձ
թէ վարչութիւնն գրադեալ է ուրիշ ոչ
նուազ ստիպողական գործերով և ժամա-
նակ չունի այս խնդրոյն նայելու . այս
խօսքով չհասկցուի թէ ներկայ վարչու-
թիւնը գործել չուղեր . ոչ միայն ներկայ
վարչութիւնն, այլ ուրիշ որ վարչութիւնն
ալ ըլլայ, ժամանակ չգտնիր այս միճա-
կադրական ծանր գործն ի գլուխ հանել .
այս նպատակաւ հարկադրեցայ առաջար-
կել որ Աղբային Ժողովն ստանձնէ սոյն
գործը և յատուկ մարմին մը սահմանե-
լի գլուխ հանելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՄ. — Այս Ժողովն
եթէ պաշտօն մ'ունի նուիրական, հսկել
է այն դիտարկութեան վրայ
առանց անոր գործոցը միջամտելու . ուս-
տի հսկողութեան պաշտօնիդ մի՛ գանց
ատենք և գործադրեցէք արթնութեամբ .
բայց մի՛ խառնուիք ձեզ չվերաբերեալ
գործոց :

ՉԱՅՆԵՐ. — Այս՛ պիտի այր, այդ է Սահ-
մանադրութեան ճիշդ պահանջումը :

Քաղ. ժողովոյ այդ կրած դատապարտութեան դէմ՝ որ բնաւ իրեն պատիւ չը բերեր իբրև վարչական մարմին և որով դէմ սահմանադրական պարտքեր ուներ կատարելիք, այն է վարչական թեթև կամ ծանր խնդիր յարուցանել, արդ դատապարտութեան դէմ կըսեմ՝ անդէտ ձևանալը աննպատակ չէր, այլ այն նպատակաւ էր որ եթէ բողոքող կարենալ չըլլալու կը դատապարտէք զիս ուրեմն դատաւոր կըլլամ ըսելով՝ քուէ տայ դատաւորական հակառակ ամենայն օրինաց: Քաղ. ժողովն այդ նպատակն ունեցեր և ծուղովիք կամ անուշադրութեամբը և կամ քաղաքավարական մէկ թոյտուութեամբը, և որ առաւելն է՝ թերևս Քաղ. ժողովոյ կրած այդ դատապարտութեանը վրայ՝ անոր յարուցանելիք վարչական խնդիրը մոռցնել տարու և խնդիր մը յարուցանել չտարու խաղաղական քաղաքագիտութենէդ օգուտ քաղելով յաջողեր է հասնիլ իր նպատակին նոյն օրը. սակայն ես չեմ կրնար ընդունիլ անոր դատաւորական քուէն իր բողոք յարուցած խնդրոյն մէջ, ուստի կը բողոքեմ ատոր դէմ և պարզ բողոք մը ընելու պարտականութենէս անպին տակուին ընելու իրաւունք ունեցած բողոքութեանցս ազատութիւնը ինձ կը վերապահեմ խնդրոյն բերմանը համեմատ կարենալ վարուելու համար:

Յայտարարեցիք ինձ նոյն օրը թէ ժողովը պարզ յանդիմանութեան քուէ վճռեց ինձ դէմ: Ձեր յայտարարութեան համեմատ՝ պարտաւոր էի ինքզինքս վճռեալ համարելու նոյն օրը, բայց ժողովականք մեծ մասամբ վճիռ չկայ յայտարարեցին յատենի ժողովոյդ, ուստի թէև իմ տակ ընդունելով զայն կըսեմ:

Եթէ իբրև վճռեալ ատոր գործադրութիւնը պիտի հրամայէք այսօր՝ շատ լսելիքներ ունիմ ատենական կանոնի ձևութիւն թէ այդ վճռոյն և թէ ատոր գործադրութեանը դէմ, ուստի մէկ բառով այժմ միայն վերաքննութիւն կը խնդրեմ ու կանցնիմ՝ սպասելով որ այս խնդրոյն վրայ խօսք առած ատենիդ խօսիմ. իսկ

եթէ դատախարակութեան ծանր և աննահարկոր խնդրոյն ըստ օրակարգի ըստ օրակարգանութիւն պիտի տար ու վերադրեալ միջնադէպ պիտի գոցէք և կամ ուրիշ նիստի պիտի թողուիք՝ դատախարակութեան խնդրոյն առաջին խօսքը կը խնդրեմ որ ինձ տար, զի այս մեծ խնդիրը՝ որ ազգին էն կենսական խնդիրն է՝ պատիւ ու պարծանք մ'է ժողովին եթէ այն չըջանին մէջ լուծած ըլլայ ժողովն:

Ուստի Ատենապետ փաշա՝ Քաղ. ժողովոյ դէմ ասկէ առջի նիստին մէջ ըրած այն ամբաստանութիւններս՝ եթէ այսօր դատախարակութեան խնդիրը պիտի յուզուի, յաջողի նիստին կը թողում յառաջ վարել մինչև որ դատախարակութեան խնդիրը աւարտի: Քաղ. ժողովն ալ եթէ ինձ չափ կարևորութիւն կուտայ դատախարակութեան խնդրոյն և իմ կամքէն անկախ պարագայէ մը բերնէս ելած մէկ բառին վրայ չպնդէր՝ թող նա ալ այս խնդիրը՝ որ արդիւնք մը չունի ազգին առաջը որչափ ունի դատախարակութեան խնդիրը՝ այս վերջնոյն լուծուելէն վերջի թողու, որպէս զի Էրեպուիտ-Ինչա բառին խնդիրը լուծած ըլլալու պարծանք ժողովուս այս չըջանը փակելու տեղ՝ դատախարակութեան խնդիրը իրօք լուծած ըլլալու մեծ պարծանքովը փակենք:

Արդ երկու խօսքէն մէկը ինձ շնորհելուց կ'սպասեմ. կամ Էրեպուիտ-Ինչա բառէն յառաջ եկած խնդրոյն վրայ իմ կանոնական խօսքը և կամ դատախարակութեան խօսքը, որոյ առաջին խնդրոյն եմ ըստ կարգի:

Մնամ ամենախոնարհ ծառայ
 11 մարտ 1877 Չերում փանութեան
 Խորհրդարան Ազգ. երեսփոխան
 Ղալաթիոյ Օ. Խօճապետն

Ա. Ա. Ճ. Ճ. Ա. Ն. Հ. Թ. — Իբր ատենադպիր սոյն բողոքողի կարգալէ ետև, իբր երեսփոխան դարձեալ ցաւ կը յայտնենեմ այս խնդիրն անդրէն աստ դառն համար: Ի զուր զմեզ ժամալածաւ կընեն այսպիսի խնդիրներ. ուստի կատաղաբար կեմ որ բոլորովին գոցուի այս խնդիրը:

ԲԱՆԻ ՄԸ ԶԱՅՆԵՐ. — Կը կրկենէք:
ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Դաստիա-
րակութեան խնդիրը ձեռք առնենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՑ. — Կը կրկենմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդիրը

դիւանիս վրայէն վերցնել փափարելի է. սակայն կէտ մը կայ պակաս, այն ալ լրացնենք և ապա անցնինք ուրիշ խնդիրներու: Նախընթաց նստին ժողովը վճիռ մը առաւ, բայց չգործադրուեցաւ. ասոր գործադրութեամբը ժողովը գո՛ր կըլլայ և ո՛չ ոք կը վիստուի. ոչ Քաղ. ժողովը կրնայ հրճուիլ թէ Օգոստէն էֆէնտի դատապարտուեցաւ, զի անոր բողոքին համար չարտուեցաւ նոյն վճիռն, այլ ժողովու պատկասանաց դէմ եղած պակասութեան մը համար, և ոչ Օգոստէն էֆէնտի կրնայ բողոք բանալ, զի ինքն ևս խտատվանեցաւ թէ պակասութիւն էր գործածը, բայց յակամայից, վասն զի Օգոստէն էֆէնտի յատուկ դիմում չունէր թնամանել զը, այլ անդուռաբար անկայել բառ մը բերնէն փախուց. ուստի ոչ վճիռը վճիռ չէ ըսելու տեղի կայ և ոչ վերաքննութիւն խնդրելու. Նախագահ Սրբապետին կը մնայ երկու բառով վերջացնել զայն, և խնդիրը լուրջովն կը վերստայ այս ատենան: Սրբապետին ըսելիքը կարծեմ որ մէկ խօսքով կը բննայ, որքե՞տ է, շէ՞տ էր այսոսնեքս:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. (ընդօրինակ) — Եթէ անոնէն թեթեւ բառն ալ ըսել տալ ուզէք, կը բողոքեմ: Այս խօսք մ'անգամ չեմ ընդունիր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկայէք, մի՛ ընդ միջէք զիս. եթէ այսպէս վարուիք, բարեկարգութիւն չարձուիր այս ժողովին մէջ. թո՛ղ առեք որ խնդիրն օրինաւոր կերպով վերջացնենք. ես կը կարծեմ թէ այսօր մեր տարեկան շրջանին վերջին նիստը պիտի ըլլայ. ուստի չեմ ուզեր պատժական տնօրէնութեանց դիմել. խաղաղութեամբ վերջացնենք շրջանին. ըսի թէ արդէն վճիռ մը կայ, չեմ կրնար զայն տարէն խնդրոյ նիւթ ընել՝ գործադրու-

թիւնը միայն մնացած է, որ Նախագահ Սրբապետին կը պատկանի. ուստի խօսք կուտամ Խորէն սրբապետին՝ որ իւր պաշտօնը կատարէ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Երեւոյթիս տեսքը, ստոյգ է որ անցեալ անգամ ՚ի Գիւանէ ինձ առաջարկութիւն եղաւ որ նախագահական պաշտօնս կատարեմ այս դժբաղդ պարագային մէջ. ստոյգ է և այն՝ որ երկու անգամ ձայնս առ Լեւոն նապետ փաշայն ուղղեցի, մինչև անգամ որք իսկ ելայ խօսիլ ուզելս ցուցնելու համար, բայց նոյն պահու յուզմանցը մէջ ձայնս լսելի չէր կրնար լինիլ և արձագանք դռնել այն ժողովարանին մէջ՝ զոր կերքն ու հակառակութիւն թափուր թողուցին ՚ի ժողովականաց:

Բայց ի՞նչ պիտի խօսէի, տես՛ք. — Ինչ որ պարտք համարած էի ինձ խօսիլ այն օրը, նո՛յնն ահա ըսեմ այսօր: Տես՛ք, իմ պաշտամունս և բնութեանս յատուկ անկողմնասիւղութեամբը, և անուշա ձեռքէս համաձայն կրտեմ թէ՛ ցուալի է տեսնել որ երեւոյթիս մը պաշտօնական մարմնոյ մը դէմ, պաշտօնական հանդիսարանի մը մէջ նախատական բառ մ'արտասանելու չափ կը նուստանայ, բայց քան զայն ցուալի է տեսնել որ երեսփոխանական ժողով մը մէկ բառի մը համար քանի մը նիստ զոհելու և մինչև անգամ ժողովորդեան ամբն իւր երկպառակութեան վէրքը նշաւակելու կը խնայուի: Տես՛ք, այն վեհապոյն ժողովն՝ ուսկից ժողովուրդը կարկնկալէ իւր փրկութիւնն, եթէ՛ այս տեսակ ամուլ ու մանաւանդ թէ՛ վնասակար վէճերով և վրիժառական խնդիրներով իւր անդին ժամանակը վատնէ, միթէ՛ իւր անուանն ու պաշտօնին արժանանոր կը հանդիսանայ: Ի՞նչ կը կարծէք, միթէ՛ մեք երեսփոխանքս՝ որ հոս զրիւսած եմք ազգէն՝ որպէս զի նորա ցաւերուն դարման տանիմք, մեր այս օրինակ ընթացքով կը դարմանն մէք, թէ նոր ՚ի նոր ցաւեր կաւելցնենք: Այս է մեր նուիրական կոչումն ամեն մէկ վայրկեանը՝ զոր հոս կը վատնեմք ոչ յօգուտ

ազգին, պատասխանատուութիւն մը կը չբաւիրէ մեր վրայ: Եթէ այսօր ազգը լուս կը կենայ, ապագան մեզմէ համար պիտի պահանջէ մեր ապարդիւն ժամանակաուութեան վրայ, և պիտի դատապարտէ զմեզ եթէ գործ և արդիւնք չը ցուցնենք, և սոսկ կիրքերնիս յագեցնելու աստարեղ մը դարձունենք այս սրբափայլը:

Ինչ է այն խնդիրն որ զմեզ այսչափ կը յուզէ և կ'զբազեցնէ. ոչ այլ ինչ, այլ բառ մը՝ զոր արտասանող երեսփոխանը կը խոտովանի անկեղծութեամբ թէ բերնէն սպրդեր է. ինչո՞ւ ներողամտութեամբ չը վարուիմք, ինչո՞ւ չըսենք զայն որ խղճեանքն կը վկայէ թէ իբրև մարդ՝ ամենուս բերնէն կրնայ սպրդիլ բառ մը, զոր յուզմունքն ու անզուշուրթիւնը կրնան սահեցնել մեր շրթունքներէն, և զոր իսկոյն կը դատապարտէ զխաղցութիւնն իւր ազգած ստրջանօքը: Ահա նոյն ինքն այն երեսփոխանն ոչ եթէ կը սնդէ կը յամառի և կը պաշտպանէ իւր բերանէն երած թշնամական բառն, այլ մենէ առաջ ինքն իսկ կը դատապարտէ զայն: Միթէ այս բառական չէ՞ հատուցում մը համարելու. ինչո՞ւ հանցիտական դատապարտութիւն պատիժ տնօրինել անոր, որոյ անկեղծ խոտովանութիւնը ապացոյց մ'է իւր կողմէն անցելոյն ստրջանացը և սուսգային համար երաշխաւորութիւն: Սակայն սոյն երեսփոխանը, տեւա՞րք, մեր ամենէն ընտիր ընկերակիցներէն մին է իւր ազգասիրութեամբն՝ ուղղամտութեամբ և երեսփոխանական յատկութեամբ. այս ամենայն ՚ի նպատտ նորա շնն խօսիր. միթէ այս առեանէն դուրս ալ նորա առ ազգն մատուցած ազգի ազգի ծառայութիւնք բառական չե՞ն մեր քուէն ՚ի ներողութիւն դարձնելու: Եթէ քուէարկութիւն մ'ունինք, քուէարկեմք՝ ո՞չ թէ իրարու դէմ, այլ ազգին թշնամեանքով: քուէարկեմք վերապահ լոյսը ծառայելու խնդրոց համար. իսկ իրարու ձեռք երկնցենք հաշտութեան, վասն զի սիրոյ աստարեղն մէջ կը դառնուիմք: Եւ

թէ սէրը շարմատանայ մեր մէջ, պիտի կրնա՞մք միանալ այն բաներուն մէջ՝ ուր միութիւն անհրաժեշտ է: Գաստիարակութեան կենսական խնդիրն ունիմք մեր օրակարգին մէջ . . .

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅԹ.—(Մէջնէն) Եւ մեռել թաղելու կերթանք:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ.—(Նարանկէլ) Տեւա՞րք իմ, այո՛, դատախարակութեան խնդիրը հրաւրեց զմեզ այսօր հոս. ես իմ հիւանդութիւնս առ ոչինչ համարելով և դուք ամենքդ անձնական գործերը մէկ դի ձգելով, վազեցինք և կիսը Գաստիարակութեան կենսական խնդիրը լուծելու համար, և ոչ եթէ՛ մեր մէկ ընկերակիցն անզուշուրթիւնը դատելոյ և դատապարտելոյ խնդրով ժամապաճառ լինելու համար:

Ուրեմն կառաջարկեմ որ այս խնդիրը միանգամ ընդ միշտ գոցուի ներողութեամբ ՚ի պատիւ ժողովոյս:

Քաղաքական ժողովէն ևս կը խնդրեմ որ վեհանձնաբար մտնայ այն բառն, որ Օդսէն էֆէնտիի բերնէն սպրդեր է, և ստաւելապէս սիրէ զազգիլ և զմեզ զբազեցնել այն խնդիրներով որոց նպատակն է ազգին բարեաւութիւնն ու յառաջագիտութիւնը:

Ուխտեմք ամենա ալ վրէժխնդիր չելինիլ և միասիրտ ու միահաւան անցնիմք մեր ամենակարեւոր գործին, որ է Գաստիարակութեան խնդիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.—Շատ լուս, Սրբազան, ներողութեան առաջարկութիւն կրնէք, և գոցել կուղչք խնդիրը, բայց որոշում մը կայ ո՞չ գործադրուած, անոր հակառակ ո՞ր եւէ տնօրէնութիւն առանց նոր որոշման շիրտար ւրլալ, և դուք գիտեք որ այս ժողովիս մէջ որոշումները քուէով կըլլան. ուստի քուէարկութեան մը կը կարօտիմ խնդիրն ըստ կանոնի վերջացնելու համար. կընդունի՞ք քուէարկութիւն և կը կարծէ՞ք որ 24 ձայնից միարանութիւն կ'ապացուի վաւերական որոշումն ունենալու համար:

ՉԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, քուէի գրէք, փորձէ՛ք :

Առենապետ փաշան քուէի դրաւ Նախագահ Սրբազանին ներողութեան առաջարկութիւնն Օգոսէն էֆէնտիի մասին, և ժողովը 28 ձայնիւ ընդունեց, որով Օգոսէն էֆէնտիի վերաբերեալ պատժական անօրէնութեան խնդիրը փակուեցաւ ներողութեամբ :

7.

Հաշուէկէի կէրբ. Սեբասէ

Վարչութեան Քաղ. ժողովն մատուցած յետադայ տեղեկագիրը կարգաւեցաւ, որոյ հետ կցուած էր կէրբ. սննտակին ներկայ 76—77 տարւոյն հաշուէկէի տրուք :

Վեմափայլ Առենապետ փաշա Ազգային ժողովը .

Ազգային Վարչութեան Քաղ. ժողովն անցեալ 1876 տարւոյ յունիս ամսոյն մէջ Ազգային ժողովոյը ընտրութեամբ իւր պատճառաւարութեան ձեռնարկելէ ետև, անմիջապէս Վարչութեան Տնտեսական խորհուրդն ու Ելեմտից Հողաբարձութիւնը վերակազմելով, նոցա գործակցութեամբ իւր առաջին փոյթին ըրաւ կէրբ. տնտեսական անտուկի փնտհին բարւոքումը ձեռք բերել, և ներկայ 76—77 տարւոյն Հաշուէկէիը պատրաստել Ազգային ժողովոյը որոշման ներկայեւր համար :

Սակայն իւր փափաքանոց հակառակ չկրցաւ Հաշուէկէին ներկայացու մը փութացնել, փասն զի Հաշուէկէին ազգային ամենակարևոր պէտքերն ըստ բաւականին հողաւրս գրութեամբ պատրաստելու համար՝ հարկ էր ազգային տրուք վերջնական գումարին քանակութիւնը գիտնալ, և տեսնելով որ ազգային ժողովէր քուէարկեալ տրուք կանուսնադիր թէ՛ բախման և թէ՛ հաւաքման մասին ինչ ինչ բարեփոխութեանց պէտք ունի, փութաց նախ իւր հարկ դատած բարեփոխութիւններն առաջարկել Ազգա-

յին ժողովոյը, և այս մասին ժողովոյը հաւանութիւնն տաանայէ ետև, պէտք է զած հրահանգները պատրաստելով որչափ որ անոնց գործադրութիւնը փութացնել աշխատեցաւ, սակայն ժամանակիս անյաջող հանգամանաց պատճառաւ չկրցաւ յանձնած ուղովց օժանդակութեամբ ձեռք բերուելիք բախման ցուցակաց պատրաստութիւնները լրացնել ալ, այլ նոյն ցուցակներուն մէկ մասը միայն կրգաւ ձեռք բերել, իսկ մնացածներն ալ հետըզհետէ դաւու փրայ են :

Աստի Քաղ. ժողովն ստիպուեցաւ ներկայ տարուան համար աւժամանակեայ Հաշուէկէի մը շինել, յաջորդ սահմանադրական տարւոյն համար աւելի հիմնաւոր հաշուէկէի մը պատրաստելու դիտաւորութեամբ, և ահա նոյն աւժամանակեայ Հաշուէկէին՝ որպէս արդէն խոստացած էր, կուզայ մատուցանել Ազգային ժողովոյը :

Քաղ. ժողովն իւր Հաշուէկէիը նախորդ Վարչութեան կողմէ ծրագրուած հաշուէկէին փրայ պատրաստած է : Նախորդ Վարչութիւնն արդէն Ազգային ժողովոյը 76 տարւոյ նոյեմբեր 7 ի նստին որոշմանն ընդունած յանձնարարութեան համեմատ՝ ներկայ տարւոյն համար հաշուէկէի մը ծրագրած ըլլաւով, ներկայ Վարչութիւնն Տնտեսական խորհրդոյ և Ելեմտից հողաբարձութեան հետ խորհրակցութեամբ նոյն ծրագրին փրայ կարևոր դատուած բարեփոխութիւնները սահմանելէ ետև ներկայ Հաշուէկէիը պատրաստեց :

Ինչպէս որ սխիտ տեսնուի, ներկայ Վարչութեանս Հաշուէկէին իւր նախորդին ծրագրէն ունեցած տարբերութիւնը հետեւեալ կէտերէն կը բաղկանայ .

Նախ՝ Հաստից կողմը երեք փոփոխութիւն միայն կը նշմարուի .

1. Ազգային տուրքն՝ որ 150,000 ջրէ ենթադրուած է նախորդ Վարչութեան ծրագրին մէջ 146,080 ջրէի գումար մ'ալ Պիւտձէի բաց ցոյց տալով, մեր հաշուէկէին մէջ անտուկին բոլոր բացը գո-

ցելու սահմանուած է, և այս պատճառաւ 280,804 զրշի բարձրացած :

2. Վազֆի հասոյթն որ 100,000 զրշ ենթարկուած է նախորդ վարչութեան ծրագրին մէջ, 80,000 զրշի զեղչուած է նոր Հաշուեկրպին մէջ, վասն զի ժամանակիս դրամական տազնապն՝ որ կալածական առ ու ծախք դժուարացուցած է, կապացուցանէ թէ այս տարի չարտի կրնայ աւելի հասոյթ գոյանալ և անցեալ տարուան վրայ 20,000 զրշ պակաս պէտք է ենթադրել զայն :

3. Ազգային ժողովոյ ատենադրութեանց վաճառուածն ենթադրուած 1300 զրշի հասոյթը բոլորովին քննուած է նորագ կարգադրութեան մ'առթիւ, որ ՚ի ստորև պիտի տեսնուի :

Իսկ մնացեալ հասոյթներն առանց փոփոխութեան նշանակուած են նոր Հաշուեկրպին մէջ, նախորդ ծրագրին համեմատ : Երկրորդ՝ ելից կողմէ կերեւի որ ,

1. Սրբազան Պատրիարք հօր ամսական թոյակն ըստ առաջնոյն տարեկան 60,000 զրշ նշանակուած է, բայց իւր վրայէն առնուելով կառքին վերաբերող ծախքերն որք տարեկան 20,000 զրշի գումար մը կը կազմեն, Կեդր. սնտուեկին վերագրուած և ընդհանուր ծախսոց կարգն անցած են . վասն զի անցեալ 78 ղեկտեմբեր 1 ին Պատրիարքարանի մատակարարութիւնը դադրելով՝ Սրբազան Պատրիարք հօր 3000 զրշ ամսական սահմանուեր է, բայց Նորին Սրբազնութեան կառքին վերաբերեալ բոլոր ծախքերն՝ այն է կաւառականաց թոյակ, ձիոց ուտեստի և կառքի կազմածոց ծախքն ամբողջ՝ որ ամիսն 2000ի մօտ գումարի մը կը հասնի, նոյն 3000 զրշ ամսականին վերագրուած է, որով Սրբազան Պատրիարքին՝ մասնաւորապէս իւր անձին և ընդհանրապէս իւր պաշտօնին ընտրեմէն բղկող ծախքերը հողալու համար հազիւ 3000 զրշի գումար մը կը մնար :

2. Յանուն պաշտօնէութեան Պատրիարքարանի նախորդ վարչութեան կողմէ յատկացեալ 273760 զրշի գումարն 243,

484 զրշի զեղչուած է մեր Հաշուեկրպին մէջ . վասն զի տեսնելով որ Կեդր. սնտուեկի վիճակն շնորք յանուն պաշտօնէից այնքան գումար վճարել՝ որքան նախորդ վարչութիւնը սահմանած և ըստ այնմ գործադրութեան սխառած էր, Վարչութիւն պարտաւորեցաւ պաշտօնէից ամսականաց վրայ ընդհանուր զեղչ մ'ընել անցեալ օդոտոտ ամսէն սկսեալ, և այս կերպով ներկայ տարւոյ համար 30276 զրշի խնայողութիւն մը ձեռք բերած է : Եւ թէ պէտ Վարչութիւնն այս վերջին օրերը Պատրիարքարանի բարեկարգութեան մասնաժողովոյ ծրագրին համեմատ պաշտօնէից մասին նոր կարգադրութիւն և ըստ այնմ ամսականաց բաշխում ընելու ստիպուած էր, սակայն այս բաշխումն երբէք իւր հաշուեկրպին մէջ նշանակուած 243484 զրուշի զեղչեալ գումարն անցած չէ, այլ նոյն զեղչման սահմանին մէջ գործադրուած է :

3. Եւստի գուլէի Ս. Յակոբայ հիւրանոցին համար նախորդ վարչութեան կողմէ սահմանուած 1000 զրշ ամսականը կիսովին զեղչուելով, տարեկան 6000 զրշ նշանակուած է նոր հաշուեկրպին մէջ . վասն զի այս հիւրանոցը հաստատուելէն մինչև ցարդ հազիւ մէկ երկու հիւր դասցած են հօն, և խիստ ծանր է Կեդր. սնտուեկին 1000 զրշ հատուցանել այս նկատաւին համար :

4. Յանուն կարօտելոց նշանակուած 3000 զրշ ի գումարը նախորդ տարիներու համեմատական հաշուով չարագանց երևանալու պատճառաւ 3000 զրուշի զեղչել պատշաճ դատուած է :

5. Թղթատարի անուամբ նշանակուած 12000 զրշի գումարը 10000 զրշի զեղչուած է նոր կարգադրութիւն մ'եղած ըլլալուն համար :

6. Ազգ. ժողովոյ ատենադրութեանց տպագրութեան գործն ազգային լրագրակետի մը յանձնելու կարգադրութիւնն էր կած ըլլալով, 10000 զրշի խնայողութիւն մը ձեռք բերուած է :

7. Տումարաց փոխադրութեան ծախք

ըը 2000 զրէն 1500 զրէի զեղչուած է՝ այս մասին նոր կարգադրութիւն մ'ըլլալու պայմանաւ :

8. Պաշտօնական յարաբերութեանց ծախսաց համար նախորդ վարչութեան ծրագրին մէջ նշանակուած 25500 զրէի գումարն անբաւական համարուելով, այն գլխոյն՝

Ա. Յօդուածին մէջ նշանակեալ Ա. Պատրիարք Հօր յարաբերութեան ծախսաց գումարը 15000 զրէն 28000 զրէի բարձրացնել պտուցած գտաւուած է :

Բ. Բարապանաց երթեկեկի համար նշանակուած 6000 զրէի գումարը 4000 զրէի զեղչուած է :

Գ. Բ. Գրան սպասուորաց յատկացեալ տօնական պարզեկի գումարը 4500 զրէն 5000 զրէի զեղչուած է :

Դ. Բ. Գրան գործակատարի սենեկապանին յատկացեալ 1800 զրէն անփոփոխ պահուած է :

Եւ այս կերպով յարաբերութեան գլխոյն յատկացեալ գումարը 25500 զրէն 56800 զրէի բարձրացած է Ազգային ժողովոյդ այն որոշման համաձայն, որով իւր անցեալ տարուան փետրվար 27ի նախին մէջ 500 ոսկւոյ վարկ մը քուէարկած էր Աեղբւ. սնտուկին վրայ այն յարաբերութեան ծախսոց համար :

9. Պատրիարքարանի կարասեաց և նուազութեան համար նախորդ տարիներէն աւելի ծախք չընելու որոշումը՝ նախորդ հաշուեկշիւին մէջ նշանակուած 15 հազար զրուշն 7500 զրուշի զեղչուած է :

10. Նոյնպէս բարապանաց հանդերձագին համար նշանակուած 6500 զրուշի գումարը՝ նախորդ տարիներու համեմատական հաշուով չափազանց թուելուն՝ 5000 զրուշի զեղչուած է :

11. Յանուն գանազան մանր ծախսոց նշանակուած 9000 զրուշի գումարն ալ լատ որում ստուգուած է որ մեծագոյն մասամբ նորոգութեան ծախսոց տեսակին կը վերաբերին, 2500 զրուշի զեղչուած է :

12. Իսկ կեդրոնական տրոց տասաւորդին գումարը փոխանակ 10000 զրուշի՝

28000 զրուշ ենթադրուած է՝ 280000 զրուշ հաւաքելի տրոց գումարին համեմատութեամբ :

Եւ այս եղանակու ծախսոց ընդհանուր գումար նշանակուած է 575704 զրուշ 294900 զրուշի մտից դէմ, որով ներկայ տարուոյ բացն ենթադրուած է 280804 զրուշ, որ պէտք է գոցուի ազգային տրոց արդիւնքով :

Արդ՝ ինչպէս որ այս մանրամասն բացարձակ իւններէն յայտնի է, ներկայ առժամանակեայ հաշուեկշիւին մէջ ոչ միայն վարչութեան ստիպողական և փախուկ պիտոյքներն ըստ կարելւոյն հօգացուած են խնայողութեան սահմանին մէջ, այլ և Աեղբւ. սնտուկի վիճակին յարմար ուղղութիւն մը տրուած է ծախսոց և թէպէտ նախորդ վարչութեան ծրագրին մէջ ենթադրեալ բաց գումարը՝ որ 146080 զրուշի կը հասնի, հշամապատասխաններ ներկայ վարչութեանս կողմէն ենթադրուած բաց գումարին՝ որ է 230804 զրուշ, սակայն պատճառն այն է որ վարչութիւն տրոց հասոյթը մտից կարգէն ի բաց հանելով՝ ինչպէս ի վերև յիշատակուած է, բոլորովին սխառմէի բացը ղիտուորելու յատկացուցած է դայն, և կը յուսայ որ տրոց հասոյթն արդիւնաւորելու համար Տնտես. խորհրդոյ ձեռք առած նոր միջոցներուն օժանդակութեամբն ու յարատուութեամբը պիտի յաջողի նոյն հասոյթի տրելուն ըստ կարելւոյն առատացնել և հարուեկշիւին այդ բայը ղիտուորել, այնպէս որ յառաջիկային համար պարտք մը չը դայանայ :

Վարչութիւնս Տնտես. խորհրդոյ և Երևանոց հողաբարձութեան գործակցութեամբ պատրաստած իւր այս առժամանակեայ հաշուեկշիւն Ազգային ժողովոյդ ներկայացնելով, պիտի փութայ նաև յառաջիկայ 77-78 տարուոյ հաշուեկշիւն պատրաստութեանը ձեռնարկել և Ազգային ժողովոյդ վիճարանութեանն ու քուէյին ժողովոյդ յանձնել, և պիտի ջանայ արկութեանը յանձնել, և պիտի ջանայ որ այն հաշուեկշիւն Ազգային նիւթական և բարոյական ամեն պիտոյք իր մէջ պա-

յունակերով՝ աւելի հիմնաւոր և կատար-
 եալ լինի . սակայն պատկառելի ժողովոյդ
 խրատութեան և օժանդակութեանը կը կա-
 րօտի իւր այս դիտաւորութեանց մէջ յա-
 ճողելու համար և հաւատարի է որ պիտի
 տասնայ զայն :

Յ մարտ 1877

Մնամք յարգանք

Ի դիմաց Քաղ. ժողովոյ

Ազգ. վարչութեան

Ատենադպիր փան Ատենապետի
 Յ-Էմանէս Պեյաճեան Յուլիէ Նոր-սարսնէեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիտէք որ Պիւս-
 ճէն երկուք կըլլայ . մէկը կանխաւ կա-
 աջարկուի , որ բնականաբար ենթադ-
 րութեան վրայ հիմնուած կըլլայ , իսկ
 միւսը տարին բոլորելէն ետե իրրև ամ-
 րողջացուցիչ Հաշուեկիւղ կը ներկայացուի ,
 և հաշուեկերը կը գոցուին : Մեր Քաղ. ժո-
 ղովը 76-77 տարւոյն որ ամիսէ մը կը
 լրանայ , ըսել է ընցած տարւոյ մը պիւս-
 ճէն կը բերէ , և այնպիսի պիւստճէ մը ,
 որ պէտք էր ՚ի սկզբան տարւոյն երբուէր ,
 որպէս զի հիմա՛ ալ ամրողջացուցիչը դար-
 բայց ատր յանցանքը մերը չ՛ . մեք որ-
 չափ ալ ուղեցիկը թախանձեցիկը որ
 Պիւստճէն կանուխ դայ , չեկաւ և այսօր
 հաղիւ եկաւ . սակայն ըստ որում Քաղ-
 ժողովը խոտում կընէ իւր տեղեկագրին
 մէջ յամրող տարւոյն պիւստճէն ժամա-
 նակին բերել , ուստի ներկայ պիւստճէն
 կը յղենք ըստ օրինի համարակալութեան
 դիւանին , որպէս զի նախաքննութեան
 առնելով պակաս կէտերը լրացուցիչ տե-
 դեկագիր մը բերէ մեզ ՚ի սկիզբն յամրող
 տարւոյ , զի այս վիճակին մէջ ամենակա-
 տարեալ կերպով պակասաւոր է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ասիկայ իրր
 հաշուեցոց նշանակեցէք և ոչ իւր պիւս-
 ճէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Համարակալու-
 թեան դիւանին յուրիւր չենք ընդունիր .
 փան գի եթէ այս նիստը վերջին համա-
 բերով ժողովն այսօր իւր ատենական շը-
 ջանը փակէ , Համարակալութեան դիւա-

նին պաշտօնն ալ կը լրանայ . ուստի քննիչ
 յանձնախումբը կառաջարկեմ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛ կը ձայ-
 նակցիք , առանց դիտնալու թէ ՚ի՛նչ բա-
 նի . եթէ այսօր ատենական շըջանին
 փակուի , դարձեալ այն դիւաններն՝ որ
 ունինք , պէտք է շարունակեն իրենց պաշ-
 տօնը՝ մինչև նոր դիւանաց կազմութիւնը ,
 որ երկու ամիսէն հազիւ կընայ տեղի ու-
 նենալ : Եթէ մեք նախաքննութեան յղ-
 լիք խնդիրնիս՝ փոխանակ մեր ունեցած
 դիւանին յանձնելու՝ Փափաղեան էֆէն-
 ալի ըսածին պէս՝ նոր յանձնախումբ մը
 կազմենք և անոր քննութեանն յանձնա-
 բարենք , կը հետեի որ փաստճ չենք մեր
 դիւաններուն վրայ . այս ալ ճիբ անվր-
 տահութիւն մըն է , որ չեմ ընդունիր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը յիշեցնեմ ,
 Ատենապետ փաշա , ներկայ բացման Բ.
 նստին մէջ երբ Ձեր վսեմութիւնն առա-
 ջարկեց Պիւստճէի խնդիրն յանձնախումբի
 մը յանձնել , ես էի որ փոխանակ յանձ-
 նախմբի՛ նոյն իսկ Համարակալութեան դի-
 ւանին գործն է այս ըսելով՝ առաջարկե-
 ցի և ժողովս ալ ընդունեց , որ Համարա-
 կալութեան դիւանին յանձնուի նախորդ
 վարչութեան Պիւստճէն քննել և նոր գա-
 լիք վարչութեան կարծիքն առնելէ ետե
 բերել ժողովս ՚ի վաւերացում : Բայց Հա-
 մարակալութեան դիւանը մինչև հիմա
 չգործադրեց իրեն յանձնուած այս պաշ-
 տօնը . ուստի յատուկ քննիչ յանձնա-
 խումբը կառաջարկեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ տարւոյ
 վերջերը նախորդ վարչութիւնը Պիւստճէ
 մը բերած էր զոր մեք նախաքննիչ զի-
 ւանին տեղեկագիրն առնելով մերժեցինք
 առաջիկային համար ՚ի սկիզբն տարւոյ նոր
 պիւստճէ մը պատրաստելու յանձնարա-
 բութեամբ . սակայն նախատեսելով որ
 նոր կազմուելիք վարչութիւնը պիտի չը
 կարողանայ ժամանակին ներկայել մեզ
 այս տարուան պիւստճէն , առաջարկեցի որ
 մասնաւոր խումբ մը որոշուի յերեսպիւր

խանաց և անոր յանձնուի կանխաւ քննել
Ազգին Երևանոցի վիճակը և դէժէ մը պատ-
րաստակ և անոր վրայ նոր վարչութեան
կարծիքն և հաւանութիւնն ալ առնելով
Ազգային Ժողովուս բերել ՚ի քննութիւն
և ՚ի վաւերացումն :

ՓՄՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նոր գալիք վար-
չութեան կարծիքն առնելով հանդերձ պատ-
րաստուած պիտի ըլլար պիւտձնէ . այս-
պէս էր Ժողովին որոշումը . կարդացէք
նոյն Բ. նստի ատենագրութիւնը :

(Այս միջոցին Ատենադպիր Էֆէնտին
կարդաց Բ. նստի ատենագրութեան «Բնա-
րութիւն Երևանոցի յանձնարարի» անունով
հատուածն սկիզբէն մինչև ցվերջն) :

ՓՄՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով)
Ահաւասիկ կը տեսնէք՝ Ատենադար տա-
լաւ, որ միևնոյն Համարակալութեան դի-
ւանն է որու յանձնուեր է անցեալ տա-
րի այս գործն և չէ կատարել մինչե-
րը ցարդ, և դուք հիմա նորէն անոր յանձ-
նել կուզէք . ես վստահութիւն չունիմ
անոր վրայ, նոր յանձնախումբ մը որո-
շէք և անոր յանձնենք այս գործը :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓՄՇԱ. — Յանձնախումբ
առաջարկողն ես էի, գոր դուք շնորու-
նեցիք այն ատեն . բայց պարագաներն
ալ ՚ի յուշ ամենք . անկէ առաջ նախորդ
վարչութեանն պիւտձնէ մը եկած էր մեզ,
գոր մեք ոչնչացուցինք «պէտք չէ» ըսե-
լով և առաջիկային համար պիւտձնէ մը
պատրաստել յանձնարարեցինք նորընտիր
համարակալութեան դիւանին . և որով-
հետև Սամիկոնեան շէֆէնտին առաջար-
կեց նոյն միջոցին թէ հրաժարեալ վար-
չութեան համարատուութիւնը տեսնուելէ
ետև պէտք եղածը տնօրնութիւնը պիւտձնէի
մասին, այն ալ ընդունեցինք . բայց նախ
չգիտեմ թէ համարակալութեան դիւանը
որուն յանձնուեցաւ պիւտձնէի խնդրել,
նոյնն է որ կը շարունակէ ցարդ :

ՉԱՅՆԵՐ. — Սյո՛ր, նոյն օրն ընտրուե-
ցաւ նաև համարակալութեան դիւանն :

ԱՏՆԵԱՊԵՏ ՓՄՇԱ. — Եւ միթէ Բար-
ժողովն անոր տուա՞ւ պիւտձնէն որ քննէ .

և եթէ տուաւ, ինչո՞ւ չքննեց . համա-
րակալութեան դիւանին անդամը ներկայ
ըլլալու են որ պատասխանեն և պատ-
հանենը յայտնեն . քանի որ այսօր բա-
ցակայ են՝ չենք կրնար առանց զիրենք
լսելու դատաստան ընել կամ անվստա-
հութիւն ցուցնել անոնց վրայ :

Տ. ԱՄԲԲՈՒՅՈՍ ՎՐԴ. — Ազգային Ժո-
ղով իւր դիւաններուն վրայէն վստահու-
թիւնը չվերցնելով՝ ատեն ատեն յանձ-
նարարներ կարգած է ՚ի պահանջել հար-
կին զանազան խնդրոց կարգադրութեա-
նը համար . ասոնց մէջ նշանաւորն է Հա-
րատահարութեան խնդիրն, որ բոլոր և
բնախօսանաց խոջին վրայ ծանր բեռ
մ'եղած ըլլալուն նախաքննութեան դի-
ւանին չյանձնելով՝ յատուկ յանձնարար-
քի մը յանձնուեցաւ, որ մէկ շարթուան
մէջ իւր պաշտօնը կատարեց և ընդար-
ձակ տեղեկագիր մը բերաւ : Այս կար-
գէն է նաև պիւտձնէի խնդիրն ալ . մին-
չև ցարդ օրինաւոր պիւտձնէ մը չէ կըր-
ցած պատրաստուիլ և վաւերացուիլ Ժո-
ղովս . անցեալ տարի երեսփոխաններէն
մին՝ չեմ յիշեր անունը՝ շատ իրաւամբ
առաջարկած էր որ Ազգային Ժողովս ինք
պիւտձնէ մը չինէ և յանձնէ վարչութեանն
եթէ Հայաստանի հարստահարութեանց
խնդիրը խոջերնուս ծանր դարուն համար
յանձնախումբ մը պէտքը տեսնուեցաւ,
յանձնախումբ մ'ալ պիւտձնէին համար
պէտք է, վասն զի ես իբրև եկեղեցական
թէ է մասնաւորապէս և ՚ի մտոյ տեղե-
կութիւն չունիմ, սակայն ՚ի հեռուստ կը
դիտեմ որ մեր ազգային սնտուկն ալ հա-
րատահարեալ եմ կազալակէ . ստիկա
խոջին դպչելուն համար կըսեմ թէ յանձ-
նախումբ մը պէտք է որ քննէ Պատարար-
քարանի սնտուկին հարստահարեալ մի-
ճակը և օրինաւոր պիւտձնէ մը չինելով
բերէ Ժողովս ՚ի վաւերացումն : Անցեալ
տարի նախորդ վարչութիւնը և համարա-
կալութեան դիւանը պաշտօն ատին այս
Ժողովէն պիւտձնէ մը չինելու, բայց մին-
չև ցարդ իրենց պաշտօնը չգործադրեցին .
ներկայ վարչութեան ատենապետ Սպոր

էֆէնտին խոստացաւ պիւտճէ մը բերել . տարի մ'ալ սպասեցինք , այս խոստումն ներումն վերջը չեկա . ահաւասիկ տարեկան շրջաննիս աւարտելու վրայ է և նոր տարեգրութի մ'ալ կուգայ . մինչև ե՞րբ այս խոստումներուն համբերենք . ալ ժամանակն է որ այն երեսօրհասնին ստաւարիւթեան համեմատ՝ որոյ անունը չեմ յիշեր բնի , ժողովն ինք պիւտճէ մը չինէ և տայ վարչութեան գործադրել : Յաւ է մեզ՝ որ ներկայացեալ այս պիւտճէին մէջ դատախարակութեան պետոյից համար բաւ մ'անդամ չկայ , հակառակ այն խել մը խնայողութեանն՝ զորս կը նշանակէ վարչութիւնն իւր տեղեկադրին մէջ . ես կըսուեմ թէ այն երեք հարիւր ոսկույ վարկը՝ զոր քուէարկեցինք մեք անցեալ տարի Արարիկան Պատրիարքի յարարելութեան ծախուց համար , պէտք չունի այս տարի , և յատկացնենք զայն դատախարակութեան : Արիչ խնայողութիւններն ևս ձեռք առնելով՝ Պատրիարքարանի ծախքը կարճենք որքան որ հնար է , և դատախարակութեան մեծ պիտոյքը տնտեսենք , որու համար ի՛նչ դուռնար ալ սահմանենք՝ քիչ է : Աստիք ընելու համար՝ ճիշդ Ատենակա փաշային տարուցս սկիզբը առաջարկած և ևսնոյից յանձնախումբը կտաւարկեմ , առանց վարչութեան կամ հաստատարութեան դիւանին ընելիքներուն սպասելու , որոց խոստումներէն և ոչ մին օրինաւորապէս կատարուած է մինչև ցարդ , և առանց անոնց վրայ անխտաս հաւթեան ցոյց մը ըրած համարուելու , ընարենք յանձնախումբ մը այնպիսի անձինքներէ՝ որոնք վարչական պաշտօններ վարած և փորձառութիւննին ճանչցուած է , և առանց յանձնենք՝ որ մէկտեղելով օրինաւոր պիւտճէ մը չինեն և բերեն ժողովին , և յետ փաւտացման տանք զայն վարչութեան յառաջիկայ տարույ շրջանին մէջ գործադրելու համար : Ահա այս է մեզ համար ամենէն կարուկ ընթացքը , եթէ չեմք ուզեր այլ ևս վարչութեան խոստումներուն սպասելով սպասելով՝ յուսակուոր ըլլալ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.— Շատ լաւ կը խօսիք , Հայր սուրբ , բայց կարծեմ թէ նախ վարչութեան ներկայութեան Չեր ըսած զանցառութիւններուն վրայօք իրմէ բացատրութիւն առնու և յետոյ պէտք է դածը անօրինելու ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ըստ որում ատենական գործողութեան կը վերաբերի պիւտճէի խնդրոյն նախարանութիւնը , պարզապէս կանոնադրութեան հետեւելով կը պարտաւորինք յիշ զայն Համարակալութեան դիւանին . մանաւանդ որ այս պիւտճէն դաւիք տարուց ալ չվերաբերիր , այլ անցեալ տարուցն ըլլալով առաւել հաշուեցոյցի քան թէ պիւտճէի կերպարանք ունի : Այս պատճառաւ վիճաբանութեան գննելու ալ հարկ չկար , բայց ես թողաւորութիւն ըրի և տեսայ որ զանազան առաջարկութիւններ կըլլան , այնպիսի ձեւերու տակ՝ որ անփոտանութիւն կենթադրեն վարչութեան և նոյն իսկ Համարակալութեան դիւանին դէմ , որոյ անդամք ներկայ չեն այսօր , և թե՛քեա այնպիսի բացատրութիւններ ունին տակը , որ մեզ ամենքս կը դժկացնեն : Առտի ներելի չէ ՚ի բացակայութեան որ և է պաշտօնէի ըրածը դատաքննել . թրչև նամուտայ ստուերէն անգամ հետեանալ և զլուշանալ պարտ է ամենուս . թէպէտեա խօսուածները մէկիկ մէկիկ գտանք նուրալի թշնամական բառ մը չենք գրուներ բնաւ մէկուն մէջ , սակայն ողբոյն մէջ թշնամանք կը նկատեմ : Առտի կը զոցեմ այս միջնադէպը և ամեն պատասխանատուութիւն վրաս առնելով ըստ կանոնի կը յղեմ այս պիւտճէն մեր Համարակալութեան դիւանին ՚ի նախաքննութիւնն իսկ առաջիկայ տարուց համար եթէ առաջարկութիւն մ'ունեցող կայ , պէտք է որ գրով մատուցանէ :

7.

5 Տեղեկագիր վարչութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Նախընթաց յիշուածն քանի մը հարցումներ կային վարչութեան յղուած , որոց մէկը կրօնական

ժողովոյ յղուած էր և միւսները Քաղաքականին : Ասոնց պատասխաններն եկած են թէ և, սակայն ներկայացնողներն հոս չեն՝ որ ՚ի հարկին պատասխանելու կամ բացատրութիւններ տարու կարող ըլլան . ուստի կառավարիւմ որ առանց ընթեռնելու ատենագրութեան մէջ միայն անցնին՝ յառաջիկային մէջ նկատողութեան առնուելու պայմանաւ . և մենք անցնինք Օրակարգին՝ որ է Գաստիարակութեան խնդրը : Սակայն ժամը 9 է արդէն . քիչ ժամանակ ունինք Օրակարգի խնդրոյն զբաղելու համար . եթէ այս նիստն ատենական չըջաննուս վերջինը պիտի ըլլայ , այժմէն որոշենք՝ որպէս զի գիտնանք ընկերքնիս և ըստ այնմ վարուինք :

ՉԱՅՆԵՐ. — Միթէ յառաջիկայ ուրբաթօր նիստ մ'ալ չենք կրնար ընել իբր վերջին նիստ տարեկան չըջաննուս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յառաջիկայ շաբթուն ծաղկազարդի տօնն ըլլալով՝ եկեղեցականք զբաղեալ կ'ըլլան . եթէ ժողովը կը հասի , այս նիստով տարեկան չըջաննիս 20 նիստ համարելով փակենք և մայիս 6ին նորէն բանանք ըստ կանոնագրութեան :

ՄԷԼԻԲԵՍՆ Մ. ԷՖ. — Կառավարիւմ որ յառաջիկայ ուրբաթ նիստ մ'ալ ընենք իբրև վերջին նիստ տարեկան չըջաննուս , գաստիարակութեան խնդրը ձեռք առնելու համար , և յառաջիկայ տարեկան բացումէն առաջ գաստիարակութեան խնդրոյն մէջ մտած ըլլանք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ յառաջիկայ շաբթուն կարենայինք նիստ մ'ալ ընել , շատ լաւ . բայց որովհետև չպիտի կրնանք , անցնինք անմիջապէս Գաստիարակութեան խնդրոյն՝ քանի որ դեռ ժամանակ ունինք ատենադի փակման համար , և եթէ կարելի է՝ որովեալ ժամէն քիչ մը ետք կը փակենք ատենանք , Գաստիարակութեան խնդրոյն մէջ քիչ շատ յառաջ երթալու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսինք թէ վարչութենէն եկած պատասխաններն առանց

կարդալու այսօրուան ատենագրութեան մէջ անցնին . սոր վրայ դիտողութիւն մ'ընող չեղաւ . ըսել է թէ այս որոշուած և վերջացած է :

Կանցնինք ուրեմն Օրակարգին , որ է Գաստիարակութեան խնդիրն , որով մինչև կանոնական ժամանակն զբաղելէ ետև տարեկան չըջաննուս փակումը կը կատարենք :

ԲԱԶՄԱԹԻԻ ՉԱՅՆԵՐ. — Այո՛ , այո՛ :

Ահաւասիկ վարչութենէն եկած 5 առ ղեկագիրներն .

Ա.

Վեժմարայլ Ատենագրութեան փաշա Ազգային ժողովոյ .

Ազգային ժողովոյ վերջին փետրվար 25 ի նստին մէջ երեսփոխան Փափաղեան Ստեփան է ֆէնտիսի՝ Բերայի Հայ հրկիդելց համար օգնութեան մասնաժողովի ձեռք մատակարարուած նպաստից դուստրին քանակութեան և բաշխման հաշուոց առթիւ հարցումներ ընելով , առաջարկած էր որ նոյն հաշիւները Ազգային ժողովոյ ներկայացուին : Հետևաբար ազգային ժողովը տոյն առաջարկութիւնն յրաժ էր առ Քաղ. ժողովն ՚ի տնօրէնութիւն :

Քաղաքական ժողովս տոյն առաջարկութիւնն ՚ի նկատի առնելով , Պատրիարքարանի դիւանական արձանագրութեանց զիմեց պէտք եղած ըլլաք քաղելու համար , և տեղեկացաւ որ 1870 տարւոյ մէջ պատահած Բերայի հրկիդութենէն քանի մի օր վերջը՝ Գանձուց նախարարին նախագահութեան ներքև կազմուած համազգային յանձնաժողովոյ անդամացելու համար Բ. Գուռը յատուկ ծանուցազրով մը երկու ազգային երեւելի անձանց անունը խնդրած է , և նոյն անունն՝ Սրբազան Պատրիարքն ալ ժամանակին Քաղ. ժողովոյ Ատենագրութեան հետ խորհրդակցութեամբ Նորատուփեան Յանկո և Մանուկեան Սենեքերիմ է ֆէնտիսները ջիցջ տուած է իբրև ազգին վստահութեան արժանաւոր անձինք : Սակայն նոյն յանձնաժողովոյ կազմութեան պայ-

մաններուն և հաւարուած նպաստից մաւտակարարութեան մասին Քաղ. ժողովոյ որ և է ծանօթութիւն չիրնալով գտնել զիւրանական արձանագրութեանց մէջ, ըստուգել որ այս զրամական գործողութեանց նոյն և համարաութիւնը նոյն համագային յանձնաժողովն իրեն վերապահած և իւր հսկողութեան ներքե կատարած ըլլալով, այս մասին որ և է պաշտօնական կամ անպաշտօն յարաբերութիւն կամ բանակցութիւն տեղի չէ ունեցած կաւալարութեան և Ազգ. վարչութեան մէջ տեղ, և Պատրիարքարանի մասնակցութիւնն այս պարագային մէջ ուրիշ բան չէ եղած, բայց եթէ երկու անձինք ներկայացնել յանդամակցութիւն յանձնաժողովոյն, ճիշդ այն կերպով՝ որով մասնակցած են նաև ուրիշ աղբայ Պատրիարքարաններն ու բոլոր զեպագանտուները :

Հետևապէս Քաղ. ժողովն 1870 թըւակահանէն ի վեր իրարու յանդրազգ վարչութեանց նման՝ կաւալարութեան անմիջական հսկողութեան ներքե կատարած այսպիսի գործողութեան մը մասին որ և է համարաութեան պարտաւորութիւն մը իրեն չվերադրելով, այս խնդրոյն ոչ միջամտած է և ոչ միջամտել հարկ կը համարի :

10 մարտ 1877 Մնտօք յարգանք
 Ի զիմաց Քաղ. ժողովոյ
 Ազգ. վարչութեան
 Վասն Ատենապետի
 Յովհաննէս Պօյաճեան
 Յովհաննէս Էսախան
 Բ.

Վսեմախոյը Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ.

Ազգային ժողովոյ վերջին փետրվար 23 ի նստին մէջ երեսօրօխան Փափաղեան Ստեփան էֆէնտին յայտնելով թէ կեդրոնական ուղղակի տրոց անունով վարչութեան կողմէ հրատարակուած նոր հրահանգին մէջ Ազգային ժողովոյ հաստատած տրոց կանոնագրին հարուակ երկու կէտեր նմարած է, առաջարկած էր

որ անոնց վրայօք Քաղ. ժողովէն բացատրութիւն խնդրուի :

Յիշեալ երկու կէտերն են՝
 Ա. Քարգարանն գործոյ մը համար Պատրիարքարան կամ Թաղ. խորհրդոյն զիմող ազգայինէ մը տակաւին անվճար թողուած ու զիղուած տուրքերը պիտի առնուին, կրտէ. — և կանոնագրին սակահան պայմանները զանց առնուած են, որք են քարէն լրացած և երէտ անգամ ասան՝ բայց տակաւին անվճար թողուած :

Բ. Երեսօրօխանական ընտրութեան մասնակցողաց տուրքը ըստ 65 ըդ. յօդուածոյ Ազգային Սահմանադրութեան նախադէպ պիտի առնուի, կրտէ, — որ չիցարոց կանոնագրին մէջ :

Ազգ. վարչութեան Քաղ. ժողովն Ազգ. ժողովէն յղեալ այն առաջարկութեան զիրը նկատողութեան աննելով, ի պատասխան կը յայտնէ Ա. կէտի մասին թէ Քաղ. ժողովն ըստ որում իւր կողմէ վերջին անգամ առաջարկեալ և Ազգ. ժողովէն որոշեալ տրոց կանոնագրին բարեփոխութեանց համաձայն՝ տրոց բաշխման և հաւարման զիւրութեան համար պէտք եղած միջոցներն ի գործ դնելու արտօնութիւն ստացած էր, ուստի և ըստ այնքան նոյն անօրէնութիւնն ըրած է, ինչպէս կերևի իւր հրահանգին մէջ, և Բ. կէտի մասին թէ՛ քանի որ Սահմանադրութեան 65 ըդ. յօդուածը կը պահանջէր զայն, եթէ Ազգ. ժողովոյ քննութեան յանձնադ կանոնագրի ծրագրին մէջ պակասած էր այն, Քաղ. ժողովն այս անգամ իւր հրահանգին մէջ յաւելցնելովն ուրիշ բան ըրած չէ, բայց միայն նոյն պակասը լրացուցած :

10 մարտ 1877 Մնտօք յարգանք
 Ի զիմաց Քաղ. ժողովոյ
 Ազգ. վարչութեան
 Վասն Ատենապետի
 Յովհաննէս Պօյաճեան
 Յ. Պ. Նարսիսեան
 Գ.

Ատենապետիւ Սրբազան Հայր Նախագահ Ազգ. երեսօրօխանական ժողովոյն Ազգային երեսօրօխան Մեծ. Գրիշ.

տոտուր էֆ. Ղազարոսեանի ստորագրութեամբ պատկառելի Ազգային ժողովոյ ուղղեալ հարցազիրն՝ նոյն ժողովոյ վերանկարողական կողմանէ զրկուցեալ Կրօնական ժողովոյն, որ պատասխանէ : Եւ ահա ատիկ :

Ար հարցուի .

Ա. թէ ճշմարիտ է միեւալ Սրբազան Կաթողիկոսի (Աղթամարայ) այսպիսի շնորհարաշխութիւնը (մէկ քանի կրօնականներու՝ խաչ կրելու կոնդակ չտրհած ըլլալը) :

Առ այս կը պատասխանէ Կրօն. ժողովոյ, թէ ո՛չ ՚ի պաշտօնէ, այլ ի լրոյ դիտէ, որ Աղթամարայ Տ. Խաչատուր Ս. կաթողիկոսը Կ. Պօլսէն մեկնելէն յառաջ կեկղեցականաց ոմանց խաչ և ոմանց խաչ կրելու կոնդակ տուած է :

Բ. թէ այս մասին Արարատայ Մայր-Աթոռոյ ամենայն Հայցոյ վեհաժողովուրդայեան հաճութիւնը և կամ թոյլտուութիւնը նախապէս առնուած է :

Կրօն. ժողովոյ այդ մասին բնաւ տեղեկութիւն չունի՝ ո՛չ հաճութիւն առնուած և ո՛չ չառնուած ըլլալուն նկատմամբ, ինչպէս նաև զիտէ թէ Արարատեան Մայր-Աթոռոյ վեհ. Հայրապետն ու Աղթամարայ Ամեն. Տ. Խաչատուր Սրբազան կաթողիկոսն իրենց մէջ համաձայնութիւն դոյացուցած են այս մասին թէ ոչ :

Գ. թէ կթէ այսպիսի հրաման մը վեհ. Հայրապետէն չէ առնուած, Կրօն. ժողովոյն ինչ բրած էր այս գէպքին համար :

Ասոր ալ կը պատասխանեմք, թէ Կրօն. ժողովոյ այս մասին պաշտօնական տեղեկութիւն մը չունենալով՝ ո և է անօրէնութիւն մը չէ բրած : Մասնաւոր երբ կը մեծ, թէ գոնէ հոգեւրոյ Տ. Յակոբ Ս. Պատրիարքի օրերէն սկսեալ՝ մասնաւոր կաթողիկոսներ՝ ինչպէս նաև Ս. Արուստանայ և Կ. Պօլսոյ Պատրիարքներէն ոմանք այլ և այլ ժամանակաց մէջ մեր եկեղեցական եղբարց ոմանց այլ և այլ շնորհարաշխութիւններ բրած են, որոց

համար ցարդ ո՛չ խնդիր եղած է և ո՛չ զիտուութիւն :

Կրօն. ժողովոյ չէր համարձակեր իւր նկատողութեան առարկայ ընել այն բանը, զոր իւր նախորդներն նկատողութեան չէին առած, և որոյ սկզբնաւորութիւնն իւր օրերուն մէջ ծագումն առած չէր :

7 մարտ 1877 Ազգ. ժող. մնամբ յարգանքով զիմաց Կրօն. ժողովոյ

Ատենադպիր	Ատենապետ
Յակոբ վ. Ալար	Խորեն Եպիֆանոս
Փոփոսեան	Միլիտարեան

ՕՐԱԿԱՐԳ

Տեղեկացէ՛ք Դաստիարակութեան քննակէ՛ք վերայ Դաստիարակութեան խնդրոյն .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքն Օղակէ և Ֆէնախին է, ըստ որում առաջին խօսքն ուղած է Օրակարգին վրայ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այո՛, խօսք ուղած եմ և բաւական կրկար պիտի խօսիմ. զժողովարար մեր Կանոնադրութեան մէջ պակաս կէտ մը կայ՝ որ ժամանակին չէ նշմարուած, այն է ատենական զործողութեանց կամ միջանկեալ խնդրոց համար ժամանակակէտ որոշուած չըլլալը, որոյ հետեանք մեր բուն խնդիրներն անպայման կերպիւ ետ կը մընան. բայց ինչ որ է նէ, որովհետև դատարարութեան վրայ առաջին խօսքն առած եմ, պէտք է որ խօսիմ, թէ և քիչ մը երկար է խօսելիքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Բնագլխաւ) Ատենարանին կըսէ թէ երկար պիտի խօսիմ. քանի որ երկար պիտի խօսի, և ժամանակին կարճ ըլլալով մեք պիտի չմ կրնանք խնատասիրել իր խօսքերը կամ առաջարկութիւնները քննել, ուրիշն առնել լաւ է որ զբարոր առնենք ատենախօսութիւնը և ատենադրութեան մէջ ուզել տալով կարդանք :

ՉԱՅՆԵՐ. — Արդէն զիբ առած է և պիտի կարդայ թող սկիի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեր վարչու-

թենէն եկած գրերուն համար ժամա- նակինս ուշ է ըսելով՝ արժան դատեցինք առանց կարգալու առեւնադրութեան մէջ տպել տալ. միևնոյն բանին համար երկու կէտ գործածել կրնայ մի ըլլալ: Եթէ Օդսէն էֆէնտիի առեւնախօսութիւնը պիտի կարգացուի, առաջ Վարչութեան դրերը պէտք է կարգալ: Եթէ ժամն 9 1/2ին խնդիրը բանալ և միանգամայն վճուել կարելի ըլլար, ես ալ ձեզ համամիտ կըլլայի. ըստ զիտեմ որ միայն Օդսէն էֆէնտին մտիկ պիտի ընենք և ո՛չ այլ ինչ. ասով Գաստիարակութեան խնդիրը լուծուած չըլլար, ոչ ալ այսօր մտիկ չընելովնիս խնդիրն ետ ձգած կրնանք համարուիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պիտի լսենք, պիտի խօսինք, պիտի որոշենք, մնալով մինչև ժամ 12:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ ձեր կարծիքն է. իմ կարողութենէս վեր է մինչև ժամը 12 կենալ աստ, և կարծեմ ուրիշներ ալ կան ինձ վիճակակից. կը հարցընենք ժողովին՝ կ'օգէ մինչև ժամը 12 նստիլ. այսու առեւնայնիս անկարելի եղած բանի մը համար մեք զմեզ չխաբենք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (է քե՞ն) Ասեանք շիրնար փակուիլ. քանի որ ինձ խօսք տուիք, իրաւունք ունիմ 2-3 օր խօսիլ. փակեալ է չըլլար:

(Ազնուիտ)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անօգուտ է մեր վերջին նստին այսպիսի խնդրոյ մը սկսիլ, քանի որ չպիտի կրնանք լինցնել:

ՉԱՅՆԵՐ. — Օդսէն էֆէնտիի խօսքը լսել կուզեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հրատեցէք Օդսէն էֆէնտի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ահա խնդիր մը՝ որու երկար տարիներէ՛ ՚ի վեր կը բողոքարարուի. խնդիր մը՝ որ մեր ազգային արտօնագրեալ իշխանութեան բոլոր

պարտաւորութիւնքը իր մէջ կը պարտենակէ, խնդիր մը՝ որու գործնական կարեւորութիւն չտրուելէն ազգն իր ազգային բարոյական հանգամանքները ոչ միայն չհակեց ու չզարգացուց, այլ զբարձրագոյն ունեցած բարի և նուիրական հանգամանքներն ալ կորսնցուց և այս պատճառաւ այն ամեն դրագէտ որ գրել ձեռք կառնու՝ չկրնար առանց վտառելի գագուցներ տողելու գրիչը ձեռքէն ձգել սակայն և այնպէս, եթէ յուսով մը գրիչը ձեռքէ ձգէր՝ կենդանութեան նշան մը կրնար համարուիլ. ընդհակառակն յուսահատ կը քաշուի ասպարեզէն:

Բայց այս անգամ երբ այս խնդրով հոս կը ներկայանայ պարտօնապէս վիճարանուելու և որոյման մը հասնելով վիճարձակելու վարչութեան որ՝ կամ գործադրէ այդ վիճիւն և կամ ամբաստանուելով իրաւամբ քաշուի ազգային գործադիր իշխանութեան այժմուհն, անպայ անգամ յոյս մը կայ կէտ նպատակին հասնելու եթէ ամենամեծ հեռատեսութեամբ արուի այդ վիճիւն, որպէս զի ատոր գործադրութեամբը չըլլայ որ յետինն չար քան զառաջինն ըլլայ:

Ինչ է ուրեմն մեզ պէտք եղած գաստիարակութեան հիմունքը, որու վրայ հիմնուելը չենք խախտու չըլլայ:

Մեր գաստիարակութեան հիմունքը եռանկիւնի սիւնի մը վրայ դրուած է՝ այնպէս կապակցեալ իրարու՝ որ անկարելի է մին միւսէն զատել առանց շէնքը վնասելու:

1. Կրօնական
2. Ազգային
3. Քաղաքական:

Մայրաքաղաքի ազատական տեսութեանց հետևողներն թերևս ըսեն թէ կրօնական գաստիարակութիւնը ազգի մը ապահով ապագային հիմանց մէկը և մասնաւորով առաջինը չհամարուի:

Ես հոս այս նախադասութիւնը թերևս ըսեն ըսելով յիշեցի, սակայն խնդիրն իր մեր այժմու գործնական վիճակին մէջ թերևս թէ ուրեք տակ չէ, այլ մինչև

մէկ աստիճան հաստատական վիճակի մէջ է :

Արևմտեան ծայրայեղ մոլեռանդութիւնը՝ արևմտեան ծայրայեղ անկրօնութիւն մը յառաջ բերած էր և այս բնական էր . զի երբ ազգաց ապահով երջանկութեան ազատական միջոցներն ծայրայեղ մոլեռանդից կողմէն յանուն կրօնի կը մերժուէր ու կը բանադուէր, միթէ բնական չէ՞ր՝ որ ծայրայեղ ազատականներն ալ խնդրոյն անդիլի կողմն անցնելով՝ կրօնը բոլորովին մերժէին :

Ամեն խնդիր այս աշխարհիս մէջ իրարու կապակցեալ բոլորակ մ'է՛ , որ միշտ երկու ծայրերն իրարու դէմ դէմի կը բերէ . այսպէս պէտք էր ծայրայեղ մոլեռանդութիւնը ծայրայեղ ազատութեան այսինքն անկրօնութեան հետ ուղղակի դէմ դէմի գար . եթէ այսպէս եղած չլը՛ր ինչե՞րնուն պէտք էր այդ ազատականաց Աստուծոյ գոյութիւնը , Քրիստոսի աստուածութիւնը , կրօնական արարողութիւնները , վերջապէս հաւատքին հիմունքը խնդիր ընել և պարզ հաստատեալները մոլորեցնել :

Մեր մէջ բարեբաղդարար չկար այդ ծայրայեղ մոլեռանդութիւնը , բայց դժբաղդարար մուտ գտաւ անկրօնութիւնը չկայ մէկը մեր մէջ՝ որ բացէ ի բաց անկրօն եմ լսէ , բայց կան շատեր , մասնաւանդ բայցայպէս տիրող դասուն մէջ՝ որ մոլորեալ են :

Մեր ազգին բարոյապէս տիրող դասակէ մինչև 50 տարի առաջ այս վիճակին մէջ չէր , այլ ընդհակառակն ամենապարզ և խզի տէր հաստատեալներ էին :

Պէզճեան Յարութիւն ամիրայ պարզապէս տիրացու էր . սա իր ամենաբարձր դիրքին մէջ՝ կիրակի օրեր եկեղեցի կերթար կերգէր : Հիմա մէկ շունչը որ Պէզճեանի քաղաքական բարձր դիրքն ունենայ . սակայն բաղդատարար անկէ տանէն , որ աստիճան վար այժմու երևելիներէն մէկը , ոչ միայն եկեղեցոյ մէջ երգող տեսնել , այլ պարզ աղօթք մ'ընելու հա-

մար եկեղեցոյ մէջ ասոնցմէ մէկը տեսնել անհնար է :

Ստոր պատճառն ուրիշ բան չէր , բայց միայն Եւրոպոյ անկրօն հեղինակութեան ընթերցումն մեր վրայ բարոյապէս տիրող դասուն մէջ տարածուելով , ատոնց ջերմեանդութիւնը կամ հաւասար խալտած ըլլալն , մինչդեռ միևնոյն գրոց ընթերցումը Անդղիոյ , Գերմանիոյ և Ամերիկայի մէջ մենէ խիստ աւելի տարածած ըլլալով հանդերձ՝ ատոնց բաղդատարար մեր վրայ ըրած ազդեցութիւնը հոն ըրած չէ . պատճառն ի՞նչ է ստոր՝ պատճառն այն է որ նոյն ազգաց ճշմարիտ եկեղեցականներն կանուխ տեսան այդ գաղափարաց տարածումն իրենց ազգաց մէջ , ուստի և ատոնց տարածումը չարգիլեցին իրենց ընթերցողաց՝ մեզ պէս Րընանի մէկ գործին տալողութիւնը դադրեցունելով , այլ իրենք ալ զբիշ ձեռք առին և յանուն հաստատեալ գիտութեանց այդ հեղինակութիւնները ընենցին ու մերժեցին . իրենց ժողովրդոց հետ վերայական կերպով շխտեցան , այլ յանուն բնական և այլ հիմնական գիտութեանց խօսեցան և իրենց ժողովրդոց խախտելու կրօնական համոզումը վերահաստատեցին . կա՞յ արդեօք այսպիսի դորձ մը մեր մէջ տալողրեալ . ամենևին և ոչ մէկ հատ իսկ , սակայն ազգին մէջ օտար լեզուաց հմուտներն ատոնց հակառակ գրութիւններ , այսինքն անկրօն հեղինակութիւններ խիստ շատ կարդացած կան : Ս՛հա ամէկ առաջ եկաւ մեր կրօնական դատախարակութեան բոլորովին խանդարուիլն և կրնանք ըսել բոլորովին ջընջուիլն :

Մի գարմանաք երբ երբեմն մենք բարձրաստիճան մարդիկ եկեղեցականաց ազդեցութիւնը կտորելու կողմը կը գրանուին և ատոր վրայ կը պնդեն . ատոնք իրենց համոզումը իրաւունք ունին այդպէս պնդելու . վասն զի ատոնք մեր կրօնը արևմտեան կղերին վրայ կը շարին , և ըստ այնմ կողգեն հեռու հեռու փախուցնել ատոնցմէ , մեր կրկերն միշտ ցուցած

է իր հեղութիւնն ու ճշմարիտ հայրութիւնն ասոնց, այլ դանդաղ կեցեր շարունակ կը գանգատի թէ ինչո՞ւ մեզ չեն սպառուեր ու կը հպածեն, մինչդեռ փոխանակ գանգատելու, այդ մարդեալ ոչխարները իրենց մարդութենէն ազատուելու ճարը մտածելու էր ամեն բարոյական միջոց ձեռք առնելով:

Եւ սակայն միթէ մեր եկեղեցականութիւնը իր այժմու վիճակին մէջ կրնա՞ր ասիկ աւելի բան մ'ընել. — մեք կըսենք ոչ. զի նախ և առաջ ինքն ալ կրօնքը բնական ճշմարտութեանց վրայ հաստատուելու ուսմամբ սովորած չէր, այլ իբրև աստուածային յայանութիւն միայն սովորած էր. մեր կրօնը ինքը կը հաւատայ կրօնքին, բայց իր հաւատացածը անկրօնի մը հաւատացնելու համար պէտք եղած բնական փաստերը չգիտեր, այլ աստուածաբանական փաստերը գիտէ. ուստի մէկ աստուծո՞ւմբ լաւ ըրաւ, որ իր չգիտացածը սովորեցնելու չելաւ, այլ սարգսպէս հաւատացնելով բաւականացաւ, և եթէ իր այս վիճակին մէջ ասիկ աւելին ընելու ելլէր՝ վիճակնիր աւելի գէշ պիտի ըլլար:

Արդ հիմայ անտարակուսելի ճշմարտութիւն մ'է թէ՛ մեր մէջ այն կրօնական դատախարակութիւնն այսօր՝ որ 'ի նախնեաց անտի կար, չկայ. բայց ի՞նչ վնաս եղաւ ասիկ աղբին:

Իս հոս աստուածաբանութեան չեմ ելած՝ որ ասոր յաւիտենականութեան վնասը բացատրեմ. ես աղբին ալխարհալին մանաւանդ բարոյական վնասը պիտի բնութ:

Եկեղեցին ճշմարիտ և իրական հաստատութեան կեդրոն մ'է. այս հաւասարութիւնը կորսնցուցինք. եկեղեցին ներողամտութեան իրական կեդրոն մ'է, այդ ներողամտութեան բարոյականը կորսնցուցինք. եկեղեցին համախմբուելու կերականութեան կեդրոն մ'է, այդ բնկերականութիւնը կորսնցուցինք. եկեղեցին մանաւանդ մեր եկեղեցին՝ ազգային միութեան կեդրոն մ'է, այդ միութիւնը

կորսնցուցինք. եկեղեցին ընդ ամենայն ծագս երկրի ազգային գաղափարաց անբախտելիութեան կեդրոնն է, այդ անբախտելիութիւնը կորսնցուցինք. եկեղեցին հարուստին ու աղքատին նուիրատուութեան կեդրոնն է, այդ նուիրատուութիւնը կորսնցուցինք. եկեղեցին ընտանեկան բարոյականութեան կեդրոնն է, այդ բարոյականութիւնը կորսնցուցինք. դեռ էն մեծն լա՞ն մը արդեօք. եկեղեցին քաջութեան, մարտիրոսութեան, նահատակութեան և անվեհերութեան դատարանն է, քաջութիւննիր կորսնցուցինք, մարտիրոսութենէն ու նահատակութենէն լքանք, անվեհերութիւննիր թուաւ ու անհեռացաւ. եկեղեցին այս աշխարհիս մեծութիւնն ու կեանքը ոչինչ ըլլալը քաւրող մարմին մ'է. այսօր աշխարհիս մեծութենէն և այս աշխարհիս կեանքին վրա թափուելու համար՝ կոյսերնիր կը լլկեն, կը համբերենք. եկեղեցինիր կը սրճեն, կը ըւենք, Ս. հաղորդութիւննիր չանք վիզը կը կախեն, եկեղեցւոյ Ս. բեմին վերայ շուներ կը հանեն, և իբրև մարդ մարդու մը համար բնաւին անտանելի եղած բաներուն կը դիմանանք անտարբերութեամբ. թէ՛ աշխարհական և թէ՛ եկեղեցական ո՞ւր է մէկը, որ այսպէս ավերելէն լաւ է մեռնիլն բնելով՝ սրբապղծ մը սպաննած ըլլար և ինքն ալ կախաղան ելլէր, որպէս զի եկեղեցին զայն սրբոց կարող դասէր. — չկայ ասոնց և ոչ մէկը զի եկեղեցւոյ սովորեցուցած նահատակութեան և մարտիրոսութեան գաղափարը բոլորովին մերկացած ենք, մինչդեռ եթէ մեր նախնիք մեզ պէս ըլլային՝ ոչ եկեղեցւոյ տօնած սուրբերուն անունը պիտի լսէինք այսօր, և ոչ մեր եկեղեցին մասնաւոր անոր հաւատացող միակ Հարբալ, ինչպէս որ չպիտի մնայ եթէ այսպէս շարունակենք և անցաւոր կեանք մը զոհելը չսորվինք:

Տեսէք Անդրկական մեծ աղբը, որ կեանքին որչափ թանկագին ըլլալն մենէ միլիոն անգամ աւելի գիտնալով հանգեր՞:

պատուոյ համար վայրկեան մը չվարանիր զայն զոհել, զի եկեղեցասէր է և անոր համար մեծ է ինչպէս նաև այն ամեն ազգերն որք եկեղեցասէր են :

Երկրորդն է ԱԶԳԱՅԻՆ :

Ուղիղ քննադատի մը պաշտօնը միայն շարատեսութիւն չէ, այլ առաւել քան զամենայ ուղղատեսութիւն :

Ազգային դաստիարակութեան վիճակ- ինս այնքան յուսահատական չէ, որքան է կրօնականը :

Որ որ եկեղեցի մը հոն դպրոց մ'ու- նինք. առաջները աղջկանց վարժարան- ներ չունէինք. հիմա զբեթէ ամեն տեղ ունինք. առաջները անհաստական դպրոց- ները շատ խեղճ բաներ էին. հիմա կա- նոնաւոր անհաստական դպրոցներ բաց- ուած կը տեսնենք. առաջները լրագրու- թիւն բնաւ չունէինք, 10-20 տարի առաջ ունեցածնիս ալ խեղճ բաներ էին. հիմա եթէ ոչ կանոնաւոր և կատարեալ, զոնէ ազգին մեծ անպատուութիւն չըրերոյ լը- րագրութիւն մը ունինք. առաջները հա- մբերն տառերով բայց հայերէն լեզուա- օրական թերթ մը համեմ անկարելի էր. հիմա ժամանակներ եղաւ որ հայերէն լեզուա 3-6 օրինակ թերթ ունեցանք, և այսօր ունինք քանի մը հատ. ասոնք Եւրոպական քաղաքակրթութենէն փոխ առած լաւ դաժարտներնուս արդիւնքն են. թէ և չունինք տակաւին մեծ գոր- ծերու հրատարակութիւններ և ճոխ թեան- դարաններ և ակադեմիա, բայց ասոնց դպրութիւնը անկարելիութեան կարգը չէ, չունենալուս պատճառը մասամբ աղքա- տութիւննիս է և մասամբ դանդաղու- թիւննիս :

Մական ուշադրութիւն պէտք է թէ ասոնք որ ունինք՝ ազգին որ դատեն զորմն են. — բոլորն ալ աղքատի զուակ- ներ, բոլորն ալ պղտիկ և աննշան զու- րոցներու աշակերտներ, բոլորն ալ օրա- կան հացը հազիւ ձարելու կարող մարդիկ, բոլորն ալ ասոնց բարձրագոյն քաջալը- րութեան մը՝ սոսկ իրենց զգացումէն զրդեալ իրենց ճակտին քրտինքը զոհելով

յառաջ եկած մարմիններ. թէ հողաբար- ձու, թէ դասատու, թէ հրատարակիչ, թէ հեղինակ և թէ լրագրասէր՝ բնաւ բացառութիւն մը չկայ մէջերնին, և սա- կայն ազգը ասկէ աւելին կսպասէ ասոնց- մէ, որք ունին զգացում աւելին ընելու, չունին կարողութիւն զգացումնին լիովին գործադրելու :

Ազգ մը կամ մարդ մը իր ինչ վիճակի մէջ ըլլալը հասկնալու համար օտարին վը- կայութիւնը զիտելու է :

Եւրոպա ցարդ իբրև ազգային հան- դամանը ինչ զտու մինչ Հայոցս վրայ. անոնց գտած մեր վաճառականութիւնը երկրագործութիւնը և ձեռարուեստը մեր ազգին քաղաքական մասը կը կազմէ, ուս- տի և քաղաքական տեսութեան կը վերա- բերի. Եւրոպա իբրև ազգային գովելու արժանի հանդամանը մը ունեցող երկու- դաս դտու մեր ազգին մէջ իրենց գոր- ծէն դատելով :

Աղքատ բեռնակիրներն և աղքատ զբէշ բռնողներն :

Հայոց ազգը Եւրոպիոյ ճանչցնել ու- զող բարի Եւրոպացիներն՝ կրօնն ու կը կրկնեն իբրև պարծանք Հայոց ազգին մեր այն բեռնակիր պանդուխտ եղբարքը՝ որք հաւատարմութեամբ, պարզութեամբ և արեւութեամբ իրենց հայկական նախա- տիպը չկորսնցնելով այսօր Հայոց ազգին պարծանքն են օտարին առջև, սակայն բնաւ բարձրագոյն յարգանք մը կամ բարձրագոյն խնամք մը տեսած չեն ազ- գին բարձրագոյն դասէն, այլ իրենց ցա-ւոց ու թշուառութեանց տակ կը հեծեն պանդխտութեան մէջ ընտանիքնին, ըս- տացումս քրտին և հայրենիքնին երեսի վրայ թողած :

Կրօնն ու կը կրկնեն բարի Եւրոպացիք իբրև պարծանք Հայոց ազգին այն աղ- քատիկ դպրոցներէն ելած այն աղքատիկ երիտասարդութիւնը, որք ասոնց որ և է բարձրագոյն քաջալերութեան, ասոնց բարձրագոյն և հիմնական կրթութեան ազգին զբաղանութիւնը կը մշակեն և նախնեաց ոսկեզարը վերակենդանացնել

կողմն՝ նման այն միջիւնին՝ որ առանց իր տկարութեանը նայելու՝ ահազին լեռները փորել կողմէ :

Կրնա՞ք ցուցնել իբրև ազգային բարոյական հանդամանքի տէր ցուցուած՝ այս երկուքէն դատ բարձրագոյն դաս մը՝ որ իւր գործերովը օտարին կողմէն վկայութիւն մը ընդունած ըլլար իրևն սարձանը Հայ ազգութեան . այո՞, բարձրաստիճան տիրութիւնը ունինք , բարձրաստիճան հարուստներ ունինք . բայց բընտրուած բանը ասոնց անձնապէս ունեցած վիճակը չէ , այլ ասոնց ազգային գործն ու հանդամանքն է , որու համար իբրև պատիւ ազգիս՝ օտարի մը վկայութիւնը լսած չենք . և արդարև մեք ալ ներքնապէս ասոնց որ և է ազգային բարձր գործը տեսած չենք :

Յայտնե՛նք արդեօք ճշմարտութիւնը իր մերկ վիճակին մէջ , այո՞ , յայտնե՛նք որպէս վի եթէ այսօր ասոր սրտուը չվայելցինք , վազը վայելենք :

Ճեմարանը՝ որու աշակերտն ըլլալու պատիւը ունի Վառժ. Ստեռնապետ փաշան , էսնաֆ դասը բացաւ , բարձրագոյն դասը դոցեց . անկէ ետքը Հիւանդանոցի դպրոցը՝ որու աշակերտն ըլլալու պատիւն ունին այսօր մեր Ազգային ժողովոյն մէջ բարոյապէս բարձր դիրք ունեցող Փափաղեան , Սլաճաճեան և այլ էֆէնտիներն էսնաֆ դասը բացաւ , բարձրագոյն դասը դոցեց . անկէ ետքը Սամաթիոյ դպրոցը՝ որու աշակերտն ըլլալու պատիւն ունին և ունին հոս տեղ շատ մը երեսփոխաններ՝ էսնաֆ դասը բացաւ . Արզարտեան Քրիստոստուր և Մինէճի Մեղրանիկ էֆէնտիներն Ճեմարանի և Հիւանդանոցի փորձէն ետքը գլուխ կեցան այս դպրոցին և չթողուցին որ բարձրագոյն դասը ձեռք երկնցնէ ասոր վրայ , որով այսօր ազգային դաստատուաց էն ընտրելովոյններն նոյն վարժարանի դաստատուներն են . անկէ ետքը Ստադիւղի վարժարանը էսնաֆներն յառաջացուցին և այսօր բաւական նշանաւոր արդիւնք ունի Հայ գրական ստադիւղին վրայ . Շահ. Նու-

պար վարժարանը՝ որ հոգեւոյս աղքատիկ Շահնաշար վարդապետին կտակովը և պարզ արհեստաւորի գաւակ Ներսէս և պիտիոպոսի ձեռամբ հաստատուած և պարզ արհեստաւորի գաւակ Միքայէլեան Սիմոն էֆէնտիի ձեռամբ յառաջացած և ազգին բաւական արդիւնք տուած էր , բարձրագոյն դասին ձեռքն անցաւ յետոյ և դոցեցաւ :

Հիմա ալ երբ մեր ամենուս աչաց անջեւ Ղալաթիոյ մէջ կեդրոնական վարժարան մը հիմնուեցաւ փառաւոր՝ այդ ալ դեռ չբացուած և միջին կարգին ձեռքը չանցած՝ կորույտի դոցել զայն պատրիարքարան ընկելու որոշմամբ . այն կեղծ պատրուակին տակ թէ դեռ անոր յատկացած եկամուտները պարտական են , արդիւնք չունին , ուստի առայժմ Պատրիարքարան ըլլայ և պարտքը վճարուելէն ետքը բացուի . միւս կողմէն կեդրոնական սնտուկին յաւելեալ եկամուտը չուայլաբար պշտօնէից կը բաշխեն :

Ստոնք այնպիսի դատն զուգադէպ իրողութիւններ են՝ յորմէ հետեւած է սա ճշմարտութիւնը թէ՛ Հայոց ազգին միջին դասը կը լինէ , իսկ բարձրագոյն դասը կը կործանէ :

Ծանր է այս հետևութիւնը և ես կը խոստովանիմ թէ ծանր է . սակայն միթէ ծանր չէ՞ սա ճշմարտութիւնը թէ՛ Նգիլուտական կտակարութիւն մը իր իմաստութեամբը վերականգնող Նուպար փաշան մը՝ իր անուան նուիրեալ վարժարանի մը դոցուելուն դէմ անտարբեր մնաց :

Սակայն ի՞նչ է արդեօք ասոր բարոյական պատճառը . միթէ մեր ազգին բարձրագոյն դասը ազգատեսց է և իր ազգին յառաջ երթալուն դէմ է . քաւ լիցի ատանկ ակնարկութիւն մ'ընել ինձ և ձեզ , այլ ճշմարտութիւնը սա է թէ՛ այս բարձրագոյն դասը իւր դատտարար կութիւնը օտար վարժարանաց մէջ առած է , ուստի անտարբեր է իր ազգին վրայ չդգալով այնպէս ինչպէս որ կըզգայ միջին դասը :

Չայս հաստատուելու հաստատ ստացոյց

մը չ՛ միթէ օտար սովորութեանց բոլորին ալ այս բարձրագոյն դասուն միջոցաւ մեր ազգին մէջ մուտ գտնելը . ասոնք մեր աղբիկները հայկական պարզութենէն հանեցին , ասոնք իր մայրենի լեզուն խօսելէ նախապատիւ համարեցին Գաղղիբէն խօսելը . ասոնք մեր Հայ եկեղեցաւի կանոթեան պարզ և անշուք վիճակը երևցան անպատուութիւն համարելով զլուսն Հայ եկեղեցականութեան այն յարգանքը՝ որ մեր ամիրաները կուտային , այլ այդ յարգանքը և աւելին տուին փառասոր հագուուղ օտար եկեղեցականութեան , ասոնք իրենց ազգային անուն ալ թարգմանեցին Եւրոպականի , տեսնուեցաւ նաև մարդիկ՝ որք Հայ ծնած Ըլլային իրենց անպատուութիւն համարեցին :

Այս ամենուն պատճառն այն է որ աղբիկ բարձրագոյն դասը ազգային կրթութիւն չառաւ . ինչ պիտի Ըլլար ազգին վիճակը եթէ ասոնց խառն այսինքն օտար ազգաց հետ ամուսնանալու տուած ազգաւոր օրինակն ալ մտայի կարգ անցնել հասարակ դասուն մէջ ինչպէս որ շատ մը ազգաւոր սովորութիւննին մտուի կործանումն ընտանեկան ազգային պարկեշտութեան :

Սակայն երբոր ազգի մը բարձրագոյն դասը այսպէս օտարացեալ է իր ազգէն՝ կրնայ այն ազգը մեծ դործեր տեսնել . աշխարհիս փորձը կը ցուցնէ թէ ոչ , զի միջուն դասուն ընելիքը ասեղով հոր փորել մէ , մինչդեռ ասոնք կրնան շատ մեծ բարեք դործել ազգին՝ եթէ ազգային կրթութիւն անոճ Ըլլային . ասիէ յառաջ եկաւ մեր քաղաքական այն մեծ վնասը , որ թէ և միշտ կը կրէինք , բայց վերջին դէպքերը բացորոշ ցուցին , ուստի համասօսիւ մը ազգին քաղաքական դաստիարակութեանը վրայ ալ խօսինք ու եղբակացութեան իջնենք , ներողութիւննիդ խնդրելով այս մեծ խնդրոյն վրայ քեզ մը երկար խօսելուս՝ որու վրայ կրնայ հասարկեր լեցուիլ :

Ես հոս քաղաքական դաստիարակու-

թիւն ըսելով քաղաքագիտական դպրոց մը բանանք ըսել չեմ ուզեր , զի այդ վեր է մեր կարողութենէն , այլ կուզեմ ըսել թէ հաստատենք ազգային քաղաքականութիւն մը և գայն յառաջ վարել ու անկէ չհեղիլ զիտանք :

Ազգի մը քաղաքականութիւնը ազգային կոչուելու համար իր համազգային քաղաքական գրեց վրայ հիմնեալ ըլլալու է . մեր այսօր մէկ քանի տէրութեանց տակ կը գտնուինք . կրնան ասոնք բարեկամ ըլլալ իրարու , երբեմն ալ թնշամի . ուստի մեզ համար իբրև սկզբունք վտանգաւոր է այն քաղաքականութիւնը որով միոյն կամ միւսին թմբուկը զարնել կառայնորդուինք երբեմն և միշտ կը վրնասուինք , զի դէպքերը փոխուելուն պէս մեր ալ ընթացքնիս պիտի փոխենք անշուշտ , սակայն այն ազգը որ տեսական քաղաքականութիւն մը չունի և միշտ կը փոխէ իր դերը , պատիւ չկրնար դռնել և ոչ մէկէն , ինչպէս որ մեր քաղաքականութեան մասին և ոչ մէկէ մը պատիւ գտած չունինք , զի որոշ և հիմնական քաղաքականութիւն մը չունինք՝ որու համեմատ պատիւ ալ գտնենք :

Սակայն ինչո՞ւ է որ չունինք այդ քաղաքականութիւնը . — պատճառն այն է որ ազգերնուս ընդհանրական քաղաքական վիճակին վրայ տեղեկութիւն չունինք :

Այ մեր գիտենք Ռուսաստանի և Պարսկաստանի Հայոց քաղաքական վիճակն ու շահը և ոչ անոնք փոխադարձաբար մերը գիտենք :

Այս բնմը շնորհիւ այս կէտին վրայ աւելի խօսելու :

Ուստի կեղբակացենք թէ ուղղակի ազգին կեդրոնական իշխանութեանը տակ կեդրոնական վարժարան մը պէտք է՝ ուր սորուի՝

1. Կրօնական դաստիարակութիւն .
2. Աղբային դաստիարակութիւն .
3. Քաղաքական համազգային դաստիարակութիւն :

Այս վարժարանն է ահա Ալալթիոյ նորակառուց քաղաքանը՝ որ պէտք է

ըլլայ ուղղակի Ռուսմական խորհրդոյ հոգաբարձութեանը կամ տեսչութեանը տակ, և ուրիշ կիսձ աշակերտք թէ է կեղեցական և թէ աշխարհական տարածւելու են բոլոր ազգային վարժարանաց և պատմասարանաց մէջ. հոն ընդունուելու են բոլոր այն մանկունքն ու մարդիկը որք Հայ անունը կը կրեն թէ և ըլլան Բողոքական կամ Քաթոլիկ :

Ս. յգ վարժարանին մէջ մեզ պէտք չէ սովորեցնել թէ գաղղիներէնը, թուարանութիւնը և այլն ի՛նչպէս սովորեցնելու է, այլ պէտք է սովորեցնել թէ՛ :

1. Ազգային կրօնքը ի՛նչպէս սովորեցնելու է՝ որ անկրօնութիւնը չկարենայ յաղթող հանդիսանալ :

2. Թէ ազգային կեանքը ի՛նչպէս արդարութեամբ է տղայոց սրտին մէջ, որ զայն ամեն ուրիշ կեանքերէ նուիրական և նախապատիւ համարեն և օտարամտութեան չմատնուին :

3. Թէ ազգային քաղաքական կեանքը պատմական տեսութեամբ ի՛նչ էր իր ծագմանը միջոցին, ի՛նչ քաղաքականութիւն բռնեց որ զարգացաւ, և ի՛նչ՝ որով իւր անկախութիւնը կորսնցուց, ի՛նչ այսօր որով կապրի աշխարհիս ամեն կողմը, և վերջապէս ի՛նչ քաղաքական կեանք բրուներու է՝ որ զանազան տիրող շահերու տակ ազգին որ և է մասը չմատնուի միւս մասին բռնած քաղաքականութեանէն :

Երբ անգամ մը մէկ քանի շրջան այս դասերն աւարտող դասատուք և պատմունեայք անկէ դուրս գալով ազգին ամեն կողմը տարածուին՝ վստահ եղիք՝ որ այն վայրկենէն սկսած է վերակենդանութիւն մը Հայոց ազգին համար, որու ամանդատական եղան մեր նախնիք մինչև ցայսօր և Հայոց ազգը այս ազատութեան դարուս և այս սահմանադրական աւուրս հասուցին :

Անպատուութիւն է մեզ և աններկի վատութիւն, որ նախնեաց ամենայն տառապանօք ու չարչարանօք ցայսօր հասուցած այս Հայ ազգը՝ մեք այս ազատութեան դարուս և սահմանադրական զը-

րութեանս մէջ մեռցնենք և թուներնուս չհասցնենք :

Թող ժողովը ընդունի այս սկզբունքը՝ այն ատեն պատրաստ եմ նաև անոր և կամուտի աղբիւրները ցուցնելու և աւելի մանրամասնութեան մտնելու :

ՁԱՅՆԵՐ. — Շնորհակալ ենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Ես կը կրկնեմ Օգոսէն էֆէնտի իւր եզրակացութիւնը բնութեամբ առաջարկութիւնը կեղրոնական ուսումնարանին համար. վասն զի այդ ուսումնարանին կառուցման ՚ի մտուտս և ՚ի պաշտօնէ տքնած ու աշխատած եմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅԹ. — Օգոսէն էֆէնտի առաջարկութիւնն ես ալ կը կրկնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇՆ. — Պէտք է Ղիտնալ որ խնդիրը Ղալաթիոյ նորակառուց վարժարանին վրայ չէ, այլ Դաստիարակութեան ղրեանի տեղեկագրին վրայ կը խօսինք, և դեռ առաջին ընթերցմանը մէջ ենք, ուր սկզբնական կէտերուն վրայ ընդհանուր տեսութեամբ խօսիլ օրին է : Արդ Օգոսէն էֆէնտի իւր խօսքը վերացուց. եթէ ուրիշ խօսք ուզող չկայ, այսօր կընանք փակել առաջին ընթերցումնիս բուէարկութեամբ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Կարծեմ թէ ըստ կանոնադրութեան մեր առաջին պարտաւորութիւնն էր Դաստիարակութեան ղրեանի տեղեկագրին ամբողջութիւնը քննէարկել, որով տեղեկագրին եզրակացութեան 3 կէտերն ընդունուած ըլլալը կամ չըլլալը պիտի որոշուի. այս 3 կէտերէն առաջինն է Դաստիարակութեան խթնըրոյն ստիպողականութիւնն ալ, որ ընդունուած է արդէն՝ ժողովս իւր մէջ առած ըլլալով երկրորդ կէտն է վարժարանաց բարեկարգութեան ծրագրին օրակարգն անցունել. երբ այս ալ ընդունինք՝ բնականաբար ծրագրին մէյնմէկ օրինակը պիտի ղրկուի երեսփոխանաց սերտելու զայն, որպէս զի կարող լինինք յաջորդ նստին անոր յօդուածոց քննութեանը մտնալ : Երրորդն է վարժարան-

ասնոցի հաստատութեան կէտը. այս ալ թէ որ ընդունինք՝ բնականաբար վարչութեան պիտի յանձնարարենք որ անոր անդելի ուսմանց հիմնադիրը պատրաստէ և ներկայացնէ ժողովիս: Կը մնայ դաստիարակութեան պիտոյից համար Պիւտեմին մէջ գումար մը սահմանելու կէտն. այս մասին ալ բնականաբար Պիւտեմի գալուն պիտի սպասենք: Ըսել է թէ երկու կէտ կայ զլիւսաորսպէս որոշելու երբ Գաստիարակութեան գիւտնի տեղեկագիրն ամբողջութեամբ այսօր քուէի դուրսի մէկն է վարժարանաց բարեկարգութեան ծրագրին օրակարգն անցնելը և միւսն է կեդրոնական վարժարանի մը գոյութեան պէտքը: Այս պէտքը միանգամ որոշուելէ ետև՝ վարժարանին նիւթական և բարոյական յանձնաձևանաց անօրէնութիւնը կրնանք անմիջապէս վարչութեան յանձնել: Խիստ պարզ է այս ռուսածս, և այնչափ պարզ՝ որ թիւր մեկ նութեանց տեղի չկրնար տալ. ուստի այս տեսութեամբ տեղեկագրին ամբողջութիւնը քուէարկել կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փախաղեան է Ֆէնտի կըսէ թէ տեղեկագրին ամբողջութիւնը քուէարկելով եզրակացութիւնն ալ ընդունած կըլլանք. այս ստոյգ է. բայց ըստ որում ի սկզբանէ Տեղեկագիրը Գաստիարակութեան խնդրոյն իբր օրինական ծրագիր նկատեցինք. ուստի եթէ այսօր քուէարկութիւն ընենք, մի միայն անոր ամբողջութեան և պարունակած սկզբունքն ընդհանրութեան վրայ խօսքերնիս վերջացնելու քուէ պիտի տանք, և Ա. ընթերցումը միակելով Բ. ին անցնել պիտի որոշենք. երկրորդ ընթերցման ժամանակն կը մնայ մանրամասնութեանց վրայ վիճարանել, որոց մէջն են Փախաղեան Ֆէնտիի յառաջ բերած կէտերը. օրինակէ համար ի՞նչ է կեդրոնական վարժարանը ուսման. և թէ գործադրելի՞ է մեր ազգին մէջ կամ ոչ, և ի՞նչ կերպով, ասոնք վիճարանութիւնը պիտի որոշէ. հապճեպով չըլլար:

ՊԱՌՆԱՍՏԱՆ Պ. ԷՖ. — Կարծեմ թէ

աճագարանը ըսածնիդ տեղի ունեցած չըլլար թէ որ այսօրունէն Գաստիարակութեան դիւտնի տեղեկագրին ընդհանուր սկզբունքը քուէարկութեամբ ընդունուի. վասն զի այդ տեղեկագիրը քանի մը շարժեց ի վեր հաղորդուած է երեսփոխանաց, և ամենքը զայն սերտելու ժամանակ ունեցած և արդէն սերտած են. ուստի արգելք մը մնացած չէ քուէարկութեան դնելու զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ղարաբիոյ վարժարանը կեդրոնական ընդհանուր վարժարանի վերածելու փախաղոյնը մէկն ալ էս եմ. 1865ին երբ Քաղաքական ժողովոյ ատենապետելու պատիւն ունէի, այդ վաղափարն էս յղացայ, բայց նոյն ատեն չյաջողեցաւ. այսօր դարձեալ անոր յաջողութեանը կը փախաղեմ. բայց գիտցած ըլլաք՝ որ քուէ մը տարով սկզբունքն ընդունելիցնք ըսելով՝ անոր գործադրութիւնը չկատարիր, այս տեսակ հաստատութիւնները միայնակ քուէ տալով ըմնալիք բաներ չեն. էս դարձեալ կը կրկնեմ, ինչ որ առաջ քանիցս ըսած եմ, այսպիսի պարագայից մէջ նախ քան զործադրութիւնը. տեղեկագիրն արդէն զրկած ենք Ղարաբիոյն 13 օրէն իւր կարծիքը խնդրելով. սակայն նա դեռ կարծիք չյայտնեց, ուրեմն սպասենք:

ՊԱՌՆԱՍՏԱՆ Պ. ԷՖ. — Թէ որ Ղարաբիոյնը երկու ամսէն ալ պատասխան չբերէ, ի՞նչ ընելու ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իրաւունք ունիք այդպէս ըսելու, սակայն մի կարծէք որ այսօր քուէնիս տալով կրնայ ըլլալ մընցած համարուիլ սասնիկ ծանր խնդիր մը:

(Աջակէտ).
ՊԱՌՆԱՍՏԱՆ Պ. ԷՖ. — Եթէ քուէով չմննար, անասմանապէս երկարածք ելով ալ չմննար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ բան կըրնաք ըսել ձեր նպատակին հասնելու հա-

մար, բայց դիւանը պարտաւորութիւն ունի այս տեղ եկած խնդիրները կանսնական ուղղութեան մէջ սահելու . օրինաց ծրագիր պիտի սահմանենք . կանոնը կը արամադրէ որ 5 ընթերցումէ անցնի . այսօր առաջին ընթերցումը պիտի փակենք . այս է ջուէի գրութիւնը , ուրիշ բան չեմ կրնար ընել :

Չայս ըսելով Ատենապետ փաշան քուէի գրաւ տեղեկագրին առաջին ընթերցման փակումն , որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՄ. — Հիմա այս քուէարկութեամբ տեղեկագրին ընդհանուր վիճարանութիւնը փակուած է . կը մնայ մանրամասն վիճարանութիւնն՝ որ տեղեկագրին երկրորդ ընթերցման պահուն վերապահուած է . այս ալ առաջիկային մէջ պիտի կատարենք : Բայց առաջիկայ նիստն ե՞րբ պիտի ըլլայ , այն ալ որոշեցէք , կադպեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կառավարիւմ որ այս նիստը ներկայ բացման վերջինն ըլլայ և այսօր փակենք տարեկան չրջանին , յաջորդ բացման թողով ուրիշ կառուար զբաղումներն . ուրախ ըլլանք որ Կաստիարակութեան զիւանի տեղեկագրին դո՛ւնէ՛ առաջին ընթերցումն այսօր քուէարկելով՝ ընդունցինք որ Կաստիարակութեան խնդրոյն ամենակարեւոր հիմունքն են :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՄ. — Ներեցէք՝ որ ընդմիջեմ խօսքերիկ , Փափաղեան է՛ Ֆէնտի . ժողովին ըրած քուէարկութիւնը սխալ կը մտնէք . այնպէս չէ . Կաստիարակութեան զիւանի տեղեկագրին առաջին ընթերցումը քուէարկուելով ուրիշ բան չեղաւ , բայց եթէ տեղեկագրին վրայ ընդհանուր վիճարանութիւնը փակուեցաւ . իսկ մանրամասնութեանց վրայ ասիկ ետքը պիտի վիճարանի ժողովը . ուրեմն ինչո՞ւ կրտէք թէ սկզբունքները միաշաղկոյն ընդունուեցան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրինաւորու-

թիւնն զմեզ սպաննելու չափ յառաջ չկընար երթալ . ես միայն պիտի ըմբռնեմ , իմ բանին անանկ կուգայ , դուք չէք կընար փոխել իմ ըմբռնումն . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՄ. — Ձեր սխալ ըմբռնելը հող չէ . բայց դիւանը չկրնար ներել որ ժողովը խաբուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըսի թէ իմ գործիս անանկ կուգայ . ես հաստատ պիտի մնամ իմ ըմբռնմանս մէջ , վասն զի անով պիտի միջխարուիմ և յուսադրիմ : Կանոնադրութիւնը սերտած եմ . առաջին անգամի քուէարկութեամբ սկզբունքներն ալ ընդունուած կը համարիմ . բայց առկալին երկու անգամ ևս քուէարկութիւն ունինք , կրնայ ըլլալ որ երկրորդին կամ երրորդին մէջ այն սկզբունքներէն մէկը կամ միւսը կը մերժուի կամ կը բարեփոխուի . այս ուրիշ . իսկ երբ ապագայ քուէարկութիւնը՝ այն սկզբունքներն արմատախիլ ընելու չափ նկատին , այն ատեն զանոնք կը վաննէք : Աւասիկ այսօրուան քուէարկութեան տպաւորութիւնն ես այսպէս կը հակըմամ : Գալով այսօրուան նիստի փակման , ես կը կրկնեմ իմ առաջարկութիւնն՝ որ այսօր տարեկան ըլլեջաննուս վերջին նիստը համարուի և փակուի . բայց փակման ատենարանութիւնը չարտասանուած՝ կուզեմ որ ինձ խօսք տրուի ներկայ բացման մէջ զիւաններուն քով առկախ մնացած խնդրոց ցանկը կարգալու , որպէս զի ատենադրութեան մէջ անցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓՈՇՄ. — Ձեր ըսածները Փափաղեան է՛ ֆէնտի , տարբեր բաներ են . պէտք է զիտնալ որ ես իմ կանոնական պարտաւորութիւնս կը կատարեմ , հող չէ թէ որ զմեզ դժգոհ կը ձգեմ . իմ պարտաւորութիւնս եր տեղեկագրին առաջին ընթերցումը և վիճարանութիւնը փակել . այս պարտք կատարեցի , ոչինչ կայ վճուեալ . միայն տեղեկագրին ընդհանրութեան վրայ վիճարանիլ բաւ համարուած է . վասն զի այս տեղեկագրին երբ օրինական ծրագիր կարելի չէր իւր ամեն սկզբունքներովը մէկէն այսօր վըճ-

ույ ներքև ձգել : Աւարիկ կանոնադրու-
թեան տրամադրութիւնը . մտիկ ըրէք
թէ ի՞նչպէս կը գծէ մեր բունելիք եղա-
նակն օրինական ծրագրոց մասին . (Ե-
Արեւակոյտ քառն կարգոց հետեւեալը .)

« Յօդ. 86. — Ոչ մէկ ծրագիր օրինաց՝
« բայ ըստիպօղ դէպերէ՝ չըրգիր վերջ-
« նական քուէի , եթէ երեք որոշումէ
« չանցնի՝ իրարմէ գոնէ մէկ շարժի մի-
« ղոցով : Առաջին որոշումը յատկապէս
« ծրագրին ընդհանրութեանը վրայ կը-
« լայ : Ժողովին կը հարցուի միթէ կուզէ՞
« երկրորդ որոշման անցնիլ : Երկրորդ ո-
« ղոշումը կըլայ ամեն մէկ յօդուած քը-
« էի դնելով , նաև անոնց վերաբերեալ
« բարեփոխութիւններն՝ եթէ կան : Ժո-
« ղովը կորուչէ միթէ կուզէ՞ երրորդ որո-
« ման անցնիլ : Երրորդ որոշումն էտք՝
« որ ծրագրին բովանդակութեանը և մաս-
« նաւոր տրամադրութեանց վրայ կըլայ ,
« վերջնական քուէի կը ձեռնարկուի , որն
« որ կը կնքէ գործումը . . . »

(Ե- շարունակց)

Ար՝ այսօր տեղեկագրին կամ որ նոյն է
Դաստիարակութեան ծրագրին առաջին
ընթերցումը փակեցինք , այսինքն՝ անոր
ընդհանրութեան վրայ եղած խօսքերը
լսելով գոհ եղանք . հիմա ծրագիրը ներս
առինք , այս դիւանին վրայ , և յօդուած
առ յօդուած անոր քննութեանը պիտի
ձեռնարկենք . ըսել է թէ սկզբունքներուն
վրայ մի առ մի պիտի վիճաբանինք յետ
այսորիկ :

ՓՈՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դի-
տարութիւն ունիմ . — որն է ծրագրին ու-
րինական յօդուածներ ըսածդ՝ որ պիտի
քննուին . Յ կէտ կայ . Կք օրինական չեն ,
և մէկը միայն օրինական է որ երկրորդ
և երրորդ ընթերցումէ պիտի անցնի . ա-
ռաջին կէտն՝ որ ստիպողութեան կէտն է ,
արդէն ընդունուած է ըսի . երկրորդ կէ-
տն է վարժարանաց բարեկարգութեան
ծրագրին՝ որ օրէնք պիտի ըլլայ ազգին
մէջ , և այս պէտք է երկրորդ և երրորդ
ընթերցումներէ անցնիլ . իսկ մնացած

կէտերն ազգին մէջ վարժապետանոցի մը
հաստատութեան կէտին կը վերաբերին .
միթէ վարժապետանոցի հաստատութեան
խնդիրն օրինական խնդիր մ'է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ ձեզի հետ,
Փափաղեան էֆէնտի , փափաղող եմ ազ-
գին մէջ կեդրոնական ընդհանուր վար-
ժարան մ'ունենալու . սոյն սկզբունքը փա-
փաբելի է նաև ամենուս , բայց դոր-
ժադրութեան համար Վարչութեան հար-
ցնելիք կէտեր ունինք . պէտք է ամենայն
ինչ բացատրուի . պիտի տեսնէք վերջը
վիճաբանութեան մէջ թէ ի՞նչպէս օրինա-
կան կէտ մը կը ներկայացնէ նոյն իսկ վար-
ժարանի հաստատութիւնն , որպէս համար
չատ կարևորութիւն կուտայ ձեր Գուէին .
այսքան համբերեցիք , Չ ամիս ևս համբե-
րեցէք , կաղաչեմ , տեղեկագրին ամեն
մէկ մասունքը վիճաբանութեան րովէն
անցնին , ապա՛ կուտանք վերջին վիճուք :

Գանք այսօրուան նիստի փակման
խնդրոյն . ես ալ Փափաղեան էֆէնտիի
կը ձայնակցիմ տարեկան չըլաննիս փա-
կել այսօրուքնէ , վասն զի Զատիկին շատ
մտտ ենք և միջոց չունինք դրեթէ նիստ
մ'ալ ընելու :

ՄԵՆԻԲԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կարծեմ
թէ արդեւք մը չկայ 8 օրէն ետք նիստ
մը ևս ընելու . ստիպողութիւն տարուս
պատճառն այս է որ ներկայ չըլաննիս
չէոցուած . դաստիարակութեան խնդիրը
բիշ մ'աւելի քալ առած ըլլայ . 8 օրէն
ես պիտի ըլլամ առաջին խօսող դաստիա-
րակութեան խնդրոյն վրայ , այժմէն ար-
ձանագրեցէք իմ անունս :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ ու-
զողներէն եմ որ յառաջիկայ ուրբաթ օր
նիստ մը ևս ըլլայ . վասն զի բանաւոր
պատճառ մը չեմ տեսներ չըլնալ ըլլալու :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Առաւել բնա-
րելի է այսօրուքնէ փակուի ընեն :
ԶԱՅՆԵՐ Գուէի դրէք :

Անիշապէս քուէի դրուելով ժողովի
փակման խնդիրը , Ձ քուէի դէմ 13 քը-
ւէով փակուան ընդունուեցաւ :

Փափազեան Ս. Էֆէնտին խօսք առ ներով դիւանէն, յետագայ ցանկը կարդաց:

Նիստ Բ. Ընտրութիւն Համարառութեան յանձնախմբի:

Նիստ Բ. Առաջարկութիւն Փափազեան Էֆէնտի. Համարակալութեան դիւանը պաշտօն ունենայ նախորդ վարչութեան պատրաստած Պիտէն քննել և նոր վարչութեան կարծիքն ալ առնելով, բերել ժողովին ի վաւերացումն:

Ընդունուած ժողովէն:

Նիստ Բ. Առաջարկ. Փափազեան Էֆէնտի. Աւղերձիւ պատասխանել նախագահական ատենաբանութեան.

Յրեալ ի Նախաքննութիւն:

Նիստ Գ. Երկու առաջարկ. Գափամաձեան Էֆէնտի. Վասն Հաստատութեան պատանկան օրինաց և վասն Սահմանադրական ինչ ինչ յօդուածոց սրբադրութեան:

Նիստ Դ. Առաջարկ. Ստեփան Բաղայի. Վարդապետաց և եպիսկոպոսաց ս'եր տեղւանք և ինչ պաշտօնով և ինչ թոռով զբոնուելուն Համար կանոնական ծրագիր մը յանդրել վարչութեանէն.

Ժողովէն ընդունուած:

Նիստ Ե. Բողոք Յ երեսփոխանաց

» 14 եկեղ. »

» 5 »

» Տ. Երեմիա Հօր.

Յրեալ Նախաձ. և Չեան. միացեալ դիւանաց:

Նիստ Զ. Հարցում երկից երեսփոխանաց վասն կամաւոր զօրաց:

Պատասխանը յետոճեալ:

Նիստ Է. Առաջարկ. Գափամաձեան Էֆ. Ի Վասն Գրք յօդուածոց Պատրիարքական դիւանն Սահմանադրութեան.

Յրեալ Նախաձ. դիւանին:

Նիստ Թ. Վասն երկիցս բացակայութեան խնդրոցն վերահաստատեալ է յանձ.

նածողովն մեր, Իւթիւճեան և Օդակն Էֆէնտիներու:

Նիստ ԺԲ. Խնդիր Համարառութեան յանձնախմբի.

Օրածեալ վասն ներկայութեան Ս. Պատրիարքի:

Նիստ ԺԳ. Առաջարկ. Հմայեակ վարդապետի.

Յրեալ Համարակալ. դիւանին.

Նիստ ԺԴ. Հարցունք Փափազեան Է. Էֆէնտի. Վասն Պիւտէնի, Վանօրէից խորհրդոց և Կտակաց Հոգաբարձութեան. Յրեալ առ Վարչութիւնն.

Նիստ ԺԵ. Առաջարկ. Պէշիրեան Էֆէնտի. Վասն տպագրական դրոճոց ԱզԳ. ժողովոց.

Յրեալ առ Նախաձ. դիւանն:

ՓԱԿՈՒՄ ԺՈՂՈՎԻՆ

Ատենապետ Բաղայն՝ ժողովին ներկայ տարեկան շրջանը վախկեց հետեւեալ ատենաբանութեամբ.

Տեսքը,

Այս երկրորդ անգամն է՝ յորմէ հետէ յԱտենապետութիւն ժողովոյս կոչուած եմ՝ որ պատիւ ունիմ տարեկան շրջանի վախումն արտասանելու:

Բացումն և Փակումն՝ Երեսփոխանական ժողովոց Համար նշանաւոր օրեր են: Բացման օրերն՝ Ազգին պաշտօնական Գրքումն երեսփոխանաց կը ներկայէ օրուան վիճակն ու տարուան պէտքերը, և հրաւեր կը կարդայ զանոնք հոգալու: Իսկ Փակման օրն՝ հաշուոց օր է. տանտուէրը երեսփոխանաց խղճին մէջ դահակալեալ Համար կը պահանջէ տարեկան վաստակոց, և արդիւնքը կ'արձանագրէ պատմութեան մէջ:

Անցեալ տարի՝ յետ քասներեք նստերու՝ երբ իրարմէ պիտի բաժնուէինք, անցելոյն մէջ պարծանաց նիւթ չըտնելով, ապագային վրայ յոյս և իղձ յայտնելով, վախումն արտասանել պարտաւորեցայ: Իսկ այսօր կը վարանիմ թէ ինչ պէտք է

ընեմ. զի յեռ քսան երկար և դժուար նստերու դարձեալ մի և նոյն կէտը կը դառնուինք ուր էինք ի սկիզբն տարւոյս :

Արդարև, Տեա՛րք իմ, եթէ աչքէ անցունենք մեր տարեկան աշխատութեանց չարքը, մէջը նշանակութեան արժանի դորձ՝ մի միայն վերակազմութիւն վարչական ժողովոց կը գտնենք, և այլ ո՛չ ինչ:

Վարչութիւն մը երկու ամսով մտաբերել իշխանութիւն վարեր է ազգին մէջ, և ի լրման ջրջանին ելեր գնացեր է, մեք անոր համարը չենք կրցեր աւնուլ և ո՛չ հալիւններ տեսնել:

Նոր վարչութիւն մը պաշտօնի կոչուեր է, և ահաւասիկ տարին կը լրանայ, տակաւն անոր պէ՛տէն չենք տա՛մաներ:

Երկրին վարչական վիճակը բարենորոգուեր, և Ազգին աշխարհվարական դիրքը փոխուեր է, և մեք մեր Ազգութեան իրաւանց երաշխաւորութիւնը Ազգային Մահմանադրութեան մէջ բնուելու պարտաւորեալ, փոխանակ զանի մասնաւոր հոգածութեամբ ամբողջից հաստատելու, և առաջի աշխարհի նուիրական և անհրաժեշտ ցոյց տալու, Վերաքննութեան խապէի ցոյց տալու:

Եկեղեցի և Վարտարան՝ ազգային կրօնի և լեզուի պահպանարան՝ ազգութեան այն երկու լուսատու ջահերն՝ արժանընտիր եկեղեցականաց և ընտիր վարժապետաց պահասութեամբն՝ ազօրտանալու փտանդի ենթարկեալ, մեք փոխանակ նոր դպրոցներ հիմնարկելով անոնց պայծառացման աշխատելու, բարերարաց Հաստատութիւններու խանգարման և կործանման անտարրեր հանդիսական գրտուեր ենք:

Տասնեւօթ տարի է տա՛մանադրական վարչութիւն ունինք և պարտաւորեալ զիւստատան մէջ Ազգահանրի գրասենեակ, տակաւն այսօր թուրքիոյ մէջ քանի չայ գտնուիլը չգիտնալէն զատ, Արջոց մէջ քանի չոգի բուսիլիս ճշդեղիտենք: Եւ սակայն ազգային և քաղաքական նկատմամբ ո՛րչափ կարեւորութիւն ունի այս վիճակազրութիւնը՝ ու

մենքին զիտե՛նք, բայց ո՛չ Վարչութեան ստիպած ենք այս մեծ գործը կատարել, և ո՛չ ուրիշ տնօրինութեամբ մը այս մեծ պակասը լրացնելու հոգ տարած ենք:

Վերջապէս մեր Օստատիաւ կայսրը մեր իբր ազգ ունեցած սահմանադրութենէն զատ, իբր քաղաքացի և Օսմանեան պետութեան մէկ նշանաւոր տարրը՝ ուրիշ ազգաց հետ համահասար իրաւամբ սահմանադրութիւն մը կը չորհնէ մեզ, որով ազգայնոց նոր ստպարէզ կը բացուի յառաջ քայլելու և փայլելու, որով ազգը իւր երեսփոխանական և վարչական պաշտօններէն զատ՝ Տէրութեան պաշտօններու համար ալ մարդ հասցնելու պարտաւորութեան մէջ կը մտնէ. և մեք փոխանակ բազմաթիւ նորեր խրատուելու և հասցնելու համար միջոցներ խորհնելու, սակաւաթիւ հիներն հարածելու կ'ըզաղինք:

Ստոյգ է որ տարւոյս մէջ երկրին քաղաքական հանդամանքն անընդհատ սրտատարով յուզմանց տեղի առով, թող չտուին մեզ անվրդով մեր պաշտօնը շարունակելու:

Ստոյգ է նաև որ տարւոյս սկիզբները մեր վարչական ժողովականք՝ զոր մեք ա՛յնչափ դուրդուրալով ընտրեցինք, և վերջերը՝ մեր Սրբազան Պատրիարքը՝ զոր մեք ա՛յնչափ կը սիրենք, մեզ յաճախ միայնակ թողլով և երբեմն հրաժարականի յուսահատական ձայներ բառուելով, մեր պաշտօնին ըստ օրինի կատարման շատ դիւրութիւն չընծայեցին:

Սակայն և մեք երեսփոխանական իրաւանց առաւել ձարտասանական և հարցանողական մասերուն նախանձախնդիր հանդիսացանք, քան թէ բարեկարգական և օրէնադրական արդաստար ճիւղերուն. և աւասիկ արդիւնք այս ամենայն պարագայից, սպարդիւն աշխատութեամբ վաստակարեկ և ձեռնուկայն կը ներկայանանք ՚ի վեր տարւոյս առաջի և Պատմութեան:

Արդ, Տեա՛րք իմ, անցելոյն ողբը ապագային օգուտ չարտադրեր, թողունք

զայն վշտագին, և դառնանք նոր տարւոյ
զարնան նոր արևն ողջունելու :

Այսօր մեր ժողովարանը կը փակուի,
բայց մայիսի 8 օրն նորէն պիտի բացուի :
Ուխտենք այժմէն միահամուռ, առաջի-
կայ տարւոյ մէջ մեր երեսփոխանական
պաշտօնը սրտի մտօք և ճշդութեամբ կա-
տարել : Մաքրենք սրբենք մեր խնդրոց
տուճարէն վերաքննական, հրաժարական,
հարցանողական, յարձակողական բոլոր
խնդիրները, և անոնց տեղ գետեղենք
կարգաւ :

1. Պի-ճէ

2. Համարառութիւն

3. Կրթական օրէնք

4. Վիճակագրութիւն

5. Վարչական կանոնադրութիւն ժո-
ղովոց և Խորհրդոց և Առաջնորդաց ազգիս :

Այլ ևս ներողամտութեան թուլամորթ
ընթացքը մէկդի թողուք, և ազգային
գործոց բարւոք անօրինութեան ամեն
խոչ և խուժ տապալելով, անյողըտղը
քայլենք յստաջ :

Ինչ յանձնարարութիւն որ ընենք մեր
գործոց վերաբերեալ, պայմանաւ ընենք,

և պայմանաժամի լրմանը՝ խտտիւ պա-
հանջենք կարգաւորման համար :

Բայց, Տեսարք իմ, ուրիշի խտտապա-
հանջ ըլլալու իրաւունք ունենալու հա-
մար, մենք մեզ աններող ըլլալու ենք :
Գօտեորիք ուրեմն, և ուխտենք դարձ-
եալ ամենայն կանոնաւորութեամբ ներ-
կայ գտնուիլ ժողովոյս նստերուն, և մեր
աշխատութեանց նախազօժէն ո՛չ անդին
անցնիլ, և ո՛չ ներել այլում գալ մեր
խնդրոց կարգը յեղաշրջելու :

Այսպէս թերևս կրնանք քաւել մեր
տարեկան անգործութեան պակասու-
թիւնը և առաջիկայ տարւոյ համար Ար-
գին վստահութիւնը վայելելու իրաւունք
ստանալ :

1876-77 տարւոյ Ազգային ժողովոյ
նստերուն շրջանը բողոքած է և ժողո-
վարանը փակուած :

Յետ ընթերցման ատենաբանութեան
ժողովը շնորհակալութիւն յայտնեց Ատե-
նապետ փառային. և ատենանը գոցուե-
ցաւ ժամը 10 օրն :

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Գ. Յ. ՄԵԼԻՔ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԿՇՁԲՈՆԱԿԱՆ ԸՆԲԸՈՒԹԵԱՆ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1974 — 75 ԵՒ 1975 — 76 ԱՄԱՑ

Ա. Բ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԺՈՂՈՎՈՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՄԻԲԱՏԵԼԵԱՆ

ՈՒՅՈՒՆ - ՋԱՐԵԻ ԴՂՈՒԻ ՇԵՐԻՑ ԲԱՆԱ ԻԱՆ

ՅԱԴԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1.	Ազրանեան Ստեփան Փաշա		Հրամարեայ
2.	Մազուտեան Սիմոն Պէշ		
3.	Տառեան Առաքել		Հրամարեայ
4.	Արզունեանեան Ստեփան	Իֆէնտի	Հրամարեայ
5.	Մամիկոնեան Միլայէլ	»	
6.	Փափանճեան Յարութիւն	»	
7.	Մանուկեան Մանուկ	»	Հրամարեայ
8.	Խանտանեան Յակոբ	»	Հրամարեայ
9.	Արսայեան Սարգիս	»	
10.	Նորատունկեան Սիմոն	»	
11.	Նիկողոսյեան Ասափա	»	
12.	Խեչիրեան Ստեփան	»	
13.	Միլայէլեան Սիմոն	»	
14.	Ժամակոչեան Պարոտ	»	Հրամարեայ

ՀՐԱՄԱՐԵԱՆՅ ՏԵՂ ԸՆՏՐՈՒՄՇՆԵՐԸ

1.	Կուստանդեան Յակոբ	Իֆէնտի	
2.	Փափազեան Կարապետ	»	Բացակայ
3.	Սիմեոնեան Խաչիկ	»	
4.	Արրանեան Սարգիս	»	
5.	Կասեան Միրոսիչ	»	
6.	Հարէնց Արրանալ	»	Հրամարեայ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳԱՐԶՈՒԹՅԱՆ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1874 — 75 ԱՄԻ

11

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

Ա.

Կազմարիւն

Քաղաքական Ժողովն Ազգային Ժողովոյ քուէովն ու փոփոխութեամբ պատուեալ իւր վարչակարգը Բ. Գոնին ընդունելէն ետեւ, Ազգային Ժողովոյ՛ Նախագահ և Կրօնական Ժողովոյ Առեւտարիտ Սրբազանին հրահրածքն ՚ի Պատրիարքարան իւր առաջին նիստն բրաւ ՚ի 27 նոյեմբերի 1873:

Այս առաջին նիստին մէջ նախ իւր զիտար կողմէն և ապա Կրօնական Ժողովոյ հետ միացած Խառն Ժողովով Պատրիարքական Տեղապահ ընտրեց, որ 73—74 ի Խառն Ժողովոյ համարառութեան մէջ արդէն տեղեկագրուած է:

Քաղաքական Ժողովն Ազգին անդորրութիւնն սղեկածեալ Ժամանակի մը մէջ Վարչութեան տաժանեկի և կնիքներով ծանրացած բեռը իւր վրայ առած էր:

Իրաց այս վիճակին մէջ նորընտիր Վարչութիւնն ազգին խաղաղութիւնը վերահաստատեալու և ազգային գործոց յառաջագիւտութեան ու արդարեան առջև հասկտակ կուսակցութիւններն

ի մի ձուլելու համար պարտք համարեց խիստ անկողմնակալ և գործունեաց ընթացք մը բռնել, և իւր այս ընթացքին նախադիմը ծանոց հասարակութեան հետգհեան յետագայ երկու յայտարարութիւնները հրատարակելով:

Պատահէ յայտարարութեանց Քաղ. Ժողովոյ

Ա.

Ազգային Վարչութեան Քաղ. Ժողովն ՚ի սրտածաւալարութիւն կոչուած միջոցին նախ իւր շնորհակալութեան պարտաւորութիւնը կը մատուցանէ Ազգ. Ընդհ. Ժողովոյ, որ իւր փոփոխութեան բուէովը պատուեց Ժողովոյ անդամները և անոնց յանձնեց Ազգ. գործադիր իշխանութեան ղեկը. ուստի նորա վստահութեան արժանաւոր կերպով պատասխանելու և Ազգային Սահմանադրութեան տրամադրութեանը համաձայն վարուելու համար իւր ջանքն ու անձնուիրութիւնը ցուցնելու ամեն կերպով տրամադիր և պատրաստ բոլոր յայտնելէ ետեւ, կը յայտարարէ նաև հանրութեան ազգիս թէ Ժողովն անկողմնակալութիւնն ու տրգարաւորութիւնն

թիւնն իրեն առաջնորդ ընտրած է , կուսակցութիւններ իւր աշայ անջնէ հաստատոր որժէր ունին , և այդին խաղաղութիւնը վրդովող որ և իցէ անձ թէ սրչտոնական բլլայ և թէ՛ անպաշտոն , իւր ատենին մէջ արժանի դատապարտութիւնը պիտի կրէ : Ազգային մանկեանց դատարարութիւնը զլիստորարար իւր ուշադրութիւնը պիտի գրասէ և իւր ամեն զարծոցը մէջ պիտի ճգնի արդարութեանէ մարդու շարի չը շնորհուր :

Ժողովս վստահ է ազգիս ընդհանրութեան կողմանէ համարանաց և ձեռնառուութեան համարիցի , որոց սարսիկներով կոխի իւր պոշտոնը և որովհետեւ ինքզինքն անտխալ չչլուսանիր , յօժարակամ նկատութեան պիտի տանու սպառնալի մամլոյ կողմանէ բլլալիք անկողմնակալ դիտողութիւնները : Ուստի սոցի տրամադրութեանը ընդհանուրի վերաբերեալ իւր արարքին վրայ եղած դիտողութեանց կամ բնութեանց ազդուութեանը չը գիտարեղէն զստ , ժողովս կը ցանկայ որ անոնք տեղի ունենան ամեն անգամ երբ արարքն ստուց ու վտերական է և կը կարօտի բնադատութեան կամ դիտողութեան : ասակցն չկրնար հոնիլ որ ասոնք անկեղծուութեան ստճմանէ կենկով թշնամական կամ անարգական ձև անուն : Ինչպէս այր , նոյնպէս կը խնդրէ Մեծ . Խմբագրներէն որ անատոյց ազդիրներէ բարձրած արարքներու հրատարակութեանը ազգային խաղաղութիւնը վրդովելի զգուշանան . բանցի Ժողովս ազգային լրագրաց միջոցու հրատարակութեան պիտի տայ կարեւոր ինքրոց համար բնեկիք սնորհնութիւններ :

Ազգին ոյժմեան վիճակը լոկ սիրոյ և խաղաղարութեան դարձանի պէտք ունի , և ասով պիտի ապահովի ազգին Վարչական զարծոց բարեկարգութիւնը . ուստի ժողովս ամեն կարգի ազգայնոց յորդոր կը կարգոյ խաղաղութեան զգայմամբ իրենց արարտուարութիւնը ձանձնալ և կատարել էթի կողմէն վտարարձաբար ազգէն սնեկցած իրուսուրեմին վայելի : Ժողովս ընդհանուրի վերաբերեալ ազգային նորանոր կարգադրութեանց հետամուտ բլլալով ,

զատոնք ալ իրենց ժամանակին և կարգին հրատարակութեանը պիտի խմայնէ Ազգին :
30 նոյեմբեր 1873

Բ .

Ազգային Քաղ . Ժողովս նկատելով որ 30 նոյեմբեր 1873 թուականու հրատարակած Պատմական յայտարարութեանն բրած հրատարակ հակառակ ազգային լրագրիներէն ոմանք կը շնորհակեն տակալին Ազգ . Ելեախիտանական ժողովց , Վարչութեան և ազգային երեսփոխանաց և սրաշտենկից ոմանց դէմ թշնամական և անարգական կերպով խօսիլ .

Արտաբ կը փոխանակ ժողովորդը սիրոյ և խաղաղութեան յորդորելու յարգէն հրատարակութիւններով Ազգին խաղաղութիւնը վրդովեն .

Պարտք կը համարի ծանուցանել ներկայ ազդարարութեամբա Մեծ . Խմբագրաց՝ որ ոչ աստեան միևնոյն ընկնոյցը չարանակալ լրագրին Ազգ . Վարչութեան դէմ իւր վրոյց ծանրք պատասխանատուութիւն ստած պիտի բլլայ . հետեալար Վարչութիւնն ալ պիտի պարտաւորի անոր դէմ պէտք եղած միջոցներուն դիմել :

Իսկ անոնք որ ազգային սրաշտնատարաց անձին դէմ սամբատանութիւն ունին և զաստատան կը ինդրեն , կը հրաւիրուին իրենց սամբատանողիրք ներկայացնել Վարչութեան և օրինական արջմունները լրացնելով դատարանի մանել յտտկապու կարգեալ դատական Գտնամուտովին ստնի .

17 յուլիս 1874 :

Վարչութիւնն իւր անկողմնակալութիւնը և հատարակալ խաղաղութեանէն և միայն անոնց լրագրիք մտածելէն զստ ուրիշ կէտ նպատակի չունենան արդեամբ ցուցնելու համար որ ատեանին մէջ եղած որոշումներէն անոնք որ անպատասխան չունին յայտուելու Պատմական հրատարակութիւն անուժով երբեմն ամեն ազգային լրագրիներու մէջ հրատարակել որչառց :

Ազգային ծանուցեալ յոգնանց պատճառաւ Անգլիական Վարչութիւնը թափուր մնացած միջոցին շատ մը ազգային հանրական և անհասարական խնդիրներ դիտած էին Պատրիարքարանի դիւանատան մէջ . թէ այս խնդիրները շատով վերջացնելու և թէ անհնարեաց խնդիրները համեմական քննութենէ մը անցնելով մանրամասն և հասուն գիտակցութեամբ ուղղելու և վճռելու համար Քաղ. ժողովս իր մէջէն Մասնագործ մը ստճմանց, որ զիշուալ խնդիրներուն որոշումը վաթացեալով նոր պատահած խնդիրներուն լուծմանն ու պոլշմանքն ու մեծ դիւրութիւն կուտար, զանոնք ամփոփ կերպիւ տեղեկագրելով ժողովոյ :

Աշիկցի դաս, իւր գործողութիւններն աւելի կանանաւոր և ճիշդ կատարելու համար Ճարտարարանի կանոն մը, և Պատրիարքարանը զովս Ներքին կանոն մը, և Պատրիարքարանը բարեկարգ միճակի մը վերածելու համար ու բարեկարգութեամբ կանոնադրութիւն մը շինելու հարկադրութեամբ կանոնադրութիւններ կողմնակաւ իւր մէջէն յանձնագործութիւններ կողմնակաւ իւր մէջէն յանձնագործութիւններն աւելի և մեց, որք մինչև որ շինուած թէ ներքին և մեց, բարեկարգութեան կանոնադրութիւններն աչքէ անցնելով ժամանակին համեմատ ուրիշ նորեր խմբագրեցին, և ժողովս դիտողութեանց համաձայն սրբագրուելով վաւերացան, Մակայն Պատրիարքարանի համար շինուած Ներքին կանոնադրութիւնը պիտանէին նկատմամբ Ազգ. ժողովոյ պոլշումը յարգելուն պատճառաւ, չկրցաւ ուրիշ զանազան գործողութիւն . ուստի աւելի քան ուրիշ զանազան գործողութիւնը յարձուրդ Վարչութեան թողուած է :

3. ժողովանք տան ստորական և սրբապետ կարգի նիստերուն պարտաւոր են ներկայ գտնուիլ, որչեւոր ժամէն մինչև անտանը գոյցուելու առան, և եթէ մէկը բանտար պատճառաւ բացակայ ըլլայ, պարտական է կանխապէս թուով ծանուցանել ժողովոյ :

4. Եթէ ժողովանք մը երեք անգամ կրտար վրայ ժողովոյ նիստերուն առանց բանտար պատճառի և առանց զբաւոր ծանուցման բացակայ գտնուի, ժողովոյ Առնանապետը պարտաւոր պիտի ըլլայ Սահմանադրութեան 39 դրոյնով գործարկել :

5. ժողովանք ներկայութեան տուած ընտրութիւններն իրենց ներկայութիւնը :

6. ժողովանքայն մեծագոյն մասին ներկայութեամբ եղած նիստը միայն օրինաւոր կը համարուի, և խնդրոց որոշում կը արուի յոյսաւ առաւելութեամբ . բայց մեծագոյն մաս չըլլաւ առաւելութեամբ ներկայութեամբ առան կը լով ալ զիշուան ներկայութեամբ առան կը լայտուի, և միայն խնդրոց վրայ իրեն նախապատաստութիւն վիճարանութիւն կըլլայ որ շատը յարմար նախն վերադասուելով :

7. Առջման մը մէջ քուէները հաստատուելու առան նախագահին կողմը կը հակի, իսկ իրացակցութեան Նախագահին Առնանապետին կողմը :

8. Բացակայ ժողովանք ժողովոյն մեծամասնութեան ըրած որոշումները ընդունելու պարտաւոր են : Միայն եթէ բացակայ ժողովանքներն մէկը դիտողութիւն մ'ունենայ . դրոյնը կերպիւ պիտի ներկայացնի, որ կարծանագործի առանց վիճարանութեան :

9. Սահմանադրութեան 89 յօդուածին համեմատ Քաղ. ժողովոյ վերաբերեալ տանն գործ, խնդիր և գործիւնք Նախագահին անմիջակայս առանց յարգուման թուականը նշանաւ կըլլով կը յանձնէ Առնանապետին առաջին նիստին մէջ վիճարանուելու, և նա ալ զոյն որոշումները կը թուականաւ պատահման կարծանագործելով խնդրոց կարգը կանցնի : Գաւ նշանագրելով խնդրոց կարգը կանցնի : խնդրոց մը Առնանապետին չը յանձնուին յառաջ եկած յարգումներ պատասխանատու է ըստ եկած յարգումներ, ինչպէս նաև Առնանապետին Ս. Նախագահը :

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Բարձրական ժողովը շարաթը անգամ մը որչեւոր օր նիստ ընելու պարտաւոր է :
2. Ի պահանջել հարկին սրտաբոց կարգի նիստ կրնայ ընել Ս. Նախագահին կամ Առնանապետին հրապարակել, որ նաև նշանակուող ըլլալու է նոյն նիստին պատճառաւ :

ալ պատասխանատու է իրեն յանձնուելէն ետ-
քը պատահած յապաղմանը . բայց այն պա-
տասխանատուութիւնը բնութանբար անհետ կը-
լայ երբ յապաղման վրայ բանաստ և ընդա-
նելի պատճառներ տրուին :

10 . Քաղաքական ժողովոյ զիսանը իրնը-
բոյ կարգը բննելով կատարէ և ըստ այնմ կը
ներկայացնէ ժողովոյն : Ստիտազական խնդրոց
առաջնութիւնը զիսանին կը վերաբերի , բայց
ժողովականը նախագատութեան մասին առա-
ջաբերութիւն ընելու իրաւունք ունին , և սուս-
բարբար առաջ նախընթաց նախն առնուագրու-
թիւնը կը կորչացուի և ապա խորհարարներէն
եկամ տեղեկագրերը :

11 . Ստիտազական գործոց մը համար Ս .
Նախագահը պարտաւորուել է Սահմանադրու-
թեան 8ր յօդուածին համեմատ վարուիլ :

12 . Ըստ առաջին յօդուածի Սահմանադ-
րութեան Ս . Նախագահը գործադիր իշխանու-
թեան վորիչն ըլլալով պարտաւոր է ամեն նախ
մէջ նախընթաց նիստերուն որչա՞ւմ գործոց
գործադրեալները գրաւոր և համատու կերպով
Վիսանին յանձնել և չը գործադրուածներուն
ու պատճառներն յայտնել :

13 . Առնուադեալին պարտն է՝
Ա . Առեան բանալ և գացել 7ր յօդուա-
ծին համեմատ :

Բ . Ժողովոյն բարեկարգութեանը հսկել :

Գ . Կարգու խօսք տալ ժողովականաց :

Դ . Մասնաւորոց խնդիրներուն մէջ ժո-
ղովոյ ներկայցող անձինքը հարցաքննել և ա-
նոց պատասխանել ըստ որչա՞նն ժողովոյն :

Ե . Մեծագոյն մասամբ որչա՞ւմ որտա՞մ
խնդրոց անմիջական գործադրութեանը հոյ
տամիլ Ս . Նախագահին հետ խորհրդակցելով :

Զ . Սահմանադրութեան 42ր յօդուածին
համեմատ խորհրդոց և Հոգաբարձութեանց վե-
րաբերեալ խնդիրներն իրենց յանձնել և հսկել
որ անոնք անցագող ըլլածոն :

14 . Առնուագրութեան պարտն է Օրակարգին
և արձանագրութեանց ճշգրտութեանը հսկել :

15 . Ժողովոյ որչա՞ւմները նոյն օրուան
նախն մէջ յատուկ տունարի մը մէջ Առեան
գորին կողմանէ համատու կերպիւ արձանագ-
րուելն ետլու , նոյն օրը Վիսանին կողմէն

սխտի ստորագրուի և Ս . Նախագահին յանձ-
նուի , որոչէս զի Ս . Նախագահը կործանաց
անոնց անմիջական գործադրութեանը հսկել :

16 . Ժողովոյն ստիտազական ստեղծագրու-
թիւնները Վիսանուպետը կը խորագրէ , և հե-
տեալ նիստերուն մէջ կարգաւորուելով 15ր
յօդուածին մէջ նշանակուած արձանագրու-
թեանց համաձայն ըլլալը ժողովականաց զիսու-
ղութիւններէն ետքը ստուգուելով Վիսանի կող-
մէն կատարագրուի : Առնուագրութեանց մէջ
ժողովոյ որչա՞ւմները արձանագրուելէն զատ նա
և սխտի նշանակուին այն ժողովականաց խօս-
քերը , որք որչա՞ւմաց հսկուած կամ տարբեր
կարծիք յայտնած են :


17 . Առեանը բացուելէն ետքը ոչ ոք կրն-
այ ներս մտնել ստանց հրատարակուաց Առե-
նապետի :

18 . Ժողովոյ որչա՞ւմը գրտած ամեն
Պաշտօնական գրութեանց թէ տաճկերէն և թէ
հայերէն պատճճնները ժողովին օրը գրտակա-
նին վրայ սխտի գտնուին . և ժողովականներէն
ուզողը սխտի կրնայ գտնուք աչքէ անցնել :

19 . Քաղաքական ժողովը քաղաքական
Մասնաժողով մը կը կարգէ ժողովոյ անդամ
ներէն : Քաղաքական Մասնաժողովը իրեն զՄ-
կուած խնդիրները կը բննէ և իր կարծիքը որ-
ք և առաջարկութիւն Քաղաքական ժողովոյ մը
բու՞նանը կը յանձնէ : Խնդրոց մը որչա՞ւմը մի-
այն Քաղաքական ժողովոյ մէջ կրնայ տրուիլ :

Հաստատուել և շտաբացուել Ազգային վարչա-
նոքեան Քաղաքական ժողովին ի իրաւ թիւ .

է 26 Յունիսի 1875



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ

ԱԶԳ. ՊԱՏՐԵԶԻԱՐԵԱՐԱՆԻ

ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆ

Ե Ի

ՊԱՅՏՈՆԵԱՅԸ

Ա.

Արքայան Պատրիարքն Ազգային ժողովոյ
Նախագահն է և անոնց որոշմանց գործադիրը,
միանգամայն Պատրիարքարանի գործոց ընթաց-
քին բարեկարգութեան հսկող և պատասխանա-
տու է՝ խորհրդական ունենալով իւր փոխա-
նորդն :

Բ.

Պատրիարքական Փոխանորդը խորհրդա-
կան է Արքայան Պատրիարքին, և իւր յատուկ
պաշտօններէն զատ փոխանորդաբար կը հսկէ
նաև Ազգային ժողովոյ որոշմանց գործադրու-
թեան : Միանգամայն պատասխանատու է
Պատրիարքարանի ներքին բարեկարգութեան :

Պատրիարքական Փոխանորդը ներկայ կը
գտնուի Արքայան, Քաղաքական և Խառն
ժողովոյ նիստերուն :

Գ.

Պատրիարքարանն ունի նաև երկու գըւ-
խաւոր պաշտօններ, Գալուստիական և Դիւա-
նապետն :

Դ.

Պատրիարքական Փոխանորդին, Գալու-

ստիական և Դիւանապետին ընտրութիւնը
Արքայան Պատրիարքին առաջարկութեամբ Քա-
ղաքական ժողովը նկատողութեան կուսու և
պէտք եղածը կը տնօրինէ :

Ե.

Գալուստիական Առաջնորդութեան և
Պատրիարքարանի մէջ եղած յարաբերութեանց
գործակատար պաշտօնեանց ըլլալով, պարտա-
կան է Արքայան Պատրիարքին և Փոխանորդ
Հօր կողմէն իրեն յանձնուած գործերը կանու-
նուոր կերպով կատարել և ամեն օր արդիւնքը
գրով հաղորդել, որպէս զի ժողովոց ներկա-
յայտի :

Գալուստիական ներկայ կը գտնուի Քա-
ղաքական և Խառն ժողովոց նիստերուն :

Գալուստիական ունի մէկ օգնական մը
թիւ Բ. Դրան և թէ՛ Ոստիկանութեան վե-
րաբերեալ գործոց համար :

Զ.

Դիւանապետը դիւանական գործոց կը-
գաղութեան գործադիր և պատասխանատու
պաշտօնեանց ըլլալով, պարտական է իւր իրա-
ւաստութեան տակ գտնուած գրասենեակներուն
մէջ եղող պաշտօնէից օտարաբերն անխելի և
անյայտ գործադրել տալ :

Դիւանական պաշտօնէից փոփոխութիւնն
ու յաւերածը Դիւանապետին առաջարկու-
թեամբ Քաղաքական ժողովը նկատողութեան
կուսու և պէտք եղածը կը տնօրինէ :

Է.

ԴԻՒԱՆԱՏՈՒՄ

Արքայան Դիւանատունն երեք գրա-
սենեակներէ կը բաղկանայ, որք են՝ Խաղա-
րութեան, Արքայադատութեան և Արքայա-
րութեան գրասենեակի, ընդ հսկողութեամբ և
պատասխանատուութեամբ Դիւանապետին :

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Մյն գրասենեակին մէջ կը խճադարուն այն ամեն Հայերէն Տոմարէն և Ղարղիտարէն գրութիւնք, որ կը պատկանին Երեսփոխանական, Կրօնական և Քաղաքական ժողովոց օրոշմանց :

Գրանաստեղծութեան ունի իրեն հետ երեք խրմբադիր գրանադպիրներ, մէկը Կրօնականի, մէկը Հայերէնի և Ղարղիտարէնի և երրորդը Տոմարէնի յատկացեալ, որոց պաշտօնն է գլխաւորապէս գրանաստեղծութեան կողմէ յանձնարարեալ խմբագրական գործոց պարասպիլ :

Կցեալէս ունի ուրիշ երեք գրանադպիրներ, որոց երկուքին պաշտօնն է Հայերէն խրմբագրութեանց ընդօրինակութեան և ուրիշ զԵրեսփոխանց պարասպիլ :

ԱՐՃԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Մյն գրասենեակին մէջ կարճանագրութեան Պատրիարքարան եկած այն ամեն թղթերը, զորս Սրբազան Պատրիարքը կամ իւր Փոխանորդը կարդալէ ետև օրուան թուականը և որ ժողովոյ որ անկ են, վրան նշանակելով կը պահեն Արճանագրութեան գրասենեակը :

Արճանագրութեան պաշտօնեայն նոյն թղթոց համաստեղծութեան ընդհանուր առմարի մը մէջ կարգահամարաւ արճանագրելէ ետև կը դրիլ իրենց պատկանեալ տեղերն անոնցմէ ըստորագրութիւն առնելով . և երբ պատասխաններն ալ խճադարութեան դիւանին ստանայ, արճանագրութեան առմարին մէջ պէտք եղած գործողութիւնները կատարելէ ետև կը յընկրենց տեղերը :

Վերջապէս Արճանագրութեան պաշտօնեայն պատասխանատու է Գրանաստեղծութեան ամեն Պատրիարքարան մտած ու եղած ամեն թղթոց համար, որոց պահպանութիւնն իրեն յանձնեալ է :

Արճանագրութեան պաշտօնեայն ունի իրեն հետ մէկ օգնական մը :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Մյն գրասենեակին պաշտօնն է Ա. Ս. Անտիպից, Եկեղեցեաց, և ազգային

որ և է հաստատութեանց թէ՛ շարժական և թէ՛ անշարժ ստացուածոց վրայոր մտերմաման տեղեկութիւններ հաւարել և կանոնաւ որ առմարաներու մէջ արձանագրել :

Բ. Ընդհանուր ազգահամար մ'ունենալ, որ պիտի ստորոնակէ ամեն ազգայնոց արձանագրութիւնը, հանդերձ վիճակագրութեանը պատշաճ ծննդոց, վտեմանմանց և ամուսնութեանց :

Վիճակագրութեան պաշտօնեայն ոյս տեղեկութիւնները պիտի հաւարէ վտեմաշարքներէն, գաւառական վարչութիւններէն և Մայրաքաղաքի Քաղաքական խորհուրդներէն, պէտք եղած հրահանգներն ու ցուցակներն անոնց հաղորդելով :

Ը.

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԵՐԸ

Գրաստաստեղծական Խորհուրդն ունի օրէնագէտ և տաճկագէտ պաշտօնեայ մը, որ այցելութեամբ նոյն խորհրդին զործողութեանց օրինակն և խմբագրական մասերը պիտի կատարէ, և մէկ ալ մնայուն դիւանադպիր մը՝ որոյ պաշտօնն է գաւառական և ամուսնական արձանագրութեան պարասպիլ և փոխանորդարանի գրանաստեղծութիւնը կատարել :

Տնտեսական Խորհուրդը և Երևանական Հ. գաւառագրութիւնը միանալով՝ ունին մէկ դիւանադպիր, մէկ համարակալ, մէկ գանձապահ մէկ Անցադրատան պաշտօնեայ, որ Ս. Արճանագրութեան հրահանգին համեմատ իրենց պաշտօնը պիտի վարեն :

Ուսումնական և Վ. անտիպից Խորհուրդները և Կրտսեաց Հաղաբարձութիւնը միանալով, ունին մէկ դիւանադպիր մը, որոյ պաշտօնն է նոյն երեք ձևերուն վերաբերեալ գրական բոլոր գործողութիւնները և միանգամայն Ուսումնական Խորհրդոյ արճանագրութիւնները և վանական կողմէ պատշաճ ու Աղբիւն նուիրեալ կտակաց արճանագրութիւնները կատարել յատուկ առմարներու մէջ :

Մյն Խորհրդոց և Հաղաբարձութեանց պաշտօնեայն ընարկութիւնն անոնց առաջարկութեամբ

Քաղաքական ժողովը նկատողութեան կանուս
և պէտք եղածը կը անօրինէ :

Թ .

Պատրիարքարանի խոհանոցը բոլորովին
վերցուած ըլլալով , ամեն պաշտօնեայր իրենց
քսակէն պիտի ընեն ուտեստի ծախքերնին , և
բարապաններէն ու սենեկապաններէն զաս ու
րիչ մէկը չ'պիտի կենայ զիշերներն 'ի Պատրի-
արքարան :

Ուտի Եջտի Գուլէի Ս . Յարիսց վանոց
մէջ Հիւրանայ անուամբ յարի մը յատկացած է ,
որ պիտի երթան Սրբազան Պատրիարքին
յանձնարարականով 'ի Պատրիարքարան Հիւր
մտարու ստիպեալ անձինքը :

Սոցն Հիւրանոցի ծախսայ համար կեդրոնա-
կան անտուկէն ամսական հազար զուշ յաս-
կացած է Հիւանդանոցի սնտուկին :

Թ .

Պատրիարքարանն ունի փոխանորդ Հօր
հսկողութեան տակ ընդհանուր վերակացու մը ,
որուն յանձնուած է Պատրիարքարանի բոլոր
կահարասիրը , և որ պատասխանատու է ներ-
քին մարտութեան և ազատութեան , և իւր
հսկողութեան տակ պիտի ունենայ

Մէկ սենեկապան Ռիւանտան համար

Մէկ » Փոխանորդարանի » մաք-

Երկու սպասար ծառայութեան և մաք-

րութեան համար .
Հինգ վեց բարապան (եռասքծի) , որոց մէ-
կը դուրս պիտի ըլլայ , և ամենքը մէկէն ընդ-
հանուր վերակացուին հսկողութեան տակն են :

Մէկ ալ դռնապան :

Վերոյիշեալ ապաստարաց փոխութիւնը

Փոխանորդ Հայրը անօրինէլէ ետև՝ պատճառ-
ները Քաղաքական ժողովը կը հաշտուի :

ԺԱ .

ԿԱՆՈՒՔ ՎԱՍՏ ՊԱՏՅՈՆԵՒԵԹ

Առանց բանաւոր պատճառի որ և է պաշ-

տօնեայ չ'պիտի զրկուի իւր պաշտօնէն :

Ազգին ծառայութեան յատկացեալ պաշ-
տօնեաներն երբ երկար ծառայութենէ ետև ծե-
րութեան կամ ցաւազարութեան պատճառու
անկարող լինին ալ ևս իրենց պաշտօնը չարու-
նակելու , ըստ հետեւեալ հրահանգի դադարման
ամսական պիտի ստանան մինչև ցմա՛ Ազգային
Սնտուկէն :

Անոնք՝ որ 10 տարի շարունակ առանց բա-
րոյական սրկաւութեան և հաւատարիմ ծառա-
յութեամբ անկարող գտնուին , պիտի ստանան
իրենց ամսականին հարիւրն երեսուը , իսկ 10
տարիէն աւելի ծառայողներուն դադարման ամ-
սականը համեմատաբար տարուէ տարի հարիւ-
րին մէկ պիտի յաւելնայ , այնպէս որ ամբողջ
երեսուն տարի ծառայողները իրենց ամսականին
հարիւրն յիսուն և քառասուն տարի ծառայող-
ները հարիւրին վաթսուն դադարման ամսական
պիտի ստանան :



ՀԱՐԱՆՔԻ ԿՈՍ ԿԱՆՈՒՔ ՀԱՄԱՐԱՏՈՒԹՅԱՆ

ՊԱՏՐԱՐՔԱՐԱՆԻ

Ա .

ՀԱՄԱՐԱՅԱԼ

1 . Պատրիարքարանի համարակալը մարտը
ձեւատեար մը կամ յիշատակութեան մը պիտի
ընէ և ամեն դրամական գործողութիւնները
պատահածին պէս հոն պիտի արձանագրէ թէ՛
մուտք ըլլայ և թէ՛ ելք :

2 . Ձեւատեարէն անմիջապէս դանազան օ-
ժանդակ անտրակներու մէջ պիտի անցնէ պա-
տահած գործողութիւնները , զժանդակ տես-
րակներուն երեսահամարները ձեւատեարին մէջ
և ձեւատեարին երեսահամարը զժանդակներուն
մէջ նշանակելով :

3 . Ամեն որ ձեւատեարին մէջէն նման
գործողութիւններն ամփոփելով գումարները
կրկնատուարի ոճով օրինաւորապէս օրհաշիւը
փոխադրելու և անկեց ալ մայր հաշիւն ան-
ցըներու է :

4 . Ամեն ամսազուլու Տնտեսական խոր .

հուրդ և Եւրոսիան Հոգարարձութիւնը սնտուկի տետրակը պիտի վաւերացնեն իւրաքանչիւր գործարքութիւն իր հովակիչոյն հետ բարդատեւով :

5. Նաև Համարոտկոյը արձանագրութեան տետր մը պիտի ունենայ Պատրիարքարանի տընտուկը առնող ձգուած գոյից համար , ուր իւրաքանչիւր աւանդին մուտքն ու ելքը կանոնաւորապէս պիտի արձանագրուին մտից պատճառով և երբևէ հրամանովը , և ոչս աւանդները ծրարեալ և Պատրիարքարանի կեդովը կնքեալ պիտի ըլլան և աղբային սնտուկին մէջ պիտի պահուին :

Նաև պիտի ունենայ առկախ վճարեալ գումարներու համար տետրակ մը , ուր առնն առկախ վճարմունքներ թէ հաշուց մը մէջ իրարու տակ նշանաւորած պիտի ըլլան և թէ զատ տեղերու մէջ և իւրաքանչիւր առ կախ վճարմունք լրանալուն պէս գոյուեալ են , բոլը նշանակելով իրենց բուն արձանագրութեան տեղերը :

6. Համարակողը պորտուտը պիտի ըլլայ առնն երեկոյ թղթի մը վրայ նշանակել սնտուկին մուտքն ու ելքը և անոնց ատրեբութիւնը նաև առ կախ վճարմունքները , այս թուղթը պիտի ցուցնէ Պատրիարքարանի սնտուկին մէջ գտնուած պատրաստ գումարը , զոր ինքն ստորագրելով և գանձապահին կնքել ստով պիտի յանձնէ Սրբազան Պատրիարքին :

7. Արկիւրու եկած բոլոր գումարները նոյն Համարակալը պիտի հաշուէ յատկապէս պատրաստուած թղթի մը վրայ անոր համեմատ պիտի ընդունի գանձապահը և պիտի կնքէ նոյն թուղթը , այս թուղթը դարձեալ Համարակալին գալով պիտի արձանագրէ և տեղորոշողը համարակալը պիտի տայ և Եւրոսիան Հոգարարձութեան կնքովը վաւերացնելն ետքը պէտք եղած գործողութիւնները պիտի կատարուին :

8. Նաև վճարման համար եկած հրամանագիրը նոյն Համարակալը պիտի արձանագրէ և նոյն հրամանագրերուն վրայ արձանագրեալ ընելով պիտի ստորագրէ և ետքը գանձապահը պիտի վճարէ , վճարման թղթերն ալ յատկապէս պատրաստուած ըլլալու են :

9. Առնն տարեկալին մայր հաշիւէն քա-

ղելով պիտի օրտրաստի տարեկան հաշուցացը և Տնտես . Խորհրդը և Եւրոսիան Հոգարարձութեան պիտի ներկայացնէ և անոնց ստուգել ստով նոյնը պիտի յլուի առ Վաղ . Ժողովը :

Բ .

ԳԱՆՁԱԳԱՆ

10. Գանձապահը միայն սնտուկի տետրակ մը պիտի բռնէ սրուն մէջ մուտքն ու ելքը կանոնաւոր կերպով պիտի նշանակէ :

11. Մտից համար միշտ իրեն կնքը պիտի դնուի Համարակալին բովը և ելից համար ալ իր բով հրամանագրերը պիտի գտնուին Համարակալին ստորագրեալ :

12. Առնն երեկոյ իր տետրակը Համարակալին սնտուկին տեսլին հետ պիտի բաղդատի և առ Սրբազան Պատրիարքն տրուած հաշուեթուղթը պիտի կնքէ : Գանձապահը պիտի ունենայ նաև երկու տետրակներ ալ , մին Պատրիարքարան առնող ձգուած գոյից համար և մյուս առ կախ վճարմանց համար :

Այս տետրակներուն ձևերը Համարակալին այս մասին բռնած տետրակներուն ձևով պիտի ըլլան :

13. Գանձապահը ինքին մէկուն բուն մը շ'պիտի վճարէ , թայց միայն իրեն յլուած Հըրաւմանագրերու վրայ՝ որք արձանագրեալ և ստորագրեալ են Համարակալին :

Գ .

ԱՆՅԱԳՐԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՏ

14. Անցադրատան պաշտօնեայն իրեն եկած գործերը նոյն Համարակալին պիտի պիւն , որ թաղ . Խորհրդին տրուած ծանուցադրին համեմատ Պատրիարքարանին առնուելիք տարբը հաշուէ և պաշտօնական թղթի մը վրայ նշանակէ ստորագրելով , որուն համեմատ գանձապահը կընդունի դրամը և կը կնքէ թուղթը , գանձապահին կնքեալ թուղթը Համարակալը պահելով պաշտօնական անդրրագիրը կուտայ և ստոր վրայ Անցադրատան պաշտօնեայն պաշտօնական ձա-

նուցագիրը կը գրէ և համարակալն ալ զայն կը կերէ պաշտօնական կերով :

15. Անցագրատան Պաշտօնէին բոլոր գործողութիւնները այս կերպով կը կատարուին :

16. Անցագրատան պաշտօնեային տեւորակ մը պիտի բռնէ ուր պիտի նշանակի իր գրած ծանուցագիրը իրենց տեսակով, թուովը և անձանց անուններովը, այս տեսակը այնպիսի սձով մը պիտի ըլլայ որ ամեն տանն կարող ըլլայ մէկը դիւրութեամբ յայտնապէս տեսնելու որ բանի տեսակ ծանուցագիրը գրած է և գանձապահը իրարանչիւր տեսակին համար ս՞րջակի գրած ընդունած է և համագուհարը ս՞րջակի է :

Դ .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ ԵՒ ՇՅԱԿՍՆ

Պատրիարքարանի անուակին մուտքերն են հետեւեալ հասոյթները .

Ա. Կարլաճական ծանուցագրերը .
Բ. Հանապարհորդաց անցագրի և արհեստաւորաց հրամանագրի վկայականը :

Գ. Նշանատուութեան և հրամանիկի հասոյթ .

Դ. Գաւառական մուգաթա ըստած և մայրաքաղաքի և եկեղեցիներէն ստնուած քանչկէր ըստած տուրքերը .

Ե. Կերքանական տուրք .

Զ. Չանաքան հասոյթներ ,

Է. անուակին ելլին են ,

Ա. Պատրիարքարանի պաշտօնէից ամսականը .

Բ. Յատկացեալ ամսականը .

Գ. Նշանուտքի ծախք .

Դ. Չանաքան կամ ընդհանուր ծախք .

18. Կարլաճական ծանուցագրութեան կողմէն թուագրեալ և ստորագրեալ 50, 110, 160 և 260 դրուանց անդորրագրեր պէտք են, որք համրանքով Համարակալին տրուելու են իրմէ ստորագրութիւն տանելով, այս ստորագրութիւնը Տնտեսական Խորհրդաց և Ելլուական Հարարածութեան դիւանը պիտի մնայ և այս գործողութիւնը պիտի կատարուի ըստ 14րդ յօդուածի :

19. Ծանուցարհորդաց անցագրի և արհեստաւորաց հրամանագրի վկայականի հասոյթը ամրոշման և Հիւանդանոցի վերաբերելով, Հիւանդանոցի Հոգարարութեան կողմէն թուագրեալ և ստորագրեալ անդորրագրեր պէտք են, որք համրանքով համարակալին տրուելու են իրմէ ստորագրութիւն տանելով, այս ստորագրութիւնը Հիւանդանոցի Հոգարարութեան քով կը մնայ և այս գործողութիւնը կը կատարուի ըստ 14րդ յօդուածի և չարթէ շարքով կամ ամեն ամիս համարակալը Հիւանդանոցի Հոգարարութեան հրամանին վրայ հաշիւը կատարելով և ստորագրելով և ստորագրել տալով Հիւանդանոցի Պաշտօնէին գանձապահը կը վճարէ Հիւանդանոցի վերաբերեալ այս հասոյթը :

Համարակալը Հոգարարութեան հրամանագիրը ստորագրել կուտայ ստանն ընդունող Պաշտօնէին գուհարը մէջը նշանակել տալով :

20. Եւանտուտիկեան հասոյթին համար յիտանուրը Հօր և Հիւանդանոցի Հոգարարութեան կողմէն կարգեալ պաշտօնէին ստորագրութեամբ տալիճանը, նշանուտքներուն անունը, մեղանունը և ուրիշ պարագաները նշանակեալ թուղթ մը գալ պէտք է համարակալին, որ ըստ կրանի հաշուելու է և հաշիւը նոյն թղթին վրայ նշանակելով ստորագրելու է. այս թղթին համեմատ գանձապահը դրամն աննելու և բտորագրելու է, այս թուղթը Համարակալը պահելով պաշտօնական անդորրագրի կերպով և ստորագրեալ յանձնելու է և ասիկ ետքը Փոխանուրը Հայրը ուրիշ պաշտօնական արձանագրութիւնները և գործողութիւնները կատարելու է :

Հրամանագրի համար ալ այս ձևը բռնելու է :

Հիւանդանոցի բաժինն ալ պիտի վճարուի 19րդ յօդուածին համեմատ :

21. Գաւառական մուգաթա անուակի տուրքիս եկեղեցիներէն քանչկէր անուակի ամսական յատկացեալ տրոց համար յատուկ անդորրագրեր շինել պէտք է, որք համարակալին քով կը մնան և երբ վճարուի և գանձապահը համարակալին ինձած հաշուեթուցքը կըլէ, հա-

մարակալը վաւերացեալ և կիւրեալ անդորրագրերէն կուտայ :

Մուգաթայի վերաբերեալ անդորրագրերը թէ՛ Սրբազան Պատրիարքը և թէ՛ Եւմուական Հոգաբարձութիւնն ստորագրած ըլլաւու է :

Իսկ քանչէ՛րի անդորրագիրը միայն եւմուական Հոգաբարձութիւնը կստորագրէ :

22. Կեցրոնական տօւրը՝ որոյ Պաշտօնէին ձեռօք կը հաւաքուի համարակալին ընդունած անդորրագրերուն վրայ : Տրոյ անդորրագրերը Եւմուական Հոգաբարձութեան կողմէն կը պատրաստուին, որք թուագրեալ և ստորագրեալ ըլլաւու են և համարեալ յանձնուելու են համարակալին իր ստորագրութեան վրայ . այս ստորագրութիւնը Տնտես . Խորհրդոյ և Եւմուական Հոգաբարձութեան դիւանը պիտի մընայ :

Երբ տրոյ պաշտօնէայն հաւաքած գրամները կեցրոնական սնտուկին կը յանձնէ, համարակալը գանձապահէն ստորագրութիւն մը անկեղով տրոյ պաշտօնէին անդորրագիր կուտայ :

23. Գանձարն հասոյթներն են .

Ա. Երբման համար Պատրիարքարան զիմոցներէն առնուած մէկ մէկ մէճիտիէն՝ իրրե ծախք գրուած թէ՛գրէրէն .

Բ. Ար և իցէ ստորագրութեանց և միտութեան վաւերացմանց համար առնուած մէկ մէկ մէճիտիէն :

Գ. Փոխանորդագրի՝ վաւերացման համար առնուած երկուքական մէճիտիէն :

Դ. Գաւառայ Առաջնորդայ և դուաւուական աղգային ժողովոց վաւերացման համար զրիւուած Պատրիարքական կոնգրակներէն լրենց մուգաթային վրայ 10 առ 0/0 նմանապէս մայրաքաղաքին քարոզիչներուն և ՚ի վաւերացումն Քաղ . Խորհրդոյ տրուած կոնգրակներուն համար լրենց քանչէ՛րին վրայ 10 առ 0/0 առնուած տօւրը :

Ե. Մայրաքաղաքին Քաղ . Խորհուրդներէն տրուած կողումական վկայագրերուն համար յատուկ հրօշմար և բունով (բօշման) թըղթեր կը պատրաստուին Եւմուական Հոգաբար-

ձութեան կողմէն կիւրեալ , որոյ համար 30 աւական փարսց կտանուի Քաղ . Խորհուրդներէն :

2. Գաւառատանական հասոյթ .

Ասոնց համար զիւանական հասոյթ անունով անդորրագրեր ըլլաւու են Եւմուական Հոգաբարձութեան կողմէ ստորագրեալ և թուագրեալ որք համարեալ յանձնուելու են Համարակալին իրմէ ստորագրութիւն անկեղով և իր ստորագրութիւնն ալ Տնտեսական և Եւմուական դիւանը պահեղով պէտք եղած ատենը տանցմէ կուտայ վերոյիշեալ կանոնոց համեմատ բունին մէջ թէ՛ առնուած ստակը և թէ՛ խնդիրը նշանակեղով , իսկ տրուած մասին վրայ միայն ընտակը նշանակեղով ըսցց պէտք է որ բունին մէջ նաև վճարողն ալ ստորագրէ :

24. Ամեն տմազըխ համարակալը կը պատրաստէ պաշտօնէից ամսականները պարտեալու թուոյթ մը , որ պիտի նշանակուած ըլլան բոլոր պաշտօնէից անունները զիւսոցը իրենց ամսականը , այս թուոյթը Եւմուական Հոգաբարձութեան վաւերացեալ պիտի ըլլայ և Սրբաբարձութեան վաւերացեալ պիտի ըլլայ կրնէրազան Պատրիարքը տեսնելով հրատան կրնէր ՚ի վճարում ամաղջապէս կամ մասամբ 0/0 այսչափ ընկեղով սնտուկին գրամական վիճակին համեմատ , այս թուոյթը համարակալն ալ ստորագրելէ ետև զանձապահին կը յանձնուի և իրարանչիւր պաշտօնէոց իր տուն գրամը իր անունը զիւսոցը գրելով կստորագրէ :

Ամեն ատեն լայր Պաշտօնէոցը հաւատարմապէս պիտի ընդունին իրենց ամսականները և երբ ամսականը թերհաշիւ վճարուին , անկներն ալ նոյն համեմատութեամբ թերհաշիւ պիտի տանեն :

25. Արիւր ամեն սովորական ծախքերու համար Տնտեսականն ու Եւմուականին համար թիւնն առնելով և սմոնց բնութեամբը ստորագրեալ հաստատագրերու վրայ Ս . Պատրիարքը հրաման կրնէ և Համարակալը արձանագրած ըլլալուն համար ստորագրութիւնը դնելէն ետքը գանձապահը կը վճարէ տունդին նոյն թուոյթը անորազրեւ տարով :

26. Տնտես . Խորհուրդն և Եւմուական Հոգաբարձութիւնն ամենեն անձախ ծախք

պիտի ընեն, այլ Պատրիարքարանի Պաշտօն-
եայր պիտի ընեն իրենց հրամանսը և միշտ ինչ
քան որ առնուի կամ շինուի տուողէն կամ շի-
նողէն իբրև հաստատագիր ստորագրութիւն տա-
նելու է որուած նիւթերը կամ շինած բանը մէ-
ջը գրուած ըլլալու պայմանաւ :

27. Թէ Պատրիարքարանի և թէ Թաղ-
խորհուրդներէ և մրտաբնիկ տրուած ծանու-
ցաղբերը պէտք է որ տէրութեան յատուկ դը-
րուշիւր ունենալէն դատ նստ բռնաւոր և Պատ-
րիարքարանի կողմն տրուած ըլլան պէտք եղած
տեղերը, և այս ամեն ծանուցաղբերը որ յիշ-
եալ կերպով շեն, սպորթնաւոր կը համարուին,
և այս ազգային կարգադրութիւնը հարկ եղած
տեղերը պէտք է ծանուցանել :

Ժողովս նիստուելով որ մայրաքաղաքին թագա-
կան խորհրդներուն և երեսփոխանութեան ընտ-
րութեանց ատեն միշտ խաղաղութիւնը և գիտու-
թիւնը պահպան չէ, այս խաղաղութեանց ասըն-
անելու նպատակաւ ընտրական գործողութեանց
համար հետեւեալ հրահանգը պատրաստեց :

ՀՐԱՀԱՆԳ

ԸՆՏՐՈՒԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Թաղական խորհուրդը ընտրողական
ժողով կը կազմէ ընդ նախագահութեամբ թա-
ղին Քարաղչին կամ անոր չեղած տեղ՝ Աւա-
ղերիցան :

2. Թաղական խորհուրդը գաղտնի բու-
արութեամբ երեքէն մինչև վեց թաղեցիներ
կընտրէ, որք Թաղական խորհրդը չեա ի միասին
կը կազմեն ընտրողական ժողովը :

3. Ընտրողական ժողովը անդամք ընտրու-
լութեան իրաւունք և հանգամանք ունեցող
պատուաւոր թաղեցիներէն պիտի կազմուին :

4. Ընտրողական ժողովը ընդ նախագահու-
թեամբ Քարաղչին կամ Աւաղերիցուն կը կազ-
մէ իւր Գիւմարը, որ կրնայ Թաղական խորհր-
դայ գիւմարին մէջէն կամ դատ կազմել ըստ հա-
նութեան Ժողովոյն :

